

ԵԼՅԻ ԱԳՈՎԱԾ  
ԸՆԹԱՑՄԱՆ

3

891.99


26092


U-96 Եղիշևան,

Հայք ազգակը. Առաջը.

15a.

լւ:



ՄՈՒՐԱՅԱՆ

891.99

Մ-96

ՏԱՐԻ 1967 թ.

ՆՈՅԻ ԱԳՈՐԱՎԸ  
ԱՌԱՔՑԱԼԸ

26092  
II  
A 28730



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ

ԳՐԱԴԱՐԱՆ

1947

МУРАЦАН  
ВОРОН НОЯ  
АПОСТОЛ  
(На армянском языке)  
Советский писатель  
Ереван, 1947 г.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԾ

Հ Վ Բ

Հ Պ Բ

**ՆՈՅԻ ԱԳԹՈՎՎԸ**



## Ա

**Ո**գոստոսի սիրուն առավոտներից մինն էր, երբ ևս ու ընկերս, կանխավ արած մեր որոշման համաձայն, դուրս եկանք քաղաքից ձիով հայրենի գավառակի գյուղերը պարտելու և մի քանի ավերակներ անձամբ տեսնելու:

Մենք պատկանում էինք «առուն վերագարձող» այն նորեկների թվին, որոնք ընտանիքի հացը հայթայթելու համար ստիպված են լինում տարիներով ապրել մեծ քաղաքում, ծծել միշտ նրա անառողջ օգը, սնվել ավելի փոշիով, քան թե կերակրով և հետևապես կարոտիլ այնպիսի բարիքների, որ ընության մեջ ապրող մարդը վայելում է առատորեն, առանց սակայն նրանց արժեքը գնահատել կարենալու:

Ի՞նչ բան է, օրինակ, մաքուր օգը, դաշտի կանաչը, հովտի առվազը, անտառի զովը... մի՛թե կարելի է կարոտիլ դրանց, կամ ցանկացած ժամին չվայելել: Լեռնցի գեղջուկը, որ կ արի ք բառը հասկանում է միայն նյութականի վերաբերմամբ, անշուշտ կծիծաղեր, եթե իմանար թե՛ մեր զրկանքը կազմում է այդ չնշին, հազիվ երբեմն յուր կարիքը լցուցանող բաները:

Բայց ով տարիներով ապրել է մեծ քաղաքում, միշտ մինուն նեղ փողոցի վրա, նույն ապականված մթնոլորտի մեջ և գործել շարունակ լույսից ու օդից զուրկ մի գրասենյակում, որի բոլոր հրապույրը կազմում են եղել չոր հաշվեմատանները, երկարից պահարանը և անմիտ համարիչը, իրեր, որոնք առնշություն ունին միայն փողի և հաշվի

Հետ, բայց որոնց անծանոթ է սիրտը և ավելի ևս դպայուն հոգին, իրեր, որոնք մարդու ուղեղը բթացնում, աշխավագը մարում և հոգին նվաստացնում են... այդպիսին, հարկավ, կարոտելով կկարոտի այն ամենին, ինչ որ անարժեք է բնության զավակի համար, կկարոտի նրա դաշտին ու մարդին, նրա հովտին ու առվակին, նրա անտառի անուշը հովերին:

Մենք էլ, ահա, այդ կարոտյալներից էինք: Ընկերս վերադարձել էր Մոսկվայից, իսկ ես Թիֆլիսից: Երկուսս այժմ միացած՝ գնում էինք բնության քաղցրություններից մեր կարոտն առնելու:

Պետրոս Մինարյանը (այս էր ուղեկցիս անունը) հայոց հոգեոր դպրոցի սան էր, տակավին երիտասարդ, միջահասակ, փոքր ինչ թուղակազմ, բայց աշխավագ և գրավագեմ: Բնավորությամբ բավական անհամբեր և դյուրագրգիռ էր, երբեմն նույնիսկ հանդուգն ու անքաղաքավար, բայց սրտով բարի և անկեղծ: Ուներ տարօրինակ հայացքներ, որոնք յուր խոսակիցներին մերթ զայրույթ և հաճախ՝ զվարճություն էին պատճառում: Սիրում էր խառնվել ուրիշների գործին, կամ հաճախ ինքնակող դատավոր հանդիսանալ: Սիրում էր վիճաբանել, ազատ մտքեր հայտնել, բայց երբեմն ավելի հակառակելու, քան մի ճշմարտություն ասելու համար: Այսուամենայնիվ, այս բոլոր տարօրինակությունների հետ միասին, ճանապարհի լավ ընկեր էր, որովհետև սրտոտ էր, կամարար և սակավապետ:

Բավական ժամեր էին անցել ինչ ելել էինք քաղաքից և թեպետ առավոտը զով էր ու հեշտալի, այսուամենայնիվ, քանի արևը բարձրանում էր, այնքան ավելի օդը չերմանում և նեղացնում էր մեզ: Միջօրեի մոտ մենք գտնվում էինք արդեն բաց դաշտի վրա: Արևի ճառագայթները այրում էին. չկար ոչ հովի շունչ, ոչ ծառերի շքարան: Այդ պատճառով աշխատում էինք ժամ առաջ հասնել գյուղը, որ գտնվում էր մեր հանդեպ եղող լեռան գեղադիր լանջի վրա:

Չնայելով որ քաղաքից ելածներս միջոցին ընկերս պատմում էր թե՝ մի օր հիացմունքով էր մտածում, այն ժամի ու

վայրկյանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գտնվում կլիներ հայրենիքում, նրա ազատ օդի ու զաշտերի մեջ և չնայելով որ այդ ժամին նրա փափազն արդեն կատարված էր, այսուամենայնիվ, նկատում էի, որ երիտասարդի համբերությունը ենթարկվում է փորձության։ Տոթից, ըստ երեւովովին, նա շատ էր նեղանում, ուստի և հաճախ գանգատվում էր։

Երբ մի ձորակի գետակն անցնելով սկսանք դեպի գյուղ տանող առապարը բարձրանալ, միջօրեի տապը ավելի ևս զգալի դարձավ, որովհետեւ արդեմ ճառագայթներից զատ՝ ալրել սկսան մեզ նաև կեծացած ժայռերը, որոնք եզերում ին առապարը երկու կողմից։

— Ա՞յս, մի հասնեինք այն սոսիներին, — բացականչեց հանկարծ ընկերս, այնպիսի մի կարոտով, որ կարծես գտնվում էր Սահարայի անապատում և ուր որ է խորշակը շնչառառ պիտի աներ իրեն։

— Համբերություն, բարեկամ, սոսիներին էլ կհասնենք, — նկատեցի ես։

— Համբերություն... միշտ համբերություն, — շանչաց Պետրոսը, զժգոհ իմ խոսքից և ապա դառնալով ինձ՝ հարցրեց. — Ի՞նչ ես կարծում, ո՞վքեր են համբերում։

— Խաղաք՝ ո թե ովքեր, համբերատարները, — պատահանեցի ես։

— Իսկ ես չեմ կամենում համբերատար կոչվիւ.

— Ի՞նչո՞ւ, — հարցրի նրան։

— Որովհետեւ համբերում են միայն թուլերն ու տկարները, այսինքն մարդիկ, որոնք այս կամ այն շարիքը սեփական ուժով իրենցից հեռացնել չկարենալով՝ տանում են նրա պատճառած նեղությունները ստրկաբար։ Եվ որպեսզի այդ անարգանք չհամարվի իրենց՝ ասում են թե՝ «Համբերում ենք»։

— Է՛ս, եթե չհամբերես, ի՞նչ պիտի անես. Կարո՞ղ ես արևի չորավար գոմդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հովանավոր ծառերի փոխել։

— Զեմ կարող:

— Ինչո՞ւ ուրեմն իզուր աղմուկ ես հանում:

— Նրա համար, որ ցուց տամ թե՝ անզգա արարածին մեկը չեմ, թե իմ մեջ կյանք ու կենդանություն կա, թե Հեղտությունն ինձ հաճուք, իսկ նեղությունը դժգոհություն է, պատճառում:

— Իսկ դրա օգո՞ւար:

— Այս, որ մարդիկ ճանաշելով ինձ՝ զգաստ լինեն իմ վերաբերմամբ և զգուշությամբ վարվեն հետև: Ինքու էլ Հոգիտես, որ աշխատոյժ ու շանձարվող ծիուն մոտենում են երկյուղով ու փաղաքանքով և հազիկ ուրեմն կարողանում են հեծնել. մինչդեռ համբերատար իշխն ականջներից քաշելով՝ բարձում են միշտ որբան կամենում են, առանց նրա կամքն ու ցանկությունը իմանալու:

Ես ծիծաղեցի:

— Դու այս կարծիքին չե՞ս, — հարցրեց ընկերաւ:

— Ո՞ւ—ասացի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ համբերել բառը ավելի բարձր նշանակություն ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան: Եշերի ու ձիաների ընկերության մեջ, հավանական է, որ համբերությունը համարվի անարդ ունակություն, բայց մարդկային հասարակության մեջ ճանաշվում է այն իբր առաքինությունը:

— Միջնադարյան վարդապետների կարծիքով, — ընդհատեց Պետրոսը:

— Նույնիսկ դարավերջի փիլիսոփաների կարծիքով, — հարեցի ես:

— Պատճառո՞ւ:

— Որովհետեւ համբերությունը բարիք է արտադրում, մինչդեռ անհամբերությունից միայն շարիք է առաջանում:

— Ի՞նչպես:

— Աշխարհում համբերում են, առհասարակ, կամքի ուժ, հոգվու արիություն և սրաի կորով ունեցողները, հետևապես, մեծ գործերն էլ ստեղծում են դրանք: Կարդա պատճու-

թյունը և կտեսնես, որ աշխարհի բոլոր նշանավոր գյուտերը՝  
բոլոր մեծամեծ գործերը արդյունք են եղել դժվարատար նե-  
ղությանց ու հերոսական համբերությանց։ Անհամբերու-  
թյունն, ընդհակառակը, նշան է թուլության և անզորության։  
Ուստի երբեք չէ տեսնված, որ անհամբերին մեկը կարողա-  
նար մարդկության համար ստեղծել մի մեծ բարիք։ Այս է,  
ահա, պատճառը, որ համբերությունը համարվում է առաքի-  
նություն և բարոյախոսներից մինը, մինչև անդամ, ավելի՛  
մեծ փառք է համարում մարդու համար մեծամեծ նեղու-  
թյանց համբերելը, քան մեծ գործեր կատարելը։

— Այդ գուցե այդպես է, բայց երբ արևն այրում է, և՛՛  
կարելի է նրա գեմ տրտնջալ։ Չէ՞ ո՞ր տրտոնջը թեթևացնում  
է մարդու նեղությունը։

— Ընդհակառակը, պետք է սովորել երբեք և ոչ մի բա-  
նի գեմ չտրտնջալ, այլ դրա փոխարեն աշխատել նեղության  
պատճառը մեջտեղից հեռացնել։ Մուլլ ու անզոր մարդը հան-  
ձի զիթելու գեմ էլ է տրտնջում, փոխանակ լուսվթյամբ ձեռքի  
բարձրացնելու և նրան քշելու։

— Ճանճը կարելի է քշել, արևը ո՞րտեղ քշենք։

→ Այդ գեպքում էլ արևը քշելու փոխարեն քո ձին պետք  
է քշես և մի կես ժամ առաջ հասնես տուն։ Համբերատար և՛՛  
դործունյա մարդու համար միշտ փրկության հանապարհը կա-  
լիկերս լուռ էր։ Զգիտեմ համաձայնեց ինձ ջետ, թե

չկամեցավ անզոր երևալ իմ աշքում։ Այսուամենայիմ, ոչ մի  
նոր առարկությունն չանելով շարունակեց ճանապարհը,  
առանց այլս տրտնջալու արևի գեմ, որ այրում էր մեզ, ար-  
դարև, անողորմաբար։

Քիչ ժամանակից հետո մենք գյուղը հասանք և ուղղակի-  
դիմեցինք ընկերոջս ազգական գյուղացու տունը։ Վերջինի՛  
հովանավոր սրանքը և հյուրընկալի քաղցր ընդունելությունը  
շոտով մոռացրին մեզ հանապարհի շոգից կրած մեր նեղու-  
թյունը։

Հետևյալ օրը, նախաճաշ անելուց հետո, գուրս եկանք տանից՝ գյուղն ու նրա շրջակաները դիտելու Հարկ չկա ասել, որ ամենից առաջ այցելեցինք գյուղի եկեղեցին, որ գտնվում էր շինովթյուններից գուրս, մի առանձնացած բըլրակի լանջի վրա, որտեղից բացվում էր մեր առաջ թե՛ գյուղի և թե՛ շրջակաների տեսարանը: Եկեղեցին մի անպաճույն շինովթյուն էր, մամուպապատ կտորով և փայտե խարխուկ պանդակատնով: Տեսնելու արժանի ոչինչ շուներ յուր շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը, որ գտնվում էր եկեղեցու առաջ և ոռոգվում բավական հորդ առվակով: Մեզ ուղեկցող հյուրների ասելով այդ բանջարանոցը ծառայում էր տեղական քահանային և տալիս էր նրան ուտելու սոխ, կանաչեղեն, մի բանի տասնյակ վարունգ և ձմեռվա համար մի բանի հատ դրում:

— Այս շրով կարելի էր դրախտ ստեղծել այստեղ, իսկ ձեր քահանան միայն սոխով ու վարունգով է բավականանում, — նկատեցի ես հյուրընկալիս:

— Եդ շրով, հրամանք ես, շատ բան կշինվեր ըստի, ամա ինչ արած, որ դերը (քահանան) էշիս (աշխույժ) չունի, — պատասխանեց գյուղացին:

— Դուք շինեցեք, — վրա բերավ ընկերու:

— Մենք ի՞նչ շինենք:

— Մառեր տնկեցեք, վագեր շարեցեք, զբոսնելու ճանապարհ բացեք, եկեղեցին հո դերինը չե՞:

— Դերինը չի, գիդամ, ժողովրդինն ա, ամա որ դերը թողնի, մենք ի՞նչ կարանք անել:

— Ինչպես թե շթողնի. ի՞նչ իրավումք ունի արգիլելու, — բացականչեց Պետրոսը և տեսնելով, որ քահանան եկեղեցու կողմից իշնում է դեպի մեզ, ավելացրեց, — սա՞ է ձեր քահանան, թող մի գա այստեղ, տե՛ս ի՞նչպես եմ հանդիմանում:

— Թո՛ղ, այ մարդ, ի՞նչ գործ ունիս, ի՞նչ հանդիմանության ժամանակ է, դեռ առաջ մի ծանոթացիր մարդում, — նկատեցի ես:

— Ի՞նչ ծանոթություն, բան չունի՞ս, —պատասխանեց ընկերս և կովկելու պատրաստվող աքաղաղի նման հարձակողական դիրք բռնեց:

— Թո՛ղ, քե մատազ, խոսալ մի, դերն ինձանից կնեղանա, —խնդրեց Հյուրընկալը:

Բայց Պետրոսն արդեն մի քայլ առաջացել էր դեպի քահանան, որը մոտենում էր:

Սա տարիքով հիսունի մոտ, առողջակազմ, հաստամարմին, ալեխանոն մորուքով և բարի դեմքով մի մարդ էր: Հագած էր սև մաշուփից կարած մի պարեկոտ, որը հնությունից արդեն մաշվել, գունատվել էր: Ծածկած էր գառան մորթուց պատրաստված գլխարկ, ոտքերին ուներ քոշեր, իսկ ձեռքին՝ դեղնափայտի գալազան:

Միջանկյալ ասենք, որ տարիներ առաջ, քանի դեռ լուսա մը որության ճառագայթները այսքան չէր մոտեցել մեր եկեղեցու շեմքերին, հայ քահանան հայր էր համարվում ամեն մի հայ քրիստոնեի. նրանք միմյանց պատահելոց սիրով ողջունում էին իրար, առանց նայելու թե՝ ծանոթ են միմյանց, թե ո՞չ: Այժմ, իհարկե, այդ գեղեցիկ և բռն քրիստոնեական սովորությունը մոռացության է տրված՝ իրրեւ անպետք հնություն: Քաղաքներում, մանավանդ, անհարաժեշտ է որ այս ինչ հային՝ անպատճառ մի երկրորդը ծանոթացնե պաշտոնապես այն ինչ քահանային, որպեսզի այնուհետև առաջինը բարեհաջե ողջունել վերջինին, եթե պատհեն նրան ճանապարհին, կամ որմէ հասարակության մեջ:

Տեր Մակուշը (գյուղի քահանացի անունն էր) անծանոթ էր իհարկե քաղաքներում ընդունված այս սովորության, ուստի հեռվից տեսած լինելով մեզ, իրրեւ հայ քահանա, շնապել էր մեզ ողջունելու և, իրրեւ նորեկների, բարի գալում մաղթելու:

Այդ իմանալով ես շտապեցի Պետրոսից առաջ անցնել և դիմարկս հանելով՝ «օրհնյա՛, տեր» ասել:

— Աստված օրհննեցի, բարի լինի գալներդ, —պատասխանեց տեր հայրը և ձեռքը նախ ինձ՝ արա Պետրոսին տա-

լով՝ ողջունեց մեզ սիրով և այնպիսի մտերմությամբ, որ կարծես թե հին բարեկամներ էինք:

Պետրոսը, որ անհամբերությամբ էր սպասում ողջունի այս ծիսակատարության, հանկարծ, առանց որևէ առաջարանի, հարցրեց.

— Տե՛ր հայր, ի՞նչ է նշանակում ավետարանի այս խոսքը՝ «դուք ոլ մտանեք և որոց մտանեն՝ չտայք թոյլ մտանել»։

Քահանան, որ այսպիսի անակնկալ հարցի չեր սպասում, նախ շփոթվեց, ապա՝ ինքն իրան գալով՝ ժպտաց և մեղմով հարցրեց.

— Ընչի՝ հմար ևս հարցնում:

— Ի՞նչպես թե ինչի համար, քահանա ևս, շատ անգամ ժողովրդի առաջ կարդում ես ավետարանի այդ խոսքերը, այժմ կամենում եմ իմանալ թե՝ հասկանո՞ւմ ես դրանց նշանակությունը, թե ո՞չ։

— Բայ որ շհասկանանք, ո՞նց կարանք կարդալ, ո՞ւղի, — պատասխանեց տեր հայրը։

— Դե՛ռ, որ հասկանում ես, թարգմանի՛ր տեսնեմ։

— Ո՞նց թարգմանեմ, ավետարանը ըստի պտի, որ կարդամ թարգմանեմ, — առարկեց քահանան ժպտալով։

— Ա՛յ, ես բերան ասում եմ է՛լի՛ «դուք ոլ մտանեք և որոց մտանեն՝ չտայք թոյլ», դե՛ռ, թարգմանիր։

— Սաքի դու դրա միտքը իմանում չե՞ս։

— Իմանում եմ։

— Բա խի՝ ես հարցնում։

— Հարցնում եմ տեսնեմ դու էլ իմանում ես, թե՝ ոլ։

— Ա Մո՛ւքի (Միքայել), էս մեր Մինարանց Ակորի տղան լի՛, — դարձավ քահանան մեր հյուրընկալին։

— Հա, ա՛ դեր, Ակոր աղի տղան ա, — պատասխանեց գյուղացին։

— Աստոծ պահի, լավ մեծացել ա, հորը քյոմակ կըմ (կօգնի), — հարեց քահանան, աշխատելով այս միջանկյալ հաճոյախոսությամբ ազատվել Պետրոսի հետապնդությունից։

Բայց վերջինս, անխիղճ պարտատիրոջ պես, տեր հոր  
օձիքը լթողեց:

— Այդ իմացանք, տեր հայր, դու իմ հարցին պատաս-  
խանիր,—կրկնեց նա, քահանայի թևից քաշելով:

Տեր հայրը, կարծես բարկացավ, և խոսակցի վրա մի  
քննական հայցը ձգելուց հետո դարձավ մեր հյուրընկալին:

— Ա, Մո՛ւք, դոնաղդ (հյուրդ) կովարար մարդ ա ընուժ  
(երեսում):

— Զէ, ա' դեր, լավ տղա յա, ասենք մի քիչ հանաքչի  
ա,—պատասխանեց գյուղացին, աշխատելով արդարացնել  
Պետրոսին:

— Տո՛, տնածա'կ, ըսենց հանաք կըլի՛. ինձ պատին  
դեմ ա արել թե՝ հենց դու ես որ պտի թարգմանես: Խի՛, ես  
Սողոմոն իմաստո՞մն եմ:

Մենք սկսանք ծիծաղել:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, տեր հայր, եթե մի փոքր առաջ  
խոստովանեիր թե զգիտես, այն ժամանակ ինքս՝ կթարգմա-  
նեի, — դարձավ Պետրոսը քահանային, — այժմ բացատրեմ,  
լսի՛ր. «Դուք ու մտանեք և որոց մտանեն՝ շտայք թող»  
կնշանակե թե՝ դուք շեք մտնում, և ովքեր էլ որ մտնում են,  
նրանց շեք թողնում...

— Դիտում եմ, գիտում, — ընդհատեց հանկարծ քահա-  
նան, չկամենալով, ալսուամենայնիվ, բոլորովին տգետ երե-  
լալ մեր աշքում, — Քրիստոս էդ խոսքերը մեր վարդապետ-  
ներին ա ասում. յանի թե՝ (այսինքն) դուք ամուսնութենի մեզ  
շեք մտնում ու հով որ էլ ուզում ա մտնի, նրան թողում շեք:

— Վա՛յ, տոնդ շծակվի, տերտեր, — բացականչեց Պետ-  
րոսը և բարձրածայն ծիծաղեց. նրան հետևեցի և ես:

— Խի՛ եք ծիծաղում, բա ըսե՞նց չի, — հարցրեց քահա-  
նան մի առանձին հավակնությամբ:

— Զէ, չէ, տեր հայր, — մեջ մտա ես. — Քրիստոս արքա-  
յության համար է խոսում, և դպիրներին ու փարիսեցիներին  
է ասում թե՝ դուք արքայություն շեք մտնում և ովքեր էլ որ  
կամենում են մտնել, թույլ շեք տալիս նրանց:

— Դե, հեր օրհնած, ամուսնությունն էլ արքայոթիան նման բան ա, ես ըսկի շատ չեմ յանդիշ եկել (սխալվել), — ժպտալով ասաց քահանան և ապա դառնալով Պետրոսին հարցրեց.

— Մի ասա՛ տեսնեմ՝ ինձ իսի՞ ես ըտենց հարցուիործ անում:

— Ա՛յ թե ինչո՞ւ Մենք եկել ենք ձեր եկեղեցին այցելելու և տեսնում ենք սրա առաջ այս ողորմելի բանջարանոցը, որի մեջ միայն մի քանի ածուներ ունիս դու: Մինչույն ժամանակ այստեղ հոսում է այս հորդ առվակը, որից դու կարող էիր օգտվել և եկեղեցու առաջ, այս ահագին տարածութան վրա ծառեր տնկել, զբոսարան շինել, իսկ այդ ծառեցը օգուտ կրերեին թե՛ քեզ, թե՛ եկեղեցուն և թե՛ ժողովրդին: Բայց դու շես արել, որովհետեւ, ինչպես Մուրին ասում է, էշին շունիս: Հարցնում ենք սրան թե՝ ինչո՞ւ դուք, գյուղացիներդ շեք անում, պատասխանում է թե՝ «տեր հայրը մի թողիլոյ: Ա՛յ, հենց դրա համար էլ կամեցա հասկացնել քեզ թե՝ Քրիստոսի այն խոսքը, որ ասում է՝ «գուրք շեք մտնում և ովքեր էլ որ մտնում են, շեք թողնում», հենց ձեզ նման հովիվների համար է ասված:

Տեր Մակուլը մի դժոգո՞ հայացք ձգեց մեր հյուրընկալի վրա և ապա դառնալով Պետրոսին՝ ասաց.

— Հեր օրհնած, էս եղցուը (եկեղեցում), ինձանից առաջ, մինչև տասը, տասներկու քահանա ծառալել են, ծերացել ու մեռել: Դիմունանց գերեզմաններն էլ, հրես, ըստի, եղցու քամակին ա, ուզո՞ւմ եք, գնանք մի մի շանց (ցուց) տամ: Ընդոնցից ո՞րն ա ըստի մի շոփ (ոստի կտոր) տնկել, որ ես տնկեմ:

— Նրանք շեն արել, դու արա, դու բարի օրինակ եղիր քեղանից հետո եկողներին:

— Միթամ էդ ի՞նչ օգուտ պտի բերի ինձ, յա (կամ) եղցում:

— Նախ այն, որ այս շոր գետինը կծածկվի, ծառելով, իսկ ծառաստանը ավելի լավ է, քան թե շոր տափաստանը:

Երկրորդ՝ եկեղեցու շրջապատի օդը ավելի մաքուր և առաջ-  
շարար կլինի, իսկ տեսարանը՝ դյուրական, երբորդ՝ տնկածդ  
ծառերը պտուղ կբերեն, որից թե դու կօգտվես և թե եկեղե-  
ցին։ Չորրորդ...

— Դե, մի խրե (մի քիչ) սպասի՛ր, — ընդհատեց քահա-  
նան Պետրոսին, և ապա կրթնելով գավազանի վրա, մի-  
առանձին, հեղինակավոր եղանակով շարժնակեց. — որդի,  
գիտա՞ս, ի՞նչ կա, խոսիլը հեշտ ա քանց անիլը։ Մի բան  
պատմեմ լսիր։ Մի քսան օր սրանից առաջ մեր հաջորդը  
վանքն էր գնում, քաղաքից գալիս մեր գեղովն անցավ. շնոր-  
հակալ եմ, պատվեց, եկավ մեր տանը դինջացավ (հանգս-  
տացավ), հաց կերավ. վերջը ասեց. — «Տեր Մակուշ, գնանք  
մի ճեր եղցին տեսնենք» — ծառա եմ, ասացի, հայր սուրբ,  
գնանք, Վեր կացանք եկանք։ Քյոխվեն էլ մեզ հետ էր, սու-  
րբիան էլ, մի երկու էլ գեղի իշխան (առաջավոր) մարդիկ։  
Վարդապետը հենց որ եղցին մտավ, աշքերը մի դես ու դեն  
զցեց, ինքն իրան փնթինթաց ու ասեց. «Տեր Մակուշ, էս խի-  
եղցին անզարդ ես պահում»։ — Ո՞նց եմ անզարդ պահում,  
հայր սուրբ, հարցրի ես. — «Էնենց ես անզարդ պահում,  
ասեց, որ ա՛յ, էս սուրբ սկիհի տակը մի աբրեշում աղլուխ  
չես զցում. էս ավետարանը մի զառ շորում չես փաթաթում.  
Էս ատենին կազմել չես տալիս. յա չէ, էս ի՞նչ պատկեր ա,  
որ դրել ես սեղանի վրա, ըսենց Քրիստոս կըլի՛. էս Հու-  
դուխաբոր մալական ա»։ Ի՞նչ մեղքս ծածկեմ. շատ նիկացա  
(վրդովվեցա), ամա ի՞նչ կարի անիլ. իշխանավոր էր. առում  
էր, պտի սուս կենացի։ Վերջը երբոր խոսքը կտրեց, ասե-  
ցի. — Հա՛յր սուրբ, ծառա եմ կարգիդ, իրավունք կտա՞ս որ  
խոսեմ. — Հա՛, խոսիր, ասեց. թե քեզ արդարացնելու բան  
ունիս, ասաւ — էն ա ես էլ էս առակն ասեցի։ — Մին անգամ,  
հայր սուրբ, ասեցի, մոլլա նասրեդինի կնիկը գնում ա շա-  
հին գտնգատվում, թե շահն ապրած կենա, իմ մարդը ինձ  
կուշտ փորով հաց չի տալի, ինձ հմար զոր չի առնուած ա՛յ,  
տեսնում ես, տկլոր եմ, ասում ա, էս եմ, էն եմ, կնիկը հո-  
գի՛տաս, որ խոսիլը կցեց էլ տազ չի անիլ (չի լոիլ)։ Շահը

բարկանում առ էն սհաթին ֆարբաշ զրկում, մոլլա Նասրեդինին բերել տալիս:— էյ, մոլլա, ասում ա, նե՛ յուշուն արվադնաս խորակ ալմըսան— Հրամանքդ թուրքերեն գիտա՛ս, — խոսքն ընդհատելով հարցրեց քահանան Պետրոսին:

— Ու, լավ չեմ հասկանում,—պատասխանեց վերջինս:

— Լավ, քեզ հայերեն կասեմ, ամա հայր սուրբին թուրքերեն պատմեցի. — Հա՛, ասում ա, ա՛յ մոլլա, խի՞ կնկանդ հմար կերակուր չես առնում, որ մի կուշտ ուտի. խի՞ նրա հմար մի քանի ձեռք շոր չես առնում, որ մինը մաշելուց, մեկելը հազնի: Մոլլան պատասխանում ա. — Եահն ապրած կենա, ասում ա, դրա հմար օխտը մանի (պատճառ) ունեմ: — Ո՞րն ա օխտը մանին. մեկ մեկ ասա՛, հրամայում ա շահը. — առաջինն էն ա, ասում ա մոլլան, որ շիբումս մի շահի փող չկա, երկրորդը... Մնացած վեց մանին գլխիդ տված, — ասում ա շահը. կորի գնա՛: Հմի դուն ես, ասեցի, հայր սուրբ, ամբո փող որ չկա, ես ո՞րդիան աբրեշում աղլուխ առնեմ, ո՞րդիան զառ ճոթ գտնեմ. ո՞նց դուխաբոր մալականը վեր ունեմ տեղն օրինավոր Քրիստոս դնեմ: — Խի՞, — ասում ա. — Հայր սուրբը, — էսքան ժողովուրդ ունես, կարո՞ւմ չես մընին մին աղլուխ առնիլ տալ, մընին մի զառ ճոթ. յա խի՞ վեճունց Սարգսի տղին զրում չես, հրեն Թիֆլիզ նստած ա, մին լավ Քրիստոս առնի զրկի: Ասում եմ, հայր սուրբ, ծառա եմ քե, ախար «էն վաղ էր որ էշը կաղ էր», հիմի էլ ո՞վ ա տերտերի խոսքին մտիկ տալի, էլ ո՞րդիան ա հավատ մնացել, բարեպաշտութին մնացել. առաջ դրուստ ա, քահանաներն ին ժողովրդին պլոկում, ամա հըմի ժողովուրդն ա քահանի վրեն ընկել՝ ուզում ահատի փարացեն հանի, յա չէ, զլիսի գրակը թոցնի: Մի կտոր հացը որ ուտում են, հենց գիտում են թե՝ հարամ ա, տեղից վեր կացողը մեր գլխին ա քոմիտում (խփում), էլ ասում չեն թե ինչ ենք տվել էս խեղձերին, որ էսքան պահանջում ենք: Հիմի, ասում եմ, էս այածումը (ժամանակում), որ եղբայրն ուզում ա եղբորը խեղձի, որդին ուզում ա հորը ծախի, մարդ կարա՞ բարեգործու-

թենի անուն տա՞լ: Հայր սուբբը տեսավ, որ դրուստ եմ  
սսում, էն ա սուս կացավ:

— Հըմի դու ես, որդի, — դարձավ քահանան Պետրո-  
սին, — ասում ես ըստի բաղ շինի, բախչա շինի: Խոսք շու-  
նեմ, լավ ես ասում, ամա պըտի էն էլ մտածես թե՝ էս քյա-  
սիք դերը ո՞րդիան ըտունք անի: Ախար ըստի հող փորելու,  
ծառ տնկիլու, շափար (ցանկապատ) քաշիլու հըմար փո՞ղ  
ա հարկավոր, թե ո՞չ Յա ես փող ո՞րդիան գթնեմ. փող որ  
ունենամ, խի՞ դենց դարտակ բաների կտամ, հրեն, ա՞յ,  
Խոզա Մարութը թումանին իրեք շահի շահ է տալիս. ասում  
ա, ա' դեր, թե որ հարյուր մանեթ բերես, քեզ տարին տաս-  
նութ մանեթ շահ կտամ: Տասնութ մանեթը գիդա՞ս, մի տուն  
քյովիաթ (ընտանիք) կկառավարի, ամա հարյուր մանեթն  
ինձ ո՞վ ա տվել:

— Երեկ դու ինձ համբերություն էիր քարոզում. — դար-  
ձավ ընկերս ինձ՝ ուստերեն լեզվով, — այժմ ասա՛, խնդրում  
եմ, ի՞նչպիս անեմ որ Հայհոյեմ այս մարդուն:

— Հայհոյե՛լ, ինչո՞ւ, — հարցրի ես զարմանալով:

— Ի՞նչպես թե ինչո՞ւ մի՞թե քեզ շեն զայրացնում սրա  
առարկությունները:

— Բնավի:

— Եվ ոչ էլ ա՛յն, որ սա տոշորվում է հարյուր ոութի  
ունենալու և այն շահեցնելու տեսչո՞վ:

— Եվ ոչ էլ այդ:

— Դու ինձ վրդովում ես:

— Եթե արդարությամբ մտածես, շես վրդովվիլ: Քահա-  
նան մեղավոր չէ, որ տգետ է այդ աստիճան:

— Բայց հո մեղավո՞ր է, որ տգետ լինելով՝ դիմել է  
քահանայության:

— Ոչ էլ այդ դեպօւմն է մեղավոր: Մարդուն հաց էր  
հարկավոր և ահա այդ հացը ձեռք բերելու համար նա ընտ-  
րել է քահանայությունը:

— Բայց ախար նա իրավունք շուներ:

— Իրավունք ճանաշելու համար, մարդ, նախ և առաջ,

տգետ շպետք է լինի: Մի՞թե դու կարող ես իրավունքի տեսակետից մեղադրել քո եղին, եթե նա հարևանի բակում փափուկ խոտ տեսնելով՝ մոտենա և ուտե: Այդ դեպքում հանցավորը ոչ թե եղը, այլ դու կլինես, որ չես կապել անբանին, կամ թե քո հարևանը, որը չէ փակել յուր դուռը:

— Այդ ասելովդ մենք ո՞վքեր ենք:

— Դու եպիսկոպոսն ես, որ ձեռնադրել ես տեր Մակուշին, իսկ հարևանդ՝ ժողովուրդը, որ իրեն հանձնել է նրա ձեռքը:

— Եդ՛ խոժ ինձանից եք խոսում,—յուր անունը լսելուն պես, մեջ մտավ քահանան,—դե հայեվար խոսեցիք, ես էլ հասկանամ:

— Այս՝ տեր հայր, քեզանից ենք խոսում,—պատասխանեց Պետրոսը:

— Բա ի՞նչ եք խոսում:

— Ասում ենք վա՞յ էն ժողովրդին, որի քահանան տեր Մակուշն է:

— Խի՞ եք ըդենց ասում, որդի, —հարցրեց քահանան այնպիսի մի ճնշված ձայնով, որ ես խղճահարվեցա:

— Որովհետեւ դու տգետ ես,—պատասխանեց Պետրոսը կոշտ սառնարտությամբ:

— Այդ արդեն շափազանց է, պարոն,—նկատեցի կամացուկ և միևնույն ժամանակ վրդովվելով:

— Ընդհակառակը դեռ քիչ է, —հարցրեց Պետրոսը և ապա դառնալով քահանային հարցրեց.—Դու նեղանո՞ւմ ես, որ ես տգետ եմ ասում քեզ:

— Խի՞ եմ նեղանում, որդի, զահիլ ես, ասում ես, որ ահիլ (հասակավոր) լինիս, կմտածես թե էս մարդն ի՞նչ մեղավոր ա, որ աստոծ սրան անուսում աստեղծել:

— Ինչո՞ւ, աստված ո՞րին է ուսումով ստեղծել:

— Ո՞նց թե որին. ա՛յ, մինը հենց քեզ, մինն էլ քո ընկերին, հրեն քաղաքն էլ լիքն ա ձեզ նմաններով:

— Մենք էլ քեզ պես անուսում ենք ծնվել, բայց հետո մեծանալով, աշխատել ենք, շարչարվել և ուսում առել:

— Խի՞ ես էղենց ասում, Պետրե-ջան, — մեջ մտավ մեր Հյուրընկալը. — թե որ քու հերը, Ակոր աղան ըրլիր, դու ո՞նց կարիր հուսում առնիլ:

— Այ, քու հորն օղորմի, ա՛ Մուք, մի ըտենց խոսա՛ է՛, տեսնում ես քու գերին նեղն են լծել, — քաջալերեց քահանան գյուղացուն և ինքն էլ, կարծես սիրու առնելով, դարձավ Պետրոսին.

— Հը՛, ըստուք ի՞նչ պատասխան ունես, դե տո՛ւր:

— Ի՞նչ պատասխան պիտի ունենամ: Իմ հայրը, իհարկե, վճարել է իմ ուսման վարձը, բայց ես էլ հո աշխատել ու շարշարվել եմ, օրերս պարապ չե՞մ անցրել:

— Դե լավ, հմի լսի՛ր: Քո հերը փող ա ունեցել, քեզ կարգացրել ա, բա իմ հերը, որ փող շոներ, ո՛րդիան կարդացներ: Ինքը մի խեղճ նախրապան ա լիլ. քարով, կարկուտով (մեծ դժվարությամբ) մի կտոր հաց ա ճարել մեզ ուտացրել, մի գազ կտավ ա գտել ծակել, մեր ճիւր գցել, վերջն էլ հանդումը շատ բաց պառկելուց, արեկի ու անձրկի հետ կովելուց ու հազար ու մի շարքաշութին անելուց հիվանդացել, մեռել ա ու մեզ էլ անտեր, անտիրական թողել: Աստոծ ա իմանում թե՛ մենք ու մեր խեղճ մերը ի՞նչ օրեր ենք տեսել, ի՞նչ նեղություններ ենք քաշել: Մեր ամեն մի թիքա հացը լեղի ու արտասուր ա լել: Դժար բան ա աղքատութինը, էն էլ գեղի միջումը, աստոծ ոչ շանց տա ձեզ... Հմի, ո՛րդի, ես որ էն խեղճ դրութենում էսքան էլ գրաճանաշ եմ գտոել, գրել կարդալ եմ սովորել, քանի տարի վանքումը տիրացութին արել ու վերջը էս մեծ գեղի վրա քահանա դառել, էս քի՛շ բան ա: Թե որ մինը քեզ վրա խարջած փողն ինձ վրա խարջեր, ո՞վ գիդա հըմի փիլիսոփա կլեի դառած: Ամա, դու տեսնո՞ւմ ես, ըսկի մարիփաթին (քաղաքավարությամբ) խոսալն էլ չես սովորել: Կբաշխես, որ էս խոսքը երեսիդ ասում եմ. ամա ես քու հոր տեղն եմ. հախկ (իրավունք) ունեմ: Ընչի՛ հըմար եմ ասում, գիտա՞ս. այ, դու դարիք (օտար) տղա ես, եկել ես մեր գեղը, ես էլ ըստեղի քահանան եմ. շնորհակալ եմ, մենծ ու պստիկ պատվում են: Բայց ես,

ոնց որ Քրիստոս ասում ա, որ խոնարհեցցի զանձն, բարձրացցե, ես էլ խոնարիվեցի, եկա որ բարի գալուատ ասեմ ձեզ, ու օրհնեմ, ամա դու իմ գեղականի առաջ, ինձ անպատիվ արիր: Ասում ես՝ վայ էն գեղին, որ դու նրա քահանան ես, ասում ես դու տպետ ես. քիչ ա մնում, որ ասես թե՛ հայվան ես: Ախր ըսենց շեն խոսիլ, ո՞րդի, աշխարհում մինը տպետ կըլի, մինը հուառմնական, մինը աղքատ կըլի, մինը հարուատ, ամա, բոլորի աստոծը մեկ ա. ոչ հարուատն ու հուսումնականը պիտի հմապարտանան, ոչ էլ տպետն ու աղքատը ոտի տակ ընկնեն: Ի՞նչ մեղքս ծածկեմ, ո՞րդի, առաջ մի քիչ դարդ էի անում, որ Վեղունց Սարգսի խոսքին լսեցի ու որդիքս հուսման շղրկեցի: Ամա հմի փառք եմ տալիս աստծում, որ զրկել չեմ. չուն (որովհետեւ) տեսնում եմ, որ հուսումը մարգին հրեշտակ շինելու տեղ՝ սատանա ա շինում: Դե որ ըսենց ա, աղբեր, խի՝ եմ հուսման զրկում, որ վերջը փոշմաննմ:

Տեր հոր վերջին խոսքերը տպավորություն արին Պետրոսի վրա և նա լոեց: Բայց ես քահանայի սիրու ամոքելու համար, կամեցա խոսակցությունը մեղմով վերջավորել, ուստի հարցրի.

— Դու, ուրեմն, որդիներ ունիս:

— Ո՞նց չէ, չորս հատ, — պատասխանեց երեցը, կարծես, պարծենալով:

— Հասակավո՞ր են նրանք:

— Մենձը քսանութ տարեկան ա, մնացած երեքը մինը մնից էրկու տարով պակաս են: Չորսն էլ աժդահա (հսկա) տղամարդիկ են: Էրկուսին պսակել եմ. էրկուսին էլ, թի որ աստոծ հաջողի, գյալաշաղ (գալ տարի) պիտի պսակեմ:

— Չորսին էլ, ուրեմն, անուսում ես թողե՞ւ:

— Զէ, վանահոր մոտ քիչ ու միշ կարգացել են. ընենց որ իրանց բանը յուլա կտանեն:

— Դու, ուրեմն, չէ՞ր կարող, գոնե, քաղաքի դպրանոցը ուղարկել նրանց, — կրկին մեջ մտավ Պետրոսը և այս անդամ, արդեն, գրգոված:

— Խի՞ չէի կարող:

— Բա ինչո՞ւ չուղարկեցի՞ր, մեզք չէ՝ որ շորա աժդահա տղամարդ, ինչպես որ դու ես անվանում նրանց, անուսում ես թողե՞լ:

— Ընդուր որ... ամա չէ՛, ըտուր մասին էլ վեդունց Սարգիսը կասի:

Տեր Հայրը դիտմամբ խույս տվավ Պետրոսին պատասխանելուց, որպեսզի նորեն վեճի լրոնվի նրա հետ:

— Ո՞վ է Վեդունց Սարգիսը, — Հարցրի ես:

— Հրեն ա՛յ, տունն ընդի ա. Էն մենծ մենծ շընարուցը տակին, — ասաց քահանան, ցույց տալով գյուղի Հարավակողմը, ուր մի ընդարձակ դարևանդի վրա բարձրանում էին մի խումբ գեղուղեց սոսիներ:

— Որդիքը քոնն են, ինչո՞ւ դու չես բացատրում թե՝ ինչո՞ւ ես նրանց անուսում թողել, — Հարցրեց Պետրոսը:

— Որդիքն իմն են, ըտենց ա, ամա Սարգիսն էր սարաբ (պատճառ), որ նրանց ուսման շղրկեցի: Ա՛յ, թե ուզո՞ւմ եք, գնացե՞ք Հարցրեք: Նա խելոք մարդ ա, սուտ չի խոսիլ: Դորդ ա, գեղացի ա, ամա Հարիր քաղաքացու խելք ունի գլխումը: Հարցրեք, նա ամեն ինչ տեղն ու տեղը կասի ձեզ: Մեհ, շատ խոսեցի, որդիք, գլուխներդ ցավացրի, կրախշեք, հըմի ես գնամ. բարով եք եկել, բարով էլ գնաք...

Այս ասելով տեր Հայրը ողջունեց մեզ վերջին անգամ և երեսը դարձնելով՝ ծանրաքայլ հեռացավ:

## Գ

Յանկանալով շարունակել մեր պտույտը, մենք իշանք դեպի Ճորակն, ուր Հոսում էր գյուղի լեռնային վտակը: Չնայելով զրի փոքրության, նա շարունակ խոխոջում, աղմուկ էր հանում, որովհետև իշնում էր աստիճանավոր բարձրություններից, որոնցից յուրաքանչյուրը, առանձին առած, ներկայացնում էր մի զատ գեղանկար պատկեր: Վտակի ափերը քերելով, մենք հետզհետե դիտում էինք այդ պատ-

կերները և գվարճանում: Մի տեղ ժայռերը միմյանց վրա կուտակված, փորձում էին, կարծես, վտակի հոսանքն արդիւ լել, իսկ սա ավագով ու խճով նրանց խորշերը լցած՝ յուր փրփրուն ալիքները գահավիժում էր ժայռերի բարձունքից: Մի ուրիշ տեղ մոշենին, վայրի վարդը, կամ նոնենին գետակի կրկին ափերը գրաված, իրենց ձկուն ոստերը դեպ իրար ձգելով և իրար շաղապատելով, կազմում էին ջրի վրա կանաչազարդ մի կամուրջ և այդպիսով հոսանքը մեր աշխերից ծածկում: Մի երրորդ տեղ ուտենին, կանաչագեղ ոստերն աշու ձախ տարածելով, հովանավորում էր մի փոքրիկ ու վճիտ լճակ, որի ջուրը, կարծես, կարկաչելուց հոգնած հանգստանում էր այդտեղ ժայռերի խորշում և յուր ջինչ հայելու մեջ արտացոլում թե՛ ափի կանաչազարդ ուտենին, թե՛ ժայռերն ու թուփերը և թե՛ երկնքի կապուտակը:

— Տե՛ր աստված, ինչո՞ւ մարդիկ այս գեղազվարձ վայրերը թողած, շնչառապո են լինում ապականությամբ լիքազաքներում: Մի՞թե նրանցից ամեն մեկի համար չի գտնը վիլ վայելչության մի անկուն այս ազատ լեռների մեջ, այս սիրուն ջրերի ափին, այս կապուտակ երկնքի տակ, — բացականչեց ընկերու՝ շրջապատող տեսարաններից զմայլվելով:

— Իսկ դու կարծում ես թե՝ բնության այս գեղեցկությունները անազարտ կմնայի՞ն, եթե մարդիկ հաստատվեին այստեղ, — հարցրի ես:

— Բնության գեղեցկությունները... ինչո՞ւ չէ, ո՞վ կադարտէր նրանց:

— Նույն ինքը մարդունա չի կարող ապրել առանց արդ գեղեցկություններն եղծանելու, առանց յուր շուրջն ավեր ու ապականություն սփռելու: Ընդհակառակն, ավելի լավ է, որ մարդկանց մեծամասնությունը խոնված է քաղաքներում, այդպիսով, գոնե, բնությունը ավելի քիչ է տուժում և նրա գեղեցկություններն ավելի քիչ են աղարտվում, իսկ սրանցով զմայլի գիտցող սակավաթիվ մարդկանց համար բնության մեջ տակավին մնում է մի բան, որը գոնե նրանք կարող են վայելել:

— Դու իրավոնք ունիս...—պատասխանեց ընկերս՝ մի փոքր մտածելուց հետո,—մարդը, արդարե, բնության եղծանիչն է. իզուր են կեղծավորները «բնության զարդ» անվանել նրան. իմ կարծիքով խոզը ավելի քիչ է վնաս պատճառում բնությանը, քան մարդը: Ի՞նչ ես կարծում, Մուքի, —դարձավ ընկերս հյուրընկալին, —եթե վեց ամիս շարունակ հարյուր խոզ պահեիք այս ձորում, նրանք շուտ կիշացնեին այս տեղերը, թի եթե այդքան ժամանակում հարյուր մարդ ապրեր այստեղ:

— Հեր օրջնած, խոզն ի՞նչ ա, որ ինչ փշացնի, —պատասխանեց գյուղացին ժապտալով. նա մի խեղճ հայվան ա, թե կաթուկից բանից գտավ կուտի, թե չէ, էն ա սաղ օրը խոխուալով ման ա դալու ու իրա հմար արածի, ծառը չի պոկելու, քարը չի շուռ տալու: Ամա թե որ ըստեղ հարիր մարդ ապրի, վեց ամիս չէ, վեց շաբթումն էլ վերանա (ավերակ) կանի սաղ ձորը: Քոլերը կրակ կտա, ծառերը կկոտքատի, կանաչը կմուռտառի (կապականե), ես ո՞ր մեկն ասեմ:

Այսպես խոսակցելով մենք անցանք ուրիշ կողմեր, դիտեցինք հինավուրց ջրաղացը՝ յուր հնատարագ շենքով ու կազմությամբ. պատեցինք գյուղացվոց մի քանի պարտեղները, որոնք ընկած էին գետի տափարակի ուղղությամբ, նայեցինք դրանց մեջ գտնվող մեղվանոցները, իրենց հնաձև, շաղախապատ փեթակներով, և, վերջապես, նորեն շրջան առնելով՝ բարձրացանք դեպի գյուղը:

— Երեկ, հիշո՞ւմ ես, երբ արեմ այրում էր, ահա՝ այս սոսիներին էի ուզում հասնել, —սկսավ խոսել Պետրոսը՝ երբ մոտեցանք այն դարեւանդին, որի վրա քահանայի ցուցց տված սոսիներն էին բարձրանում, —այժմ էլ բավական հոգնած ենք, անցնենք այս լանջի վերը և հանգստանանք այդ սիրուն ծառերի տակ:

— Անցնենք, —ասացի ես և ապա դառնալով մեր հյուրընկալին՝ հարցրի. —ո՞րին են այդ սոսիները:

— Սոսին ո՞րն ա:

— Ա՛յ, այս ծառերը:

— Թա էդ լընար ա, դու խի՞ սոսի ես ասում, — հարցրեց  
նա:

— Հայերեն շինարին սոսի կասեն, — բացատրեցի ես:

— Որ ըտենց ա, բաս լընարը թուրքերեն ա՞:

— Այո՛, — հաստատեցի ես:

Դլուղացին գլուխը շարժեց և ապա նորեն դառնալով  
մեզ՝ հարցրեց.

— Ես մենք որ լընարու անումն էլ հայեվար ասելը գի-  
տում չենք, մեր ճարն ի՞նչ կըլի, հավատաս, քանի գնանք  
էնքան էվելի հայվան դառնանք:

— Ինչո՞ւ, բարեկամ, մի բառ շիմանալով՝ մարդ հա՞յ-  
վան կդառնա, — հարցրի ես ժպտալով:

— Աղբաթիսեր, ես օր մի բառը կմոռանանք, էպուց  
էրկուսը, գալ օրն իրեքը. մին էլ էնա կտեսնես, որ խոսքի-  
կեսը հայեվար ենք խոսում, կեսը՝ թուրքեվար: Մարդ որ իրա-  
ազդի լեզվով խոսիլը գիտա ոչ՝ հայվան չի բա ի՞նչ ա:

Ընկերս նայեց ինձ խորհրդավոր հայացքով և հարցրեց.

— Ի՞նչպես ես գտնում այս գյուղացու կարծիքը:

— Շատ բանավոր, — պատասխանեցի ես. ապա Մու-  
քիին դառնալով՝ նկատեցի, — ինչո՞ւ շասացիր թե՝ ո՞ւմն են-  
պատկանում այս սոսիները:

— Ես սոսիքը Վեդունց Սարգսինն են, — պատասխա-  
նեց նա:

— Հապա ո՞րն է նրա տոմը, — հետաքրքրվեցա ես:

— Հենց, այս ծառերից դենը. կտուրն ըստիան էրկում  
ա, — ցուց տվակ գյուղացին:

— Ի գեալ, այդ Վեդունց Սարգսից մի հարցնենք՝ թե  
ինչո՞ւ է քահանային արգիլել յուր որդիքը ուաման դրկելու, —  
խոսեց Պետրոսը:

— Անշոշտ կհարցնենք, երկի մի պատճառ է ունեցել,  
բայց նախ հանգստանանք այս սիրում ծառերի տակ, — հա-  
րեցի ես:

— Լավ կըլի, գնացեք. էդ ծառերի տակը որ նստեք:

կմխիթարվեք. իս էլ մի մեր գյումովն (գոմովն) ընցնեմ, էլ շուտ եղ կդամ տում, — ասաց Հյուրընկալը:

— Դու ուրեմն չե՞ս գալիս մեզ հետ, — Հարցրեց ընկերս:

— Զէ, ձեզ մատաղ, էս անգամ դուք մենակ գնացեք, — պատասխանեց գյուղացին և ճանապարհը ծոեց:

Ըստ երեսովին, նա շկամեցավ ընկերանալ մեզ, վախենալով թե՝ մի՛ դուցե Պետրոսը դարձյալ յուր անտակահարցու ու փորձով ամաշեցնե իրեն Վեդոնց Սարգսի առաջորի ով լինելը, սակայն, մենք շդիտեինք:

Երբ այս մասին իմ կարծիքը հայտնեցի Պետրոսին, նա ուսերը թոթվելով ասաց.

— Շատ կարելի է... բայց և այնպես, նա ինչո՞ւ պիտի ամաշի, եթե ևս, մինչև անգամ, շատ ջիմար բաներ խոսեմ:

— Կամաշի նրա համար, որ դու յուր Հյուրըն ես: Չե՞մ լսել հայկական առածը թե՝ «պիտը չի ամաշիլ, ոժի տերը կամաշի»:

Պետրոսը հարեց աշքերը վրաս, կարծես, կամենալով հարցնել թե՝ մի՛թե ինքը այնքան անմտաբար է խոսում, որ ամաշեցնում է նույնիսկ մի հյուրընկալ գյուղացու:

— Այդպես է, բարեկամ, — շարումակեցի ես, — անհամբերովիտունը վնասում է ամենքին, իսկ թեզ՝ առավել ևս Խորհուրդ եմ տալիս շտապել երեք կարծիքներ հայտնելու, եթե գիտես դրա համար ժամանակ ունիս դեռ: Հին փիլիսոփաների պատվերը «քիչ խոսիր և շատ լսիր» ամենից ավելի դու պիտի կատարես:

— Այս անգամ պիտի աշխատեմ բոլորովին շխռսել, միայն թե դու կարողանաս ինձ հետաքրքրող հարցերն առաջարկել այդ գյուղացուն: Ճիշտն ասած, ես շատ եմ ցանկանում իմանալ թե՝ ինչո՞ւ նա յուր հարեաններին այդպիսի հետադեմ խորհուրդներ է տալիս: Ես շատ հայ գյուղերում եմ եղել և միշտ էլ զրուցներ ունեցել գյուղացիների հետ, բայց ինձ երբեք չի պատահել հայ գեղջուկ, որ ուամեն և կրթության դեմ խոսեր: Ընդհակառակն, ամեն մինի փափառը եղել է այն, որ կարողանա ուսում տալ յուր որդուն: Եղ

այդ ես համարել եմ հայ գյուղացու բնավորության համակրելի գծերից մինը: Այժմ ինձ թվում է թե՝ այդ Սարգիսը, որի մասին խոսում ենք, նախապաշարյալ ապուշին մեկն է լինելու:

— Դու դարձյալ շտապեցիր քո կարծիքն հայտնելու, առանց այդ մարդուն տեսած կամ լսած լինելու,—նկատեցի ես:

— Ով որ ընկերին խորհուրդ է տալիս՝ թողնել որդուն անուսում, նրան կարելի է ապուշ անվանել, նույնիսկ առանց նրան տեսած կամ լսած լինելու:

— Բայց կարող է պատահել, որ այդպիսի խորհուրդ տալու համար մարդ ունենա մի բանավոր պատճառ:

— Բանավոր պատճառ... խելափարվել ես, ի՞նչ է, մի՞թե կարելի է դրա համար բանավոր պատճառ ունենալ:

— Գուցե այդ Սարգիսն ոմի:

— Անկարելի է: Մի մարդ, որ պաշտպան է հանդիսանում տգիտության, նա չի կարող որևէ ուրիշ պատճառ ունենալ, բացի այն, որ կլինի ապուշ, կամ խելափար: Իսկ այդ Սարգիսը եթե ապուշ չէ, անշուշտ ա'յն ցեցերից մինն է, որոնք այսպիսի անհայտ անկյուններում ապրելով՝ զվարծություն են համարում իրենց համար, ժողովրդի միտքն ու Հոգին թունավորելը: Մի՞թե, արդարե, կարելի է ուաման ու գիտության դեմ խոսել, այդ միենույն է թե ասես խավարն ավելի դյուրական է քան լուսը:

— Երբեմն խավարը ոչ միայն դյուրական, այլ և ավելի օգտավետ է լինում,—նկատեցի ես Ժպտալով:

— Լոփ'ր, լոփ'ր, խելքը ցնդել է, լավ է որ ոչ չէ լսում մեզ, այդ իմաստությունը ո՞րտեղից ես ամբարել...—իրար հետեից մրա տվավ Պետրոսը:

— Տեսա՞ր որ էլի շտապեցիր:

— Հապա ի՞նչ պնեմ, միթե՝ խավարը երբեկցե կարող է դյուրական, կամ օգտավետ լինել մարդուն:

— Իսկ եթե մարդու աշքերը հիմա՞նդ, կամ վնասված լինեն:

— Այդ ուրիշ բան է, որու նյութական լույսի ու խավարի մասին ես խոսում: Չափազանց պայծառ լույսը, այո՛, հաճելի չէ լինում վնասված աչքերին:

— Հոգվոր ու մտքի աշքերն ել երբեմն վնասվում, կամ հիվանդանում են:

— Ուրեմն դրանց ել հոգեկան կամ մտավո՞ր խավարն է օգտում:

— Եթե չէ օգտում, գեթ, հանգստություն է բերում: Կան գեղեր, որոնք չեն բուժում սուր ցավ պատճառող հիվանդությունը, բայց առ ժամանակ թմրեցնում են սրա պատճառած կոկիծը: Հիվանդն այդպիսի դեղը հաջությամբ է ընդունում:

— Այդ մեկի միտքը չեմ հասկանում:

— Եյդ ել կհասկացնեմ Վեդոնց Սարգսի կարծիքները չաելուց հետո:

Այսպես խոսակցելով մենք ավարտեցինք դարիվերը և ժոտեցանք սոսիներին: Դրանք հինավորց ծառեր էին, թվով մի քանի հատ, որոնք իրարից անջատ բուսած էին գյուղի վրա իշխող այդ դարեվանդի վրա: Նրանց վիթխարի բուները՝ քարձր ու գեղուզեց բազուկներով և լայնատարած սոտերով՝ գրավել էին հարթավայրի մեծագույն մասը: Սալարթախիտ ճյուղերի հովանին ծածկում էր ոչ միայն կանաչազարդ տափարակն ու դարեվանդի լանջերը, այլ և Վեդոնց Սարգսի տունը, որ գտնվում էր հարթավայրի արեգընդգեմ կողմը և արտաքինով զանազանվում էր գյուղի հասարակ տներից: Նա առջևն ուներ բնդարձակ բակ, որի մի մասում զետեղված էին դոմն ու հորթանոցը, իսկ հետեւից՝ պտղատու ծառերի մի պարտեզ, որ ոռոգվում էր լեռնալանջի կողմից իշնող մի առվագով:

— Ի՞նչ հրաշալի հովանոց է, ճիշտ որ Աստվածաշեն, — բացականչեց ընկերս և նստելով փոքրիկ կոճդի վրա, որ դրված էր սոսիներից մինի տակ իբրև նստարան, հանց գլխարկը, ճակատի քրտինքը սրբելով, շարունակեց, — նըստի՞ր, բարեկամ, և բացատրիր ինձ թե՛ ինչու «անտառի լավ տանձը արջն է ուսում»:

— Ո՞ր տանձի և ո՞ր արջի մասին է խոսքը, — Հարցող  
ես, նստելով նույնպես կոճղի վրա:

— Ահա՝ այս սիրուն հովանոցի, որ արժանի էր գեղանի  
մի իշխանութու սեփականությունը լինելու, բայց որ վիճակ-  
վել է մի ապուշ գյուղացու:

— Մի գեղանի իշխանութու... այս՝ իրավունք ունիս, —  
Հարցողի ես ժպտալով, — և, անշուշտ, այնպիսի իշխանութու,  
որ լիներ նորատի, քնքույշ և գեղահասակ, գրավիչ գեմքով,  
կախարդող աշքերով և մինույն ժամանակ, անմեղ՝ ինչպես  
հովտի շուշանը և կյանքով լի՝ ինչպես գարնան առավոտը...

— Դրանք արդեն ավելորդ մանրամասնություններ են:

— Հոգ չէ, լսի՛ր: Եվ այդ գեղեցկուհին ապրում լիներ  
այստեղ՝ հոյակապ դղյակի մեջ, շրջապատված գեղանի նա-  
միշտներով: Եվ մի գեղեցիկ օր, դու քո որսորդական հա-  
գուստներդ հագած, որսորդի մախաղն ու հրացանը ուսիդ,  
որսկան շունը հետեւիցդ ձգած՝ անսպաս կերպով հայտնվեիր  
այստեղ:

— Կատակդ թող:

— Եվ տեսնեիր որ այս սոսիների հովանում, շքեղ գտ-  
հավորակի վրա հանգստանում է դղյակի մանկամարդ տի-  
րուհին և Մորփեոսը իր քնարեր թմբերով նինջ է սփռել նրա  
գեղանի աշերին, իսկ լեռնից իջնող այս առվակը օրոր է եր-  
գում նրա ականջին.... Դու, իհարկե, իսկույն հիացմունքից  
այլայլված, ետ կքաշվեիր այս բնի հետեւ և գողունի հայաց-  
քով դիտելով գեղեցկուհուն՝ քեզ ու քեզ կասեիր. — «Ո՛, եթե  
ես իրավունք ոմենայի շոգել սրա առաջ և աղոթել»... Եվ  
ապա մտածելով, որ դու այդ կարող ես անել, առանց գե-  
ղեցկուհուց տեսնվելու և նրանից նախատելու, կշոգեիր և  
կաղոթեիր... Քո այդ վարմունքը, իհարկե, կզարմացներ քո  
շանը և նա յուր այդ զգացմունքը արտահայտելու համար՝  
կակսեր հաշել: Սյդ անսպաս ձայնից կզարիներ գեղեցկու-  
հին և տեսնելով քեզ յուր առաջ ծնկաշոք, բարկացայտ ձայ-  
նով կքացականչեր, — «Ո՞վ ես դու՝ հանդուգն արարած, որ  
համարձակվում ես խանգարել իմ մենավոր հանգստությու-

նըս: Եվ մի ակնթարթում յուրս կթափվեին դղյակից նա-  
ժիշտներն ու ծառաները և պարանով կապկալով քեզ, կա-  
ռաջնորդեին գեպի դղյակի զնդանը...

— Լավ, բավական է:

— Սպասիր, վերջացնեմ: — Հետո, մի սիրուն օր, գե-  
ղանի իշխանուհին յուր պարտիզում զբոսնելիս կլսեր, որ  
մինք երգում է յուր զնդանում մի շատ տիսուր, բայց հրա-  
զալի երգ: Նա հանկարծ կմտաբերեր բանտարկյալ որսորդին,  
բերել կտար նրան յուր մոտ և մանրամասն հարցաքննելով՝  
կիմանար որ դու չոգել էիր իր առաջ ոչ թե իրեն անարգելու,  
այլ պաշտելու նպատակով: Ապա քո արկածներով լի ան-  
ցյալի պատմությունը լսելով՝ կգորովվեր քեզ վրա, կսիրա-  
հարվեր և հետդ ամուսնանալով՝ քեզ իր սրտի և դղյակի իշ-  
խան կկարգեր:

— Ի՞նչու համար է այդ կատակը, — հարցրեց ընկերս,  
այս անգամ արդեն մի քիչ բարկանալով:

— Նրա համար, որ դու և քեզ հետ էլ շատերն այն երի-  
տասարդներից, որոնք, իրենց ասելով, գիշեր ու ցերեկ ժո-  
ղովրդի ցավերը դարձնելու վրա են մտածում, որոնց մըշ-  
տական զրուցը գիտության վերջի խոսքի, բարձր գաղա-  
փարների և ազատ մտքերի համար է լինում, շեն կարողա-  
նում հանդուրժել, երբ տեսնում են, որ խեղճ արշին մեկը  
անտառում գտել է մի տանձ և ուտում է. շեն կարողանում  
ներել, որ այդ սիրուն սոսիները պատկանում լինին մի խեղճ  
գյուղացու և ոչ թե մի գեղանի իշխանուհու: Կարծես, բա-  
վական չէ, որ այդ իշխանուհի կոշվածները և՛ գեղեցիկ են,  
և՛ հարուստ, և՛ բախտից գուրգուրված, դեռ նրանք պետք է  
տիրեն նաև երկրագնդի բոլոր գեղեցիկ անկյուններին: Կա՞  
որդյոք այդ խոսքի մեջ խելք, արդարություն, կամ ազատ  
մտածություն, որով սիրում եք դուք ամեն տեղ պարծենալ:

— Սպասի՛ր, բարեկամ, դու ասածս շհասկացար, ուս-  
տի և իմ վերաբերմամբ արած դիտողությունդ անտեղի է: Ես,  
իհարկե, միշտ կցանկանամ, որ երկրագնդի վրա գտնված  
լավագույն անկյունները, պարարտ հողերը, պտղաբեր հո-

պիտները և այլն, պատկանեն միայն խեղճերին, ձակատիք բրտինքով ապրողներին և ոչ թե բախտից երես առած մարդկանց: Սակայն սոսիների մասին ասած բացառիկ նշանակություն ուներ, հետևապես և դու ուրիշ կերպ պիտի հասկանացիր: Ես ուզում էի ասել թե՝ որովհետև վեդունց Սարդիսը մի խավարամիտ և ուսման ու գիտության դեմ խոսող ու գործող մարդ է, ուրեմն շարժե, որ այս գեղավայրը պատկանե նրան:

— Լավ, ենթադրենք թե այդպես է, հապա ինչո՞ւ շասացիր թե՝ լավ կլիներ, որ այս սոսիները պատկանեին մեր Հյուրընկալ Մուքիին, կամ մի ուրիշ, քո կարծիքով ավելի ուսումնասեր գյուղացու, այլ ցանկացար, որ նա լինի մի գեղանի իշխանություն սեփականություն:

— Ասացի հենց այնպես, առանց մտածելու:

— Ուրեմն ասել ես ավելի անկեղծորեն, քան կարող էիր ասել՝ իթե մտածեիր: Առաջին դեպքում դու արտահայտել ես քո իսկական զգացմունքը, մինչդեռ երկրորդ դեպքում պիտի աշխատեիր վարագուրել այդ զգացմունքը և ասել այն՝ ինչ որ, առհասարակ, ընդունված է ասել՝ լուսամիտ և աղատախոհ երևալու համար:

— Միսալվում ես:

— Ինձ համար նշանակություն ունի այն, ինչ որ ասացիր առանց մտածելու: Մի՛ աշխատիր արդարանալ: Դրանով միայն ծանրացնում ես հանցանքդ: Թե՛ դու և թե՛ նրանք, որոնք հրապարակն աղմկում են արդարության և ազատամտության անունով, սառւմ են միշտ ու կեղծում: Եվ դուք մեղավոր չեք: Մի ֆողովուրդ, որ մոտ հազար տարի ապրել է ստրկական կյանքով, չի կարող ծնել այնպիսի որդիք, որոնք ազատ մտածելու հետ միասին կարողանային, նաև, ազատ գործել: Ազատամտության գլխավոր հատկանիշն այն է, որ, նախ՝ ներողամիտ աշքով նայես ընկերոջդ թերության ու սիսալանքների վրա, երկրորդ՝ ցանկանաս որ նա ևս վայելեա ա՛յն բարիքները, ինչ որ դու վայելում ես, կամ կցանկանացիր վայելել, և երրորդ՝ որ նրան էլ իրավունք տան

խոսելու կամ գործելու այնպես, ինչպես որ դու ևս խոսում կամ գործում: Բայց ձեզանից քանիսի՞ մեջ կարելի է գտնել այս օրինակ աղատամտություն: Թուրքը մի առած ունի, որ ասում է՝ «կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կգա»: Այս ճշմարտության մենք հանդիպում ենք ամեն քայլափոխում. թե ինչպե՞ս, բացատրեմ:—Մեր խոսքն ու գործը, առհասարակ, չեն հարմարում իրար: Խոսքն առաքինական է, գործը՝ մոլեկան: Ներբող ենք կարդում աղատամտության և արդարության համար, բայց առանց խղճահարվելու բռնանում մեր մրցակցի վրա և կամ ընկերի իրավունքը հափշտակում: Դըրվագում ենք գութն ու բարեգործությունը, և, սակայն, առանց ամաշելու, հանում մեր եղբոր վերջին շապիկը, առարկելով թե՝ դա մեղ է պատկանում: Ինչո՞ւ է այս այսպես: Նրա համար, որ «կաթի հետ» միասին ստրկության, բռնության և անարդարության շատ սաղմեր են մտել մեր արյան մեջ և նրանք միայն մեր «հոգու հետ պիտի դուրս գան»:

— Դու շափազանցում ես:

— Զեմ շափազանցում, այլ ասում եմ ճշմարտությունը: Եվ այդ դեպքումն էլ, ինչպես ասացի, անպայման չեմ մեղադրում ոչ քեզ, ոչ քո նմաններին: Խղուր է աշխարհը հայ-հոյում հրեաներին, թե նրանք չեն պարապում ծանր աշխատանքով, թե նրանք երկշոտ են, խաբող, վաշխառու և այլն: Այդ հո իրենք չե՞ն այդպես արել իրենց, այլ աշխարհի բըռնապետությունը: Եթե այսօրվա հրեան, որի նախահայրերը, լսու Մաքս Նորդառու, «շիտակ են եղել և հպարտ», փախչում է աշխատանքից, այդ նրա համար է, որ նրա երակներում դեռ վագում է եղիպատացվոց աղյուս գործարաններում շարաշար աշխատող հրեայի արյունը: Եթե նա ստում է ու թաքցնաւմ, այդ նրա համար է, որ հրեական արուները խեղդող Փարավոնի և Երուսաղեմի գերյալներն այրող նաբուգողնոսորի ներշնչած սարսափը դեռ հալածում է նրան: Եթե նա խնամում և պինդ է բռնում ոսկու քսակը, այդ նրա համար է, որ նույն ոսկու զորովթյամբ հին բռնակալների կատաղությունը սեղմող և խարուկահանդեսների կրակը մա-

բող հրեաների հոգիները դեռ շշնջում են այսօրվա հրեայի  
ականջին թե՝ «ոսկու մեջ է միայն քո փրկությունը»: Այս  
տեսակի ետից էլ կարող ենք նայել մեր բարոյական շատ թու-  
րթյունների վրա: Եթե իրավ է, որ դարերի ընթացքում մեր  
հայրերն ու պապերը հեծել են անուր բռնությունների տակ  
և նրանց թոռներն ու թոռնորդիները շարունակ ծառայել  
անիրավությամբ ու անարդարությամբ իշխող բռնակալների  
կամքին, ինչո՞ւ պիտի զարմանանք, թե նրանց որդիներից  
մինը, թեկուզ Պետրոս Մինարյան անունով, այնքան մեծ  
նշանակություն տա իշխանին, կամ իշխանուհուն, որ մինչև  
անգամ ցանկանա վեդունց Սարգսի սոսիները հատկացնել  
նրանց:

— Եթե իմանամ թե իմ մեջ խոսել է, ստրկամտության  
հոգին, հուսահատությունից ինձ կսպանեմ:

— Ինչո՞ւ ես հուսահատվում, որու հո մենակ չես, քեզ  
նման հաղարավորները կան: Բայցի այդ ես քեզ կարող եմ  
ժիբարել նաև մի ուրիշ բացատրությամբ: Այդ այն է, որ  
մարդ արարածը, որքան էլ որ զարգանում է և գիտության  
լուսով լուսավորվում է, այսուամենայնիվ, նա իր մեջ դեռ  
կրում է բնազդներն այն հին մարդի, որը վայրենության դա-  
րեցրջաններում ապրելով՝ վախենում էր փայլակից ու որո-  
տից, որ ստեղծում էր յոր համար գերբնական և անտեսա-  
նելի ուժեր ու նրանց երկրպագում ու զոհում: Այն ժամա-  
նակներից սկսած մարդը սովորել է հպատակել գերազանց  
ուժին և նրա վրա նայել հիացմունքով: Այդ հպատակության  
ու հիացման մեջ նա գոհություն է գտնում և շատ տկարա-  
միտներ, մինչև անգամ, անհանգստանում են, երբ տիրող  
կամ բռնացող ուժը վերանում է մեջտեղից: Այդ առաջ է գա-  
լիս նրանից, որ տկարամիտը վախենում է թե՝ մի գուցե ազ-  
նվատոհմ գաղանի տեղը բռնե իրեն հավասար մի ոշխար...  
Ես տեսել եմ զարգացած և ինքն իրեն ազատախոհ համարող  
մարդ, որ դառնացել ու սրտմտել էր՝ իմանալով, որ սեփա-  
կան աշխատասիրությամբ հառաջադիմող անտոհմիկ մի գա-  
վառացի գնել է Թիֆլիզում՝ անհաշիվ շոալլությամբ հոր

զույքը վատնող մի իշխանի կալվածքը: Նա սրտմտում էր ոչ  
թե նրա համար, որ իշխանը շվայտ էր կամ անառակ, այլ  
նրա՝ համար, որ անտոհմիկ գալվառացին տիրում է իշխա-  
նական կալվածքին: Ուրեմն զարգացած մարդը չէր մեծա-  
պրում աշխատասիրությունն ու գործունեությունը, որովհետի-  
նա ազդ տեսնում էր անտոհմիկ գալվառացու մեջ. չէր էլ գար-  
շում անառակությունից ու շվայտությունից, որովհետև դա  
յուր աշքում մեծ համարվող իշխանի ունակությունն էր: Այս-  
պիսով ուրեմն, այդ զարգացած մարդու մեջ միաժամանակ  
գործում էին՝ թե նախկին վայրենի ստրկական բնադր և  
թե՛ գոեզիկ նախանձը, որը թույլ չէր տալիս նրան ծագու-  
մով իրեն հավասար գալվառացուն տեսնել իշխանական կալ-  
վածքի տեր: Այս տեսակետով էլ ես բացատրում եմ քո ար-  
տահայտած ցանկության միտքը:

Պետքուը լուր էր և չէր պատասխանում: Նա, երկի, որո-  
վառ էր իմ ասածներ՝ նրանց մեջ հերքելի կետեր գտնելու  
համարո թայց երր ես հարցրի—համաձա՞յն ես ինձ հետ թե՛  
ոչ, նա պատասխանեց.

— Քո ենթադրությունները վիճելի կետեր շատ ունին,  
բայց որպեսզի մեր խոսքը շերկարի, ես առարկություն չեմ  
անում: այդ մասին կիսուենք ուրիշ ժամանակ: Այժմ դեռ ալ-  
յնկենք սոսիների տիրոջը:

Այս ասելով՝ նա վերկացավ տեղից: Ես և հետևեցի  
նրան:

## Դ

**Վ**եդուց բակը մտնելով՝ մենք ոչ ոքի շպատահեցանք:  
Այդունք լուսթյուն էր տիրում: Եթե գոմի դրան մոտ կապած  
ուզ սիներ, որը թե՛ առջև թափած խոտը ուտում և թե՛ մեզ  
էր նայում, այլ և պառավ, ուժազուրկ շունը, որ սրահի շքա-  
րանից ելնելով՝ մի երկու բերան ծուլաբար հաշեց և ապա  
նորեն բակի մեջ ընկած հին սալլի տակը մտավ, մենք կկար-  
ծեինք թե այս տան մեջ կենդանի շունը չկա: Բոլոր նշան-  
ներից երևում էր, որ մի օր այդ հարկը շեն ու իմարթամ է

եղել, որովհետև բացի շքեղ սոսիներից, որոնք նրա բակի մի մասն էին բռնում, տունն էլ, ըստ ինքյան, գրավում էր ընդարձակ տեղ և շինված էր հարուստ գյուղացու ճաշակով։ Նա բաղկացած էր մի մեծ, բարձրաշեն օդացից և երկու ուրիշ, նույնպես բարձրադիր սենյակներից։ Նրանց մեջտեղում գտնվում էր ընդարձակ, սյունազարդ սրահ։ Վերջինի սյուները տաշված էին կաղնու հաստ գերաններից և ունեին, մինչև անգամ; խոյակներ, որոնք թեպետ ծխից ու հնությունից սկացած, այսուամենայնիվ, իրենց վրա կրում էին հյուսնի ձեռքերի ճարտարության նշաններ, այն է՝ զանափան քան քանդակներ, որոնք ներկայացնում էին կենդանիներ, բույսեր և այլ նկարներ։ Բակի, գոմի և հորթանոցի ընդարձակությունը ցուց էին տալիս, որ այդ տունն ունեցել է մի օր բազմաթիվ անասուններ։ Իսկ թոնզրատան տնից հեռու գտնվելը, արդեն ապացուց էր, որ Վեդունք շեն օցախ լինելով միշտ ունեցել էն հյուրեր, որոնց ծխից ազատ պահելու համար թոնիրը ոչ թե ուրիշների պես տան սրահում, այլ բակի մի անկյունումն են զետեղել։ Զնայելով այս բռնորին, այսուամենայնիվ, երկում էր ոչ միայն նախկին կյանքը չերենու այդ տան մեջ, այլ և մի ավերիչ ձեռք ծանրացել է նրա վրա։ Որովհետև տան կտուրը մի կողմից արդեն ծովել էր, իսկ բաշերի հողը մի քանի տեղ թափվել։ Երկու սենյակների պատուհանները մեծ մասամբ ապակիներից զորով՝ ծածկված էին ձեթած թղթով, գոմի գուռը կրնկահան եղած՝ ընկած էր պատի տակ, իսկ հորթանոցը, մինչև անգամ, զուրկ էր այդ բանից։

— Այստեղ մարդ չէ երկում, վերադառնանք, — ասացի ընկերոջս։

— Չէ, թող մի անգամ էլ հնչակը քաշենք, գուցե մեկը երեա, — պատասխանեց նա։

— Հնչակը ո՞րն է, — հարցը ես զարմանալով։

— Գյուղացու հնչակը չգիտե՞ս, սա է, ա'յ, տես ինչպես լավ է հնչում։ Այս ասելով նա գետնից մի քար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրա։ Վերջինս վերկացավ

տեղից և այս անգամ սկսավ հաշել ավելի աշխաժով։ Մեր քանի բոպեից, արդարեւ, օդայի դուռը բացվեցավ և այդ տեղից գուրս եկավ աղքան հագնված մի պառավ, որն հուշիկ հառաջանալով, մոտեցավ ու կանգնեց սրահի սյուների մեջը տեղը։ Սա մոտ վաթսուն տարեկան կին էր, միջահասակ ու վտիտ մարմնով, նորշոմած երեսով, կիոցված աշքերով։

Տեսնելով մեզ բակում, նա ձախ ձեռքով հովանի արակ աշքերին՝ կարծես, աշխատելով ճանաշել մեզ և ապա հարցուց։

— Ո՞ւմ եք ուղում։

— Վեդոնց Սարգսի տունը սա՞ է, — հարցրի ես, իբր շճանաշելով։

— Հա, էս ա, — պատասխանեց պառավու։

— Սարգիս-ապերը տա՞նն է։

— Հրեն բախչումը (պարտեղ) ծառի տակ բնում (փուրում) ա։

— Բախչան ո՞րտեղից գնանք, — հարցրի ես։

— Ա՛յ, կուռմի կողքով վեր անցեք, դուռն ընտի ա, — հայտնեց պառավու։

Հազիվ թի մենք շուռ եկանք, նա ավելացրեց, — ամոթ ըլի հարցնիլը, դուք հո՞վ եք։

— Օտար մարդիկ ենք, եկել ենք ձեր գյուղը տեսնելու, — ասացի ես։

— Բա ո՞րդիան եք գալի, — հետաքրքրվեց նա։

— Շատ հեռու տեղից, — պատասխանեցի ես։

— Ել հա, Հո աշխարհի էն ճնդիցը չեք գալի (ծայրիցը), մին ասեցեք տենամ, ո՞ր շարից եք։

— Ես Թիֆլիզից եմ գալի, իսկ իմ այս ընկերը՝ Մոսկվայից։

— Դու Թիֆլիզից ես գալի. վա՞յ քե մատաղ ըլեմ, բախի՞ շուտ չես ասում... Այս խոսքերով պառավը մոտեցավ և ձեռքը տալով ինձ՝ ողջունեց այնպիս սիրով, որ ասես թե, յուր քեռորդուն, կամ որևէ հարազատին էր պատահել և ապա

Հարցրեց. — Մի ասա՛, քե մատաղ, մեր Վանուն էլ (Հովհաննեսին) տեսա՞ր:

— Զեր Վանո՞ւմ... կներես, նա՛նի, շեմ ճանաշում, — ասացի:

— Ճնաշում չե՞ս... բա մեր Վանուն արարած աշխարքը ճնաշում ա, էդ ո՞նց ա որ դու ճնաշում չես:

— Ո՞րտեղ է լինում:

— Սուղումն ա ըլում, քե մատաղ, ամովակատ ա, գողերին ու մարդասպաններին նա ա Սիրիորից ազատում: Դու իսի՝ շես ճնաշում:

Պառավի վերջին տեղեկությունը օգնեց հիշողությանս:

— Այո՛, այո՛, ճանաշում եմ, այստեղ նրան Վեդով են ասում:

— Հա, քե մատաղ, ո՞նց ա, սաղ, սալա՞մաթ ա,

— Տեսել եմ, նա՛նի, շատ առողջ է, միամիտ եղիք, — ապահովացրի պառավին:

— Մատաղ ըլեմ քու աշքերին, էս ա հինգ տարի ա, երեսը տեսել չեմ..., քուանա ինձ նման մերը, — ասաց պառավին ու լացակումեց:

— Ինչո՞ւ չես տեսել, այստեղ չի՝ գալիս, — հարցրեց Պետրոսը:

— Զէ, քե մատաղ, գալիս չի: Ասում է գամ գեղումն ի՞նչ շինեմ: Ասում եմ, որդի, ե'կ, կողքիս նստիր, սկի բան մի շինիլ. եկ որ ամեն օր էրեսդ տեսնեմ, բոյիդ բուաթիդ յաշեմ... Ախար աշքումս մաղ ա կանաշել, որ քե էդ օրին եմ հասցրել... Ասում ա, նա՛նի, ասիլ մի, էդ ըլելու բան չի...

Վերջին խոսքերի հետ՝ արտասուզի կաթիլները գլորվեցան պառավի խորշումած դեմքի վրա: Նա գլխափաթաթի ծայրով աշքերը սրբեց:

— Ինչո՞ւ ես լաց լինում, նա՛նի, որդիդ, փառք աստծո, ողջ առողջ է, գործն էլ հաջողակ, բու ուզածն էլ այդ պիտի լինի, — սիրտ տվի ես պառավին:

— Հա, քե մատաղ, բա ի՞նչ ա. որտեղ ըլում ա ըմի, թաքի (միայն թե) սաղ ըլի... Ի՞նչ անեմ թե ես ըստի իրա

կարուտը քաշում եմ... պատասխանեց պառավը, աշխատելով  
յուր վիշտը ծածկել: Բայց մի փոքր հետո ավելացրեց: —  
Եատ վախտ ա դիր չենք ստացել, աստված պահի քե, որ իմ  
վանուցը խեր խարար (բարի լուր) բերիր... Ապա տեսնելով,  
որ ընկերս շարժվում է դեպի առաջ, ասաց, —կուզե՞ք, ըստի  
էլվանումը նստեցեք, ես գնամ մեր հալեորին կանչեմ:

— Զէ, նա'նի, մի' նեղանար, մենք ինքներս կերթանք,  
ձեր բախչեն էլ կտհսնենք, —ասացի ես և ողջունելով պառա-  
վին, առաջ անցա Պետրոսի հետ:

— Այս ի՞նչ հանելուկ է, —հարցրեց վերջինս, երբ մենք  
հեռացանք: — Այս մարդը Տեր-Մակուշին խորհուրդ է տալիս  
անուանմ թողնել իր շորս որդիներին, մինչդեռ ինքն յուր  
որդուն բարձր կրթություն է տվել և փաստաբան շինել:

— Այդ հանելովը լուծելու համար մենք պիտի մի փոքր  
էլ համբերենք՝ ծերունուն լսենք, —պատասխանեցի ես:

Պետրոսը ոչինչ շխոսաց և մենք միասին պարտեղ  
մտանք:

Դա մի ընդարձակ տարածություն էր, որի մեծ մասը  
ծածկում էին մի քանի շարք պաղատու ծառեր, այն է, խնձո-  
րենիներ, տանձենիներ, սալորենիներ և սերկելիներ, ամենքն  
էլ, գրեթե, պտուղներով ծանրաբեռնված:

Պարտեզի վերջում մի մարդ, գլուխը կապույտ թաշկի-  
նակով կապած՝ փորում էր կիսաշոր մի դեղձենու շուրջը:

— Անջուշ սա՛ է Վեդոմց Սարգիսը, —ասացի ես Պետ-  
րոսին և նրա հետ միասին առաջացա դեպի նրան:

Սա հաղթանդամ, բարձրահասակ, բայց մի փոքր կորա-  
քամակ ծերունի էր, մոտավորապես յոթանասուն տարեկան:  
Թաշկինակով կապած գլխի շուրջը մազ չէր երեսում, բայց  
ընշացքն ու կարճ մորուքը բոլորովին ճերմակ էին: Նրա  
դեմքի արտահայտությունը խիստ էր, բայց ոչ շար, իսկ աշ-  
քերը, թեպետ ծածկված թափամազ հոնքերով, սակայն ցո-  
լացնում էին խելք և բարություն: Նա հագած էր կոշտ կտա-  
վե շապիկ՝ կապույտ ն ա զ ո ւ ր ի օձիքով, իսկ դրա վրայից  
ու զադաքե մի հնամաշ արի ալուխ: Վարտիքը, որ

կարած էր գյուղում գործված բրդի շալից, ուներ նույնապես  
մի քանի կարկատան և սրունքների մոտ սեղմված էր սև տո-  
լաղներով: Ոտքերին ամրացրած էին հասարակ կաշվի  
տրեխներ, իսկ մեջքը սեղմած սև կտավի մի գոտիով:

Նշմարելով մեզ մի քանի քայլ հեռավորության վրա, նա  
խկույն գործելուց դադարեց և բահը դեղձենու բնին հենե-  
տով՝ առաջացավ դեպի մեզ:

— Բարի ազողում, Սարգիս ապեր, — ասացի ես առաջին  
անգամ, և մոտենալով, ձեռքս պարզեցի դեպի ծերունին:

— Ա՛յ, աստծո բարին, բարով եք եկել, — պատասխա-  
նեց նա ժպտալով և յուր կոշտ աշով մեր ձեռքը թոթվելուց  
հետո շարունակեց, — հավատաս (երկի), դուք եք Սհարանց  
Մուքու զոնաղները:

Ամբողջ գյուղն արդեն գիտեր, որ մի օր առաջ հյուրեր  
են եկել Սհարենց Մուքու տունը, և մեզ, ահա՛, այդ անունով  
էր ընդունում ծերունին:

— Այո՛, Սարգիս ապեր, մենք ենք:

— Բարով եք եկել, հազար բարով, կլի որ լավ բանի  
հմար ըլեք եկած, աստծ աշողի:

— Մի առանձին բան չունինք, հենց ման գալու համար  
ենք եկել,

— Ինչ որ ա, բարի ըլի: Աշխարի շառն (շարն) էնքան  
շատացել ա, որ մարդ ջուր խմելու հմար էլ թե տեղիցը վեր  
կննա, պտի աստծ կանչի, որ բարի ըլի: Զեզանից ո՞րն ա  
Մինարենց Ակորի տղեն:

— Ես եմ, — պատասխանեց Պետրոսը:

— Հա՛յ, քու հերք լավ մարդ ա, լավ էլ հայ ա. դադրը  
(երախտիքը) գիտո՞ւմ ես, պատի՞վ ես տալի:

— Ինչպե՞ս կարող եմ պատիվ չտալ, քանի որ նա իմ  
հայրն է:

— Ի՞նչ գիտամ, էս այսամումը ըսկի որդին հորը ճնա-  
շում չի: Էդ շլապեն ում գլխին տեսնում եմ, հենց գիտում եմ  
հոր տանից ջուղա ընկած (տարագիր եղած) ա:

— Զէ, ես ծնողներիս շատ եմ սիրում և հենց նրանց տեսնելու համար է, որ Մոսկվայից վեր եմ կացել եկել:

— Հա՞, որ ըտենց ա, շատ ապրես, աստոծ պահի քեզ. բարի ժառանգ ըլես.—օրհնեց ծերումին և ապա դարձնալով ինձ հարցրեց, —կրաղջես, քե ճնաշում չեմ. դու ումա՞նցից ես (որոնցից):

— Ես էլ տեր Օվանեսի թոռն եմ,—պատասխանեցի ես:

— Ասատուրի տղե՞ն:

— Այս՛:

— Դե շուտ ասա՛, հեր օրհնած, ախար քու ողորմած հոգի հերը իմ տան լավ բարեկամն ա լել, առանց իրար թիշքա շենք կտրել: Քանի՞ քանի անգամ էս բախչումը նստել քեֆ ենք արել, քանի՞ անգամ մեր շինարուցը տակին զուռնա զավալով մարաքա ենք սարքել... Օղորմի քո հոգում, Ասատուր... ասում էր, ա, Սարդիս, էս շնարիքը, որ քուն ա, լավ կլի որ տանդ գլխին մին ատաժ (հարկ) էլ շինես ու առաջը լեն ու բոլ մի թախտապանդ (պատշաճ), ընենց ըլի որ շնարուցը զղները կռանան թախտապանդի վրեն շուրջ անեն: Էն շախը (ժամանակ), ասում էր, տունդ ամարաթի (պալատի) նման մի բան կդառնա, հենց որ թախտապանդին նստես էն սարերին մտիկ տաս, յա չէ սարինն (զովը) ընկած վախտը ընտի մի ստաքան շայ խմես, հենց կիմանաս թե դրախտումն ես:

— Եվ իրավ լավ է ասել, մեզ էլ հենց այսօր ձեր լինարիքն են բերել այստեղ: Ակսոս չէ՞՝ որ այդ գեղեցիկ ծառերի առաջ դուք երկհարկանի մի տուն շումի՞ք, —հարեցի ես:

Ծերումին նայեց ինձ վրա քննական հայացքով, կարծես ատուգելու համար թե՝ արդյոք յուր սիրուց ցավեցնելու համա՞ր ասացի այս խոսքերը: Բայց ես, իհարկե, ասել էի միամտարար, առանց իմ խոսքերին մի առանձին նշանակություն տալու Սակայն հետո իմացա, որ գրանք ծերումու սիրուց խոցած պիտի լինեին:

— Լավ ես ասում, որդի, լավ կլեր որ շինի, աժա ի՞նչ  
անհս որ...

— Հա՛, ինչո՞ւ շինեցիր:

Ծերունին փոխանակ պատասխանելու նայեց յուր շուր-  
ջը, ապա դառնալով մեզ՝ ասաց.

— Էս խի՛ ենք ըստի կաղնել, գնանք էյվանումը թախ-  
տի վրեն նստենք, եղո կիսուանք: Կրաշխեք, մարդ որ ծերա-  
նում ա, մարիֆաթով (քաղաքավարությամբ) ժաժ զալն էլ ա-  
մոռանում... գնանք, ըսենց կաղնած կնեղանաք:

— Զէ, Սարգիս ապեր, այստեղ ավելի լավ է, ա՛յ, այս  
սիրուն ծառի տակը կնստենք,—ասացի ես:

— Լավ, որ ըտենց ա, թող մի խալի՛շա բերեն... Ախշի-  
հե՛յ, ա՛. Սավզգուլ, մի խալի՛շա զրկի ըստեղ,—ձայն տվակ  
ծերունին դեպի տան կողմը:

Մի քանի ըոպեից հետո, մի փոքրիկ, ազքատ հագնված  
աղջիկ, մի հին գորդ քաշ տալով բերավ փոեց ծերունու ցուց  
տված տեղը: Վերջինի հրավերով մենք նստանք գորգի վրա:

— Հա, ասում ես թե՝ խի՛ շինեցիր,—շարունակեց ծե-  
րունին ընդհատված խոսակցությունը,—լավ ես ասում, որ-  
դի, որ շինած ըլեի, հմի էս ա որ եկել եք, կտանի ու կնըս-  
տացնի ձեզ էն հովահար թախտապանումը ու մի թիքա հաց  
կդնի առաջներիդ... ամա դե կարացի ոչ...

— Երեկի փող չունեիք,—հարցրեց Պետրոսը:

— Փո՞ք... ընչի՛ շունեի, փող էնքան ոմեկի, որ մի-  
տոտաժ չէ, երկուա էլ կշինեի:

— Հապա, ինչո՞ւ շինեցիր,— հետաքրքրվեցա ես:

— Նոյի ագուավը մթողեց, որդի, նոյի ագուավը:

— Նոյի ագուա՞վը:

— Հա՛:

— Ո՞քն է նոյի ագուավը,—հարցրի ես դարմանալով:

— Նոյի ագուավը գիտում չե՞ս որն ա:

— Ոչ:

— Բայ դու սկի հուառմնարանում կարդացել չե՞ս:

— Կարդացել եմ:

— Դե, էնա վարժապետը ասում կըլի թե հո՞գ ա նոր-  
ագուավը, էլ խի՞ ևս ասում զիտում չես:

— Զբհեղեղի ժամանակի նոյի ագուավն ևս ասում:

— Հա՛, բա էլ ուրիշ ի՞նչ նոյի ագուավ կա:

— Ա՛յն ագուավն է, որ չի թողել քեզ տունդ շինելո՞ւ:

— Հա՛, հենց համին (իսկ և իսկ) էն ագուավը:

Ես դժվարությամբ էի ծիծաղս զապում, իսկ Պետրոսը  
արդեն քահ քահ ծիծաղում էր:

— Խի՞ ևս ծիծաղում, որդի, — հարցրեց ծերունին ըն-  
կերիս:

— Հապա ի՞նչ անեմ, որ չծիծաղեմ. ասում ես նոյի ագ-  
ուավը չի թողել, որ տունդ շինես: Առաջինը՝ ագուավը ո՞նց  
կարող է արգելել քեզ քո տունը շինելու, երկրորդ՝ նոյի ագ-  
ուավը մինչև այսօր ապրո՞ւմ է, որ քեզ արգելի:

— Բաս չի՝ ապրում:

— Իհարկե, ո՛չ

Սերունին ժպտաց: Սակայն նրա այդ ժպտի մեջ այն-  
քան ծաղր կար ուղղված դեպի ընկերս, որ ես չկարողացա  
իմ հետաքրքրությունը զապել:

— Բացատրի՞ր, աղաչում եմ, ի՞նչ ագուավ է այդ, կամ  
ո՞ւմն ես դու ագուավ անվանում, — խնդրեցի ես:

— Առաջ դու ինձ ասա՛, էդ ագուավի պատմությունը գի-  
տո՞ւմ ես, թե չէ:

— Ինչպե՞ս չէ:

— Դե պատմի՞ր:

— Ի՞նչ պատմեմ, զբհեղեղի պատմությո՞ւնը:

— Չէ, էդ ես քեզանից լավ եմ իմանում: Զասես թե՝  
Սարգիս ապերը գեղացի ա, զատ չի գիտալ: Վանքումը իրեք  
տարի կրդացել եմ, իրեք տարի է կեսդերություն (տիրացքու-  
թյուն) եմ արել: Աստվածաշունչը էրկու անդամ՝ անց եմ կա-  
ցել (կարդացել եմ):

— Ուրեմն միայն ագուավի պատմությո՞ւնն ես ուզում:

— Հա՛:

— Էօ, նա մեծ պատմություն չունի: Նրբ նոյի ուսպա-

ՆԵՐԱՐԱՄ սարի վրա կանգնեց, այդ ժամանակից քառա-  
սում օր անցած՝ Նոյը տապանի պատուհանը բացավ և  
դուրս թողեց ագռավին, որպեսզի իմանա՝ թե՝ ջրերը ցամա-  
քե՞լ են, թե ոչ; Բայց ագռավը գնաց, ետ չդարձավ:

— Կաբար լրերեց Նոյին:

— Այո՛:

— Բա խի՛ ետ չդարձավ:

— Հայտնի չէ. դրա համար աստվածաշնչումը բան չկա  
գրած:

— Գիտում եմ բան չկա գրած, ամա դու ի՞նչ ես փիքը  
անում, խի՛ ետ չեկավ:

— Ագռավը ծանրամարմին թոշուն է, երկի շատ թոշե-  
լուց հոգնելով՝ ընկավ ջրի մեջ ու խեղդվեցավ,—հարեց  
Պետրոսը:

— Հը...—Ժպտաց ծերունին,—էդա ձեր հուսումնարա-  
նումը ըդենց խամ են թողնում ձեզ է՛, ագռավը խեղդվո՞ղ  
շանավար (գաղան) ա:

— Ապա, ձեր կարծիքով, ինչո՞ւ չվերադարձավ,—հարց-  
րի ես:

— Նըրա համար, որ քերձերի գլխին, յա չէ, սարերի դո-  
շին մարդի, յա հեյվանի շամդաք (գեշ) տեսավ, վրան ըն-  
կավ ու սկսեց լափիլը: Խի՛, ագռավը մտածելու էր թե ըն-  
տեղ տապանումը Նոյը, աշքը ջուր կտրած (ակնկառուց)՝  
իրան ա ըսպասո՞ւմ:

— Կարելի է այդպես է:

— Ոչ թե կարելի ա, հենց գրուստ էս ա որ ասում եմ:

— Թող այդպես լինի, միայն ասա՛ տեսնենք այդ ագ-  
ռավն ինչպե՞ս արգելեց քեզ քո տոռնը շինելու,—հարցը ես:

— Ի՞նչպես արգելեց, մի քիշ մաշալ (միջոց) տու, ասեմ:

Այս խոսքերով ծերունին գլխի թաշկինակը հանեց և  
կոշտ ձեռքով ճաղատ գլուխը շոյելով ու զովացնելով՝ շարու-  
նակեց.

— Գիտո՞ւմ եք, ի՞նչ կա; Աշխարումս առանց աստծու

թան չի ըլում, ըսկի տերեն էլ ծառիցը տափը չի ընկնում։  
Հալբաթ էս էլ աստծու կամքն էր, որ ըսենց ըլավ։

Մերումին դարձյալ լոեց, ապա նորեն գլխի թաշկինակը  
կապելով շարունակեց։

— Ինչ որ պտի պատմեմ, հնուց բան ա, կլի որ քսան-  
հինդ տարի ըլի, յա չէ երսուն. էն շախը ես հլա բարաթ (բա-  
վական) ջահել ի։ Մի օր Օսեփի վարդապետը եկավ մեր տուն։  
Օսեփի վարդապետի անումը լսած կա՞ք, — հարցրեց ծերումին։

— Ոչ, — պատասխանեցի ես։

— Հա, լսած շեք ըլի, դուք ջահել եք։ Նրա մեռնիլը,  
հավատաս, տասը յա տասներկու տարի ըլի։ Աստոծ հոգին  
յուսավորի. արդար մարթ էր, ասիլ (ազնիվ)՝ հոգևորական։  
Վանքի վանահայրն էր, շուտ շուտ կդար մեր տուն. կնստինք  
էս ծառերի շուրումը, զրից կանինք։ Օղորմած հոգի քու հերին  
էլ շատ կսիրեր նրան։ Էնա մի օր եկավ տեսավ, որ գերան-  
ներ եմ բերել տվել, որ տախտակ քաշել տամ. գեղականի  
հետ էլ խոսում եմ, որ քար ու կիր բերի։ — Ա Սարգիս, ասեց,  
էդ ընչ՝ հմար ես թադարիք (պատրաստություն) տեսնում։ —  
Հայր սուրբ, ասեցի, ծառա եմ քե, ուզում եմ տանս գլուխը  
շինել տալ։ Մեր աղա Աստուրն էլ ա խորհուրդ տալի։ Ես  
էլ տեսնում եմ, որ լավ կըլի։ Ափսոս ա որ էս լաշին (գեղու-  
ղեց) շնարուցը առաջին երկու ատաժանի մի տուն շրլի, որ  
եկող գնացողը նրա հովհար թախտապանդումը նստի, մի  
սհաթ էլ ա քեֆ քաշի։ Էս խոսքի մեջումը մեր վանին հորթի  
նդից վազելով՝ եկավ որ մեր մոտիցը անց կենա՝ թե ինչ ա,  
հորթի առաջը կտրի, բռնի ու վրեն նստի։ Էն շախը նա հլա  
տասը տարեկան էր։ Էն ա հայր սուրբը բեխի ձեռքը բռնեց  
ու ասեց. — ա Սարգիս, գիտա՞ս ի՞նչ կա. տանդ գլուխը մի  
շինիլ. ա՞յ, սրա գլուխը շինիր։ Էն փողը որ խարշելու ես թե  
ինչ ա տանդ վրան մի ատաժ ավելացնես, լավն էն ա, որ  
խարշես ու էս բեխի գլխումը ուսում ու գիտություն մըտ-  
ցնես։ — Ասեցի հայր սուրբ, բեխին հո անուառում շեմ թողնիլ.  
մի քիլ վախտից եղը վանքը պտեմ զրկիլ, որ լավ կարդալ  
առվացնես։ Վա՛ ինձ, հենց գիտում ի թե՛ հայր սուրբը նրա

Համար աւ ասում, որ բեխին իրա մոտ զրկեմ, հինչ ա մեզա-  
նե խերմի (օգոստի): Ամա օղորմած հոգին պատախանեց, —  
ա Սաք, առեց, ես ի՞նչ ուսում յա գիտութին ունեմ, որ դրան  
ինչ տամ: Հրեն զարկի Թիֆլիս, գիմյազումը կարթի; լավ  
հուսում ստանա: Ընդիման եղն էլ զրկի Մոսկով, յա չէ Պետրո-  
պալի, որ ունիվերս մտնի, ընտեղի մեծ հուսումն էլ առնի,  
փիլիսոփի գառնա: Էնչաղը կրգա, էս գեղի միջումը մին հատ  
մարթ կըլի: Համ իրա ձեռովկը տանդ գլուխ կշինի, Համ էլ  
միջումը հուսումնարան կբանա: Խեղճ են էս գեղցցիքը, խա-  
վար մնացել են, խավար էլ պտի մնանեն. սրանց բեխնքը  
կհավաքի, ուսում կտա, ու մի քանի տարեն ետք սաղ զեղը  
կլուսավորի: Էս բանը համ աստծուն դուր կդա, համ քան-  
դին (մարդկանց): — Հայր սուրբն էս որ ասեց, խելքում նըս-  
տեց: Ասեցի, հայր սուրբ, լավ ես ասում. թող տանս գլուխը  
հին մնա, ինձ հո՞վ ա տնաղ անելու (ծաղրելու), թաք ըլի իմ  
կանուն գլուխը զարթարմի: Ասենք, ի՞նչ մեղքս ծածկեմ, ես  
էլ հենց էն գլխիցը հուսումի ու գիտության գերի էի: Երբ մի  
հուսումնական մարթ կդար մեր գեղը, ում տան էլ որ վեր  
գար, կգնայի զոռով զոնաղ կրերի մեղ մոտ, թե ինչ ա, աշ-  
խարհի էն լավ լավ բաներիցը մին էրկու բերան խոսա,  
լսենք, բան իմանանք: Մեր հայր սուրբը մի լավ Զամշան  
ուներ: Նրա համար շուտ շուտ վանք կիսայի, թե ինչ ա, կըշ-  
տիս նստի, մին մին գլուխ կարդա: Էն Հայկի, Արամի, յա չէ  
վարդան զարավարի լավ լավ պատմութինը, որ կլսի, հոգիս  
կմխիթարյեր: Շատ վախտ էլ սիրոս էն հանգի կլցնվիր, որ  
լաց կըլեի, ու արտասունքս ջրի նման կթափվեր: Ի՞նչ երկա-  
րացնեմ, տեսա որ հայր սուրբի խորհուրդը լավն ա, վճռեցէ  
որ տանս շինությունը թողամ ու բեխեն Թիֆլիս զրկելու թա-  
գարիքը տեսնամ: Եփ որ էս բանը մեր տնացուն (կնոջը)  
ասեցի, քիշ մնաց, որ խեղճը խելքիցն ընկնի: Ի՞նչ լաց, ի՞նչ  
շիվան, ի՞նչ գլուխ թակիլ: Ա մարդ, ասում ա, էդ իի՞ ըտենց  
անաստոծ բան ես բռնում, բա մենք ճար ու ճրագ մի տղա  
ունենք, էն ո՞նց վեր ունինք զրկենք զարիք տեղ ու մենք,  
էրկու հոգի, մնանք ըստի բայդուշ: — ա կնիկ, ասում եմ:

« Հո ծախում շնչք, ղըկում ենք, որ հուսում առնի, մարթ դառնա ու էլ նոր եդ մեր օջախը լուսավորի Ղորթ ա, էս ասում ի, ամա մեր օղլուզաղին (կնոջը) էլ զնամիշ անիլ (մեղադրել) չէր ըլիլ: Ախար աստոծ մեզ շորս բեխա էր տվել ու էլ ետ իրեցին տարել, մին էդ էր մնացել, որ գիփումանցից պուճուրն (փոքրն) էր: Ի՞նչ մեր ըլեր, որ լսեր թե իրա մինուժար բեխին ուզում են ձեռփցը խլել, զանը կրակը շրջեր, որ տանեն: Կնիկարմատը, զորթ ա, խելքը կարճ ա, ամա սիրտը բարակ ա, բսինց ցավին դժար ա դիմանում: Նրա համար լավ ա, որ իրա տղան սաղ սալամաթ իր աշքի առաջը կանգնած ըլի, թեկուզ հենց շորան (հովիվ), յա հորթարած ըլի, քանզ զնա, երկրե երկիր, հուսում առնի, յա փիլիսոփա դառնա: Ամա դե ես տնացոց լաց ու շիվանին մտիկ շարի. իմ թադարիքը տեսա ու Վանին իմ ձեռփովը տարա թիֆլիզ, թափշոր արի (հանձնեցի) մեր կնքավորի տղին: Նա էլ ընտեղ լավ վաճառական էր. ծանոթ բարեկամ ուներ, բեխին պատրաստել տվավ, ու մի տարեն եղը գիմյազը տվավ, որ բեխան գշեր-ցերեկ ընտեղ մնա, համ էլ կարթի:

« Էդ օրից դենը Վանին դառավ իմ դարդն ու ղեյիդը (ցավն ու հոգսը): Ղորթ ա, բեխին սաղ սալամաթ թողեցի եկա, ամա օր ու դշեր հենց նրա վրեն ի մտածում: Յարա՛ք, ասում ի, բեխաս Հո շմբսե՛ց, յա Հիվանդացա՞վ: Յարա՛ք յաղի (օտար) տանը բեխի սիրտը Հո շկոտրվե՛ց, ես ո՞ր մինն ասեմ. ինսան ենք էլիհ՝ մտածմունքը աստոծ մեզ ա տվելը Ամա ինչ որ նրա մերն էր անում, բերանով ասվել չի ըլի: Խեղճը ոչ գշերը քոմ ուներ, ոչ ցերեկը դարար (հանգըստություն): Տափիր, ասես, տեղ չէր տալի որ նստի. էն ա ամեն մի ներս ու դուրս անելով բնենց էր ախ քաշում, որ ասես շիգարը պոկ ա դալու Բեխի սիրած շունը, որ տեսնում էր թե հոտոտելով դես ու դեն ա գնում, ասում էր.—ա Ղաթար, Վանո՞ւն եօ ման գալի, ըստի շի, քե մատաղ, էն ա օխտը սարի քմակին, ասում էր ու լաց ըլում: Խախիրը որ հանդումը եղանում էր, հորթերը բռանշում ին, ասում էր— յա՞ն, յարար իմ բեխին էլ ձեղ նման անմեր մնացած բռան-

շում ա, ու ձենը լսո՞ղ վկա... Եսի որ մտնում էր էս բախ-  
չեն հու տեսնում ծառեթը տանձ ու խնձորով լիքը, ասում  
էր— ձեր աշքը քոռանա, էդ ո՞ւր եք ըդենց կանանշ կարմիր  
լցվել, ճռնքոտել (ծանրաբեռնվել), ախար որ Վանին ըստի  
շի, խի՞ շեք շորանում, վեր թափում: Խուզապա (վերջապես)  
հս ո՞ր մինն ասեմ: Շատ վախտ էլ ականջներս ծածկում ի  
հու փախչում, ինչ ա' խեղճի լայն ու արտասուրը շտեսնեմ:  
Դիտո՞ւմ եք, ծնող ըլիւը հեշտ բան շի. բեխի տեր պտի  
ըլեք, որ էս յավը քաշեք հու իմանաք թե ի՞նչ դժար բան աւ  
Ամա գե ես էլի դմանում ի. բեսանց րեցնում շի. Հաւ Սավ-  
պյովին էլ սիրտ ի տալի. ասում ի, ա' զջի, ըտենց վրվթակ  
(մրմնջալ) մի: Էս ա բեխան հուսումը կպրծնի կպա. էնչա-  
խը ուրախութինդ տասնապատիկ կըլի: Ղորթ ա, հմի նեղուշ-  
թին ես քաշում, ամա գե էն վախտը, ո՞ր տեսնես թե քու  
տղեն գեղի միջումը մին հատ ա, ու դիմունանք նրա զու-  
լումն են (ծառայությունում) կանգնած, տեսնես որ պրանց  
էլ հերերն ու մերերը նրա արևովն են երդում ուսում, սիրտդ  
կփառավորվի, քաշած յավերդ կմոռանաս...: Խեղճ կնիկը,  
զորթ ա, էս խոսքերով մին օր հանգստանում էր, ամա էլ  
էպսը իրա յավն իրա հետ էր:

«Վրա էրկու ամառն էր գնում, որ մենք մեր օրերը  
ըսենց դժվարութինով անց ինք կացնում: Մին օր վանքումք  
Օսեփ հայր սուրբին տեսա: Հա՛, մոռացիլ ի ասեմ ձեզ, թե  
էն օրից, որ Վանին տարել ի Թիֆլիզ, Հայր սուրբն իրա-  
ռուը մեր տանից կտրացրել էր: Չոն լսել էր, որ Սավոյուն  
ասել ա թե՝ «Իմ բեխին էդ սեագլուխը ղարիբութին գցեց. էլ  
իմ աշըր դրան տեսնա ոչ»: Խեղճն էն ա սրա հմար էլ մեր  
տոմ չէր գալի: Էդ օրը, որ վանքում պտահեցի, ասեցի-  
շՀայր սուրբ, մատաղ ըլիմ կարգիդ, ախր մեր տանհցին ինձ  
դինջութին (հանգստություն) շի տալի, կարում շի դիմանաւ:  
Զի՞ ըլի, որ Վանուն էլ եդ բերել տա՞նք»: Ասեց՝ ա Սաք,  
խելքդ կորցրե՞լ ես, բա բեխեն անջախ (հազիվ) ա հուսումի  
վրեն տաքացել, բերում ես որ ի՞նչ անես, շորան պիտի շի-  
նես: Ասեցի բա ո՞նց անենք, որ մոր սիրտը դիմանում ցի:

Ասեց, Հեր օրհնած; զե էն ա տարին իրեք ամիս պուազնիկ ա. խի՞ շեք էն վախտը բերել տալի՛ Ես էլ, ի՞նչ մեղքս ծած-կեմ, պուազնիկի բանը սկի լսել չի: Ասացի, Հայր սուրբ, պուազնիկը ի՞նչ բան ա: Ասեց, ըսենց, ըսենց, ըսենց: Վա՛ աստծու խեր խաբարը քե, ասեցի, Հայր սուրբ, բա էդ խի՞ մինչև Հմի ասել չե՞ս: Դե շուտ մի գիր գրի մեր կնքավորենց տղին, որ բեխին զրկի: Էս որ ասում եմ, մայիսի միջումն էր: Էն ա Հայր սուրբ, աստոծ Հոգին լուսավորի, Գիրը գրեց ու մի քան օրից եղը բեխան էկավ:

«Եթի Հմի դուք ըստեղ պտի ըլեիք, որ տեսնիք թե՝ մերը ոնց էր գնում ալի առաջը: Ըսկի մոռանալ չեմ: Իրիկվա շախն (գեմն) էր. նախիրը նոր էր Հանդիցը էկել: Սավայուու կովկիթը ձեռին՝ Սոնա անումով մի սիրուն կով ունինք, նրա առաջը չոքած՝ կիտում էր: Հենց որ ըլսեց որ բեխեն գալիս ա, կովկիթը ձեռին վեր գցեց, ու գժի նման վազ տվավ:»

— Սավայուու, Սավայուու, աղջի, էդ ո՞ւր ես վազ տալիս, բեխեն հաւ հեռու ա, կանչեցի եղիցը, ամա լսեց ոչ: Աղջի, կացի ես էլ գամ, մենակ զնալ մի, բղավում ի եղիցը. ամա Սավայուու ականչումը որ թոփ էլ տրաքեր լսելու չեր: Ճարս կտրեց, ես էլ վեր կացա ու եղիցը վազեցի: Գեղցիք բանից բեխաբար (անդիտակ) կտրներիցը յա էյվաններիցը մտիկ են տալի մեզ ու արմանում: Հենց գիտում են թե՝ կնիկս պե-լացել (գժիկել) տանիցը փախչում ա, ու ես էլ եղիցը վազում եմ որ բռնեմ: Էդ սհաթուուն հո՞վ էր կանգնելու, թե ի՞նչ ա, նրանց բան հասկացնի: Ինչկի մին վերստաշափ. ըսենց իրար եղից վազ տվինք: Հենց էնա, էլի (հասարակաց) ճամ-փին հաս ու հաս ինք, որ թումբի եղիցը բեխան բեաց: Սավ-այուուը, որ ինչկի էն՝ զուշի նման թոշում էր հու ևս եղիցը կարում չի հասնեմ, Հմի որ բեխին տեսավ ո՞չ, ասես տեղն ու տեղը մեխավեց. «Վանի՞ ջա՞ն, բալա ջան, զու եկա՞ր, մա-յամ (ուրեմն) ես քե տենա՞լ պտի...» ասեց ու ծնկները թու-լացած ճամփի միջումը չոքեց: Բեխան ձիի վրիցը թուավ վազ տվավ, մորը ճտովն ընկավ: Էլ հո՞վ կարա պատմիլ թե ինչ էր անում ըստեղ մերը՝ տղին: «Վանի՞ ջան, բալա ջան»

էր ասում ու զլխիցն ինչկեդ ոտը պաշում, լեզվիզատում, թողում չէր, որ դոշիցը պուկ գա, թե ի՞նչ ա, մի հատ էլ ևս խտանմ (գրկեմ), էրեսիցը պաշեմ, որ սիրտս հովանա... Ռւզում էր, ասես, սիրտն էն մնութին (րոպեին) ճղի ու բեխն միջումը գնի, յա չէ, աշքի լիսերն հանի, որ Վահու ոտի տակը զցի... Ի՞նչ երկարացնեմ, էս թահրով բեխին մեր կալանք, եկանք տում:

Ծերունին լոեց: Ապա ձեռքը գեպի ճակատը տանելով՝ նորեն զլխակապը հանեց... ճաղատ գլուխը շոյեց և կրկին ջարուժակեց.

— Հմի դուք կարեք, էս հալւորը ի՞նչ ա ըսենց էրկենրարակ խոսում. մենք ուզեցինք որ նոյի ագռավի բանն իմանանք, սա իրա տղի պատմոթյունն ա կցել:

— Չէ, պատմի՛ր, մենք սիրով լսում ենք,—ապահովացրի ևս ծերունուն:

— Հա, ինչկեդ հմի պատմեցի թե՝ ծնողն ի՞նչ ցավ ու կրակի մեջ ա ըլում, եփ իրա բեխին զարիբութին ա դրկում: Հմի էլ մի ուրիշ ցավ պատմեմ:—Քիչ առաջ եփ ընկերդ ասեց տունդ խի՛ շշինեցիր, կլի որ փող շունիր. ասեցի ինչ՝ շնմի, փող էնքան ունեի, որ մինը չէ, էրկու էտաժ էլ կշինի, թե որ ուզի: Սրանով ուզում ի ասեմ թե՝ ևս հարուստ եմ: Ամա դե գեղական հարստութինն ի՞նչ ա: Մին հազար, յա էրկու հազար մանեթ, որ ունենում ա, յա՛ չէ մի քսան, էրսուն գլուխ տավար, մին պումուր իրիսի (ջոկ) ձի, մին քանի ուզախ (գրաստ), էն ա ասում են թե մեծ գովաթի (հարստության) տեր ա: Ես էլ ըստենց հարուստ ի, եփ Օսեփ հայր սուրբն ասեց՝ փողդ խարշի բեխին ուառու տու, ես հենց գիտացի թե՝ իմ նաղդ (կանխիկ) փողը բավական կլի գրան: Ասեցի էն լավ ա իմ Վանին հուսումնական ըլի, քանզ նև հազար, յա էրկու հազար մանեթի տեր: Փողը նրա գլխին մատադ, իմ քաղն ու բախչեն, իմ տունն ու ջրաղացը, իմ տավարն ու ծիանը, որ ինձ մնան, էն էլ ինձ հերիք ա: Ամա դե որ փողի ճնդիցը կցեցի ոչ խարշի՛լը—հեշտ բան շգիտաք գեղականի հմար տարին իրեք հարյուր մանեթ դիմյաղը փող

Արկիլը, — էն ա տեսա, որ օխտը տարվա մեջ էլած փողս  
ձեռքես դուրս էկավ ու ես մնացի դարդակի էդ տարին Վանին  
գիմյազը պրծել էր: Գրեց թե, ա' հեր, ինձ պտիմ օգնես, որ  
զնամ ունիվերս: Էս բանը ինձ փիքրի մեջ գցեց. ընդուր որ  
տեսնում ի թե օրս փիս տեղ ա մթնում: Դնացի վանահոր  
մոտ խորհուրդի: Հայր սուրբ, ասեցի, ախր ձեռիս փողը  
դուրս էկավ, բեւսեն էլ գրում ա թե՝ ինձ ունիվերս զրկի: Ես  
ի՞նչ անեմ: Ուզում եմ Վանին բերել տամ. բոլ ա (բավական  
է) որքան հուսում առավ: Հայր սուրբը, հախ աստծու (Ճիշտն  
ասած) իմ զոլը (Կողմը) խոսաց: — Ա Սաք, ասեց, թե որ  
փող շունես, գիմյազի հուսումն էլ ա բավական, գրի թող  
գաւ էն ա, ես էլ գրեցի: Ամա դե Վանին թարսի ձին նստեց,  
էլ վեր շնկավ (Հակառակվեց): «Ա հեր, գրում ա ինձ, դու  
մի բաղ ես տնկել, պահել, բջարել (մշակել), ծառերը  
հասցրել, մին ջուր տվել ես, մնացել ա մեկելը, որ բաղը  
հասնի, պտուղը բաղես: Հմի դու էդ ջուրը բեշախտ (անժա-  
ժանակ) կտրում ես, պտուղը խակ թողնում, էդ աստոծ վեր  
շունիլ: Իմ ընկերները դիմի գնացին, ո'րը Մոսկվա, ո'րը  
Պետրպոլի, մենակ ես իմ մնացել ձեռս ծոցումս, գլուխս  
քաշ: Եկ էդ բանը դու մի անիլ, իմ վիզը մի կտրիլ... Դե,  
ձեղ եմ հարցնում, մի հեր, որ իրա մին ու ճար բեխիցը  
ըսենց նամակ ստանա, ի՞նչ կանի:

— Ի հարկե, բոլոր էլած շելածը կծախս, նրան կուղար-  
կե, — արագ պատասխանեց Պետրոսը:

— Հա՛, ապրես, ես էլ ըդինց արի: Ինչ որ ջերումըս,  
յա սանդուխումս փող էր մնացել, էն Հվաքեցի, զրկեցի Վա-  
նուն, ասեցի, որդի, էս քե՝ ճնապարի խարշուխ, գնա՛, աս-  
տոծ քե հետ, հուսումի ու ապրուատի փողն էլ կղրկեմ: Սրա-  
նից եղը՝ հորենական մի թթի բաղ ունինք, էն ծախսեցի քա-  
շալ Մոսուր տղի վրեն ութ հարյուր մանեթի ու փողը յավաշ  
յավաշ զրկեցի Վանուն: Էդ հերիք շարավ: Եղո մեր էս ջրի  
վրա մի ջաղաց ունինք, կլի որ տեսած ըլիք:

— Այո՛, տեսել ենք, — հաստատեցի ես:

— Հա, էն ջաղացը ծախեցի խոճա Մարութի վրեն շրս

Հարյուր մանեթի ու փողն էլի զրկեցի Վանուն: Սա էլ ի՞նքոռ բաղդիցը, ունիվերսի մի կլասումը իրար վրա, էրկոռտարի մնաց: Գրում էր թե, միթոմ, վարժապետները փախլութին են արել (նախանձել էին), որ ինքն ընենց լավ կարծում ու ճգրու մին տարի ավելի ին պահել էն կլասումը: Ամադե, ուրիշներն էլ ասել ին մեր կնքավորենց տղին՝ թե վանին մի նախշուն աղջկա սեր ա տվել, եղիցն ընկել, դես ու դենքու եկել, ու դրա համար ա կլասումը մնացել: Սուտն ուղորթը աստոծ ա իմանում, անշախ էս կա, որ էդ մին տարվա խաթրին՝ շաղացի փողը քոռ ու փուչ էլավ (ոչնչացավ): Էն ա շլիզ (բոլորովին) դայամիշ ի ըլել (հոգնել էի), գնացի հայր սուրբի մոտ, ասեցի. ա՛ վարդապետ, ախր էլ դիմանալու ուժ շոնեմ, ի՞նչ անեմ: Ասեց, ա՛ Սաք, շատին դմացել ես, քշին էլ դմաց, ծիանդ ծախի, եզներդ ծախի, փող հասցրու: Դու սկի վախիլ մի, տղադ որ եղ դառնա, իրա սովորած թահրովը լավ բաղ էլ ա տնկելու, նոր դայդի (տեսակի) շաղաց էլ ա շինելու, եզներդ ու ծինըդ էլ ա շատացնելու: Ուսում առած տղան որ կա, նոյի աղավնին ա, որ ծիթենու շիվը բերանումն եղ ա գալիս ու բախտավորութենի խաբարը բերում ծնողին: Ի՞նչ երկարացնեմ, հայր սուրբի խոսքերը սիրտ տվին ինձ, ես էլ կցեցի առաջ ծիաներիցս, վերջը եզներիցս մի մի ծախել ու փող զրկել Վանին: Էն ավերջին տարին էր. ամառը Վանին ամեն բան պտի վերջացներ ու եղ գար գեղը: Խոսք շկա, որ ես էլ օրեր եմ հմբարում (համարում) թե՝ եփ ա ընկեն եղ գալու, որ համ էս դժաք հոգսիցը մեզ ազատի, համ էլ իրեն տենանք ու կարուտնիս առնենք:

— «Մին էլ էս ա մին գիր եմ ստանում թե՝ ա հեր, հուսումն վերջացրել պրծել եմ, ամա ըստեղ պարտք ունիմ, բացշեն թողնում ինձ. որդիան որ ա, մին էրկու հարյուր մանեթ հասցրու, որ էս պարտքը թափեմ ու գամ: Ղորթ ա, պարտքի անումը, որ լսեցի սիրտս շատ կոտրվեց, ամա դե ասեցի ողյուշան աղլամազ» (ընկնողը լաց չի լինիլ), թող էս մինն էլ յոլա տանենք: Գնացի հոջա-Մարութից էրկու հարիր մա-

նեթ պարտք արի, թյումանին մի աբասի շահով (24%) ու մին ամիս ժամանակով: Եղ փողն էլ զրկեցի Վանուն: Մըտքումս էլ ասըմ ի թե, չս ա բեխս կգա, համ էս պարտք կտա, համ էլ իրա ծուցրած բաները կդրստի: Հենց գիտում ի թե՝ Վանին որ իրա հուսումովը գեղ մտնի, չն ա փողը երկընքիցը վեր ա թափվելու:

— «Անց կացավ մին ամիս, էրկու ամիս, Վանուցը խարար չկա: Մեծ փքրի մեջ ընկա: Յա՞րաբ չս ի՞նչ էլավ. Վանին ո՞րդի մնաց. ըլի մի քամբախտոթին. պատահեց. յա չէ Պետրպոլկումը բռնեցին բեխսիս, չուն ըսենց բաներ շատ ի լսել: Մի խոսքով՝ սիրու ճաքում էր:

— «Մին էլ չս ա մի օր Վանիցը գիր եմ ստանում, գրում ա թե՝ ա' հեր, աշքդ լիս ըլի, էկել եմ Թիֆլիս ու մի սիրուն աղջկա հետ պսակվում եմ, հալի հալբաթ (անպատճառ) քու ու նանի օրհնությունը զուշի թիովը հասցրու ինձ:

«Ոնց որ մարդու գլխին մի թոփ տրաքի, ընենց էս խարարը տրաքեց իմ գլխին ու ինձ շշմեցրեց: Սաղ մին քանի օր ես կնիկս զլիզ պելացել, ընկել ինք ըստեղերք, ոչ արածաներս ինք իմանում, ոչ շարածներս: Շատ մտածելուց ու փիքր անելուց եղը՝ վեր եմ կենում գրում տղիս թե՝ «ա' որդի, ախար հլա քու ինչ պսակվելու վախտն ա. հլա նոր ես հուսումդ վերջացրել, մին եկ քե տենենք, մեր կարուն առնենք, մեր ցավերիցը խոսանք. ախար քու աբովն (հուսով) էլած չելածս ծախել, պարտքի տակ եմ ընկել, եկ իմ ցավին մի ճար արա, էլ եղ գնա' պսակվիր»:

«Հմի դուք փիքր կանեք թե՝ գեղացին իրա տղին պսակում ա տասնհինգ, յա չէ տասնվեց տարումը. էս խի՞ Սաքի ապերը ուզում չեր, որ իրա քսանըչորս տարեկան տղեն պսակվի: Դրա մանին, դրուտն ասած, մին էն էր, որ ես Թիֆլիսի աղջկերանցից վախում ի. չուն դրանցից շատ բաներ ի լսել: Մտածում ի թե՝ զի՞ տղիս գլխից հանեն ու մին քոռ ու քաշալ զատ գլխին կապեն: Զահելը, հո գիտա՞ք, քոռ կըլի. ասում ի ընենց ըլի՝ որ մինումար տղիս անբախտ շանեն. մին էլ էն էր, որ գիտում ի Վանին Թիֆլիսում պսակ-

պիլուց եղք էլ մեզ մոտ չի գալու, վախանն (Հայրենիքն) էլ ա մտքիցը գցելու, հոր տոնն էլ էս ցավին, գիտա՞ք, դժանալ շեր ըլիր

«Իմ գրին տղես պատասխանում ա թե՛ ա՛ Հեր, էս աղջր-կանը Պետրպոլիս եմ սեր տվել, ինչկի Հեղը շպակվեծ՝ կարալ չեմ գեղը գալ. Հալի Հալբաթ քու օրհնութինը զրկիւ

«Գրում եմ, ա՛ որդի, ախար մին առես էլ ա՛ էդ ի՞նչ աղջիկ ա, ի՞նչ աղջի որդի ա. Յա՞ ա, ո՞ւ ա, զ՞ո՞ւդ ա: Սիար, ես ո՞նց իմ օրհնութինը զրկիմ էն Հարսին, որի էրեսը տհեկ չեմ, ձենք լսել չեմ: Գրում ա թե՛—ա՛ Հեր, իի՞ ես էդ բանը Հարցնում. ես հո թուրքի, յա ջ՞ուդի աղջիկ չեմ ուղիլու Գիտում չե՞ս, որ ուզած քրիստոնի աղջիկ կի՞ւ: Ամա մի էրկու օր եղք մեր կնքավորենց աղեն գրում ա (շունքան էլ ի Հարցրել), թե՛ ասիլ լիս, Վանին պսակվում ա մի գլուրջու (վրացու) աղջկա Հետ....»

«Ճմի ձեղ եմ Հարցնում, մին Հեր, որ էս բանը լսի ի՞նչ կանիւ Հը՞։ Ամա ո՞ւր եմ Հարցնում. դուք ի՞նչ գիտաք: Էն ա կցեցի գիսիս վա՞ տալն ու ա՞խ ու վա՞շ անիլը: Ամա գն էլ ո՞ւր կհասներ: Բանը բանից անցել էր:

— Ուրեմն քու օրհնությունը շուղարկեցիր,—Հարցրի ես:

— Չե, շղարկեցի: Ամա ինքը առանց զրան էլ պսակվել պրծել էր: Եղու էլ ինձ լրա ուռած, փրված գրում ա թե՛ ուա՞ Հեր, դու որ քու օրհնութինը ինձ շղրկեցիր ու էս իշխան մարդկանց միջումն ինձ խայտառակեցիր, էլ Հորես զենը ես քու որդին չեմ»:

— Հետո դու ի՞նչ պատասխանեցիր:

— Ոշինչ Մենակ էն արի, որ նրա գիրը վեր կալա, զնացի վանքը: Էն վախտը Օսեփի Հայր սուրբը մեռել էր: Գնացի նրա գերեզմանի ուշին շոգեցի, քարը Համբուրեցի ու լաց ըլելով ասեցի—«Օսեփի Հայր սուրբ, լուս զառնաս դու հողովդ ու քարովդ. ախար դու ինձ ասեցիր, որ իմ Վանին նոյի աղավնին ա, էս ա ձիթենու շիվը բերանում եղ ա գալու, որ բախտավորութենի խաբարը բերի ինձ. քա իսի՞ ըտենց

շիլավ... ախր Վանին հմի նոյի ագուալն ա դառել, ջամփաքի  
վրեն նստել ա՝ ու էլ եդ չի գալի, սրա ճարն ի՞նչ կլինի...:

Մերումին լոեց, կարծես, այլս չկամենալով խոսել

Բայց Պետրոսը, որ, ըստ երևութին, չէր նկատում ձեւ  
բունու հուզմունքը, հարցրեց.

— Վերջը ինչպե՞ս եղավ. տղադ պսակվելոց հետո  
դյուղը չեկա՞վ:

— Եկավ հինգ տարուց եդը. կնիկն էլ բերավ, մի երեք  
էլ գյուրջու ճտեր հեդը:

— Հետո՞:

— Հետո՞ էլ ի՞նչ. մի տաս օր մնաց, սաքի (որպես թե)՝  
մեր խաթրը առնիլու հմար ու էլ եդ զնաց:

— Բաս ըսկի չհարցրի՞ր թե ինչո՞ւ է այդ աղջկա հետ  
պսակվել:

— Հարցրի, ասեց սրա հերը ընտի մեծ զուզուղում  
(պաշտոնի մեջ) ա, պսակվեցի որ ինձ էլ կռան տակը քաշի  
ու մենծ մարդկանց զարգը (շարքը) գցի:

— Այսուամենայնիվ, դու քո նպատակին հասել ես,  
աղիդ բարձր ուսում ես տվել՝ ու Թիֆլիսի նման քաղաքում  
հայտնի մարդկանց շարքը գցել՝ այդ էլ մեծ բան է,—նկա-  
տեց ընկերու:

— Ա քե մատաղ, բա ես իմ էլած չէլածը փշացրել, Վա-  
նին հուսում եմ տվել, որ նա Թիֆլիսի՞ն պետք գա. իսի՞,  
Թիֆլիզումը նրա նմանները քի՞շ կան. յա չէ իմ սիրու զա՞տ  
էր ցավում էդ բարբադի (քանդվածի) հմա՞ր... ես իմ տղին  
հուսում եմ տվել, որ առաջ իմ օջախը շինի, իմ հանգած  
ճրագը վառի, իմ տունը հարս բերիլով՝ ինձ ու իմ պառավին  
ուրախացնի, եղն էլ իրա ուսումով էս խավար գեղը լուսա-  
վորի. մեր խեղճ ու հայվան շինականին կոռից, բեկառից  
ազատի... Թիֆլիսում Վանին թող հենց երկնքից հրեշտակ  
վեր բերի. ինձ ի՞նչ... հրեն, ո՞ր երկրում, որ լուսավոր, յա  
չէ փանդ ու փիլով (հնարագետ) մարդ կա, հենց դպա Թիֆ-  
լիս ա վագ տալի. դուք մեր էս խեղճ գեղի դարգը քաշեցեք,  
որ ոչ տեր ունի, ոչ սրտացավ...:

— Վանին գոնե փող ուղարկում է քեզ, — հարցրի, ես ծերունուն:

— Զէ, չի դարկում, մեր կնքավորի տղին ասել ա թե՝ ապուն ասա ինձանից նեղանա ոշ. խարջս շատ ա մենծ. տարին 3—4 հազար մանեթը հերիք շանում, ես էլ անջախ (հայիվ) էդքան եմ աշխատում:

— Իսկ Խոջա-Մարութի պարտքը վճարե՞ց:

— Չէ՛, քե մատաղ. նրան էլ էրկու գոմշակովս տվի, հոգիս ազատեցի:

— Հապա երբ այստեղ եկավ, իսկի շասացի՞ր, թե ինչո՞ւ գոնե յուր համար արածդ պարտքը չի վճարում:

— Ասեցի, ասում ա, ա' հեր դիմ մեկ չի՞։ ինչ ունես չունես ծախիր կեր. եփ որ կդարտակվես, կգաս Թիֆլիս իմ տանը կապրես:

— Դու ի՞նչ ասեցիր:

— Ասեցի, յանդիշ ես, որդի, որ իմանամ քաղցած մեռնելու եմ, իմ ոտն իմ գեղիցը դուրս չեմ դնիլ, ըստեղ ծնվել եմ, ըստեղ էլ պտի մեռնեմ. իրա վաթանը մոռացողը, հոր տունն աշքից ու մտքից քցողը մարդ չի, հայվան ա:

— Եվ այդ դրության մեջ ուրեմն դու ոշ մի մխիթարություն չունի՞ս, — հարցրի ես ծերունուն, ի սրտե ցավակցելով նրան:

— Ունեմ, ո՞նց չունեմ, — պատասխանեց նա հուզված ձայնով — իմ մխիթարությունն էլ էն ա, որ եփ լսում եմ թե մեր գեղականին մինը ուզում ա իրա տղին քաղաք դրկի հուսում առնելու, էն սհաթին գնում եմ կրնիցը բռնում, բերում մեր հայաթումը կանգնացնում ու ասում. — տե՛ս, որդի, էս Վեդունց Սարգսի զեն օջախն ա, որ էսօր վերանա (ավերակ) ա դառել: Ա՛յ, տե՛ս կտուրը ծովել ա, պեշերը թափվել են, գերանը կախ ա ընկել, գյումը դարտակվել ա, ու մեղ թացան (թաց կերակուր) տվողը մի է՛ծ (այծ) ա մնացել... Մենք էլ, տեսնո՞ւմ ես, մարդ ու կնիկ ծերացել, մնացել ենք անտեր, ոշ ձեռք կա, որ մեր դուռը բանա, ոշ ձեն կա, որ սրտներս ուրախացնի... էս դիմ նրա՛ մեղն ա, որ ես իմ

տղին հուսումի զրկեցի... Վախի՛ր էդ բանիցը, որդի, բեխեք  
քու կշտին պահիր, տանիցդ մի՛ հեռացնիլ, որ իմ Վանու  
նման նոյի ագռավ շդառնա...:

— Բայց դուք հո դրանով շարիք եք գործում, — բացա-  
կանչեց Պետրոսը վրդովմելով:

— Զարիք խի՞ եմ գործում, — պատասխանեց ծերունին  
եռանդով, — լավն էն չի՝ որ մեր գեղը հիսուն վար անող  
տղամարդ ավելի ունենա, քան թե հարիր նոյի ագռավ: Վար  
անողը հաց կբերի տուն, քյուլփաթի (զավակների) ուու-  
զին կշտացնի. նոյի ագռավն ինչի՞ ա պետք: Յա չէ՛, հո՞վ  
ա մեղավոր, որ ես հմի ըսենց եմ խրատում մարդկանց, ե՞ս,  
թե՞ իմ տղեն: Մի սհաթ առաջ գնացել եք Տեր-Մակուշի յա-  
խեն (օձիքը) բռնել թե՝ էս խի՞ դու գիտուն չես, էս խի՞  
տղերանցդ հուսումի շես զրկել... Խեղճն էն սհաթին եկավ  
հնձ գանգատվեց: Ասեցի, ո՞ւր ա, էդ շլապավոր տղերանց մի  
զրկի ըստեղ՝ ես էլ նրանց իմ հարցմունքն անեմ: Հմի հա-  
զիր եկել եք. խնդրում եմ որ ասեք. — Հո՞վ է մեղավոր, որ  
գեղի քահանան Տեր Մակուչն ա. Հո՞վ ա մեղավոր, որ եղ-  
ցու առաջը անապատ ա. Հո՞վ ա մեղավոր, որ գեղը կեղտու  
ա, տները տափից կպած, հայաթները թրքով լիքը, քուչնքը  
ծուռ ու մուռ... ասեցեք տենամ, Հո՞վ ա մեղավոր, խեղճ  
գեղակա՞նը, թե՞ նոյի ագռավները: Ախար ինչկի հմի էս  
գեղարանքից մի տասը, քսան տղա գնացել են հուսում  
առել, լուսավորվել. հմի ո՞ւր են, ընչի՞ նրանցից մինն ու  
մինը եղ շեկավ, որ իրա հոր օջախը վասի, իրա վաթանը  
պայծառացնի, որ գեղացին հենց մին օրինակ էլ ա տեսնի  
ու ասի թե՝ «ղորթ ա, հուսումը լավ բան ա, եկեք մենք քար  
ու քացախ ուտենք, ամա մեր բեխանց հուսում տանք, լու-  
սավորենք...»

Մերունին լոեց, իսկ մենք պատասխանելու ոչինչ չու-  
նեինք:

Թարեքախտաբար այդ միջոցին պարտիզի դռնում երե-  
պաց մեր հյուրընկալը, որ եկել էր մեզ ճաշի, կանչելու

Յգուտ քաղելով առիթից, վերկացանք տեղից և ողջոմելով  
ծերումուն, հեռացանք ծանր տպավորության տակ:

Երբ իշնում էինք սոսիների զառիվայրով՝ հարցրի Պետ-  
րոսին թե՝ արդյոք հիշո՞ւմ է այն խոսքը, որ ասում էի՝ թե  
«կգտնվին հոգվո կամ մտքի աշքերով հիվանդներ», որոնք  
իսավարը կորոնեն իբրև գեղ, իրենց ցավը մեղմելու համարա:

— Հիշում եմ, — ասաց նա, — և այս ծերունին այս հի-  
վանդներից մինն է:

— Այո. սակայն նրա միտքն առողջ և հոգին կայտառ  
է եղել. երկուսն էլ հիվանդացրել է լուսավոր որդին, — հարե-  
ցի ես:

— Անշուշտ, — պատասխանեց ընկերս և այս անփառ  
արդեն խոր համոզ մուռն քով:

---

ԱՐԵՎՈՅԼԵ



Եւ այլն անկտւ յապառաժի, ուր ոչ  
գոյք հող բազում, և վաղվաղակի բաւ-  
սաւ առ ի չգոյէ հիւթոյ երկրին, ի ծա-  
գել արևու տափացաւ, և զի ոչ գոյին  
աըմատք չորացաւ

Աւետ. Մատր.

Ա

Ողը մեղմ էր և տաքուկ, երկինքը պարզ և աստղա-  
դարդի Տների ներսը չէր դրավում մարդկանց, ուստի ժողո-  
վուրդը լցված էր դուրսը և զբունում էր սալած մայթերի  
վրա, կամ նոր կանաչազարդ ծառուղիներում։ Շառագույն  
լուսինը, որ նոր էր բարձրանում մինացող հորիզոնում,  
խորտանում էր գեղեցիկ, լուսնկա գիշեր։ Այդ պատճառով  
ֆողոցներում աշ ու ձախ սլացող կառքերի թվին հետզհետե  
ավելանում էին և այն գեսպակները, որոնք իրենց մեջ  
խնամքով ծածկում էին հեռավոր զբունարանների խորհրդա-  
վոր հաճախորդներին։ Այդպիսով դրսի աղմուկը գնալով  
առանձինում էր և կենդանությունը տիրում ամեն տեղ։  
Միայն ծերուկ փիլիսոփան, կամ գեղեցկուհուց մերժ-  
ված սիրահարր կարող էին արդպիսի ախորժելի երեկոյին  
գուկվել տան խորշերում և մտածել մինը՝ աշխարհի ունեց-  
նության և մյուսը՝ յուր վշտի ծանրության վրա։ Թայց  
կյանքի արժեքը մեծագրել գիտցող մարդը, մանավանդ եթե  
դա երիտասարդ էր կամ երիտասարդուհի, չէր կարող այդ-  
պիսի գրավիչ ժամերին չգտնվիլ զբունողների ընդհանուր  
ժխորի մեջ։

Սակայն արի տե՛ս, որ հենց այդպիսի մի ժամանակ՝  
ներքին հարկի մի ցածուն, բայց և ընդարձակ սենյակի մեջ  
ժողված էին մի խումբ աշխույժ երիտասարդներ, որոնք չէին  
մտածում ոչ նորեկ գարնան, ոչ սիրուն լուսնի և ոչ Հեմե-  
լիքներում զբոսնող գեղեցկուհիների մասին։ Նրանք զբաշ-  
ված էին ավելի արժանավոր, կամ ինչպես իրենք կառեին  
«ազնվական» գործով։ Դրանք հայ ուսանողներ էին՝ համալ-  
սարանի կամ այլ բարձրագույն դպրոցների վերջին կութա-  
րից, որոնք հաճախ ժողովում էին այդտեղ միմյանց հետ  
տեսնվելու, մտերմապես զրուցելու, մայրենի լեզվով կար-  
դալու, կամ հեռավոր հայրենիքից ստացված նորություննե-  
րը միմյանց հաղորդելու, երբեմն էլ իրենց ցավերի մասին  
միմյանցից կարծիք, կամ խորհուրդ հարցնելու։

Այդ քաղաքում կային և ուրիշ հայ ուսանողներ, որոնք  
իրենց ազատ ժամանակը տնօրինում էին այլ կերպ։ Ոմանք  
սիրում էին շափել փողոցները, աշխարհի շար ու բարին այս  
տեղերում միայն ուսումնասիրելու նպատակով, ոմանք  
զբաղվում էին սովորական թղթախաղով՝ ժամանակի ձանձ-  
րույթը մեղմելու համար։ ուրիշներն այցելում էին հարուստ  
ընտանիքներին՝ նրանց տիրուհիներին զբաղեցնելու։ Կոմ  
օրիորդներին գրավելու հուսով և երբ նրանց չէր հաշողված  
ոչ մինը և ոչ մյուսը, շատանում էին համեղ ընթրիք վայե-  
լելով։ Մի մասն էլ էպիկուրյան փիլիսոփայության հետեւ  
լով՝ ազատ ժամերը նվիրում էր հաճության աղջիկների բն-  
կերակցության, մտածելով թե՝ այդպիսով ավելի լավ է ժո-  
ռայում մարդ արարածի իսկական կոշման։

Թայց ներքնահարկի ցածուն առաստաղով սենյակում  
ժողովածները չէին պատկանում հիշյալների թվին։ Նրանք  
ուսանողության ամենաընտիր մասը, կամ բանաստեղծորեն  
ասած՝ ծաղիկներն էին, որոնք իրենց կոշման նշանակու-  
թյունն ըմբռնելով, ժողովվել էին այդտեղ, ինչպես ուստ-  
ցինք, լավագույն մի գործով զբաղվելու համար։

Եվ նրանց այսօրվա պարապմունքի առարկան նշանաւ-  
գոր էր շատ կողմերից։ Այսօր քննկում էին այն կարեւոք

Հարցը, թե նրանցից ո՞րը ի՞նչպես պիտի գործե կյանքի ասպարեզը մտնելուց հետո:

Այդպիսի հարցեր, ինչպես հայտնի է, փորձված մարդիկ չեն տալիս իրար, միշտ մտածելով թե՝ «բանը բան ցույց կտա». իսկ փորձված հոգևորականը մինչև անգամ ասում է՝ «Օր աւորք բղխէ զբան և գիշեր՝ գիշերի ցուցանէ զգիտութիւն», ուստի և երբեք խոստում չէ անում: Բայց ուսանողն, Յո դիտե՞ք, անձնիշխան է ամեն դեպքում, հետեապես և կարող է նման հարցեր քննել: Անփորձությունն էլ, անշուշտ, մի արտոնություն է, որից մարդիկ երբեմն օգտվում են հաջողությամբ: Եվ քիչ չէ պատահում, որ բախտն ավելի ժպառում է նրանց, որոնք գործում են առանց երկար մտածելու:

Ինչ և է, առաջապրյալ խնդրի մասին երկար խոսել ու վիճել էին ուսանողները, երբ նախագահը, որ մի առողջ, զվարթածայն և կոպիտ արտաքինով երիտասարդ էր, ուժգին զանգանարեկով ժողովականների ուշադրությունը հրավիրեց յուր վրա:

Դահլիճում լուսություն տիրեց:

— Ենդիրը մինք քննեցինք ամեն կողմից, — ասաց նախագահը, — մինչև անգամ ավելորդ մանրամասնությունների մեջ մտանք. այժմ արդեն ժամանակ է ամփոփել մեր մըտքերը, ձևակերպելով այսպիս:

Պարտուղարն իսկույն լարեց ուշադրությունը նախագահի խոսքերը գրի առնելու համար:

— Մենք որդիք ու անգամներ ենք այնպիսի մի ազգի, — շարունակեց նախագահը, — որ ունի կարիքներ ու ցավեր: Եյդ աղքն իրավունքով սպասում է մեզ, յուր հարազատ որդիներին, որովհետն զիտե, որ մենք բարձր ուսում ու կրթություն ստանալով, ձեռք ենք բերում այն ույժը, որով պիտի կարենանք յուր կարիքները լցնել և ցավերը դարձնանել: Հետեապես, մեզ վրա դրվում է սրբազն պարտք՝ ի գերի շնանել սպասող ազգի հույսն ու ակնկալությունը: Մեզանից յուրաքանչյուրը պիտի համարե իրեն

մի պարտապան, որ ունի վճարելիք յուր պարտատիրոջ, այս  
սինքն ազգին, ուստի և մտածե այդ պարտքը վճարելու  
եղանակի վրա, և վճարե սիրով, համարելով այդ պարտքը  
ո՞չ թե բեռն ու ծանրություն, այլ յուր սրտին հանդիսաւ և  
հոգվույն հաճույք բերող մի գործ։ Մի երկու ամիս ևս և  
մենք կթողնենք այն տաճարները, որոնց հարկերի տակ մեր  
արտերում ցանեցին գիտության ու բարվո, ճշմարտի և գեց  
դեցկի լավագույն սերմերը. մի երկու ամիս ևս և մենք կբաժ  
ժանվինք իրարից, ո՞վ գիտե, գուցե հավիտյան։ Արդ, քանի  
միասին ենք, քանի տեսնում և լսում ենք իրար, ահա՛ խոս-  
տանում ենք միմյանց՝ ընկերի և ուսանողի ազնվագույն  
խոստումով, որ մեր սրտերում ցանված սերմերը պիտի ա-  
ճեցնենք կյանքում հիսնապատիկ, հարյուրապատիկ և այդ  
սերմերից ելած պտուղները վայելել տանք նախ այն ազգին  
ու ժողովրդին, որին պատկանելու պատիվն ունինք և ապա  
թե գրանից բաժին հանենք մեզ։ Չենք որոշում, ի հարկե,  
թե ո՞վ մեզանից ի՞նչ շափով է պարտավոր ծառայել ազգին,  
բայց հավատում ենք թե մեզանից յուրաքանչյուրը սիրով  
պիտի լսե այն ձայնը որ կանչում է՝ «Շունձք բազում են և  
մշակք սակաւ...» Հետևապես և պիտի շտապե գաւանալ  
ոմշակք այդ «Շունձերի» համար և աշխատել ու քրտնել ազ-  
գի անդասատանում։ Խոստանում ենք, որ ոչ մեզանից  
պիտի ետ քաշվի վատաբար, կամ ասե թե իմ ույժն անկտ-  
րող է ազգի կարիքները լցնելու, այլ պիտի աշխատե ըստ  
յուր կարողության, հիշելով այն առածը թե՝ «ուր կամք կա,  
այնտեղ կա և ճանապարհ»։ Եվ իրավ, եթե զուրը յուր կա-  
թիներով ծակում է ապառաժը, մի՞թե մեր կամքը այդ չ  
կարող անել; «Ամենալավ իմաստությունը հաստատ որո-  
ջումն է», ասում էր նապուենը։ Եվ ես կարծում եմ, եթե  
մենք ևս կյանքի մեջ հետեւնք այդ իմաստուն խրատին, ան-  
շուշտ կործենք ավելի հաջողությամբ, քան կարող ենք  
այժմ երևակայել։ Մեր ժողովուրդն, իրավ, կարիքներ շատ  
ունի և այդ ամենը մենք չենք կարող դարմանել։ Բայց եթե  
այսօր մենք մի մասը դարմանենք և վաղն ուրիշները մի

թւրիշ մասը, և այսպես գործը շարունակվի անընդհատ, կազմիքները կդարմանվին կարճ ժամանակում և ցավերը կվերանան անզգալապես: Աշխատող ձեռքը, պարոններ, չկապտիլ երբեք վարդալիր պարտեզ, այլ կերթա այնտեղ, ուր հողն անմշակ է և դաշտերը խոպան, նա յուրաքանչյուր կթափե այդ հողում, որպեսզի ապագայում մխիթարի այն մտքով թե ինքն իրավամբ կրում է արարչի պատկերը, վասնզի կարողացավ «ինչն ստեղծել ոչնչից»: Պատմության մեջ հայտնի բազմաթիվ անձինք նշանավոր են դարձել և ազգերի ու սերունդների սերն, ու սիրտը գրավել ոչ այն պատճառով, որ իրենց անձն են սիրել, կամ զահը խնամել, այլ որովհետև նվիրվել են հասարակաց բարվույն, ժողովրդին ու հայրենիքին: Դրանցից շատերը սկսել են գործել ամենաանպատ պայմաններում, շարունակ արգելքների ու հաշլածանքների հանդիպելով, բայց որովհետև ունեցել են հաստատուն կամք, որովհետև անկեղծորեն սիրել են ժողովուրդը, ուստի և հաղթել են ամեն արգելքների և ստեղծել աշխարհում հոյակապ գործեր: Մենք էլ, ուրեմն, գործելու ժամանակ առաջնորդ ունենանք պատմության հերոսներին և ինչ աննպատ պայմանում էլ, որ սկսենք մեր գործը, հիշքենք այն իմաստուն նշանաբանը, որ փորված է եղել մի հինկացնի վրա՝ ուկամ կդունեմ ճանապարհը և կամ ինքս բաց կանեմ: Այսպիսի որոշումով գործել ցանկացող մարդուն արգելքը չի վհատեցնիլ, այսպիսի մարդու առաջ ժայռերն անդամ կհալվին...»

Այս եղանակով դեռ երկար խոսեց նախագահը, որ Տիգանի նախկին սան լինելով վարժ էր հայ լեզվով ճառարտասանելուն, ուստի երբ ավարտեց, ուսանողները ոգեշորված ծափահարեցին նրան: Ապա սկսան ամեն կողմից հանդիսավոր խոստումներ անել այն մասին թե՝ արդարեւ, կյանքի մեջ մտնելուց հետո պիտի նվիրվին հասարակաց շահին, երիտասարդներից ոմանք, մինչև անդամ, իրենց ապագա գործունեության ծրագիրն առաջարկեցին, ոմանք էլ այդ ծրագիրը պակասավոր գտնելով, ավելի ընդարձակ խոս:

առումներ արին: Գտնվեցան ի հարկե և այնպիսիները, որոնք  
համեստությամբ խույս տվին թե՛ ծրագիր առաջարկելուց և  
թե՛ այն քննադատելուց:

Բայց բոլոր խոսողների մեջ ավելի զրական և կշիռ  
ունեցող խոստումն արավ Պետրոս Կամսարյանը, որ մի բա-  
րեկազմ և գեղեցիկ արտաքինով երիտասարդ էր: Լինելով  
հարուստի զավակ, նա միննույն ժամանակ բարեսիրու էր և  
դյուքազգաց, կարիքի ժամանակ օգնում էր ընկերներին և  
ուսանողական աշխատությանց մասնակցում սիրով: Բայց  
ընելով ի բնե զդույշ և կարգապահ, ամեն ինչ անում էր  
ափով ու կանոնով: Նույնիսկ օգնության կամ աշխատու-  
թյանց վերաբերյալ գործերում, նա յուր համար ուներ որոշ  
չափ ու կշիռ Առում էր ինչպես անհոգությունը, նույնպես  
և ամեն ծայրահեղություն, ուստի և խույս էր տալիս այն-  
պիսի ընկերներից, որոնց ներկայացնում էին իսկական ու-  
սանողի տիպ: այսինքն, լինում էին անփույթ վաղվա-  
պարտքի նկատմամբ, անհաղիլ իրենց ծախսերի մեջ, ան-  
տարբեր դեպի կարգ ու կանոնը, մաքրասիրությունը և ճշշ-  
տապահությունը: Եվ թեպետ այս պատճառով նա ընկերնե-  
րից ստացել էր պեղանտ մականունը, այսուամենայնիվ,  
այդ քանից նա չէր վիրավորվում, որովհետև փորձով գիտեր,  
որ անկարգ ու անկանոն եղանակով ապրողները միշտ այդ  
անունով են մկրտում կարգապահ մարդկանց, որպեսզի  
դրանով իրենց թերությունը ծածկեն:

Այս իսկ պատճառով ուսանողներն ապշեցան, երբ Կամ-  
սարյանը հանդիսաբար հայտնեց թե որոշել է քննություննե-  
րից հետո վերադառնալ հայրենիք և իրեն նվիրել յուր ազ-  
գակիցների ամենից ավելի օգնության կարոտ դասակարգին,  
այսինքն՝ մտնել գյուղը և այնտեղ հիմնել օգնության  
միջ գործ, հատկացնելով այդ նպատակին՝ յուր հարուստ  
հորից իրեն հասանելիք ժառանգությունը:

Սկզբում ընկերները, կարծես, չհասկացան այդ հայտա-  
րաբության միտքը և նայում էին իրար հարցական հայացք-  
ներով: Բայց երբ երիտասարդը կրկնեց յուր որոշումը ովելի

ժեկին և հաստատապես, ներքնահարկի դահլիճը թնդաց կեցցեների որոտքնդուստ ձայներից և մի քանի ուժեղ ձեռքեր բարձրացրին Կամսարյանին դեպի առաստաղը և սկսան շըրջեցնել դահլիճի շուրջը՝ շարունակ «կեցցե» գոռալով և «Հերթիք, ընկերք» երգելով, Աղմուկը դադարելուց հետո Պետրոս Կամսարյանի հայտարարությունն ընդունվեց ուսանողների պաշտոնական գովիճատով և խկույն էլ մուծվեցավ արձանագրությանց տետրակը:

## ❖

**Ամառ** է, քննությունները վերջացել են: Կամսարյանն առացել է ավարտման վկայական: Այժմ նա իրավաբան է. կարող է ապրել քաղաքում և շրջապատել իրեն հարմարություններով, այսինքն կահավորել մի փառավոր տուն՝ համաձայն յուր նուրբ ճաշակի պահանջներին, ապա ընդարձակել ծանոթությունների զրջանը, այցելել բարձր դաստիարակի անձանց, կապեր հաստատել, խնդրարկուներ ընդունել, գատեր պաշտպանել և յուր հասարակական գործունեությամբ՝ անուն ու հոչակ վաստակել:

Բայց մի՞թե այդ պիտի լինի երիտասարդ Կամսարյանի կյանքի նպատակը: Երբեք. նա ավելի արժանավոր, բարձր և սուրբ նպատակ ունի աշքի առաջ. նա այժմ իրեն չէ պատկանում, հետևապես, և չէ կարող ծառայել յուր անձին: Նա պիտի նվիրվի յուր տկար ազգակիցներին, շինականին ու պատղացուն, նրանց համար պիտի հոգա, նրանց համար պիտի մտածե:

Եվ այդ պիտի անե ո՛չ թե նրա համար, որ հանդիսաբար խոսացել է ընկեր ուսանողներին, ոչ, այլ որովհետեւ ինքն այդ կամենում է սրտանց, որովհետեւ ամեն անդամ, երբ խոսք է եղել այդ ազգակիցների մասին, յուր սիրտը թունդ է առել և թուել դեպի նրանց, որովհետեւ ինքը միշտ մի առանձին սեր, մի թաքուն գորով է տածել դեպի այդ հետապոր եղբայրները: Եվ թեպետ անձամբ չէ տեսել նրանց,

բայց միշտ լսելու կարդացել է թե բարի մարդիկ են, ազնիվ և աշխատասեր, թե սեփական շահի համար ոչ ոքի չեն վնասում, այլ ապրում են իրենց ճակատի արդար քրտինքով։ Բայց թե, որովհետև տգետ են և անուսում, ուստի մնում են անզոր աշխարհի շարիքների առաջ, որով և մի կողմից բնությունն է նրանց զրկում, իսկ մյուս կողմից չար մարդիկն են կեղեքում. այդ պատճառով էլ նա վարում է դառն ու չարքաշ կյանք և մնում կարու բարի մարդկանց օգնության։ Բայց միկնույն ժամանակ նա լսելու կարդացել է և այն, թե յուր այդ աղքակիցները կարող են ազատվել կյանքի դառնություններից և համնել մի օր երջանիկ զրության, եթե խելոք զլուխները մտածեն նրանց մասին և կարող ձեռքերն աջակցեն նրանց աշխատության։

Եկ ահա՛ Կամսարյանն ունի թե՛ խելոք զլուխ և թե՛ կարող ձեռքեր. ինչո՞ւ, ուրեմն, չերթա շորոնե այդ սիրելի աղքակիցներին, չապրե նրանց հետ, շովորեցնե նրանց իրենց դրությունը բարվոքելու և մարդավայել կերպով ապրելու եղանակը։

Այս մտածությունները ոգևորում էին երիտասարդ իրավաբանին, այն երկար ճանապարհին, որ հյուսիսից տանում էր նրան հարավ։ Այդտեղ նա շարունակ ծրագիրներ էր կազմում յուր ապագա գործունեության համար և նրանցով հիանում։ Այդ ծրագիրների մեջ մտնում էին նախ գյուղական հասարակության իրավունքների պաշտպանությունը, որ արդեն վերաբերում էր յուր մասնաշխտության և ամփոփում յուր մեջ գյուղացու կալվածների հափշտակությունից աղատելու, հարկահանության ժամանակ տեղի ունեցող անարդարություններն արգելելու, գյուղացուց հաճախ անտեղի կերպով պահանջվող կոռն ու ծրի մշակությունը մերժել տալու և պաշտոնի մեջ, ի վնաս գյուղացու զեղծումներ կատարող և արդարադատության աշքից խուսափող պաշտոնյաների արարքը մերկացնելու կարևոր խնդիրները. երկրորդ՝ լուսավորության գործի հիմնադրությունը, որ կայանում էր կանոնավոր դրայ-

րոցներ հաստատելու, գեղջուկ մանուկներին ձրի ուսում մատակարարելու, մանկական-ժողովրդական գրադարան հիմնելու և հասակավոր գյուղացիներին ազատ ժամերում և, մանավանդ, ձմեռ ժամանակ օդաներում, կամ եկեղեցիներում դասեր խոսելու և աշխարհի շար ու բարի հետ նրանց ծանոթացնելու մեջ. երրորդ՝ գյուղ ացու տնտեսական գրության ը ար վ քում ուներ նրա երկրագործական, այգեպանական, անասնապահական, հավաքութական և այլ այսպիսի աշխատությունները կանոնավորելուց, իսկ այդ նպատակին համելու համար պետք է սովորեցնել գեղջուկին դիտության մշակած ձևերով տնկելու և պատվաստելու, հերկելու և ցանելու, հնձելու և կալսելու, անասուն, հավ և մեղու դարմանելու, պարտեզ ու բանջարանոց մշակելու դյուրին եղանակները։ Տնտեսական դրություն բարվոքելուն էր վերաբերում նաև փոխառությունը, որ եթե հաջողեր նրան իրագործել, դրանով ոչ միայն վաշխառությունը կհալածվեր գյուղերից, այլև կտեղծվեր բարության մի գործ, որ կօգներ գյուղացուն յուր աշխատությունն ու արդյունքը ոչ թե կեղեգիշների ձեռքը, այլ յուր հարկի տակ ժողովելու։

Բայց այս ծրագիրներն այնքան ընդարձակ էին, որ նույնիսկ նրանց համառոտ կազմությունը խլեց Կամսարյանի, Մոսկվայից մինչև Կովկաս հասնելու միջոցում ունեցած ազատ ժամերը։ Եվ երբ նա վերջին անգամ նայեց յուր ոօտե-երի տեսրին և տեսավ նրա ծայրեիծայր լիքը յուր ապագա գործունեության վերաբերյալ դիտողություններով, զգաց յուր սրտում մի թաքուն ուրախություն, որ բխում էր երբեկց ռառաքյալից փառք ու հոչակ ստանալու հաստատուն հույսից։

Վերջապես երիտասարդը հասավ Թիֆլիս։ Հարկ շկանկարագրելու այն ընդունելությունը, որին հանդիպեց նա հոր տանը։ Ամենքդ արդեն գիտեք թե պանդիտությունից վերադարձող որդուն ի՞նչպես են ընդունում կարոտակեզ

ծնողները, կամ նորատի քույրերն ու եղբայրները. Որքա՞ն չերմ համբուլըներ, որպիսի՛ զրկախառնություն, խանդաղատանք, ուրախության արցունքներ և ապա ինչպիսի՛ բազրը ու երջանիկ ժամապատում են նորեկին: Եթե դրա վրան էլ ավելացնենք այն, որ այդ բոլորը տեղի էր ունենում մի հարուստ տան մեջ, ուր մեծ թե փոքր, աղջիկ թե աղա շգիտեին թե ի՞նչ է կարոտությունը, որ ազքատի տան մեջ յուր ներկայությունը զգալ է տալիս նույնիսկ այն վայրկյանին, երբ մայրը ողջագուրում է ալանդիստությունից վերադարձող որդուն, որ հաճախ ցրտացնում է համբուլը շերմությունը և զուրթերի վրա ժամապատում, այն ժամանակ կհասկացվի թե որպիսի՛ երանությամբ էր շրջապատված նորավարտ, գեղեցիկ արտաքինով և գեղ ամենքին սիրելի Պետրոս Կամսարյանը:

Մողնինք ուրիմն նրան զվարճանալ առայժմ յուրային-ների հետ:

## ¶

**Ա**նցավ մի շաբաթ և այդ միջոցին խոսք ու զրուց շեղան երիտասարդի սկսելիք պարապմունքի մասին, որովհետեւ ամենքի համար էլ պարզ էր թե ինչո՞վ կարող է զրադիվել մի երիտասարդ իրավաբան: Նրա առաջ բաց էին թե՛ պետական օրաշտունների և թե՛ մասնավոր պարապմունքի արդյունավոր ճանապարհները: Եթե առաջինը չհաջողվեր, երկրորդի համար բավկական էր մի երկու տող հայտարարություն և, ահա՛, հաճախորդները իրար թևակոխելով՝ կլցվեին փաստարանի նորաբաց ընդունարանը:

Այս էին մտադում Կամսարյանի ծնողները և ցանկանում, որ Պետրոսը առ ժամանակ հանգստանա և մանավանդ թե կազզուրվի զովարար ամառանոցում, ուր մտադիր էին տեղափոխվել քիչ ժամանակից հետո:

Սակայն մի օր զարմանքով տեսան նրանք, որ իրենց որդին ինչ որ պատրաստություններ է տեսնում: Նա զնել էր

Ճանապարհի նոր հագուստ, երկարածիթ կոշիկներ, ձիռն  
թամբ, նոր տեսակի պայուսակ, որսորդական հրացան և այլ  
այնպիսի իրեր, որոնք կարող էին ճանապարհովել միայն վայ-  
րենի տեղերում, ուստի ճետաքրքրվեցան իմանալ թե ինչ՝ և  
համար են դրանք:

— Պիտի ճանապարհորդեմ,—ասաց նա ծնողներին:

— Պիտի ճանապարհորդե՞ս... ի՞նչպես, ուզեմն ամա-  
ռանց չի պիտի գաս,—հարցրեց երիտասարդի մայրը ան-  
հանգստությամբ:

— Աչ, պիտի գնամ գեղի ճեռավոր հայ գյուղերը և, ո՞վ  
դիտե, գուցե շատ ուշ վերադառնամ, կամ... (ուզում էր ա-  
սել «բոլորովին շվերադառնամ»), բայց զգալով, որ լավ չէ  
վախեցնել ծնողներին, խոսքն ընդհատեց):

— Այդ անկարելի է,—ճշաց իւկույն տիկին Կամսարյա-  
նը, կամ յուր լեզվով ասած՝ կիդիա Պավլովնան, որ մի պա-  
րարտ, կլորիկ և թեպետ հիսունը անցած, բայց գեռ գրավ-  
չաղեմ և հաճելի լինելու առավելություններով օժտված էին  
էր,—այս՝ անկարելի է... այսքան ժամանակ հուսով սպասել  
եմ քո դարձին, որ զոնէ ամառվա ամիսները միասին անց-  
նենք, իսկ զու ասում ես թե պիտի ճանապարհորդե՞ս, ոչ,  
այդ չի լինիլ,—ասաց տիկինը վճռաբար և մեջքը թիկնաթոռին  
տալով՝ աշխատեց պարարտ մարմինը զետեղել նրա վրա  
կարելվույն շափ հանգիստ:

Տիկին Կամսարյանի «Մշ այդ չի լինիլ» վճիռն ուներ  
յուր հարգելի պատճառները: Բացի այն, որ նա իրեւն սիւ-  
րով մայր, կցանկանար անցուշտ ամառն անցնել յուր՝ որ-  
դու հետ, կար և մի ուրիշ հանգամանք, որ զրդում էր նրան  
շհամաձայնել որդու հետ, Դա՝ մոք փառամիրությունն էր.  
այն թաքուն զգացմունքը, որ շատերը ինամքով փայտա-  
ցում են սրտի խորքում, բայց որի զոյությունն ուրանում  
են մարդկանց առաջ:

Լիդիա Պավլովնան առաջին անգամ շէր զնում ամառա-  
նոց, ուստի գիտեր, որ ամեն ամառ այնտեղ ստեղծվում է  
ծանօթների ու բարեկամների ճետաքրքրական շրջան. սէզի

են ունենում նոր տեսակի ընդունելություններ ու այցելություններ, սարքվում են փայլուն զբոսանքներ, ճաշեր ու պիկնիկներ, երեխմն և երեկույթներ: Արդ, չէ՞ որ մեծ փառք էր ամեն մոր համար այդ բոլոր տեղերում երևալ նորափարտ, գեղեցիկ արտաքինով, հաճելի ձևերով և տակավին ամուրի երիտասարդ որդու հետ... այդպիսի մայրն, առհասարակ, ամառանոցի սիրած ու փայփայած անձն է լինում: Բոլորը (խոսքս իհարկի հարսնացու աղջիկ ունեցող մայրերի, կամ փեսացու փնտրող հարսնացուների մասին է, իսկ եթե դրանց թվում ընթերցողները դասեն, նաև, նորատի այրիներին, դրա դեմ էլ ոչինչ շունիմ), շրջապատում են՝ նրան սիրով, քնքշությամբ, ամ էն ա անկ ե զ ծ բարեկամությամբ: Այդպիսի մորը, բնականարար, այցելում են հաճախ և այն միշտ երկուսով կամ երեքով (նայելով թե այցելողը քանի հարսնացու աղջիկ ունի) հրավիրում են շատ տեղերից. նույնիսկ այնպիսի տներից, ուր այդ մայրը երբեք ոտք դրած չէ եղել. բայց ծանոթացել է նրանց տիրուհիներին այս ինչ պիկնիկում կամ պարահանդիսում: Բացի այդ, հանգիսավոր ճաշերի ժամանակ, ամենից պատվավոր տեղը առաջարկում են այդպիսի մորը և ամենից համեղ պատառը հրամեցնում նրան: Հարկ չկա ասել, որ զբոսարաններ չ' մի՛ ամենից սիրելի ու քնքույշ խոսակիցները՝ շրջապատում են նրան, եթե երիտասարդ որդին էլ զբանում է նրա հետ: Միով բանիվ, ամեն տեղ կատարվում է այն, ինչ որ հայկական առածն է բնորոշում, այսինքն «ձուածեղի» համար թափի կոթը պաշում են»:

Այս ամենը գիտեր տիկին կամսարյանը. այս ամենի մասին նա մտածել, երազել էր և այն՝ երկար ամիսներով... այժմ հանկարծ լսել թե իրեն զրկում են քաղցր հույսերից, իհարկի, նա չէր կարող, հետևապես և չի պիտի թույլ տար որդուն իրագործել այդպիսի մի անհեթեթ որոշում:

Դժբախտաբար, երիտասարդն էլ յուր կամքի տերն էր (գոնե ինքը հաճախ այդպես էր ասում), ուրեմն և հեշտ չէր ետ կեցնել նրան յուր ընտրած ճանապարհից: Այդ պատ-

ճառով մոր «ոչ, այդ չի լինիլ» վճռին, նա պատասխանեց խստությամբ:

— Ամառանոցում զմարձանալուց առաջ ես պարտք ունիմ կատարելու, մայրիկ, մի հուսար թե ես կհետաձգեմ իմ գործը քեզ ընկերանալու համար!

— Պետյա՛, Պետյա՛, մեկ մտածիր թե ի՞նչ ես ասում... ամբողջ տարի աշքներս ջուր կտրած սպասել ենք քեզ, կարոտից հալվել,... (կամենում էր ասել «հալվել ու մաշվել ենք», բայց մեկ էլ մտածելով թե ինքը խիստ պարարտ է, ասաց) մաշվել է սրտներս, այժմ դու նորեն կամենում ես մեզ թողնե՞լ... Ուրեմն դու սիրու շունիս, դու հայր, մայր, եղբայր ու քույր չե՞ս ճանաշում...

Վերջին բառի վրա տիկինը հեկեկալու նման մի սրտաշարժ ձայն հանեց, հետո հուպ տվավ աշքերը, հուսալով թե նրանցից մեկն ու մեկը արտասուզ կգլորե յուր սպիտակ ու փափուկ այտերի վրա (որ իհարկե զատ տեղին կլիներ), բայց տեսնելով որ այդ չեղավ, ընդհատեց խոսքը...

Երիտասարդին այնպես թվաց թե դյուրազգաց մայրը սրտի նեղությունից չի կարողանում այլևս խոսել, ուստի որպեսզի չհաղթահարվի այդ սրտաշարժ տեսարանից, իսկույն ծոցից հանեց յուր հուշատերը և սկսավ թերթել... Այո՛, բավական էր նայել այդ հուշատերի էջերին, կարդալ դոնե կեսը ռմիծ գործերին այն ցանկին, որ նա կազմել էր մայրաքաղաքից վերադառնալիս, որպեսզի նա նորեն ոգևորվեր և առ ոյինչ դրեր մոր թախանձանքն ու արտասուզը, կամ արհամարհեր ամառանոցի հանգստությունն ու զվարժությունները:

Եվ այդպես էլ եղավ: Երբ Պետրոսը հուշատերը դրավ նորեն ծոցը, նրա սիրտն արդեն այնքան էր ամրացել, որ նա ուղղակի ասաց.

— Դու, մայրիկ, բախտավոր կին ես. ունիս ամուսին, առողջ զավակներ, մեծ հարստություն, սեփական ապարանք, գեղեցիկ ամառանոց, ապրում ես դո՞ք ու երջանիկ և, միենույն ժամանակ, չես կամենում զրկել քեզ նույնիսկ

մի ավելորդ զվարժությունից, այսինքն, որ ամսովա ամբաներում ընկերանա քեզ որդիդ... Բայց կան աշխարհում մարդիկ, որոնք շատ անհրաժեշտ բաներից են զրկված. այս գումար եմ նրանց մոտ, որպեսզի կարողանամ նրանց մի փոքր միամիտարել, կամ նրանց կարիքներից մինը կում երկուսը լցնել:

Կիդիա Պավուլինան որդու այս ճամփո ոչինչ լճասկացավ, բայց կիրիլ Կարպիլը (Հայր Կամսարյանը), որի անունը Ճիպին Տեր Օվանեսի ձեռքով շափարերական մատյանուն նշանակված էր Վարապետի վուրդի Կիրակուսա և որը վեռ խալաթով նստած էր բազմոցի վրա և երկար ծխափողը ձեռքին թե՛ ծիում և թե՛ լսում էր հիշյալ վիճաքանաւթյունը, որդու վերջին խոսքերի վրա մի անհանգիստ շաբախուն առավ: Քաղցր ժպիտը, որ մինչև այն փալլում էր նրա ածիւած ու գերությունից փալլող դեմքի, կրկնածալ ծնոտի և գործ ընշացքով հովանավորված հաստ շրթունքի վրա, շքացավ իսկույն, թավամազ հոնքերը կարծես վայր իշան աշքերի սուր Հայացքը ավելի խատացնելու Համար. իսկ անխառն հայկական քիթը, որ պատկառելի տեղ էր բանած խոշոր դեմքի վրա, զգալի կերպով կախվեցավ, որպեսզի տիրազ գտիրազ ամբողջությունը մարմնացնե յուր մեջ ամբողջություն:

Ինչո՞ւ անհանգուտացավ կիրիլ Կարպիլը, — դրա պատճառը բոլորովին այլ էր նա, իհարկե, չէր մտածում ոչ կրդիա Պավուլինայի մայրական փառասիրությունը զոհացնելու և ոչ էլ որդու ամառացին հանգուտության մասին. Նրան հետաքրքրում էր ավելի լուրջ ու դրական խնդիր. այսինքն այն, որ յուր որդին տասն երկու տարի շարունակ ուսման համար իրենից հազարներ սահանալուց հետո, այսօր, երբ արդեն ուսումն ավարտած վերադարձել է, փոխանակ զրքորեն զոսմի կաշելու և հորից ստացած փողերի գեթ մի մասը յուր ձեռքի աշխատանքով հորը վերադարձնելու և զբանով նրան ուրախացնելու, ընդհակառակը, զիս նոր ծախանք է անում և ինչ որ հանապարհորդության կամ հետախոր ազգակիցների վրա է մտածում:

Անհանգիստ շարժումն անելով հանդերձ, կիրիլ Կարպիկը մի կողմը դրավ ծխափովը և ձեռքերը խրելով խալաթի գրապանները, որոնք գտնվում էին տկի պես ուռած և խալաթի փնջազարդ ժապավենով հազիվ սանձահարված փորի աջ ու ձախ կողմերում, հարցրեց որդուն.

— Թե՛տո, մի՞նի թե քո զիսումն էլ հոպոպներ են լուս ընկել:

Երիտասարդ Կամսաբյանը, որ այսպիսի մի հարց քննկերներից լսելուց կարող էր նրանց մենամարտի հրավիրել (որպեսզի պապացուցանն թե որքո՞ն պատվասեր է), հորից լսեց այդ խոսքը նույնիսկ առանց բարկանալու, համոզված լինելով, որ նա ուրիշ կերպ հաճոյախոսել չի կարող:

— Բ՞նչ ես կամենում դրանով ասել, Հայրիկ, — հարցրեց նա:

— Այն, որ ուսումը խելքահան է արել քեզ, ո՞րդի... ախար մի գնա դատարան և տե՛ս թե քեզտնից մի տաթազ առաջ ավարտողները ի՞նչպես են այնտեղ գործեր պաշտպանում, ժամենով վիճում կամ ճառեր խոսում և դրա համար նրանք հարցուրներ, հազարներ են ստանում, իսկ դու դեռ «կոսոների» մասին ես մտածում, կամ նրանց հառած դուռըն րում ապրելու պլաններ քաշում: Սա ինչի՞ նման է...

Կիրիլ Կարպիկը նորեն ձեռք առավ ծխափովը և հաստ շրթունքները կպցնելով երկար քնի ծայրին, երկու անգամ առատորեն ներս քաշեց ախորժելի ծուխը և ապա արտաշընչելով այն, վեր կացավ տեղից:

— Գործի վրա մտածիր, որպի, զործի վրա, թե չէ կառներից շահ լի լինելու քեզ: — Եյս ասելով նա գուրս գնաց սենյակից, չկամենալով ավելի ծանձրացնել որդուն: Որովհետեւ, իբրև փորձառու մարդ, գիտեր որ խելքի հասած երիտասարդին անօգուտ է երկար խրառներ կարգալը: Բայեսկան է, որ մարդ երկու խոսքով հայտնել նրան յուր դժությունը և ապա թողնե նրան մտածել ու որոշել անելիքը:

Մինչդեռ կիրիա Պավլովեան այդ կարծիքին չէր նա, իբրև կին, միշտ յուր ուզածն անել էր տվել երկար խոսե-

ով, թախանձելով, հետևապես հավատում էր շատախոսելու փրկարար զորությանը: Այդ պատճառով էլ, երբ ամուսինը հեռացավ, նա մոտ քաշեց որդուն (որ դարձյալ ձեռքն էր առել յուր հուշատետրը, անշուշտ հոր խոսքերի աղղեցությունը իրենից հեռացնելու նպատակով) և իբրև մի մեծ նորություն, հաղորդեց նրան հետևյալը.

— Նո որ քեզ ասում եմ գնանք ամառանոց, Հո նրա համար չեմ ասում, որ միայն քաղաքի շոգերից աղատեմ քեզ, ոչ. ես ուրիշ միտք էլ ունիմ և դրա համար է, որ չեմ ուզում քեզ թողնել...

— Ի՞նչ միտք, — հարցրեց երիտասարդը:

— Մարկոսովենց տուն Հո գնացի՛ր, Աղելինին տես՝ ո՞ր, — հարցրեց մայրը խորհրդավոր եղանակով:

— Այո՛, գնացի, Աղելինին էլ տեսա, հետո՞:

— Իբրև թե չգիտես ինչո՞ւ համար եմ հարցնում, — նկատեց մայրը խորամանկ ժպիտով:

— Ոչ:

— Չէ՞ որ մի օր հավանում էիր նրան:

— Հենց հիմա էլ հավանում եմ:

— Հո տեսնում ես թե ի՞նչ է դառել... ինչպես մեծացել, գեղեցկացել է:

— Այո՛, շատ է գեղեցկացել:

— Է, այդպես աղջիկը, որ քեզ սիրում լինի և քո պատճառով էլ Բորժոմ լինի գալիս, ի՞նչ կասես դրան:

Երիտասարդը նայեց մոր աշքերին և ուսերը վեր քաշեց:

— Գեղեցկությունը կա, ուսումը կա, քառասուն հաղար էլ բաժինք... Այս ամառ անպատճառ բանը կվերջանա, որովհետև ծնողները համաձայն են, աղջիկն էլ համաձայն է համաձայն. հարցը մնում է քեզ վրա: Ի՞նչ ես ասում դու:

Երիտասարդը, կարծես, տատանվում էր Աղելինի անունը մի փոքր պղտորեց նրա միտքը. եթե երևակայությանը ևս թույլ տար յուր առաջ պատկերացնելու գեղանի օրիորդին, այն ժամանակ արդեն հոսանքը կտաներ իրեն: Այդ պատճառով, կարծես, յուր թուլությունը զգալով, վեր

կացավ տեղից և «դեռ տեսնենք, մտածենք, ժամանակ շատ  
ունենք» ասելով՝ դուրս գնաց պատշտամ:

## Դ

Բայց բախտը շատ անդամ կատակներ է անում և  
դրանցից զվարճալին լինում է այն, երբ նա շարիքից փախ-  
չող մահկանացուին՝ հենց նրա փախստյան ճանապարհի  
վրա, բերում հանդիպեցնում է նույն շարիքին, որից սա-  
խույս է տալիս: Այդպես պատահեց և Կամսարյանին: Հա-  
զիվ նա ելել էր պատշտամ և ձեռքը տարել ծոցը, որպեսզի  
հուշատերը հանե, և ահա՛ տան մուտքի հնշակը քաշեցին:  
Սպասուհին վազեց գուռը բանալու եկ որովհետեւ Պետրոսն  
ևս մոտեցել էր սանդուղին, ուստի հետաքրքրվեց իմա-  
նալ թե՝ ո՞վ է եկողը: Եկ ո՞րքան մեծ եղավ նրա հուզմուն-  
քը, երբ տեսավ թե՝ գեղանի Աղելինան է յուր մոր հետ:  
Անշուշտ նրանք գալիս էին երիտասարդի այցելությունը  
փոխարինելու և սրա մորն իրենց խնդակցությունը հայտնե-  
լու Կամսարյանն իսկույն ծոցը դրավ հուշատերը, որ նոր  
էր հանել և վայրկենարար համոզվելով, որ «հայոց ազգը  
խիստ դժբախտ ազգ է», որովհետեւ նման արգելքներ խան-  
գարում էին իրեն նրա վրա մտածել, քնքույշ ժպիտը դեմ-  
քին, դիմավորեց հյուրերին և սիրալիր կերպով ողջունելով  
նրանց, առաջնորդեց գեպի ընդունարանը, ուր գտնվում էր  
արդեն կիդիա Պավլովնան:

Չափ... չփ, չփ. չփ, համբուրվեցան բարեկամու-  
հիները և սկսան իսկույն մի սիրալիր զրույց, որն առհա-  
սարակ սկզբում լինում է աղմկալի և ապա հետզհետե մեղ-  
մանում, կանոնավորվում:

Ամենից առաջ կիդիա Պավլովնան մեղադրեց բարեկա-  
մուհուն՝ իրենց այդքան ուշ այցելելու համար, և հավա-  
տացրեց, որ ամեն օր սպասում է եղել նրանց:

Տիկին Մարկոսյանը ներողություն խնդրեց յուր ակա-  
մա զանցառության համար, առարկելով թե՝ չափազանց  
զրադշած են թե՝ ինքը և թե՝ դուստրը, ընդ նմին և հա-

վատացրեց (ավելի՝ ջերմ խոսքերով, քան տան տիկինը)՝ որ իրենց բոլոր բարեկամուշիների մեջ կրդիա Պավլովնան միակն է, որին ցանկանալով ցանկանում են տեսնել թի՛ ինքը, թի՛ ազգիկը, հենց որ ազատ են լինում զբաղմունքից: Դժբախտաբար, ազատ ժամեր քիչ են ունենում:

Կրդիա Պավլովնան, իհարկե, զիտեր թի ի՞նչ զբաղմունք կարող էր ունենալ տիկին Մարկոսյանը, իբրև բազմանդամ ընտանիքի մայր, բայց ցանկացավ լսել մի բան նաև օրիորդ Աղելինայի մասին, մանդիվանդ, յուր որդու, Պետրոսի ներկայությամբ:

Տիկին Մարկոսյանը, որ մի քիչ ավելի տարիքով էր, քան Լիդիա Պավլովնան և մի քիչ էլ սրակաս զեղեցիկ, քան թի նա, բայց որը նազելու մեջ գերազանցում էր բարեկամունքն, նազելով էլ պատասխանեց.

— Ա՞յս, սիրելիս, չես կարող երեակացել, թե որքան գործ ունի խեղճ երեխաս: Առաջոտից մինչև ձաշը ձրի կամիք է տալիս «որբերի» ուսումնարանում: Ձաշից հետո՝ մեր շարածճիների դասերն է սովորեցնում: Երեկոյան փոքրիկ աղջկաս գաշնամուրի վրա վարձություն է անել տալիս: Գրա վրան էր ավելացրու այն, որ բարեկործական նպատակով տրվող ներկայացումներին ու նվազահանդեսներին մասնակցում է անխտիր, որովհետեւ խնդրում, աղաջում են: Բակ իմ Աղելինան, հո զիտեր, փափուկ սիրո ունի և չէ կարող մերժել...

— Այգակես չի կարելի, սիրելիս, այգափիսով դու կհագնեցնես քեզ, իսկ շատ հոգնելի վնաս է առողջությանդ,— դարձավ Լիդիա Պավլովնան օրիորդին, որ լսում էր մոր հայտարարությունը:

— Ո՛ւ, ես չեմ հոգնում, ընդհակառակը, որքան շատ եմ զործում, այնքան ավելի առողջ եմ զգում ինձ,— սբատախնեց օրիորդն աշխուժով և թեթև շառագունելով:

— Այո՛, պարապությունը ավելի է վնասում առողջությունը, քան շափաղանց զբաղմունքը,— հաստատեց նրիտասարդ Կամսարյանը:

Օրիորդի մայրը համաձայնեց վերջինի հետ՝ և առանց  
մի վայրկյան կորցնելու սկսավ պատմել թե՝ ի՞նչպես ինքն  
առաջ թուց էր ու տկար, որովհետեւ տան գործը մեծ մո-  
ւածք թողել էր սպասուհիներին։ Բայց այն օրից, որ իմա-  
ցավ թե գործունեությունը կազմուրում է մարդուն ավելի,  
քան բժիշկների դեղերը (այդ բանն էլ ասել էր նրան մի բա-  
րեկամ բժիշկ, որ հիվանդներ լունենալու պատճառով ինքը  
հաճախ հիվանդանում էր), նա սկսավ այնուհետեւ տան գոր-  
ծերից շատերը յուր ձեռքով անել և այն օրից ի վեր այն-  
քան առողջացավ, որ էլ չեր դանդառում ո՛չ սրտի ցա-  
վից, ո՛չ թուլությունից։

Այս զրուցի ժամանակ կիդիա Պավլովնան լսում էր  
բարեկամուհուն ուշագրությամբ և ընդ նմին աշխատում, որ  
յուր լայն բացված և ուղիղ բարեկամուհու դեմքին նայող  
աշխերը համոզեն վերջնիս թե ինքը շափականց հետաքրքրա-  
կան է գտնում նրա բացատրությունը։ Մինչդեռ երիտասար-  
դը զբաղված էր նրա աղջկանով։

Աղելինացին, իրավ, սա ճանաչում էր վաղուց, այսինքն,  
երբ դեռ ինքը գիմնազիոնի աշակերտ էր, իսկ նա՛ ինստի-  
տուտի փոքրիկ աշակերտութիւն։ Այդ ժամանակ նրանք դրա-  
ցիներ էին, իսկ ծնողները միմյանց բարեկամ։ Եվ որովհետեւ  
վերջիններս հաճախ այցելում էին միմյանց, ուստի իրենք էլ  
տեսնվում էին իրար հետ։ Բացի այդ, նրանք հանդիպում  
էին միմյանց դպրոց գնալիս և այդ դեպքում երիտասարդը  
միշտ ուղեկցում էր օրիորդին մինչև ինստիտուտի փողոցը,  
խոսակցելով նրա հետ աշակերտներին հետաքրքրող նյու-  
թերի մասին, կամ պատասխանելով այն հարցերին, որ Աղե-  
լինան հաճախ տալիս էր իրեն։

Այդ ժամանակ օրիորդը 14 տարեկան էր և թեղետ  
մարմնով նիշար ու շկազմակերպված, բայց դեմքով վեղեցիկ  
էր և բնությամբ խիստ աշխուժ։ Այդ պատճառով կամ-  
արյանին դուր էր գալիս այնքան, որ սա նրա մասին գո-  
վությամբ էր խոսում միշտ ոչ միայն ընկերների, այլև մոր  
առաջ։ Իսկ եթե մի փոքր էլ տղայի սրտին հավատալինք,

կարող էինք ասել թե հենց այդ ժամանակ նա սիրածաշված  
էր փոքրիկ դրացուհուն, որովհետև միշտ մի առանձին փա-  
փառվ էր հետամտում այն սիրուն ժպիտներին, որոնցուկ  
Աղելինան առավոտյան ժամերին հանդիպում էր նրան փո-  
ղոցում:

Բայց շուտով երիտասարդը ալարտեց գիմնազիոնը և  
գնաց համալսարան, ուր շատերի հետ միասին մոռացավ  
նաև Աղելինային: Որովհետև համալսարանը նոր զբաղ-  
մունքներից զատ, տվավ նրան նաև նոր բարեկամներ,  
որոնք իրենց կողմից ծանոթացրին նրան նոր զբացմունք-  
ների և ձգտումների հետ, որոնք գրավեցին նրա բոլոր ուշա-  
թացի այդ, մայրաքաղաքում շատ կային Աղելինաներ, այն-  
պես որ եթե Կամսարյանը ցանկանար երբեկիցի ժպիտնե-  
րով զմալվիլ, ստիպված չը լինի հիշել յուր նիհար դրա-  
ցուհուն:

Սակայն անցավ ժամանակ և նա, վերադառնալով հայ-  
րենիք սեսավ նախկին Աղելինային բոլորովին փոխված է  
Այժմ նա այլևս ոչնչով նման չէր առաջինին: Նրա տասն և  
իննամյա ծաղկափթիթ հասակն ամփոփում էր յուր մեջ ար-  
բունքի հասած մի ազնվական կուսություն՝ գեղանի դեմ-  
քով, գրավիչ աշքերով, արյան ու կաթի խառնուրդն այտե-  
րին, վարդը՝ շուրջներին, որոնք նշան էին կյանքով ու կրա-  
կով լի քաջության: Նրա ճկուն հասակն աճել էր սպասածից  
ավելի, կուրծքը զարգացել վայելու շափով, իսկ մարմնի  
մասնը լցվել, բոլորվել այնպես համաշափ, որ երիտասար-  
դը համեմատելով նրան մայրաքաղաքի ծանոթ գեղեցկուհի-  
ների հետ, գտնում էր գրեթե բոլորից վերազանց:

Եվ նա այժմ նալում էր նրան անթարթ աշքերով, հիշում  
էր մոր առաջարկությունը և ինքն իրեն մտածում: — «Իրավ,  
որ արժե ժառանգել այս գանձը»:

Լիդիա Պավոլինան, որ աշքի տակով նայելով, տեսնում  
էր թե ինչպես որդու հայացքը անշարժ մեխվել է գեղանի  
օրիորդի վրա, շտապեց օգուտ քաղել դեպքից և խոսքը  
դարձնելով ամառանոցի վրա հայտնեց թե ինչպես ապե-

բախտ Պետյան որոշել է միայնակ թողնել իրեն այս ամառ:

— Ի՞նչպես, մի՞թե կարելի է, — բացականչեց տիկին Մարկոսյանը այնպիսի մի եղանակով, որ կարծես, Հայոնված նորությունը վերաբերում էր մի մեծ եղեռնագործության:

— Այս՝, միայնակ է թողնում և գնում է ճանապարհորդելու, — ավելացրեց նա տիրությամբ և ընդ նմին սպասելով, որ բարեկամուհին մեղադրական մի ազդու ճառ ուղղեց որդուն:

— Այդ ձեզ չի վայելիլ, պարոն Պետրոս, — նկատեց տիկինը լրջությամբ: — Ի՞նչպես կարելի է, որ այսքան ժամանակ օտարության մեջ մնալուց հետո, շմաք այժմ ծնողներիդ մոտ գոնե այնքան, որ նրանք իրենց կարոտը առնեն ձեզանից: Ուրիշները նույնիսկ գործերնին թողնելով, գալիս են ծնողների հետ ամառն անցնելու, իսկ դուք, որ այստեղ եք, մի՞թե պիտի թողնեք նրանց ու հեռանաք:

— Բայց երբ հարկը պահանջո՞ւմ է:

— Ի՞նչ հարկ, ամառը հանգստության ժամանակ է և ոչ գործի. ոչ մի հարկ այդ ամիսներում չի կարող ստիպել մարդուն զրկել իրեն ամառանոցի մաքուր ու զով օդից, հանգստառությունից... Այս, մենք էլ տնով, տեղով գնում ենք թորժոմ, եթե դուք էլ դաք, միասին կլինենք և հիանալի ժամանակ կանցնենք:

— Հանդեսներ կսարքնք, կոնցերտներ կտանք, իսկ այդ բաններում դուք մեզ միշտ կօգնեք, — ավելացրեց օրիորդը շտապելով մասնակցել մոր ցանկությանը:

— Հանդեսներ, ի՞նչ նպատակով, — հարցրեց երիտասարդը հետաքրքրությամբ:

— Իհարկե բարեգործական, այդ մասին խնդրել են մեզ մի քանի ընկերությանց վարչություններ:

— Զե՞զ:

— Այսինքն ինձ և ընկերուհիներիս:

— Հասկանում եմ: Եվ, իրավ, ամառանոցում հաջող մուտք կունենաք: Ափսո՞ս, որ չեմ կարող օգնել ձեզ այդպիսի բարի ձեռնարկությունների մեջ:

— Եթե գաք ամառանոց, կարող եք օդնել, — նկատեց  
ոքիորդը ժպատակով:

— Այո՛, եթե գամ, բայց եթե շգա՞մ:

— Կիսնդրեմ, որ գաք, — ասաց օրիորդը այնպիսի մի  
ժաքությամբ, որի մեջ, կարծես, խոսում էր մտերմության  
ձպոող մի թաքուն զգացմունք:

Երիտասարդը ժպատաց և շիմացավ ի՞նչ պատասխանել:  
Նքան թիվից թե այդ բոպեին նա լսեց Աղելինայի նախկին,  
մասնկական ձայնը, այն անմեղ, միշտ ժպատող, միշտ շար-  
ժուն ու կրակոտ Աղելինայի, /որ ամեն առավոտ հանդիպում  
էր իրեն դպրոց գնալիս, ողջունում այնքան սիրալիք և գրտ-  
նում միշտ հարցեր իրեն զբաղեցնելու համար: Նրան թիվաց  
թե այդ վայրկենին նորոգվեց նախկին մտերմությունը և թե  
ինքն այլևս իրավունք չունի սառն և անտարբեր խոսքերով  
այդ նորոգվող բարեկամության հաճելի տպավորությունը  
թուրացնելու:

— Ճշմարիտն ասած շատ կցանկանայի կատարել ձեր  
խնդիրը, բայց...

— Ի՞նչն է արգելվ լինում, — ընդհատեց օրիորդն աշ-  
խուժով:

— Մի բարոյական պարոք, որ հանձն եմ առել դեռ  
տիգտեղ գալուց և ձեզ տեսնելուց առաջ:

— Եթե այդպես է, ուրեմն ամենից առաջ այդ պարոքը  
պիտի կատարեք. մենք իրավունք չունենք պահանջել, որ  
դուք անկատար թողնեք այն, ինչ որ կատարել խոստացել  
եք դեռ այստեղ գալուց առաջ:

— Ծնորհակալ եմ, օրիորդ, դուք ինձ հասկանում եք.  
ոքան ուրախ կլինեի, եթե մայրս էլ այդ ձեռվ մտածեր,  
բայց նա...

— Մայրդ գիտե թե ի՞նչ է մտածում, — ընդհատեց ոք-  
ուն կիդիա Պավոլինան. — դու իրավունք չունեիր մեզ լսե-  
լուց առաջ ուրիշներին բաներ խոստանալ:

— Ի հարկե, առաջ մայրն է, հետո ուրիշները, — ձայ-  
նակցեց տիկին Մարկոսյանը:

— Բայց գուք հո չգիտե՞ք թե ի՞նչ խոստումի մասին է  
խոսքը, — նկատեց Աղելինան մորը:

— Իսկ գու գիտե՞ս, — հարցրեց վերջինս,

— Ես էլ չգիտեմ, բայց կարծում եմ, որ պարոնը մի  
գատարկ բանի պատճառով չէր համաձայնիլ զրկել իրեն  
ամառանոցի հանգստությունից և զվարճություններից...

Այս ասելով օրիորդը մի խորհրդավոր հայացք ձգեց  
երիտասարդի վրա, կամենալով, կարծես, հարցնել թե՝ «այդ  
ի՞նչ բարոյական պարտք է, որի կատարումը աւելի անհրա-  
ժեշտ է, քան ինձ նման գեղեցկուհուն ամառանոցում ընկե-  
րանալը»:

Երիտասարդն էլ, գրեթե, ալդաիսի մի նշանակություն  
տվավ այդ խորհրդավոր հայացքին, բայց ոչինչ շբացատրեց,  
որպեսզի այդպիսով հասկացնի օրիորդին թե՝ իրավ, ինքը  
խիստ մեծ ու արժանավոր նպատակի համար է զրկում իրեն  
ամառանոցի զվարճություններից: Բայց որպեսզի բոլորովն  
անքաղաքավար չգտնվի օրիորդի հարցասիրությունը գոհաց-  
նելու նկատմամբ, կարենոր համարեց այսքանը հայտնել,  
թե՝ կզա մի օր, երբ ինքը կրացատրե նրան այն կարենոր  
պատճառները, որոնք ստիպում էին իրեն զրկվել Աղելինայի  
աննման ընկերակցությունից:

## Ե

**Տ**իկնոց ու օրիորդի հեռանալուց հետո, Պետրոսն  
զգաց, որ վերջինի յուր վրա թողած ազդեցությունն այնքան  
է սաստիկ, որ յուր նախկին մտածմունքներին վերադառ-  
նալու համար իղուր պիտի լիներ այժմ դիմել հուշատետրի  
օգնության: Նրան այժմ հարկավոր էր ավելի զորեղ ցնցում,  
որպեսզի յուր մտքերը նորեն փարեին գաղափարական  
հայտնի նպատակին: Այդ պատճառով նա առավ Աբովյանի  
«Վերք Հայաստանին» և իշավ պարտեզ: Այս գիրքը նրան սի-  
րելի էր գարձել մանավանդ այն օրից, երբ ուսանողական  
ժողովում յուր հայտնի խոստումն արավ: Ճեմարանավարտ  
ուսանողն, որին ծանոթացանք պատմությանս առաջին գրլ-

իում և որն ուսանողական ժողովներին նախագահելուց դատ, առաջնորդում էր ընկերներին նաև մայրենի լեզվին ու գրականությանը ծանոթացնելու դործում, խորհուրդ էր տվել Կամսարյանին կարդալ Արովյանի «Վերքը» որքան կարելի է շատ: «Դու որ նվիրում ես քեզ հայ ժողովրդի մոռացված մասին, այսինքն գյուղացուն ու մշակին, այդ գիրքը պիտի կարդաս հաճախ, ասել էր նա նրան, որովհետև բոլոր մարդկանցից ու գրքերից ավելի «Վերք Հայաստանին» կարող է քեզ ծանոթացնել հայ գեղջուկի հոգուն ու զգացմունքներին, նրա արժանիքին ու թերություններին, նրա կարիքներին ու ցավերին»: Եվ, իրավ, քանի Պետրոսը կարդացել էր այդ գիրքը, այնքան ավելի նա սկսել էր սիրել հայ զինականն ու գյուղացին, որոնց նա յուր հարազատ ազգակիցն էր համարում, բայց որոնց, ավա՞զ, չէր ճանաչում անձամբ:

Նստելով հովանավոր ակաթինու տակ, նա բաց արավ գիրքը, բայց... մեքենայաբար: Նրան թվում էր թե գեղեցկուհին դեռ նայում է իրեն յուր սիրուն աշքերով, թե նա հենց նոր ժպտալով ասաց իրեն «կիսնդրեմ որ գաք». Իսկ մի փոքր հետո՝ աշխուժով ավելացրեց «ի՞նչն է արգելք լինում...», Այո՛, այս ծայները հնչում էին դեռ երիտասարդի ականջում, իսկ դաշտին պատկերն ու փայլուն հայացքը չէին հեռանում նրանից:

— Դժվար է... իրավ որ դժվար է,—մտածում էր նրիւտասարդը, ամենքին կարելի է թողնել, ամեն ինչ կարելի է զոհել, բայց այս հրեշտակին, այս դիցուհուն... Ճիշտ որ դժվար է. չէ՞ որ սա ինձ համար կարող էր լինել ամեն ինչ... և եթե նա, իրավ, անտարբեր չէ դեպի ինձ... այն ժամանակ արդեն կատարյալ խելագարություն է թողնել նրան... Բայց հենց այս մտածմունքի հետ հիշեց երիտասարդն ուսանողների ժողովը, յուր հանդիսավոր խոստումն և այն ուժգին ծափահարությունը, որ հետևեց հայտարարությանը... Հիշեց թե ինչպես «կեցցեները» դղրդացրին ներքնահարկի ցածունդաշիճը:

«Ու ես հաստատ կմնամ իմ վճոին, ես կկատարեմ իմ

խոստումը», որոշեց երիտասարդը և նորեն առավ գիրքը, որ արդեն փակել, դրել էր նստարանին: Բանալով գիրքը, նայեց նրան նորեն և ապա գրավ ծնկներին: Այս անգամ էլ մի ուրիշ, սակարկող պայման գրավեց նրա մտածությունը:

— Ես կկատարեմ իմ խոստումը, ես կնվիրեմ ինձ մոռացված ժողովրդին... բայց եթե Աղելինան ընկերանար ինձ այս գործում, օ՛, որպիսի մեծ հաջողությամբ կպսակվեր իմ նվիրումը... իրավ, չէ՞ որ ամենաեռանդուն աշխատանքն իւկ ապարդյուն կանցնե, եթե նրան շնրախուսե կնող սերն ու ժամանքը... եվ ի՞նչ երջանկություն. մենք միասին կաշխատեինք, միասին կգործեինք...

Այս միտքը երկար զբաղեցրեց երիտասարդին: Նա մտածում էր մինչև անգամ, համակերպի առայժմ յուր մոռ դանկության, գնալ ամառանոց, մտերմանալ այնտեղ Աղելինային, նշանվել, պսակվել և հետո... իհարկե, Աղելինայի հետ միասին վերադառնալ գյուղը: Իսկ այնտեղ... չէ՞ որ երկու խելքը կարող էին ավելի լավ գործել, քան մեկը:

Բայց հայտնի չէ, թե ինչո՞ւ երիտասարդի երևակայուն թյունը նորեն այդ գյուղից փոխադրեց նրան ամառանոց: Նա պատկերացրեց յուր առաջ նշանադրության հանդեսը, ապա հարսանյաց պատրաստությունները, վերջը՝ փառահեղ պսաւկադրությունը, հարուստ հյուրերը, մետաքսի, աղամանդի և փարիզական ճոխությանց մեջ փայլող կիսամերկ կրծքերով ու հոլանի թերերով գեղեցկուհիները, որոնց մեջ սպիտակազգեստ և ծաղկապսակ Աղելինան պիտի երևար իրեւ մի հրաշագեղ դիցուհի, հավերժահարսներով շրջապատված...

Բայց հենց այդ փայլի ու շքեղության պատկերը, կարծես, մարմին առնելով շշնչաց յուր ականջին՝ «մի՞թէ չես ցնորում... Մի՞թե Աղելինան, այն կրթված, զարդացած, փափկության մեջ մեծացած, թատրոնի, երեկույթների և պարահանդեսների սովոր աղջիկը կհամաձայնի» թողնելքադրը, նրա կյանքով ու հրապույրներով լի մթնոլորտը և գնալ, մտնել գյուղը, աշխարհի մի լուս, անծանոթ անկյուն

նր, թե ինչ է այդտեղ պիտի Հոգա շինականի կյանքը բարե-  
լավելու մասին...»:

Այդ գաղտնի շշունքը ցրեց երիտասարդի նախկին մըտ-  
քերը:

«Եա մինչև անգամ կարող է ինձ վրա ծիծաղել, իմ  
նպատակը ծաղրել, եթե ես դրա մասին խոսեմ նրա հետ—  
տրամաբանեց Պետրոսը և տիսրելով գլուխը կախեց:

Նրա աշքերն ընկան ծնկանը դրված գրքին և նա, կար-  
ծես, մտածելուց հոգնած, սկսավ կարդալ բաց երեսի վրա  
Աթոյենց աղջիկ Թագուհու մասին գրված հետեւալ տողերը.

«Բաս ի՞նչ կըլեր, որ էսպես չէր էլել: Մինչև էն հագա-  
զը (միջոցը) նրա (Թագուհու) ականջը մեկ թթու խոսք չէր  
լսել, նրա աշքը՝ մեկ դառը օր չէր տեսել, նրա երեսը մեկ  
կոշտ զրից չէր եկել: Վարդի պես ծաղկել, մանիշակի պես  
մեծացել էր: Տասնհինգ տարին անց էր կացել, դեռ նրա  
անմեղ հոգին աշխարհից մեկ բան չէր խաբար: Նրա ըն-  
կեր աղջկերքը դռներին, կտրներին ման էին գալիս, օր  
անցկացնում, նա ծունկը մոր ծնկանը կպցրած, յա կար էր  
անում, յա քարգահ, յա իրենց տանն ու դունն էր մտիկ  
տալիս, յա իրենց մալին, ապրանքին աշք ածում: Դուշը  
զլիսի վրով թռչելիս՝ կարմրատակած, շունչը կտրած տուն  
էր ընկնում, որ իր շվաքն էլ ա օքմին շրտեսնի: Մոր մեկ  
մաաը փուշ ըլելիս, յա մեկ տեղը ցավելիս, ուզում էր հո-  
գին հանի իրան տա. էլ քար, էլ խոտ չէր մնում, որ նա  
վրեն շշոփի ու աստծու ողորմությունը խնդրի: Աղքատ  
տեսնելիս բերնի թիքեն հանում, իրան էր տալիս, որ նրան  
օրհնի, արեշատություն խնդրի: Բաղն էն ժամանակ էր  
զնում, որ լիսն ու մութը դեռ չէր բաժանված ըլում, բաղիցն  
էլ էն վախտն էր տուն գալիս, որ մութը գետինն առած, ոտը  
քաշված, խաղաղված էր ըլում: Ով նրան ուզենար տեսնի,  
յա ծառի, յա պատի տակ պետք է տափ կենար, որ նրա  
երեսին մտիկ տար, նրա աշքերի լսովն հայիլ մայիլ մնար...  
Զայիր շիմանի, մանիշակի վրա, վարդի, թթենու տակին, յա  
թշքան առվի մոտ, որ բազի վախտ քնած չէր ըլում, հենց

իմանաս երկնքիցը լիս ա վեր եկել, ափնիքը հայլի դառել...  
Քունը նրա աշքերին էնպես էր մոտենում, ինչպես մեկ սրբի  
երկնային հրեշտակը, թևերն երեսին փռում, անմահական  
երազով նրան գրկում, գգվում, արթնացնում, էլ եղ իր դիր՝  
կը դնում... Այս, ո՞ր մեկն ասեմ: Նրա ամեն մեկ շարժ-  
մունքը, ամեն մեկ խօսքը, ամեն մեկ մտիկ տալը, ամեն  
մեկ աշքի ու պոռջի ժաժ գալը՝ հրաշք էր, էն լուսակոլու  
աշքերը, էն խնկան ծաղիկ-շրթունքը, որ բաց չէր ըլում,  
մարդ ուզում էր ոչ ոտի, ոչ խմի, հենց նրան մտիկ տա,  
նրա սուրաջի բոյին թամաշա անի, նրա ոտքի տակին հո-  
գին տա, նրա ձեռիցը իր մահն առնի... Եվ էս երկնային  
հրեշտակը, էս անմեղ գառն էր էն հաղաղին՝ էն գաղանների  
(Հասան խանի ֆարբաշների) ձեռին... ի՞նչ քարացած, ա-  
պառաժ սիրո պետք է ըլի. որ նրան տեսնելիս, կամ նրա  
պատմությունը լսելիս գլխին կրակ շվառվի...»

Երիտասարդն էլ շշարունակեց: Որքան Թագուհու գե-  
ղեցկության նկարագիրը հիացմունք պատճառեց իրեն, այն-  
քան էլ վերջին տողերը հուզեցին յուր հոգին: Նա փակեց  
դիրքը և ինքն իրեն շշնչաց.

— Ամո՞թ ինձ, հազա՞ր ամոթ... Եվ ես զեռ տատան-  
վում եմ, զեռ երկմում եմ: Մի՞թե կարելի է մի վայրկյան  
անգամ ուշանալ... Մի ժողովուրդ, որ այսպիսի ծնունդներ  
ունի յուր մեջ, մի՞թե արժանի չէ մեր խնամքին ու օգնու-  
թյան: Ո՞ւմ մասին եմ մտածում—մի Աղելինայի, բախտից  
երես առած մի կենցաղասեր աղջկա,.. Ինչո՞ւ շգնամ Աթո-  
յինց աղջկերանցը, Թագուհիներին պարելու... Եթե այսօր  
Հասան խանի ֆարբաշները շեն սպառնում նրանց, չո տղի-  
տությունն ու խեղճությունը, չո վաշխառուներն ու օրինա-  
զանցները սպառնում են: Ինչո՞ւ, ուրեմն, չերթամ, օգնու-  
թյան կարոտ այդ ժողովողի մոտ, ինչո՞ւ չծառայեմ նրանց  
և իմ աշխատության ընկեր շընտրեմ Թագուհիների միջից...  
Մի՞թե նրանց անմեղ ու միամիտ սերը պակա՞ս ուժով  
կիսրախուսե և կոգերե ինձ: Այն աղջիկը, որ աշքը բանա-  
լու օրից ճանաշում է միայն իր ծնողներին, յուր տունն ու

դուռը, յուր արտն ու այզին, որ յուր ուրախությունը գըտնուում է ծնողական հարկի տակ, արդար աշխատության մեջ, որ յուր սերը խնամքով ծածկում, պահում է սրտի խորքում և նվիրում միայն նրան, ով աստծո կամքով վիճակիվել է իրեն ամուսին և, որն ապա յուր կյանքն ու ուրախությունը որոնում է այդ ամուսնու մեջ, մի՞թե հազար անգամ ավելի մեծ, բարձր ու արժանավոր չէ, քան այդ զվարձասեր, փողոցի ու հանդեսների սիրահար, նորածնությանց երկրպագու գեմքեր ու զգացմունքներ կեղծող, շաղակրատ, նազող, հաճոյասեր, ամուսնանալուց առաջ արդեն աշխարհ ճանաշող, թաքուն անկյուններում օտարի հետ պաշաշվող, իսկ սալրններում սիրո սրբությունը դրվատող օրիորդներն ու մեծուհիները... Այս՝, որո՞շված է, ես կերթամ և ինձ այլես չի արգելի ու ոք:

## Զ

**Գ**եռ այս մտքի վրա էր Կամսարյանը, երբ հանկարծ նրա հետեւից հնչեց մի թալ ձայն.

— Տո, Պետո, դեռ ա՞յստեղ ես, իսկ ես կարծում էի թե Մասիսն արդեն անցել ես:

Պետրոսը ետ նայեց և տեսավ մեկին այն ընկերներից, որոնք ուսանողական ժողովում լսելով յուր խոստումը, դղրդացրել էին օդը կեցցեներով և իրեն բարձրացրել ձեռքերի վրա:

— Գնում եմ, բարեկամ, գնում եմ,—պատասխանեց նա կարծեն շփոթվելով և արագ տեղից ելալ:

— Ծշմարիտ, թե՝ կատակ ես անում,—հարցրեց երիւտասարդը պարզելով ձեռքն ընկերին:

— Իշարկե ծշմարիտ, կատակ ինչո՞ւ եմ անում:

— Եղբայր, մեծ մարդ ես, խոստովանում եմ. բայց ե՞րբ:

— Շուտով, հենց այս քանի օրը:

— Ուրեմն, պատրաստությունդ տեսե՞լ ես:

— Արդեն Կամինո՞ւմ ես արի' ցույց տամ:

— Հապա, տեսնենք, հետաքրքրական է,—ասաց երի-  
տասարդը. և հետևեց Պետրոսին:

Առաջնորդելով ընկերին յուր սենյակը, Պետրոսն սկսավ  
մի մի ցույց տալ նրան այն ամենը, ինչ որ գնել էր պյուղ  
տանելու համար:

— Ամենից առաջ տե՛ս այս թամբը, հունգարական է,  
բոլորը խողի կաշվից. 60 սուբլի արժե. սանձը, ասպանդակ-  
ները մաքուր պողպատից:

— Այդ ինչո՞ւ համար է:

— Ի՞նչպես թե ինչո՞ւ. գյուղերը չի՝ պիտի պտտեմ.  
Ժիշտ հո մի տեղ չեմ մնալ:

— Իսկ ձի՞ն:

— Զին էլ այստեղ կդնեմ, այստեղից հո չե՞մ տանե-  
լու, ի՞նչ ավելորդ հարց է:

— Հասկացա, հետո:

— Սա էլ հրացանս. ամերիկական նոր տեսակի, երկ-  
փողչա. յուր բոլոր պարագաներով արժե 120 ռ.:

— Այդ ինչո՞ւ համար է, ավազակներ պիտի հալա-  
ժեն:

— Ի՞նչ ավազակներ, ինչեր ես հարցնում. որսորդու-  
թյան չի՝ պիտի գնամ. բոլոր օրը հո պարապելով չե՞մ անց-  
նելու, մի մի անգամ էլ զվարճություն է պետք—այս էլ պա-  
յուսակս, բոլորը կաշվեկար պղնձե օղակներով, թամբի վրա  
հարմարեցնելու համար.—այս էլ դաշտային հեռադիտակ.  
Ժիշտ հարկավոր է լինում.—այս էլ կողմնացույց...

— Կողմնացո՞ւց. այդ ինչի՝ համար է. ծովերի վրա՝  
պիտի թափառես:

— Ախ, ի՞նչ ապուշն ես: Տո, չի՝ պատահիլ, որ ան-  
տառներում պտտելիս հանկարծ մոլորվեմ. այ, հենց այդ-  
պիսի ժամանակ կողմնացույցը կարող է ինձ ցույց տալ թե  
ի՞նչ ուղղություն բռնեմ, որ պյուղը դուրս գամ:

— Այդ հո բոլորը քեզ համար ես հոգացել, գյուղացի-  
ների համար ի՞նչ ես տանում:

— Սպասի՛ր, նրանց համար էլ կա, տեսնո՞ւմ ես...—

այս ասելով Պետրոսը ցույց տվակ սեղանի վրա գտնվող գրքերի մի կույտ և նրանցից մի-մի հատ առնելով, շարունակեց.—ա՛յ, «Полный курс охоты»—Маркса-Манн, սա էլ ասենք ինձ համար է, բայց պյուղացիներին էլ կհարկավորի՛: Չէ՞ որ որորդության մասին ևս կարող եմ խորհուրդներ տալ նրանց:—«Ляговая собака»—Фридриխ Օсвальդ, սա նույնպես կարևոր գիրք է որորդական շներ վարժեցնելու համար:

— Այ մարդ, դու կարծո՞ւմ ես թե հայ պյուղացին բան ու գործ լունի, հենց միշտ որսի ետևի՞ց պիտի լինի:

— Համբերի՞ր բա՛րեկամ, ախար մենք էլ քեզ չափ մտածել գիտենք թե ոչ: Ա՛յ, «Плодовая школа и плодовый сад»—Раевского, սա հո պատվական ձեռնարկ է ծառեր տնկելու, պատվաստներ անելու, պտղատու այգիներ խնամելու համար:

— Հա, դրան խոսք չունի՞մ:

— Իսկ սա՞ «Домашний огород»—Мицульյա, ընտիր ձեռնարկ է բանջարանոցների համար: Սրան կցված է Վերնոգլазօ-ի մի գեղեցիկ աշխատությունը՝ «Огурцы, дыни, арбузы и тыквы» վերնագրով, հատուկ այդ չորս տեսակ պտղուները աճեցնելու համար:

— Հետո՞ւ:

— Աա էլ «Общедоступное руководство к землемерию»—Костычева, թեպետ համառոտ, բայց զատ պարզ և հասկանալի ոճով կազմված մի ձեռնարկ է երկրագործության համար: Իսկ սա Կոպպեի հայտնի «Երկրագործություն և անասնապահություն» աշխատությունն է, որ թարգմանել է պրոֆեսոր Վոյլիքը. Հիսուս տարուց ավելի գործածության մեջ է և, հմուտների կարծիքով, պյուղատնտեսական գրականության մեջ համարվում է իբրև կլասիկ գրվածք: Իսկ սա՞ «Скотоводство»—Трипольского, հատկապես կազմված եղջյուրավոր անասուններ և ծի, ոչխար ու խոզ պահելու համար:

— Աւրի՞շ:

— Իսկույն. «Практическое руководство виноградарства и виноделия» Винберга. սա անհրաժեշտ գիրք է այդեզործության և գինեշինության համար: Մեր գյուղացիների գլխավոր պարապմունքը, կարծեմ, դա է: Այդ պատճառով այդ ճյուղին վերաբերյալ ձեռնարկներ մը քանիսն են բնտրել: Այ, «Руководство по виноградарству» Цобеля, բազմաթիվ ու բազմազան նկարներով...

— Իսկ մեղվապահական, հավաքուծական...

— Սպասիր սպասիր, դրանք էլ ունիմ. ա՛յ, «Птицеводство» դ-րա Прибыня. պատվական աշխատություն է՝ գերմաներենից թարգմանված, իսկ սա «Пчела и пчеловодство» Бутлерова. մեղվապահական ընտիր ձեռնարկներից մինն է: Սա էլ «Как добывать шелк»—Иверина, շերամապահության վերաբերյալ մի գեղեցիկ աշխատություն է: Սրանից գատ ես գնել եմ նաև, մի քանի հատ հայերեն գրքեր, ա՛յ, օրինակ, Մալիք-Շահնազարյանցի «Բուսական աշխարհը», «Դործնական գինեգործություն» և «Շերամապահության» ուղեցույցները: Խույնպես Քաջունու «Մեղվաբուծությունը» և «Շերամապահությունը»: Թեպետ ոռւսերեն ձեռնարկներով ես կարող եմ լիուլի ծանոթանալ գյուղատնտեսական այս կամ այն ճյուղին, և ըստ այնմ, հարկ եղածը սովորեցնել գյուղացիներին, այնուամենայնիվ, այս ձեռնարկների մեջ կլինեն բազմաթիվ տերմիններ, որոնց հայերենը չգիտեմ. ահա՝ այդ գեպքում օգնության կհասնեն ինձ հայերեն ձեռնարկները:

— Այո՛, լավ ես մտածել, գյուղացու աշքում ամեն կերպ պետք է հեղինակավոր երևալ: Բայց ուրիշ էլ ի՞նչ պատրաստություն ունիս:

— Էլ ի՞նչ պիտի ունենամ, մնացածն էլ գլխումս է...

— Եվ գրպանումդ, իհարկե:

— Առանց դրան հո բան չի առաջանալ: Բայց, սկզբում, կարծեմ, հարկ չի լինի գրպանի օգնության դիմելու: Դուռ առաջ պետք է գյուղը մտնել, գյուղացուն ու նրա կարիքներին ծանոթանալ, իսկ այնուհետև ամեն բան հեշտ է:

— Նախանձում եմ քեզ, բարեկամ, որքա՞ն բախտավոր ես, որ կարող ես այդպես աղատորեն նվիրվել հասարակաց գործին. իսկ ես...

— Ո՞վ է քեզ խանգարում հետևել ինձ:

— Ո՞վ է խանգարում... աղքատ ծնողներ պահելու, քույր ու եղբայր ապրեցնելու, և, նույնիսկ, ինձ նման ահա-գին մարդուն կերակրելու անհրաժեշտությունը:

— Այս', իրավունք ունիս, քո դրությունը ծանր է, — հարեց իսկույն Կամսարյանը, զգալով որ ընկերի ցավոտ կողմը շոշափեց:

— Բայց վիճակս մասամբ բարվոքելուց հետո, պիտի հիշեմ նաև քեզ հետևելու պարտքս, մի՛ կարծիր թե ուսանուական ժողովի որոշումը կարող եմ երբեկցից մոռանալ:

— Մի՛ վշտանար, բարեկամ, քո ծնողներն ու հարա-զատները նույնպես հասարակության անդամներ են. եթե գու նրանց խնամում ես, զրանով արդեն որոշ չափով ծաշ ուայում ես հասարակությանը: Ես հավատացած եմ, որ երբ դրությունդ բարվորվի, կաշխատես ավելի անել:

— Անշուշտ:

— Ուրեմն շխոսենք այլևս այդ մասին. դառնանք իմ ձեռնարկության: Ի՞նչ խորհուրդ ես տալիս. ո՞ր կողմում հաստատեմ օգնության գործը:

— Դու դեռ չե՞ս որոշել:

— Ո՛չ, որովհետև մտածում եմ թե բոլոր կողմերն էլ միևնույնն են ինձ համար, ուր որ հայ շինական կա, այն տեղ էլ կարող եմ գործել:

— Եվ շատ լավ ես մտածում: Նստի՛ր երկաթուղի և գնա դեպի աշ: Ճենց որ հասար Աղստաֆա (դա մեր պատշմական Աղստելն է, շմոռանաս), իշխ'ր այնտեղ: Փոստային կառքը Աղստել գետի ուղղությամբ կտանե քեզ դեպի Դիլիջան: Անցե՞լ ես դու այդ ճանապարհով:

— Ո՛չ:

— Լավ, ուրեմն, կերթաս և կտեսնես այն աշխարհը, ուր քո պապերն են ապրել: Կարող ես հենց առաջին պատա-

հած գյուղում իջնել և այնտեղ էլ քո օգնության գործը հիմնելու Ալժմյանից, իհարկե, դժվար է որոշել թե ի՞նչ պիտի անես, բայց երբ կմտնես ժողովրդի մեջ, այն ժամանակ արդեն ինքը կտեսնես նոյն կարիքները և կսկսես հոգալ կարեվոր դարմանը: Ինչպես լավ, նույնպես և վատ օրինակը վարակիչ է: Երբ քո ձեռքը կստեղծե մի գյուղում գովության արժանի գործ, կտեսնես, որ հետո լույս կընկնեն ուրիշ ձեռքեր, որոնք նույնը կանեն ուրիշ գյուղերում: Ո՞վ գիտե, գուցե հենց քեզ է վիճակված կարապետ լինել այն գաղափարական գործին, որ ամփոփում է յուր մեջ գյուղական ժողովրդի ապագա բարօրությունը և որի մասին այնքան շատ խոսել ու քարոզել է հայ լրագրությունը: Երեակայիր թե ինչպիսի հոչակ պիտի վաստակես դու հայ հասարակության մեջ, երբ հայտնի լինի մի օր թե՝ այն, ինչ որ գրողները միայն երազել են, դու արդեն մարմնացրել ես քո հաստատուն կամքով:

— Դու ինձ ոգևորում ես, բարեկամ,—բացականշեց Կամսարյանը և ընկերոջ ձեռքն առնելով ամուր-ամուր սեղմեց:

— Ոգևորվի՛ր ու գնա գործիր: Աստված անշուշտ կօրհնե քո ընտրած ճանապարհը:

Այսքանն արդեն բավական էր, որ Կամսարյանն յուր որոշումը իրագործեր անպատճառ: Ընկերոջ հեռանալուց հետո, նա սկսավ կարգի բերել յուր իրեղենները և կապել կպել:

Զնայելով, որ այդ առթիվ լիդիա Պավլովնան ու Կիրիլ Կարպիչը մի անգամ ևս լուրջ վիճաբանություն ունեցան իրենց որդու հետ և այս անգամ մայրը ոչ միայն հուզվեց, այլ և կարողացավ լաց լինել, այսուամենայնիվ, Պետրոսը մնաց անընկծելի: Միակ զիջումը, որ նա արավ ծնողներին, այն էր, որ խոստացավ շերկարել ճանապարհորդությունը և աշխատել մի քանի շաբթով վերադառնալ թորժում:

Այս պայմանը խաղաղացրեց երկու կողմերն էլ և Պետրոսը մի լուսնկա երեկո յուր պարկ ու պուրկը կառփի մեջ ժողովելով, ճանապարհվեց դեպի երկաթուղու կայարանը:

**Ա**յս գիշեր էր, որ գնացքը կանգ առավ Աղստեղ կայա-  
րանի առաջ: Ղաղախ ու Դիլիջան գնացողների թվում իջակ  
գնացքից և Պետրոս Կամսարյանը: Ուղևորներին իրենց ծա-  
ռայությունն առաջարկող կառապանները մոտեցան, նաև  
վերջինիս և սկսան գովել՝ մեկն յուր «թոշկան ձիերը», մյուսն  
յուր «սլող կալասկան», երրորդն՝ յուր դինջ «ըմնիբուժը» և  
այլն, և այլն:

Պետրոսը, ինչպես հարմարություններ սիրող մարդ, չէր  
կամենում փոստի սայլակով ճանապարհորդել, որպեսզի  
շենթարկվի կայարանների քմահաճույքին, այդ պատճառով  
էլ ընտրեց «սլող կալասկան», թեպետ հաստատ լգիտեր թե՝  
ո՞քան է նա հարմար առաջիկա ճանապարհորդության հա-  
մար: Եվ որովհետև օմնիբուժի, կամ ուրիշ կառքերի տերերք  
վախեցնում էին նրան ասելով՝ «էդ կալասկան էդա ճամպի  
միջումը կոտրվելու ա, քե էլ թողի արևումը խաշվելիս» և  
այլն. ուստի երիտասարդը սկսավ կասկածել թե մի գուցե  
սխալվել է յուր ընտրության մեջ:

— Սուտ են ասում, աղա զան, քե վախեցնում են, որ  
իրանց փայտոնը բռնես, — առարկում էր «կալասկի» տերը և  
ավելացնում. — իմ կալասկեն կըլի շորս տարի, որ բանեց-  
նում եմ, հլա պոռնդը վնասվել շի: Հրեն մեկել օրը պրիս-  
տավին տարա Ղաղախ, ընդիան էլ նաշալնիկին դուրս րերի  
Դիլիջան, բա խի՞ շկոտրվեց: Հլա նաշալնիկն էլ ասեց «մա-  
լագեց Օվանես, տվոյ կալասկա օշեն խարոշի»:

Պետրոսն անշուշտ երկար կմնար երկբայության մեջ,  
եթե նրան օգնության չհասներ կարճահասակ մի մարդուկ,  
որն, ըստ երկույթին, ծանոթ էր տեղական կառապանների  
սովորության ու հնարներին:

— Աղա՛, էս մարդի կալասկեն լավն ա, ըսկի սիրոտ  
շաք (կասկած) մի գցիլ, նստի ու գնա՛: Դու թե ամեն խո-  
սողի լսես, էրկու օր կմնաս ըստեղ, — ասաց նա բարեկա-  
մաբար:

— Ա՛յ, քու հերը լիս դառնա, ըտենց խոսա' է՝ —ուրախացավ Օվանեսը և ապա դառնալով Պետրոսին՝ ավելացրեց. —տե՛ս. աղա', սա վարժապետ մարդ ա, սուտ չի խոսալ, որ ասում ա իմ կալասկեն լավն ա, իմա՛ց որ լավն ա:

— Եատ բարի, գնա' լծիր, —կարգադրեց Պետրոսը, նախապես վարձապինը որոշելով: Ապա դառնալով միջամտող մարդուկին՝ հարցրեց. —ո՞րտեղի վարժապետ եք:

— Դիլիջանից գենը հայի գեղ կա, ընդեղի վարժապետն եմ:

— Ուրեմն դուք էլ Դիլիջան եք գնում:

— Հրամանք ես:

«Մա կարող է լավ առաջնորդ լինել ինձ» մտածեց Պետրոսը և առաջարկեց նրան՝ ընկերանալ իրեն:

— Զէ, աղա', ես փուրգոնով պտի գնամ, —առարկեց վարժապետը:

— Ինչո՞ւ, միթե կառքը ավելի՝ հանգիստ չէ:

— Հալբաթ կոր (իհարկե) հանգիստ ա, —ծիծաղեց վարժապետը:

— Ինչո՞ւ ուրեմն չեք գալի:

— Բա գեղի վարժապետը ո՞րդիան կարա կառքի փող տալ:

— Ի՞նչ փող, ես փող չեմ ուղում:

— Բա ո՞նց:

— Հենց այնպես, ձրի: Ես, միւնույն է, կառքի փողը պիտի վճարեմ, շատ ո՞ւրախ կլինեմ, եթե դուք էլ ինձ ընկերանաք:

Վարժապետը քաշվում էր և չէր կամենում երիտասարդի առաջարկությունն ընդունել:

— Ա, շա՛շ (ապուշ), խի՛ ես մաթ մնացել (զարմացել), լավ բանը գլուխդ վե՛ր շունում, —նկատեց վարժապետին զազախցի ծանոթներից մինը:

— Դե խի՛ չի վեր ունում, ասում եմ, ծանգրություն չըլեմ աղի հմար:

— Ունիս, ծանրություն չես լինիլ, գնանք, — առաջ Կամսարյանը և իրեղենները հանձնելով բեռնակրին, առաջ անցավ:

Մարդուկը հետևեց նրան:

Կառապանը, որ մի քանի վայրկյանում արդեն ժկալառ կենա լծել, բերել էր կայարան, ժողովեց իսկույն Պետրոսի իրեղենները և կառքի ետքին ու առաջին դարսելով, սկսակ ամրացնել: Ապա իմանալով, որ վարժապետն ևս ընկերանում է «աղջին», նրա խեղճ կապոցն էլ տեղավորեց մի խռըշում: Հետո բարձրանալով յուր նստատեղը, ասաց.

— Ես իմ աստոծը, աղա, լավ ընկեր ես վե կալել, արժանավոր մարդ ա, ըտենց ընկերի հետ գնացած ճանապահ էլ բարի կընի:

— Հապա ես վատ մարդ կընկերացնե՞մ ինձ, — պատասխանեց Կամսարյանը և կառքը բարձրացավ:

— Տեսնո՞ւմ ես, վարժապետ, լավութինը կորչում չի, — նորեն խոսեց Օվանեսը, — դու որ ինձ հմար բարեխոս չեիր ըլել, աստոծ էլ քի էս բանին ուստ չէր բերիլ, փուրգոնի ճոճուցից աղատվեցար, ութ արասին էլ մնաց զեբումդ:

— Լավ, մի՛ երկարացնիր, քշիր տեսնենք, — նկատեց Կամսարյանը, զգալով որ կառապանի խոսքերը անհաճո պիշտի լինեն վարժապետին:

— Քշիլ տեմ, աղա՛, բա քշիլ լըպտե՞մ, քե ընենց լեղով (շուտով) տանեմ, որ նաշանիկի պես ասես՝ «մալադեց Օվանես»:

Այս ասելով կառապանը շարժեց սանձերը, խրախուսեց ձիաներին և կառքը սլացավ խճուղու ուղղությամբ:

Լույսը բացված շինելով, գիշերային զովը զգալի էր դեռ Պետրոսը փաթաթվելով վերաբերուի մեջ, կծկվեցավ կառքի անկյունում և սկսակ խոսակցել վարժապետի հետ:

— Զեր անոնն ի՞նչ է, — հարցրեց նա:

— Քե ծառա՛ Մոսի, — պատասխանեց վարժապետը:

— Զասացիք ո՞ր գյուղի վարժապետն եք:

— Զբուխու:

- Զիբուխլո՞ւ; Դա հայո՞ց գյուղ է;  
 — Հայոց ա, բա՛ ի՞նչ ա:  
 — Անոնք, կարծեմ, հայերեն չէ:  
 — Հրամանք ես, թուրքերեն ա, ամա մեր վանահայրն  
ասում ա, շատ առաջ հայերեն ա ըլել: Ճապոտիկ են ասելու  
— Վանահայրն ո՞վ է, ձեր գյուղում վա՞նք էլ կա:  
 — Զէ, Սևանա վանահայրն եմ ասում:  
 — Սևանը, ուրեմն մո՞տ է ձեզ:  
 — Մոտ ա, բա՛, հենց մեր առաջին ա:  
 Այս նորությունը ուրախացրեց Պետրոսին: Որքա՞ն ժա-  
մանակ էր, որ նա փափագում էր տեսնել Գեղամա ծովակը,  
որքա՞ն լավ բաներ էր լսել նրա մասին, որքա՞ն բաներ  
կարդացել: Այժմ, ահա, նա կհասներ փափադին:  
 — Ձեր գյուղում, ուրեմն, ուսումնարա՞ն էլ ոմիք, —  
շարունակեց նա յուր հարցերը:

— Ուսումնարան ո՞րդիան ա. մի տասը-քսան բեխա ես  
եմ հվաքել մեր տունը, կարդացնում եմ... քե դրուատն ասեմ.  
ես էլ ըսկի օղինավոր վարժապետ չեմ: Եղցումը, որ էրեցին  
օգնում եմ, տիրացութին անում, էն ա գեղականն անունո  
վարժապետ ա դրել:

Ուրեմն Պետրոսի ուղեկիցը տիրացու էր և ոչ վարժա-  
պետ: Մրանով էլ պարզվում էր երիտասարդի համար այն  
հանելուկը, որ վարժապետ կոչվածը գյուղական բարբառով  
էր խոսում:

Այս նորությունը, թեպետ որոշ շափով ձգեց ուղեկցի  
վարկը Կամսարյանի աշքում, այսուամենայնիվ, վերջինս  
դարձյալ հետաքրքրվեց նրանով:

— Ո՞րտեղ ես ուսում առել, — հարցրեց նա:  
 — Հրես, առաջներիս գեղ կա, Քարվանսարա են ասում,  
ընդեղ եմ կարդացել: Ես ինքս էլ Ղաղախի գեղերիցն եմ,  
միայն Զբիսլուի երեցը մեր ազգական էր, զոռեց, տարավ  
իրա կուշտը (մոտը) ասեց՝ ըստի տիրացութին պտես անիլ,  
ժամանակով էլ քահանա կշինեմ քե:

— Լա՞վ գյուղ է Զիբուխլուն:

- Հլե մեղ հմար լավ ա, ուրիշի հմար ի՞նչ գիդամ:
- Ո՞րքան ժողովորդ ունի:
- Իսկը գիտում չեմ, կըլի որ հարյուր հիսուն տուն ըլի:
- Ի՞նչպես է, որ այդքան տուն չի կարողացել յուր համար ուսումնարան հիմնել:
- Բա, գեղականը ո՞րդիան կարա ուսումնարան հիմնել: Սաղ օրը շարչարվելով, արևի, անձրևի հետ կոիվ տալով ըսկի կարում չի էնքան աշխատի, որ իրա ըեխանց ուսուցին հասնի, յա նրանց տկլոր լաշը ծածկի, ուսումնարան ո՞նց տի հիմնիլ:

— Իսկ եթե գտնվի մեկը, որ ցանկանա յուր ծախքով այդ բանն անել, գյուղացիք հո չեն հակառակիլ:

— Բա՛, էդ ի՞նչ ես ասում, աղա ջան, մարդ իրա աչքը քո՞ռ կուզի, գեղացիք չէ թե հակառակիլ չեն, հլա դհենց մարդու ոտն էլ կպաշեն:

«Այս գյուղն, ուրեմն, կարժանանա իմ ուշադրության», — մտածեց ինքն իրեն Կամսարյանը և շարունակեց:

— Իսկ գյուղատնտեսությունը ի՞նչ դրության մեջ է ձեր կողմերում:

— Գյուղատնտեսությունը ո՞րն ա:

— Վար ու ցանքը, անասնապահությունը, գինեգործությունը...

— Վար ու ցանքն էս տարի լավ ա, տավարն էլ, փառք ասծու, ցավ ու չոռից ազատ ա, ամա դե գինին մեր կողմերում չի' ըլիւ չուն մեր տեղը սար ա, բաղն արշա չի գալ (չի առաջանալ), — պատասխանեց տիրացուն, այլ կերպ հասկանալով իրան տրված հարցը:

Այդ հանգամանքը կարծես սառեցրեց Պետրոսի հետաքըքրությունը և նա այնուհետև սկսավ ավելի մտածել, քան խոսել: Դրա հետեւանքը եղավ այն, որ երիտասարդը տաքուկ վերաբերուի և զով օդի ազգեցության տակ սկսավ նիրհել: Եվ որովհետև երկաթուղու վրա շատ քիչ էր քնել, ուստի շոտով էլ քաղցր քուն մտավ:

Տիրացուն յուր կողմից աշխատեց շարթնացնել նրան և  
քիչ ժամանակից հետո ինքն էլ հետևեց նրա օրինակին:

Սակայն Օվանեսի «կալասկան» շարունակ սլում էր  
Հաքիթ խճուղու վրա, նա արդեն Ղազախը, Գաղկա գաշտը և  
Ազգութիւնական անցել և Քարվանսարի ճանապարհն էր մտել,  
ևբք Կամսարյանն անուշ քնից արթնացավ: Աշքերը բանալով,  
նա չորս կողմը նայեց և իրեն շրջապատող տեսարանները  
դիտելով, հիացավ:

Ճանապարհի մի կողմից ընկած էին հասուն արտեր  
կամ սիզալիտ արոտներ, որոնք ուղղաղիր, կամ վայրահակ  
տարածվում, համում էին մինչև հեռավոր բարձրություն-  
ները, իսկ մյուս կողմից հանաշաղարդ թումբեր, ձորակներ  
ու բլուրներ, որոնց հետեւմ էին և նախ մանր ու ծառախիտ  
և ապա խոչշոր, մշշապատ լեռներ: Դրանց մեջ, իրենց բարձ-  
րությամբ, աչքի էին ընկնում աջ կողմից նալիքնոքանը, իսկ  
ձախից՝ Կարմիր քարը՝ յուր երկար լեռնաշղթայով, ապա  
Համզասարը, Արտազը և այլն, որոնք հետզհետե իրար հա-  
ջորդելով հորիզոնը դարձնում էին վեց և գեղատեսիլ: Սա-  
կայն աշ ու ձախ տարածվող այդ տեսարանների գեղեցկու-  
թյունը պսակում էր Ազնավոր հինավորց գետակը, որ շա-  
րունակ անծալր խճուղուն ընկերանալով, զվարճացնում էր  
նրա մշտական անցորդներին մերթ վճիռ ջրերի քաղցր կար-  
կաչով, մերթ փոքրիկ ջրվեժների փափուկ շառաչով և ջա-  
ճախ, յուր եղերքը ծածկող կամ յուր եղայուրներում խմբո-  
վին ցոլացող ծառերի պուրակներով: Արեւ, որ նոր էր յուր  
շողերը սփռում Ազնավոր ձորի վրա այդ տեսարաններին  
տվել էր մի դյութական պայծառություն, վառելով մշուշը  
լեռների լանջերում, կանաչը՝ ծառերի կատարին, դալարը  
դաշտերի մեջ և ցողը՝ ծաղիկների վրա:

— Օ՛չ, ի՞նչ գեղեցիկ և որքան հրաշալի է մեր երկի-  
ւրը, — բացականչեց Կամսարյանը, հրապուրվելով բնության  
այդ սիրուն տեսարաններով և ապա ձեռքերն աշ ու ձախ  
տարածելով, կամենում էր կարծես հորիզոնը զրկել:

— Բստեղ Հլա ի՞նչ գեղեցկութին կա—գեղեցկութին,

գեղեցկութին Դիլիջանա դենն ա, Շամլովսի ձորումը, Մայ-  
մեխի լանջերին, Հրես գնում ենք, կտեսնաս,—նկատեց տի-  
րացու Մոսին:

Կամսարյանը, որ դեռ քննական աշբով չէր նայել  
ուղեկցին, որովհետև, գիշերանց էր ծանօթացել նրան, թակ  
ձայնով նրա դիտողությունը լսելուց, ետ նայեց մի վայր-  
կան և տեսավ, որ դա մի մարմնացյալ աններդաշնակու-  
թյուն էր նկատմամբ այն պոեզիայի, որ շրջապատում էին  
իրեն: Տիրացով կարճ ու գիրուկ մարմինը, որ նստած լի-  
նելու պատճառով կորացել էր, նմանում էր մի տձև մսագըն-  
դի, որի վրա գլուխը զարժվում էր, կարծես առանց պարա-  
նոցի: Նրա թուխ դեմքը, որ արևահար լինելուց ավելի էր  
սկացել, ծածկված էր խիտ և երբեք շասնրված մորուքով:  
Վերջինս թեպետ տարածվում էր մինչև նրա այտոսկրները,  
այսուամենայնիվ, չէր ծածկում տիրոջ մեծ բերանը, որ  
եղերված էր հաստ լրթագույն շրթումքներով: Խոր ընկած  
աշքերը, չնայելով իրենց սկովթյան, թավալում էին նեղ կա-  
պիճներում առանց կրակի և արտահայտության, իսկ դրանց  
հովանավորող թավարծի հոնքերը տալիս էին նրա դեմքին  
մի առանձին գոեհկություն: Հաստ շալի կապան, կեղոտոտ  
օձիքով արխալուխը և մորթե մեծ գդակը, որ նա խնամքով  
քաշել էր մինչև հաստ բլթակներով լոշի պես կախված ու  
փոշոտած ականջները, տիրացովին նմանեցնում էին ան-  
տառաքնակ խոզարածի, նրան պակասում էր մի մահակ՝  
ձեռքին և մի պարկ՝ մեջքին:

Պետրոսը ուշի ուշով նայելով ուղեկցի վրա, զգաց այն-  
պիսի մի անհանգստություն, որ պաշարում է մարդուն՝  
զգվանք զգալուց առաջ: Նա զարմացավ յուր անմտության  
վրա, որ մի առաջնորդ ունենալու պատճառով, նստեցրել էր  
կողքին այնպիսի մի գոեհկի, որից, մինչև անգամ, կեղտի  
ու քրտնքի հոտ էր փշում: Այս պատճառով երիտասարդն  
անզգալի կերպով քաշվեցավ մի կողմ և, որպեսզի տիրա-  
ցովից ավելի անջատվի, առջևը դրած իրերից մինն առնելով,  
զետեղեց նրա և յուր մեջտեղը, ասելով.

— Սրա մեջ կոտրելու բան կա, լավ է այստեղ դնենք:

Բայց որովհետև Պետրոսին այնպես թվաց թե Մոսին հասկացավ յուր միտքը, ուստի սկսավ զբաղեցնել նրան:

— Ասում ես թե այն կողմերն ավելի գեղեցիկ են, հա՞:

— Գեղեցիկ են, բա՛, ըստեղ հայ շատ փայը դրուց ա (դաշտ), արեք որ աշմիշ ա ըլում (բարձրանում է) էն դայդի ա էրում, որ ասես թե մարդի կաշին պուկիլ տի, ամա գենի ճամփեն չիմ մեշալղով (անտառով) ա անց կենում, ոտով էլ որ գնաս մեջքդ տաքանալ չի:

Չնայելով տիրացուի հայտարարության, Կամսարյանն, այսուամենայնիվ, թերություն չէր գտնում շրջապատող տեսարանների մեջ, ընդհակառակը, նա որքան հառաջանում, այնքան ավելի էր հիանում նրանցով: Մանավանդ Աղստեկի մշտակարկաշ հոսանքը և նրա սիրուն, ծառազարդ ափերը գրեթե շարունակ զմայլեցնում էին նրան, այնպես որ մի ժամանակ նա, մինչև անդամ, մոռացավ տգեղ տիրացուին և ինքն իրեն խոսեց.

— Ահա՛ թե ի՞նչ տեղեր են և ի՞նչ գեղեցկովթյուններ են անհայտ մնում մեզ... Իսկ սրանց մեջ ապրող մեր ազգակիցները... չէ՞ որ նրանք էլ ունին գեղեցկովթյուններ ու կատարելովթյուններ, որոնք անծանոթ են մեզ: Պետք է շնորհակալ լինել բախտից, որ վերջապես օգնեց ինձ՝ իմ նվիրական խոստումն իրագործելու (այդ վայրկենին երիտասարդի հայացքը հանդիպեց յուր ուղեկցին և նա մի քայլ ետ կասեց յուր մտածության մեջ՝ ավելացնելով) կամ, գոնե, ծանոթանալու այս երկրին ու ժողովրդին, որպեսզի համոզվիմ թե ի՞նչ շափով է հնարավոր այդ որոշումն իրագործել:

Քիչ ժամանակից հետո երիտասարդ Կամսարյանը նըստած Քարվանսարա գյուղի առաջ, կարկաշահոս Աղստեկի, ափին, մի հովանափոր ծափի տակ, ախորժակով նախաճաշում և թեյ էր վայելում: Այստեղ արդեն տիրացուն չէր ընկերանում նրան, որովհետև հանդգնություն էր համարում ձգմիլ ռադային հետ, նաև, նախաճաշի ժամին: Նա համեստությամբ խույս էր տվել դեպի մոտակա կրպակը, ուր

խոնված էին Զաղախի զանազան կողմերից գյուղացիներ և  
նրանց հետ խոսում էր: Տիրացով այդ վարժումքը դյուր  
եկավ Կամսպայցանին և Համոզեց նրան, որ յուր ուղեկիցը  
այնքան էլ անտաշ գոեհկին մեկը չէ: Այդ պատճառով էլ,  
երբ նախաճաշն ավարտեց, կանչեց վերջինիս և առաջարկեց  
նրան նույնպես թեյ խմել և նախաճաշել, իսկ ինքը հեռացավ  
մի փոքր շրջապայելու:

Տիրացուն յուր կողմից Հրավիրեց կառապան Օհանե-  
սին: Նրանք երկուար նստեցին նույն հովանավոր ծառի տակ  
և սկսան վայելել «աղայի» թեյի ու նախաճաշի առատ միա-  
ցորդը: Կառապանը տեսնելով, որ «աղան», ի միջի այլոց,  
թողել էր իրենց համար տասը կտոր շաքար, այդ համարեց  
առատասրտություն և դրանից էլ եղրակացրեց, որ նա «մենծ  
մարդ պիտի ըլի»:

— Մենծ մարդ ա, բա՛, մենծ որ Ճլեր, մենակ կալաս-  
կա կրներ կգա՞ր,—հաստատեց տիրացուն:

- Յա չէ, առանց փողի քե կողքին կդներ կրեմե՞ր:
- Ես էլ էղ շե՞մ ասում:
- Թյունդ հուսումնական կըլի, ա՛յ:
- Հուսումնական ա, բա՛:
- Չըլի՞ թե ընջներ ա:
- Չէ, ընջներ չի ընում:
- Բա խի՞ յաշնիկը ծանկը ա, ես նըհենց եմ մանչ  
թե ընջների յարաղ (գործիք) կա միջումը:
- Չէ, կը որ գրեր ըլին:
- Գրերը ինչի՞ն ա պետք:
- Ո՞նց թե ինչի՞ն ա պետք, բա հուսումնականն  
առանց գրերի ման կրգա՞ւ:
- Ես ի՞մ (ի՞նչ գիտեմ), հրեն մեր գեղի աղան էլ ասըմ  
ևն հուսումնական ա, ամա ձամփիա զնալուց՝ արադից սակա-  
յի զատ չի ըլում հետք:
- Է՛, շա՛շ, դու էլ մարդու անուն տվիր. գեղի հուսում-  
նականն ու քաղաքինը մի՞ն ա ըլում: Գեղի հուսումնականը  
սաղ կյանքումը չինդ, յա վեց գիր անշախ (հաղիւ) ա կար-

դում, ամա քաղաքինը՝ աշխարհումս էլ գիր չի թողնում միմ  
(բոլորը) կարգում պրծնում ա:

Այսպես զրուցելով տիրացոն ու կառապանը վերջաց-  
նում էին իրենց նախաճաշը, երբ Կամսարյանն յուր շրջապա-  
յությունից վերագառնալով, տեսավ նրանց միապին:

— Այս տիրացոն իսկապես կառապանի ընկերն է, ևս  
ինչո՞ւ հիմարաբար իմ կողքին եմ նստեցրել, — մտածեց նա  
և որոշեց առաջարկել, որ ոս այնուհետեւ նստե կառապանի  
մոտ: Բայց ինչպե՞ս աներ առաջարկությունը, որ տիրա-  
ցոն շվիրավորվեր, նա այդ մասին էլ մտածեց:

Երբ Օվանեսը յուր գահին բազմաձ՝ կառքը մոտեցրեց  
«ապին», վերջինս հրամայեց ծածկել Շովարանը, որովհետեւ  
արեն այրում էր արդեն: Կառապանն իսկույն կառարեց  
հրամանը:

— Նախաճաշից հետո ես սիրում եմ Հանգստանալ, ար-  
դյոք չէ՝ կարելի պառկել քո կառքում և այնպես գնալ, —  
հարցրեց Պետրոսը կառապանին:

— Խի՞ չի կարելի, տեսնո՞ւմ չես որքան լին ա Վիմ կա-  
լանկեն: Դու ոտերդ ձգի ու պառկի, վարժապետն էլ իմ կող-  
քին կնստի, — պատասխանեց Օվանեսը:

— Հա, ես ըստի կնստեմ, ուս նեղանալ մի՛, — հարեց  
տիրացոն, ցույց տալով կառապանի նստատեղը:

Կամսարյանը հիացավ այս հաջողության վրա և կառքը  
բարձրանալով, գլուխ տակն առավ փոքրիկ բարձր և ձգվեց  
բազմոցի երկարությամբ:

Տիրացոն սեղմէից կառապանի կողքին:

Քարվանսարացից ելնելուց նույնական դարձյալ ընկերա-  
նում էր Հանգստարհորդներին յուր ընդդիմակաց հոսանքով,  
երբեմն փոքրիկ ձորակներից անցնելով, երբեմն դաշտերի-  
եզերքը քերելով, իսկ շատ տեղ թումբերի հետեւ թաքնվելով:  
Քանի շարունակվում էր տեսարանների միակերպությունը,  
Կամսարյանը նրանցով չէր հետաքրքրվում, այլ պատկած  
էր: Բայց հենց որ հասան Ղիծ-Ղայա կոշված ժայռերի ստո-  
րոտին, նա ուղղվեցավ իսկույն և գլուխը կառքից դուրս հա-

նելով, սկսեց ուշի ուշով դիտել այդ ահավոր և միևնույն՝ ժամանակ գեղատեսիլ պարեխները, որոնք ճանապարհի աջ կողմից ձգվելով, իրար վրա դիզված, հետզհետե բարձրանում, կազմում էին տարօրինակ ամբարտակներ, մի տեղ սուր ու միապաղաղ, մյուս տեղ խրոխտ ու բարդ-բարդ, իսկ շատ տեղ թեք գեպի ճանապարհը, կարծես սպառնալով փլշել բարձր գահավանդից և իրենց փլվածքի տակ ծածկել տեղի խաղաղությունը վրդովող հանդուգն ուղևորներին:

Խարակների այդ ահավոր ամբարտակներից հետո տեսարանը դարձյալ մեղմանում ու դաշտանաւմ էր, իսկ խճուղու մի քանի կեռմաններ անցնելուց՝ հորիզոնը դարձյալ փակում էին նոր, կանաչ սարալանչեր, որոնք հետզհետե դեպի վեր բարձրանալով ձգվում, հասնում էին մինչև Ղըզզալի սարը:

Մի երկու ժամ այսպես ճանապարհորդելուց և տարբեր տեսարաններ անցնելուց հետո, մեր ուղևորները հասան Թարս-շայ կայարանը, որ գտնվում էր Դիլիջանի սարավանդը հանող բարձրությունների ստորոտում:

Որովհետեւ կառապանը կեր պիտի տար այստեղ ձիերին, ուստի առաջարկեց «աղին» վայելել յուր ճաշը առանց զտապելու:

— Արեն էս սարին թեքելուց՝ կալասկեն կլծենք ու սարինով (հովով) Դիլիջանի դյուս կդանք, — հայտարարեց նա խորհրդատու եղանակով:

— Ինչո՞ւ այդքան ուշ, — հարցրեց Պետրոսը:

— Ուշ չի, աղա՛, էրկան ճամփա ենք էկել. հայվաններն էլ խեղճ են. մի քիչ կորմ (կեր) կուտեն, մի քիչ էլ կդինչան. Հիե թե կուզես, մի քիչ էլ դու կդինչանաս, էնդուց եղը կլծենք կդմանք:

Որովհետեւ երիտասարդը շտապելու ոչինչ չուներ, ուստի շնակառակեց: Պատվիրելով, որ պաշարի կապոցը տանեն կայարան (որից ինքը իբրև մասնավոր կառքով եկաղ, հեռու էր իշած), ինքն ևս յուր քայլերն ուղղեց գեպի այն մեռավոր տունը՝ որ հովանավոր պատշպամ և շուրջը ծառերի

ստվեր ունենալով, արևի այդ տաք ժամանակը դեպ իրեն էր քաջում խոնջ ուղևորին:

Կայարանի վերակացուն ձեռքը լրագիր առած կարդում էր, երբ Կամսարյանը մոտեցավ սանդուղներին:

— Կարելի՞ է մի քանի վայրկյան հանդստանալ այս-տեղ, — հարցրեց նա ուսերեն:

— Ինչո՞ւ չէ, համեցեք, — պատասխանեց վերակացուն մաքուր հայերենով:

— Ա'յս, ներողություն, դուք ուրեմն հա՞յ եք:

— Այո՛, պարոն, զտարյուն հայ, — պատասխանեց Ժըպտալով վերակացուն, որ միջահասակ, բարեղեմ և ըստ երեկութին, բարեխառն բնավորությամբ մի անձն էր:

— Օրվա այս ժամին, որքան անհաճո է բաց ճանապարհը, նույնքան հաճելի է ձեր այս պատշգամը, ուր ոչ միայն հովանի, այլև հանդստանալու լավ բազմոց ունիք...: Այս ասելով Կամսարյանը մոտեցավ վերակացուն և ողջունելով նրան, նստեց մոտիկ դրված, կաշեծածկ ու հնատարագ բազմոցի ծայրին:

— Հրամանքդ, երևի Դիլիջան եք գնում, — հարցրեց վերակացուն, մի կողմ դնելով լրագիրը:

— Կարծիմ, ավելի հեռու:

— Ավելի հեռո՞ւ:

— Թվում է թե՝ այո՛:

— Ինչպե՞ս թե թվում է, դուք չե՞ք որոշած թե ո՞ւր եք գնում:

— Համարյա՛ թե՝ չեմ որոշած:

— Հասկանում եմ, ուրեմն ճանապարհորդում եք, առանց որոշ դիտավորության:

— Չէ, որոշ դիտավորություն ունիմ:

— Ներեցեք, որ հետաքրքրվում եմ... եթե որոշ դիտավորություն ունիք, ուրեմն պետք է որ դիտենաք թե ո՞ւր և ինչի՞ համար եք գնում:

— Հենց բանն էլ այդ է, որ ինչի համար գնալս դիտեմ, բայց ո՞ւր գնալս չդիտեմ:

— Այդ հետաքրքրական է, — հարեց վերակացուն ծիծաղ զելով և բազմոցի մյուս ծայրին նստելով։

Այդ միջոցին տիրացու Մոսին բարձրացավ պատշաճ բերելով յուր հետ պաշարի կապոցը և խորը գլուխ տալով վերակացուին, կանգնեց Կամսարյանի առաջ։

— Հոգ, տի՛րացու, դո՞ւ էլ այստեղ, այդ ո՞նց է առաջնել, — հարցրեց վերակացուն։

— Հա, ես էլ ըստի եմ, շնորհակալ եմ, աղան բերանվ։

— Դե որ եկել ես, ա՞յ էն սեղանը մոտ բեր, — հրաժայեց վերակացուն։

Տիրացուն ցուց տված սեղանը մոտեցնելով բազմոցին, բերած պաշարը գրեց վրան ու հետագալ։

Կամսարյանը բացավ կապոցը և սնեցածը շաբեկով սեղանի վրա, խնդրեց վերակացուին մասնակցել յուր «Համեստ» ճաշին։

— Շնորհակալ եմ, արդեն ճաշել եմ, — առարկեց վերակացուն։

— Ենդրում եմ, որքան կարող եք. կամ գոնե մի բաժակ գինի... — այս ասելով, Կամսարյանը հանեց բաժակը և սըրբելով այն, լցրեց գինով և գրեց վերակացուի առաջ։

Վերջինս, որ կայարանում ապրելով, սովորած էր անխտիր ամեն ուղևորի ճաշին ու ընթրիքին մասնակցելու, երկար լընդդիմացավ և, կամենալով, ինչպես ասում էր, յուր հյուրի ախորժակը բանալ, վայելեց մի կտոր բան և գինու բաժակն զդուզությամբ կիսելով, վերսկսեց ընդհատված խոսակցությունը։

— Հա, այս էի ասում, ձեր պատախանն ինձ շափաղանց հետաքրքրեց... այդ ինչպե՞ս է, որ դուք որոշ դիտավորաթյամբ գնում եք մի տեղ, բայց շպիտեք թե ո՞ւր եք գնում։

— Բնկապես գիտեմ թե ուր եմ գնում, որովհետեւ գնում եմ մի որևէ հայ գյուղ, բայց թե ո՞ւր գյուղ, ահա՛ այդ մեկը չգիտեմ։

— Ներկցեք, խնդրում եմ, դարձյալ չեմ հասկանում։

Կամսարյանը ծիծաղեց և ապա սկսավ համառոտ կերպով բացատրել թի ի՞նչ է յուր դիտավորությունը:

Վերակացուն, որ նորեն ձեւքն էր առել բաժակը, որպեսզի գինու մնացորդը վայելի, երիտասարդի բացատրությունը լսելուց՝ իսկույն վայր զբեց այն և բազուկները դեպի վեր պարզելով՝ բացականչեց.

— Փառք քեզ, աստված, վերջապես գտնվեց մեկը, որմեր տրտունջը լսեց...—ապա դառնալով Կամսարյանին, ավելացրեց.—Գուք, ուրեմն միակ մեծ մարդն եք մինչև օրա իրենց ուսումն ավարտած հայ երիտասարդների մեջ: Թույլ տվեք խմել ձեր պատվական կենացը:

Այս ասելով, նա լցրեց բաժակը և մի առանձին ոգևորությամբ պարպեց այն միանվագ:

Կամսարյանին դյուք եկավ վերակացուի գովասանքը, բայց կամնալով սրա ո՞վ լինելն իմանալ, որպեսզի ըստ այնմ որոշե յուր ստացած գովասանքի արժեքը, նա Հարցրեց.

— Դո՞ւք էլ ուրեմն պատկանում եք ուսանողների վեմ տրանցող հայերի թվին:

— Հապա՞:

— Զէի կարծիլ, թե այդ տրտունջը կարտահայտվի նաև այսպիսի մի հայ ընկած կայարանում:

Վերակացուի գեմքի վրա դառը ժպիտ խաղաց:

— Ինչո՞ւ չէիք կարծիլ, մի՞թե այսպիսի տեղերում ապրող հայ մարդը սիրո ու զզացմոնք չի՝ ունինալ:

— Ո՛չ, այդ չէի ուզում ասել... շփոթվեց Կամսարյանը:

— Հասկանում եմ, ուզում եիք ասել թի, այս հայ ընկած կայարանում, այս անմաքրությանց գեզերի կողքին, ձիաների ընկերության մեջ ապրող հայ մարդը ինչո՞ւ պետք է տեղակ լինի մեր ցավերին այնքան, որ նույնիսկ տրտունչ հայտնե այդ ցավերին դարման տանել կարող, բայց շիամեցող երիտասարդների դեմ:

— Այս՝ համարյա՛ այդ էի ուզում ասել:

— Բայց ես, բարեկամ, ամենից ավելի իրավունք ունեմ տրտնչալու, որովհետեւ հենց ինքս մինն եմ եղել այն

ժարդկանցից, որոնք սիրով նվիրվել են հայ շինականին, կամենալով սովորեցնել նրան խեղճության դեմ կռվելու և մարդավայել կերպով ապրելու եղանակը... բայց իմ ունեցած կարողությունը հավասար չէր իմ ցանկության, ուստի չհաջողեցա հասնել նպատակիս:

— Ինչպե՞ս, փող էր հարկավոր և շոնեի՞ք:

— Ու, ես վարժապետ էի գյուղում և հենց այդ պաշտոնի շնորհիվ էլ մոտ լինելով գյուղացուն, կարողանում էի օգնել նրան յուր կարիքների ժամանակ, երբեմն խորհրդով, երբեմն գործակցությամբ, և իթե երկար մնայի այնտեղ, գուցե կարողանայի որոշ օգուտ տալ: Գոնք կկրթեի մի ամբողջ սերունդ այնպես, ինչպես որ պետք էր և այնուհետեւ այդ սերունդը ինքը կշարունակեր իմ գործը...

— Էհ, լավ, ինչո՞ւ երկար չմնացիք:

— Որովհետև չէի կարող:

— Պատճա՞ռը:

Մեր ուսումնարանական կյանքում նոր փոփոխություններ եղան, նոր օրենքներ հրատարակվեցան: Վարժապետը պետք է ցենդ ունենար, իսկ ես շոնեի, որովհետև թեմական դպրոցն էի ավարտել: Այդ պատճառով, ահա՛, ինձ պաշտոնից արձակեցին:

— Եվ հետո՞ւ:

— Հետո շատ դես ու դեն ընկնելից վերջը եկա և այս կայարանում չորքոտանիների վարժապետ դարձա:

— Հասկանում եմ...

— Ուրախ եմ, որ հասկանում եք. ուրեմն և իրավունք եք տալիս ինձ տրտնջալ այն երիտասարդների դեմ, որոնք բարձր կրթություն ստանալով, կարողություն են ձեռք բերում ժողովրդին ամեն կերպ ծառայելու, և սակայն այդ ծառայությունից փախչում են վատարար:

— Անշուշտ:

— Դեհ, հենց այդ իրավունքի հիման վրա ես ձեզ մեծ ժարդ եմ անվանում, որովհետև քաջություն եք ունեցել

Վլանքն արհամարհելով, այդպիսի վսիմ նպատակի նվիրել  
ձեզ:

— Ծնորհակալ եմ, դուք ինձ քաջալերում եք. բայց ես  
գեռ ոշինչ չեմ արել, դեռ նոր եմ որոշում անել:

— Այդքանն էլ բավական է գործի սկիզբը՝ գործի կեսն  
է: Կամենալը՝ կարենալ է:

Կամսարյանը, որ մեծ հաճովթյամբ էր լսում այս խոս-  
քերը, հանկարծ պահանջ զգաց վերակացուի բաժակը նորեն  
զցնելու և պաշարի ընտիր մասերից մի քանի նոր կտոր նրա  
առաջը դնելու:

— Նեղովթյուն մի' կրեք, ես շատ ուտողներից չեմ, —  
ասաց վերակացուն և, միևնույն ժամանակ, տապակած հավի  
մի շաղ կտոր աղ ու պղպեղով համեմելով՝ փաթաթեց լոշի  
մեջ, ախորժակով վայելեց, ապա լցված բաժակը մինչև վեր-  
ջը դատարկելով, շարունակեց. — Ճիշտն ասած՝ գեղեցիկ ու  
բախտավոր միտք եք հղացել. ապրիք, եղբայր, ապրիք:  
Այդ օրինակն, անշուշտ, շատերին կրերե ձեր հետեւց... Բայց  
ասում եք, որ դեռ չեք որոշել թե՝ ո՞ր գյուղում պիտի հաս-  
տատվիք:

— Այս, չեմ որոշել:

— Բայց վատ միտք չէ այն որ, ասում եք թե՝ կկամե-  
նայիք իշնել առաջին պատահած գյուղում:

— Ճշմարի՛տ:

— Այո՛, ի՞նչ հարկ կա խտրություն դնել գյուղերի մեջ.  
դրանցից ամեն մեկում ապրում են մեր եղբայրներն ու  
քույրերը: Ահա հենց բախտի բերմունքով ձեր ճանապարհի  
վրա գտնվող առաջին հայ գյուղը ամենից ավելի կարոտ է  
ձեր խնամքին:

— Ո՞րն է այդ գյուղը:

— Չիբովիլոն, մեր հին ճապոտիկը:

— Այո՛, նրա մասին լսեցի ես տիրացուից:

— Պետք է տեսնեք, ե՛ղբայր, թե ո՞րքան բան կա այդ-  
պիսի մի խեղճ գյուղում անելու: Հավատացած եմ, որ շատ  
պիտի մի խեղճ գյուղում անելու: Հավատացած եմ, որ պիտի

կիցների գլուխյունը և միւնույն ժամանակ հիշելով անտաք-  
բերությունն այն մարդկանց, որոնք կարող էին օգնել զյու-  
լացուն յուր վիճակը բարվոքելու, բայց շարին, որովհետեւ  
չկամեցան:

- Կարծում եմ, որ այդ ամենը պիտի ցավեցնե ինձ:
- Եվ, միւնույն ժամանակ, ո՞գեսրեւ ու ստիպե գործել:
- Անշուշտ:
- Եվ երեակալեցեք թե՝ որպիսի քաղցր երանություն  
պիտի զգաք մի օր, երբ ձեր աշխալ տեսնեք այն ամենը, ինչ  
որ արել եք, երբ տեսնեք ամային ձեր ձեռքով շնացած,  
ավերակը վերականգնած, խեղճությունը խնամված, տպի-  
տությունն ու նրանից հառաջացող շարիքները գյուղից հա-  
լածական... երբ տեսնեք թե թշվառ մի ժողովրդի մատադ  
սերունդը ուսուցել ու կրթել եք այնքան, որ նա այժմ կարո-  
ղանում է սեփական աշխատությամբ յուր վիճակը բարեխ-  
քել, յուր ջանքն ու քատինքը արդյունավար գործադրել:

Այս եղանակով երկար խոսելով վերակացուն, այնպես  
էր քաջալերել ու ոգեսրել Կամսարյանին, որ երբ Մոռին  
եկավ Հայտնելու, թե կատքն արդեն լծված պատրաստ է:  
նա վեր թռավ տեղից խոկուն և, էարծես, շտապելով, որ  
ժամ առաջ հասնե որոշված գյուղը և սկիզբ դնե յուր անոնք  
փառավորուղ «մեծ գործին», հարցրեց տիրացուին.

- Դիտե՞ս, քարեկամ, որ ձեր գյուղն եմ գալիս:
- Չէ, աղա, գիտում չեմ, —պատասխանեց տիրացուն:
- Այս՝ գալիս եմ ձեր գյուղը և, գուցե այնտեղ էլ ապ-  
րիմ:
- Վա է՝, —զարժացավ տիրացուն:
- Ի՞նչ վա է՝, գյուղում ապրել չի լինիւ. —մեջ մտավ  
վերակացուն:

— Իի՞ չի ըլիւ Հրեն աշխարքի կեսը գեղումը չի ապ-  
րում, ամա դե, ասըմեմ, աղան բաղաքի սովոր մարդ ա-  
գեղումը ո՞նց կարա ապրիլ:

- Կարող եմ, ինչու չեմ կարող, —հաստատեց Կամսա-  
րյանը:

— Դե որ կարող ես, չն ա լավ կլի էլի... միայն ամոթ շքի հարցնիլը, խի՞ ես ուզում գեղսամն ապրիլ:

— Նրա համար, որ կարողանա ձեղ օդնել, ձեզ բախտավորացնել,—բացատրեց վերակացուն:

Տիրացուն թեպիտ այս բացատրությունից էլ բան չհասկացավ, բայց կամենալով մի քաղաքավարի խոսք ասել, «բարով ա զալի, հազար բարով, աստված թող սրտի խորհուրդը կատարի» ասաց ու հեռացավ:

— Եհ՝ զՃ մարդիկ... չեն ուզում հավատալ թե կպտնվին աշխարհում անձինք, որոնք երբեկցի կհետաքրքրվին իրենց կյանքի դառնություններով և կկամենան օդնել իրենց՝ առանց շահախնդրության,—ասաց Կամսարյանը գրեթե հուզված:

— Եվ իրավունք ունին, որովհետեւ կեղեքիչներից ու վաշխառուներից զատ, գեռ մինչև այսօր չեն տեսել ոչ ոքին իրենցմով հետաքրքրվելիս, —նկատեց վերակացուն:

— Որ այդպես է, մենք կփոխենք դրանց համոզումը և կատիպենք հավատալ, որ շարերից զատ, կան աշխարհում նաև կարեկից մարդիկ:

— Գնա՛ցեք և համոզեցիք, աստված թող օրջնե ձեր ժամապարհը, —ասաց վերակացուն և սեղմելով երիտասարդի ձեռքը, ճանապարհ դրավ նրան մինչև կառքը:

Մի քանի վայրկենից Օվանեսի ձիերը թոցնում էին Կամսարյանին դեպի Դիլիջանի բարձրությունները:

## Ը

Արեք մայր մտնելու մոտ՝ մեր ուզերները հասանամառանոցի Հոչակ վայելող Դիլիջան ավանը:

Այսուղի Կամսարյանը, Օվանեսի ցուցմունքով, հյուրանոցի մնան կրող մի տան մեջ՝ զիշերային հանգստաբան գոտինելոց հետո, ելավ փոքրիկ ավանը դիտելու Փոշոտ խճառու աջ ու ձախ կողմերում կառուցած երկու կարգ քարաշին տները, որոնք ավանի ամբողջությունն էին կազմում և որոնց մեջ ապրում էին ամառանոց եկողները, հաճելի

տպավորություն շարին Կամսարյանի վրա: Նա իսկուցն հիշեց թորով յուր գեղեցիկ վիլաներով, մաքուր փողոցներով, ընդարձակ պարկերով, շրերի առատությամբ և առավել ևս բնակիչների փայլուն արտաքինով ու գրավիչ նիստով կացով և եկավ այն համոզման, որ Դիլիջանը միայն հասարակ մահկանացուների համար կարող է ամառանոց համար միլ:

Բայց երբ խճուղին երկուատեք փակող շինություններից հեռանալով, բարձրացավ դեպի ավանի ձախակողմը, նրա առաջ բացվեցավ մի գեղանկար հորիզոն, որ ամփոփում էր յուր մեջ Աղստեկի ծորահովիտը՝ յուր կարկաչահոս գետակով, դալար արոտներով, ոսկեփայլ արտերով, իսկ մի փոքր հեռվում, խաղաղանիստ գյուղի միաշար տնակներով և նրանց առջև կարգով տարածվող կանաչաղարդ բանջարանոցներով: Յուր կանգ առած տեղից քիչ հեռու սկսվում էր եղևնիների խիտ անտառ, որ գնալով տարածվում էր դեպի հեռավոր լեռների կատարները, որոնց այդ վայրենին ոսկեզօծել էին արևի վերջին շողերը: Զորահովիտը եղերող դիմացի բլուրներից, որոնց հետեւ շուտով պիտի թաքշեր արելը, փշում էր ախորժ զեփլուուր բերելով յուր հետ կենարար մի զով, տոգորված լեռնալին օդի, դալարի և ծաղկիների անուշ բուրմունքով:

Կամսարյանը սկսավ լիքը կրծքով շնչել լեռնալին թարմ օդը և ինքն իրեն խոստովանել, որ փոքր առաջ արած յուր համեմատությամբ մեծ սխալ է գործել՝ թորժոմը գերադասելով Դիլիջանից: Որովհետեւ նա այժմ տեսնում էր, որ եթե առաջինում արհեստականն է փարթամ, վերջինում, ընդհակառակը, գերազանց է բնականը: Եվ այդ կարծիքի վրա նա հաստատվեց ավելի, երբ լեռնալանջից իշխելով, մտավ նորեն ավանը և փոստային կայարանի առաջ բխող հորդ ու սառն աղբյուրից յուր ծարավը հագեցրեց: Այդպիսի անուշը ու բարեհամ ջուր թորժոմն, ի հարկե, չէր տեսած յուր օրում, ինչպես և նրա նեղ, կարծես պատնիշափակ, ցերեկը տոթով, իսկ գիշերը խոնավությամբ լի խորածորը չէր շնչել երբեք

այն թեթև ու անուշ սղոխն ու հովերը, որոնք գիշեր ու ցերեկ գուրգուրում էին Դիլիի առույգ լեռնալանջերը:

Բայց արի՛, տե՛ս, որ հենց այս անմահական աղբյուրից քիչ հեռու, փոստային կայարանի և մասնավոր տների գեպի ծորահովանքը հանող բակերում, բլուրի պես դիպված էին տարիների ընթացքում հավաքված աղբն ու անմաքրությունը, որոնց գարշահոտությունը ապականում էր ամառանոցի շրջակա օդը և դրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում:

— Ահա՛, թե ո՞րտեղ է հարկավոր մեր միջամտությունն ու ազգեցությունը... բնությունը զարդարել է մեր երկիրը յուր լավագույն հարստությամբ, յուր քնքույշ գեղեցկություններով և սակայն մարդկային անճաշակ տգիտությունը այլանդակել է նրան անխղճորեն: Ժամանակ է, արդարն, որ մենք մտնենք ամեն անկյուն և տգիտության բումերը ավերենք ամեն տեղ... մտածեց Կամսարյանը և յուր նվիրումը ավելի ևս կշիռ ստացավ յուր աշբում:

Հետեւալ առավոտ, գեռ արելը շծագած, Կամսարյանը նստած էր Օվանեսի կառքում, որ հանգիստ սուրում էր «Երեւանյան» խճուղիով: Վերջինս Դիլիջանի հարավ-արևմտյան կողմից սկսելով, անցնում էր Շամլուղ գետակի ուղղությամբ, Մայմեխ լեռան ստորոտը ծածկող անտառների միջով և ապա հետզհետե լեռան լանջերը բարձրանալով, պիտի հասներ մինչև նրա կատարը: Արելը դեռ նոր էր Մայմեխի բարձունքը վառում, երբ մեր ուղևորները անցնում էին նրա ստորոտով: Առավոտյան զեփյուրը, որ հով էր բերում սարի լանջերից, մեղմով շարժում էր անտառի ծառերը: Նրանց խուզ շրջյունը խառնվելով Շամլուխի քաղցր խոխոզի և թուշիկների այգածին ճռվողյունի հետ, կազմում էր հաճոյական մի ներդաշնակություն, որ խանգարվում էր երրեմն կառքի կոշտ դղրդյունով:

Երբ ուղղադիր ծմակներն անցնելուց հետո, սկսան դեպի լեռնալանջը բարձրանալ և Շամլուխը ծածկվելով անտառի խորքում, սկսավ յուր խոխոզի խուզ ծայնով ուղեկցել Քանապարհորդներին, տիրացու Մոսին, որ դարձյալ նստած

էր կառապանի կողքին, անհրաժեշտ համարեց հիշեցնել «աղին» յուր երեկվա գիտողությունը:

— Միտդ ա էն, որ ասում ի թե Դիլիջանա գեսի ճամփեն էվելի սիրուն ա, քանզ գենի՞նը: Դե հմի մտիկ տու, տէ՛ս, ըսկի բու օրումը ըսենց տեղեր տեշե՛լ ես:

Կամսարյանը, որ արդեն գրավված էր շրջապատող տեսարաններով, տիրացով «գե հմի մտիկ մուա խոսքի վրա ևս նայեց և տեսավ, արդարե, մի նոր, ակնապարար տեսարան:— Իրենք այդ միջոցին գտնվում էին որոշ բարձրության վրա, իսկ տափարակի ծմակները մնացել էին վար: Բարձրից նայողը տեսնում էր միայն նրանց կատարները, որոնց կանաչը վառվիլ էր արեից երփներանգ գույներով: Այդ վառվով մակերեսութքը նմանում էր նույն վայրկենին լայնածավալ մի ծովակի, որի հեղինակը ալիքները փոխարինում էին ծառերի հովից շարժվող կատարները: Այդ տեսարանը այնքան էր սիրուն ու գրավիչ, որ Կամսարյանը տեղը փոխելով, նրանց գիմացի նստարանի վրա, որպեսզի կարողանա ավելի դյուրությամբ նայիլ ու զմայլվիլ գեղեցիկ հեռանկարով:

Զնացելով որ խճուղին սարի լանջովն էր բարձրանում, այսուամենայնիվ, ծառերը հովանավորում էին նրան: Մեծ մասամբ նաև անցնում էր բնական ծառուղիների միջով, որոնց, երբեմն, փոխարինում էին նաև ժայռերի շարքեր: Իսկ գրանց, յուր հերթում, հովանավորում էին դարձյալ հինավորց ծառեր, որոնք բռասած լինելով ժայռերի վերեւում, այսպեսից իրենց սակարթախիտ ոստերը ձգում, տարածում էին ճանապարհի վրա, որը ճաճախ անցնում էր և՛ սիզավիտ քարձունքներով, ուսկից տեսարանները բացվում էին ավելի շքեղ ու բնդարձակ: Այսպիսի դիրքերից երևում էին Մելքան լեռան անտառապատ լանջերը և նրա մերկ, ծառաղուրկ կատարը, որ, սակայն, պատած էր բաց կանաչ թափշով: Նրան հետեւում էին ուրիշ շատ լեռներ, որոնք գագաթների բարձրագագամի մեկը մյուսին՝ գերազանցելով, հորիզոնը դարձնում էին լսեմ:

— Հրեն Միսիանա սարերը,—բացականչեց հանկարծ

տիրացուն, շժուժալով, կարծես, որ ուսումնական մարդը այդ վեհափառ տեսարանների առաջից անցնում էր լուռ ու մունջ:

— Ո՞րոնք են,—հարցրեց Կամսարյանը, նստելով նախակին տեղը:

— Հրեն, այս, էն որ կատարնին մշուշակալած՝ լեի թե (կարծես) լաղ են անում (ծաղրում են) մնացած սարերի վրա. տենում չե՞ս:

Այս խոսքերով ցույց տվավ տիրացուն Սյունյաց աշխարհի կապուտակ լեռները, որոնց կատարները, կարծես, ծրարվում էին ամպերի մեջ:

Կամսարյանը դիտում էր լեռներով ծածկված այդ հորիզոնը խորին հիացմունքով:

— Քիչ վախտից եղը էս ա հվասարիլ տենք նրանց, շուն էս ճանապարհը բանցրանում ա Մայմեխը վեր տասնըհինգ վերստ,—ավելացրեց տիրացուն:

Բայց նրա «քիչ վախտը» շատ էլ շուտ շանցավ, անթիվ կեռմաններով վերելքը տեսեց մոտ երկու ժամ:

Եվ սակայն Մայմեխի ամենաբարձր լանջերին հասնելուց, արդարեւ, ուղևորներին թվում էր թե իրենք հավասարվել են Սյունյաց լեռների բարձրության:

— Տենո՞ւմ ես, աղա, հրես հվասարվեցինք: Բա էլ Սիսիանը խի՞ ա լաղ անում մեր Մայմեխի վրա,—զվարճախտակեց տիրացուն:

— Զենք հավասարվել, քեզ այդպես է թվում,—պատասխանեց Կամսարյանը:

— Ո՞նց թե հվասարվել չենք. հրես քթիս թուշովը (ուղղությամբ), որ մտիկ եմ տալի, ասես, իմ գլուխն ու Սիսիանա գլուխը մի չվանի են դրած:

— Այդպես կերևա միշտ հեռվից, բայց եթե անցնես քո և դիմացի սարի մեջտեղը գտնվող տարածությունը, կտեսնես, որ սարը հետզհետե բարձրանում է,—բացատրեց երիտասարդը:

— Դէհ (այդպես) բան էլ կա՞:

— Հաւպա՛:

— Բա էդ խի՞ դհենց ա ըլում,—հետաքրքրվեց տիրացում:

— Նրա համար, որ երկիրը կոլոր է և այդ պատճառով էլ քանի սարը հեռու է լինում, այնքան էլ նա փոքր է երեսում, որովհետև հեռվից մենք տեսնում ենք միայն նրա վերին մասը: Խսկ հետո որքան մոտենում ենք, այնքան նա միծանում է, որովհետև հետզհետեւ տեսնում ենք նաև միշի և ապագարի մասերը:

Տիրացուն այդ բացատրությունից ոչինչ չհասկացավ, բայց երկրի կոլոր լինելովը հետաքրքրվեց:

— Ասում ես երկիրը կոր ա՞:

— Հա՛:

— Յանի (այսինքն) ո՞նց ա կլոր, տափակ թաքախի: (խան) նմա՞ն, թե՞ կլոր ձմերուկի:

— Կոլոր ձմերուկի:

— Բա էդ ո՞նց կըլի, — զարմացավ տիրացուն:

— Այդպես է, — կրկնեց կամսարյանը:

— Ա՛ խի՞ գիտո՞ւմ չես, որ դհենց ա՞ , — մեջ մտավ օվանեսը:

Վերջինի միշամտությունը գրգռեց տիրացուին:

— Սրան մտիկ տու, լեյի ինքը գիտում ա, — նկատեց նախեթ խեթ նայելով կառապանին:

— Բա գիտում չե՞մ, — վստահորեն հարցրեց Օվանեսը:

— Դե որ գիտում ես, ասա՛ տենեմ ո՞նց ա կլոր:

— Հրեն աղան ասեց է՞լի, ձմերուկի նման կլոր ա:

— Ա, շա՛շ, ձմերուկի նման, որ կլոր ըլի, բա թու միւ միւ (մի՞ գլորվիլ) ծովն ընկնի՞ւ:

— Ես ի՞մ... տարակուանց Օվանեսը, տեսնելով որ ներտեղը լծվեցավ:

Կամսարյանը ծիծաղեց:

— Խի՞ ես ծիծաղում, աղա՛, սո՞ւտ եմ ասում, — դարձավ նրան տիրացուն:

— Ա՛յ տղա, դու կարո՞ղ ես քո բերանի կամ աշքի մեջն  
ընկնել, —հարցրեց Պետրոսը:

— Բա ո՞նց կարամ ընկնիլ իմ բերանը:

— Հապա ծովերն էլ գտնվում են երկրի վրա, երկիրն  
ինչպե՞ս կարող է նրանց մեջն ընկնել:

— Երկրի վրա ծովեր կան, գիտում եմ, հրես մինն էլ  
մեր առաջին, Սևանա ծովն ա, ամա դե ես էդ ծովերը չեմ  
ասում:

— Հապա ո՞րը:

— Ասըմ են, աշխարհը որ վերջանում ա, դենը շատ  
մենծ, անտակ ծով կա, որ ըսկի ճոնդ չունի (ծայր): Հմի որ  
ասում ես՝ աշխարհը կլոր ա, ես էլ ասում եմ՝ բա խի՞ զի  
թոլ ըլում էդ ծովն ընկնում:

Կամսարյանը նորեն ծիծաղեց և ապա տեսնելով, որ  
տիրացուն տարակուսած նայում է իրեն, սկսեց մի քանի հա-  
մառոտ տեղեկություններ տալ նրան երկրի, լուսնի ու արեկի  
կազմության և նրանց շարժումների մասին:

Մոսին ուշադրությամբ լսում էր նրան և երբեմն երբեմն  
պլուխը շարժելով ասում.

— Հետ տե՛ս ինչե՞ր ա ըլե աշխարում է՞...փառքդ շատ  
ըլի, աստված զան, բա էս խի՞ մեզ ըսենց հայվան ես ստեղ-  
ծել:

— Ա՛ Մոս, ես ընենց եմ՝ մացել թե դու էդ բաները  
չիմ (բոլորը) գիտում ես. բա էլ ընչի՞ վարժապետ ես, որ  
բան չես՝ մանում, —նկատեց կառապանը շարախնդությամբ:

— Ա, ես ո՞րդիան՝ մանամ, ես հու խալիս (իսկական)  
վարժապետ չեմ, —խոստովանեց տիրացուն լուր տկարու-  
թյունը:

— Բա խի՞ ես ըեխանց կարդացնում:

— Ընդուր որ կարդացրածս իմանում եմ,

— Ի՞նչ ես կարդացնում, —հետաքրքրվեց Կամսարյանը:

— Ի՞նչ որ ձեռք ա տալիս:

— Օրինա՞կ:

- Օրինակ, Սաղմոս, Պարգև-Մանկանց, Մայրենի լեզու, Ավետարան, Եփրեմ-խորի...  
 — Առաջ ո՞րն ես կարդացնում:  
 — Առաջ «այբ-բենի» տեսրը, եղուց ով ինչ գիր բերում ա, նրանից էլ սկսում եմ;  
 — Ինչպես, ամեն մեկը մի շոկ գրքի վրա՝ է կարդում:  
 — Բա՞:  
 — Ինչո՞ւ ամենքին մի տեսակ գրքի վրա չես կարդացնում:  
 — Էղ ո՞նց կըլի: Ընենց մարդ կա, որ տանը Սաղմոս ունի, ընենց մարդ էլ կա, որ Պարգև-Մանկանց ունի, յա չէ, Ավետարան, յա Մայրենի լեզու, բերում ա հու ասում. վարժապետ, քե մատաղ, բիսին էս գիրը կարդացրու, հազիր տանն ունենք, մին էլ վեր չկենամ գնամ Դիլի, յա Բեան, նոր մեկելանց գիր առնեմ, աղքատ մարդ եմ, կարալ չեմ գրի փող տալ... ես էլ վեր եմ ունում էն գիրը կարդացնում:  
 — Հապա քո աշակերտները ոչինչ չե՞ն հարցնում քեզ երկրի, ծովերի կամ այլ այդ տեսակ բաների մասին:  
 — Պատահում ա, որ հարցնում են:  
 — Էհ, դու ի՞նչ ես պատասխանում:  
 — Ինչ որ մանում եմ:  
 — Իսկ դու բան չես իմանում:  
 — Դե շիմացած վախտն էլ տողաշարով (քանոնով) գլխին տալիս եմ հու ասում, «ձենդ կտրի, դասդ սովորի, էղ քու ի՞նչ մանալու բանն ա, որ հարցնում ես». Էն ա խեղճն էլ գլուխը քաշ ա գցում, գիրը կարդում:  
 — Այ, քու հերը լիս դառնա, ասիլ վարժապետը դու ես, որ կաս,—նկատեց Օվանեսը ծիծաղելով:  
 Բայց այս անգամ արդեն Կամսարյանը չծիծաղեց, նա սկսավ մտածել լսածների մասին և տեսավ, որ դրանք շատ ցավալի են: Այս առթիվ, գուցե, նա, մինչկ անգամ, տիսրեր, եթե մի փոքր ավելի խորասուզվեր յուր մտածմունքների մեջ, եթե խորհեր այն մասին, թե ի՞նչ թշվառ դրության մեջ պիտի դտնվի մի ժողովուրդ, որի առաջավոր մարդը—տիրա-

ցուն, կամ՝ վարժապետը խարիսափում է այս աստիճան տգի-  
տության մեջ: Բայց տեսարանների հանկարծական փոփո-  
խությունը նորեն դրավեց նրա ուշադրությունը: Օվանեսի  
կառքը քերում էր այժմ Մայմեխի կատարը և Հին Գուգարաց  
սահմանն անցնելով, մտնում Սյունյաց գավառամասը: Այս-  
տեղ արդեն հետպհետեւ նվազում էին անտառները և սպառում  
մացառուար, իսկ դրանց փոխարինում էին սիզավետ լեռնա-  
դաշտեր և գեղեցիկ մարմանդներ, ուր խոտը գունավորված  
երփներանգ ծաղիկներով, ծածանում էր կանգնաշափ բարձ-  
րությամբ: Լեռնային հովերը խաղում էին այդ դալարազվարծ  
մարգերում քաղցր ու մեղմաշունչ, իսկ արևի շողերը ոսկե-  
զօծում կանաչը, ոչ թե նրանց ջերմացնելու, այլ փայլեցնե-  
լու շափով: Երիտասարդը յուր օրում շէր տեսած այդպիսի  
ճոխ ծաղիկ ու կանաչ նա հիացած նայում էր աջ ու ձախ և  
ինքն իրեն մտածում.

— «Ափո՞ս, ինչո՞ւ բնությունը այսպիսի բարձրության  
վրա է հանել այս հրաշալի արոտները: Մի՞թե գեղջուկի հո-  
տերն ու նախիրը կարո՞ղ են երբենից օգտվել նրանցից»:  
Բայց հաղիվ անցան մի քանի րոպեներ և ահա նա տնտեսվ,  
որ հեռվում խոտը շարե շար հարել ու փոել են գետնին ցա-  
մաքեցնելու համար:

— «Ուրեմն այս բարձրության վրա էլ մարդիկ են ապ-  
րեւմ», — մտածեց նա և իսկույն հիշեց յուր աշխատասեր և  
հակատի քրտինքով ապրող ազգակիցներին:

Մի փոքր էլ առաջանալով նա տեսավ խմբակներ մարդ-  
կանց ու կանանց, տղաների և աղջկերանց, որոնցից ոմանք  
լեռնալանջերի վրա, մցուաները՝ լեռնահովտում, կամ ցամա-  
քած խոտն էին հավաքում, կամ սայլերի վրա բարձում, իսկ  
ավելի փոքրիկները՝ խաղում ու վազվզում էին կանաչ արոտ-  
ներում:

Երիտասարդը հետաքրքրությամբ դիտում էր այդ շար-  
ժուն բազմությունը և աշխատում ծանոթանալ այդտեղի հա-  
յոց տիպերին: Բայց ո՞րքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ

տիրացոն բացատրեց, որ դրանք հայեր չեն, այլ մալական-ներ—Սեմյոնովկա գյուղից:

Իրավ է, Պետրոսը գիտեր, որ Սեմյոնովկան առաջիկա կայարանն է և Սյունյաց սահմանակից այդ սարերի վրա կարելի էր երեակայել մի փոստային կայարան, բայց մալականի մի բազմամարդ գյուղ նա չէր սպասում տեսնել: Եվ ի՞նչ հրաշալի հովիտներ, մարդեր ու մարմանդներ էին շըրշապատում այդ գյուղացիներին. ի՞նչ շքեղ արոտներ, ի՞նչ հորդառատ աղբյուրներ, որոնց մասին պատմում էին Մոսին ու Օվանեսը: Դա, արդարեւ, մի լեռնային դրախտ էր:

Երբ նրանք հասան կայարանին, Կամսարյանը հաճույքով սկսավ դիտել ավանը, որ աշքի էր ընկնում յուր լայնադիր փողոցով և նրա ուղղությամբ շինված կոկիկ, մաքուր ու սպիտակ տնակներով: Դրանցից շատերի առաջ գտնվում էին փոքրիկ ծաղկոցներ, ուր նարդիսի ու նարնջածաղկի հետ միասին փթթում էր մալիսչան վարդ, թեպետ հունիսը վերջանալու վրա էր: Տներից քիչ հեռու ձգվում էին բանջարանոցներ, կաղամբի և գետնախնձորի ցանքեր ու արևածաղկի ընդարձակ ածուներ: Ավելի հեռուն տարածվում էին գյուղացիների հարուստ արտերք: Ավանի բնակիչները շրջապատող բնության նման ուրախ, զգարթ և կենդանությամբ լի մարդիկ երեացին: Կամսարյանը սիրով պատասխանեց նրանցից մի քանիսի քաղաքավարի ողջույնին և սիրով էլ կիսուեր նրանց հետ, եթե Օվանեսն յուր ձիերի շնորհքը մալականներին ցուց տալու նպատակով, շթոցներ նրանց գյուղի միջով, ինչպես արագածին թուղթների:

Եվ որովհետեւ Պետրոսը փափագում էր Սևանը վայրկյան առաջ տեսնել, ուստի Օվանեսի եռանդը չուզեց շափակորել: Նա գոհ եղավ Սեմյոնովկայի վրա մի վերջին հայացք ձգելով և ինքն իրեն մտածելով՝ «Եթե սա է գյուղ կոչվածը, ապա ուրիմն, կարելի է թե՝ ապրել և թե՝ գործել սրա մեջ»:

Սեմյոնովկայից ճանապարհը սկսում էր փոքր ինչ ցածրանալ, իսկ բնության շքեղությունները նվազում էին: Մի քանի կանաչկոտ բլրակներ անցնելուց հետո, երեացին Զի-

բուխլուի աղքատիկ ցանքերը՝ հարուստ սևահողի վրա։ Կամ-  
սարյանը հենց նոր սկսել էր դիտել նրանց և զարմանալ այս-  
տարօրինակ հակադրության վրա, երբ մի նոր ու շքեղ տե-  
սարան գրավեց նրա ուշադրությունը։ Նրա աչքերի առաջ  
բացվեցավ հանկարծ մի բացկապուտակ դաշտ, որին նա  
սկզբում հորիզոնը փակող մշուշ կարծեց։ Սակայն տիրացով  
«ահա ծովը» բացականշությունը սթափեցրեց նրան։ Նա,  
ուրեմն, հասել էր Հայաստանի բնության հրաշալիքներից  
մինին—պատմական Գեղամա ծովակին։ Եվ եթե սկզբում  
շկարողացավ գուշակել, թե յուր տեսածը, իրոք, Սևանն է,  
նա իրավունք ուներ, որովհետև հեշտ չէր հավատալ, թե  
զեռների այդ բարձրության վրա կարող է գտնվիլ այսքան  
ընդարձակ մի լիճ, որին, իրավմամբ, ծովակ անուն են  
տվել։ Իրավ է, Պետրոսը աշխարհագրությունից գիտեր, որ  
Անդյան լեռները, Ալպյան ու Զվիցերական բարձրավան-  
դակները շատ այդպիսի գեղեցկություններ ունին, այսուա-  
մենայնիվ, նման շքեղություն յուր հայրենիքին հատկացնելը  
շափաղանցություն կհամարեր։ Բայց այժմ, ահա՛, նա տես-  
նում է Սևանը յուր առաջ փոված, տարածված 6—7000 ոտք  
բարձրություն ունեցող լեռների վրա։ Եվ ի՞նչպես չհրճվեր,  
ի՞նչպես յուր հայացքը չհափշտակվեր նրանով... Կամսա-  
րյանը բարձրացավ յուր նստարանից և կառքի մեջ կանգնե-  
լով, սկսավ գիտել ծովակի սիրուն մակերևույթը, որի կա-  
պուտակը շարունակ փոխվում էր՝ առնելով երբեմն պարզ  
փիրուզի, իսկ երբեմն գորշ մշուշի գույն, նայելով թե կառքն  
ի՞նչ ուղղությամբ էր ընթանում։ Այսպես բավական տեղ նա  
կանգնած էր կառքում, մինչև որ վերջինս սկսավ մոտենալ  
Զիբուխլուփն։ Այստեղից էլ ծովակը թվում էր անշարժ և  
միապաղադ։ Միայն նրա պայծառ հայելու վրա նշմարվում  
էին հետզետե բաց-կապտագույն ժապավեններ, որոնք հո-  
սանուած սահմաններն էին ակոսում։ Շուտով երևաց և Սևա-  
նի կղզին, որի տեսքը հեռվից թեպետ շոր ու ցամաք, այ-  
սուամենայնիվ, Կամսարյանին հետաքրքրեց հուզելու շափ,  
որովհետև անցյալից հիշեցրեց նրան դեպքեր, որոնք կապ

ունեին Ալևն անվան հետ և որոնց մասին նա մտածել էլք  
Հաճախ:

Մինչդեռ երիտասարդը սրտահույզ դիտում էր կղզյակն  
ու ծովը և նրանց շրջապատող լեռների տեսարանը, Օվանե-  
սը կանգնեցրեց կտոքը և հարցրեց.

- Ա'ղա, ո՞ր դի տես վեր գալ (իշնել):
- Ինչպե՞ս թե վեր գալ, — զարմացավ Կամսարյանը:
- Բա ըստի չե՞ս մնալու:
- Այստեղ ինչո՞ւ մնամ, Զիբուխու պիտի գնանք:
- Սրանե լավ Զիբուխու կըլի՞՝, ո՞նկատեց կառապանը՝  
ժիժաղելով:
- Ո՞րը, սա՞,— հարցրեց Կամսարյանը զարմացմամբ  
շուրջը նայելով:
- Հա՛, ապա՛, սա՛ է մեր գեղը. — Հաստատեց տիրա-  
ցուն՝ ինքնագոհ ժպտալով:

Կամսարյանը հանկարծակիի եկածի նման մի վայրկյան  
մնաց անխոս, ապա նորեն սկսավ յուր շուրջը նայել, տես-  
նելու համար այն, ինչ որ գյուղացին գյուղացին էր անվանում:

Տեղը, ուր կանգ էր առել կառքը, շինամիջով անցնող  
խճուղին էր, որ գեղնագող ժապավենի նման ակոսում էր  
գյուղամիջի սեւահողը: Թվում էր, թե՝ դա միակ մաքոր տեղն  
է ա՛յն բոլոր տարածության վրա, որ գյուղի շրջադին ամ-  
փոփում էր յուր մեջ: Վասն զի, մյուս բոլոր տեղերում գե-  
տինը ծածկված էր աղբի շերտերով և աթարի (քակոր)՝  
փշուրներով, որոնցից նա խանձվել, ու գույն էր առել: Այդ  
ընդարձակ աղբյուսի վրա՝ փողոցների փոխարեն, ընկած  
էին ինչ որ ծուռ ու մոռ անցքեր, իսկ դրանց երկու կողմե-  
րում ցրված էին անկարգ ու շեղ ուղղությամբ թմբածե, հո-  
ղածածկ բարձրություններ, որոնց մի կողմերը կպած լինելով  
գետնին, մյուսները բարձրանում էին խանձաքարերով շին-  
ված ցածուն պատերի վրա: Դրանք գյուղացիների տնակներն  
էին, որոնք սակայն չէին նմանում մարդկային բնակարան-  
ների: Որովհետեւ մեծ մասամբ զուրկ էին պատուհաններից,  
իսկ ելումուտի համար ունեին մի մի հատ նեղ, ցածուն դըռ-

նակներ, որոնցից անցնելու համար պետք էր անշուշտ՝ կորանալ։ Կույսն այդ անակները ստանում էին երդիկներից, որոնցից ամեն կտուրի վրա գտնվում էր մի հատ։ Այդ տոմ համարվող խորշերից ոչ մեկի առաջ չէր երևում կանաչնշուշտ։ Ինկ գյուղի ամբողջ տարածության վրա չկար մի հատձառ և ոչ իսկ մի թուփ։ Դրանց փոխարեն աշքի էին ընկնում գարշաճոտ քակորի բլրակներ, որոնցից ամեն տուն ամերժի, կամ երկու հատ՝ փառքով բազմեցրած սեփական բակում, կամ կողքին գտնվող աղատ գետնի վրա։

Գյուղի ընդհանուր տեսարանը այնպիսի տիսուր ու վհատեցուցիչ ազգեցություն էր անում, որ Կամսարյանը քիչ առաջ անցած Սեմյոնովկան սրա հետ համեմատելով չէր ուզում հավատալ թե ինքն իսկապես գտնվում է գյուղի մեջ, այն էլ Զիբովլուփի, որի անունն այնքան անգամ լսել էր ճանապարհին։ Ուստի յուր տարակուսանքը փարատելու համար երկրորդ անգամ հարցրեց թե՝ իրո՞ք, սա է Զիբովլուն, թե՞ ոչ։

— Սա՛ ա, բա՛՛ Հրե՛ն, չե՞ս տենում մեր Աստվածածինը. Ծին եղի ա, մի քիչ դենն էլ մեր դերի (քահանայի) տունն ա. Հրե՛ն ինքն էլ մրոքը շալին տալին ցան ա (աթար) դարսում։ Էն կուսինն էլ տանուաերինն աւ Բստիան էլ մի քիչ որ աշմիշ ըլենք, շենի աղբյուրն ա, լավ ջուր ունի, շա՞տ, Մարալինչի տակիցն ա գալիս։ Մի քիչ դենն էլ Բալըղայն աւ Շովն էլ հու ամեն օր առաջին աւ Մի խոսքով լավ գեղ աւ տեսնիլու բաներ շատ ունի. Հրեդ ման կգաս կտեսնես։

Կամսարյանը լսում էր տիրացուին և աշքերը մեքենայաբար դարձնում դես ու դեն, առանց, սակայն, ուշադրություն դարձնելու նրա ցույց տված տեղերի վրա։ Որովհետեւ այդ վայրկենին նրան զբաղեցնում էր այն միտքը թե՛ եթի, իրավ, սա է հայ գյուղացու բնակավայրը, ապա հազիվ թե հնար լինի իրեն ապրել այդպիսի տեղ ու գործելլ Եվ առկայն, չնայելով այդ կանխաճաս վհատության, նա որոշեց մտնել այդ «գյուղ» կոչված ավերանոցը, գոնե; որոշ շափով նրան ճանաչելու և ուսումնասիրելու համար։

Տիրացովի խորհրդով և Կամսարյանի համաձայնությամբ, Օվանեսը կառքը քշեց դեպի տանուտերի տոմսը Գյուղի շները, որոնք սովոր էին լուսթյամբ նայելու խճուղին անցնող ճանապարհորդներին, մեծ աղաղակ բարձրացրին գյուղը մտնել համարձակող կառքի և ձիերի դեմ, համարելով ոյդ անսովոր մի բան: Տիրացու Մոսին, իբրև ծանոթ անձն, յուր աստող հրամաններն արձակեց շների դեմ, մի քանի՛ սին, մինչև անգամ, հականե անվանե կանչելով: Աղմկարները կամաց-կամաց ցրվեցան և կառքը կանգ առավ տանուտերի տան առաջ:

թ

— Աղջի, քյովսվեն տա՞նն ա,—հեղինակավոր ձայնով հարցրեց Մոսին՝ տարօրինակ հագուստներով և գլուխը փաթաթած միջահասակ մի կնոջ, որ կանգնած էր բակում:

Վերջինս առանց ձայն հանելու ձեռքով հովանի արակ աշքերին, իբրև թի դեմքը ծածկել ուզելով, ապա երեսը մի կողմը ծուած, շարժեց գլուխը բացասական կերպով, որ կնշանակեր թի տանը չէ:

— Բա ո՞ւր ա:

Կինը ձեռքի շարժումով ցուց տվավ գյուղի դուրսը, կամենալով հասկացնել, թի հանգումն է: Բայց, միևնույն ժամանակ, գուշակելով որ նորեկը, անշուշտ, հյուր պիտի լինի իրենց, մոտեցավ դռան առաջ խաղացող տղային և նրա բերանով խնդրեց, որ «աղան» շնորհ անե կառքից իշնելու, մինչև որ ինքը մարդ կուղարկե ամուսնու հետեւց:

Կամսարյանն իջավ: Մոսին ու Օվանեսը վար առին կառքից նրա իրեղենները: Իսկ մինչև այդ, գեղջկուհին ներս վագեց տուն և բերելով այդտեղից մաքուր գորգ, փոնց սրահում դրված թախտի վրա: Ապա Մոսու միջոցով խնդրելով հյուրին հանգստանալ, ինքն շտապեց հարևաններից մեկին յուր մարդու հետեւ ուղարկելու:

Երիտասարդը մի վայրկյան գյուղի՝ յուր վրա արած

տպավլորությունը մոռանալով, սկսավ հետաքրքրվել նշանացի խոսող կնօջ անձնավորությամբ: Նա նրան սկզբում համբոի տեղ էր գրել: Բայց հետո տեսնելով, որ խոսում է տղայի և տպա Մոսու հետ, հարցրեց վերջինիս՝ այդ մնչակատակի պատճառը:

— Զահիլ կնանիքը անխոս են ըլում ըստեղ, — պատասխանեց տիրացուն:

— Ի՞նչ է նշանակում անխոս լինել:

— Նշանակում ա, որ նրանք չպետք ա իրանցից մենակրի, յա դարիր (օտար) մարդկանց հետ խոսան:

— Ինչո՞ւ:

— Ամոթ ա:

— Ինչպե՞ս թե ամոթ է, — դարմացավ Կամսարյանը:

— Բա շահել կնիկը, որ շանեն (ծնուռը) ցցի իրանից մենձի հետ դրից անի, ամոթ չի:

— Զէ, ինչո՞ւ է ամոթ:

— Էս երկրումն ամոթ ա:

— Պատճա՞ռը:

— Ես ի՞մ, վաղուցվա դրած ագաթ (սովորություն) ա:

— Խսկ քեզ հետ ինչո՞ւ էր խոսում:

— Ինձ, միթում, մենձի տեղ չի զցում, — պատասխանեց տիրացուն, կարծես վիրավորված:

— Ուրեմն կցանկանայիր, որ քեզ հետ է՞ւ շխոսերու

— Բա խի՞ չի ցանկանալ, մարդ չի՞ ուզիւ, որ իրան պատիվ տան:

— Դա պատիվ է:

— Պատիվ ա, բա՞:

Կամսարյանը այս նորությունը լսում էր դարմանալով և չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է, որ մարդ արարածը չխոսի յուր նմանի հետ, կամ թե այդ խոսելու համարե ամոթ, պատիվ, կամ անպատվություն: Այդպիսի ըմբռնումներ չէին կարող ունենալ, նույնիսկ Աֆրիկայի վայրենիները, իսկ սրանք հո, համեմատարար, քաղաքակրթված երկրի բնակիչներ էին, հետևապես և պետք է ազատ լինեին

այդպիսի վայրենությունից։ Բայց և այնպես փաստը լուր  
առաջն էր։ Նա տեսնում էր մի կին, առողջ կազմվածքով,  
գործելու կարող, ընտանիքին պիտանի և, սակայն, զրկված  
աստուծու տված մեծագույն բարիքից, —խոսելու ազատու-  
թյունից և այդպիսի մի անհեթեթության իրավունքը պաշտ-  
անում էր գյուղի գրագետ մարդը։

Երիտասարդը դեռ զբաղված էր այս մտածությամբ, երբ  
վերջինս շնորհակալություն անելով նրան՝ իրեն արած բա-  
րության համար, առավ յուր աղքատիկ կապոցը և հեռա-  
ցավ, խոստանալով դարձյալ գալ «աղայի» // կոչին, երբ սա  
կհրամայե։

Մի փոքր հետո ներկայացավ կառապան Օվանեսը և  
ինդրեց նրան արձակել իրեն։

- Ի՞նչ, դու վերադառնո՞ւմ ես, — հարցրեց Պետրոսը։
- Հրամել ես, աղա։
- Մեղք չե՞ն ձիերդ, ինչո՞ւ չես հանգստացնում։
- Հրես գնամ Սիմոնովկումը կորմ կտամ, ընտեղ է ք  
կհանգստացնեմ։
- Ինչո՞ւ այստեղ չես տալիս։
- Բատեղ դժվար ար։
- Ինչո՞ւ է դժվար։
- Ապուռ չըկա (կեր), էլածն էլ թանկ ար։
- Իսկ այնտեղ աժա՞ն է։
- Աժան ար, բա՛։
- Ինչո՞ւ է այդպիս։
- Բնդուր, որ ըստեղ հայեր են ապրում, ընտեղ՝ մալա-  
կաններ։
- Այդ ի՞նչ է նշանակում։
- Էղ էն անշանակում, որ հայերը աշիզ (տկար) մար-  
դիկ են։ Էնքան են կարում վար ու ցանք անել, որ մենակ  
իրանց անշանակում կալի։ Նրանցից մինը, թե որ էսօր ինձ մի  
կոդ (շափ) գարի ծախի, էգուց ինքը պտի փող տա մալա-  
կանիցն առնի։ Ամա դե մալականը դհե չի։ նա համ փոռ  
ունի, համ դոչաղ ար, համ էլ բանի դայդան (եղանակը) գի-  
տական առներ։

«ոռում աւ Վարն էլ ա շատ անում, խոտն էլ ա շատ հարում,  
Ֆենց (այնպես) որ, իրան էլ ա հերիք գալի, ուրիշին էլ:  
Կամսարյանի գաղափարը հայ գյուղացու արժանիքների  
մասին արդեն փոխված էր, կառապանի բացատրություններն  
էլ պակասը լրացրին: Ուրիշ անգամ, գուցե, նա ուշադրու-  
թյուն շլարձներ այդպիսի խոսքերի վրա, բայց այս անգամ,  
նույնիսկ լուրջ մտածությանց առարկա դարձրեց նրանց:—  
«Իրավ, եթե մի գյուղ, յուր տնտեսական կարողությամբ,  
այնքան է ողորմելի, որ մինչև իսկ մի կառապան դժվարա-  
նում է այդտեղ յուր ծիրարը կերակրել, մի՞թե սա չի նշանա-  
կում, թե նրա բնակիչները այնքան են ծովը, անհոգ ու անշը-  
նորհք, որ նրանց մեջ ապրել ու գործելը ոչ միայն դժվար,  
այլ և անհնարին է...»

Այսպես մտածեց երիտասարդը և յուր վերջին հետեւու-  
թյունը, վոլոսանակ նրան տիսրեցնելու, ընդհակառակը, պատ-  
ճառեց մի թաքուն հաճույք, որը բխում էր այն նորածին  
մցրից, թե գուցե տեղական հանգամանքներն ստիպեն իրեն,  
հակառակ յուր կամքին, դրժել յուր ովստին: Այն ժամանակ,  
իհարկե, ինքն այդ բանում մեղավոր չէր լինիլ. չէ՝ որ տված  
խոսքը նա արդեն կատարել է՝ հեռանալով քաղաքից և գյուղ  
գալով: Այժմ ի՞նչ անե, որ գյուղն ինքն է անհնար դարձնում  
այդտեղ մնալն ու գործելը... Այսուամենայնիվ, այս մտա-  
ծությունից առաջացած հաճույքը նա լիովին շվայելեց, վա-  
խենալով, թե մի գուցե ինքն սխալվում է՝ շտապով այդպիսի  
կարծիք կազմելովը, կամ թե գուցե հայ գյուղացին դեռ ունի  
համակրելի կողմեր, որոնք տակավին անծանոթ են իրեն և  
որոնց պատճառով թերևս, ինքն ապագայում տանջվի խղճից,  
եթե այսօր կայացնե մի սխալ որոշում:

Իսկ այդ «որոշումը»... Ու, նա դրա համար դեռ չի  
մտածիլ, չէ կարող մտածել... Ի՞նչ, դուք կարծում եք, թե նա  
անհնարին գտնելով հայ գյուղում ապրելն ու գործելը, կորո-  
շե ձգել ու հեռանա՞լ, ոչ այդպիսի բան չի անիլ: Դրա նման  
մի միտք, այս՛, անցավ նրա գլխով, երբ կառապանը խոսում  
էր, բայց դա միայն մի ցոլք էր, մի չնշին ասուա, որ վայր-

կենաբար վիայլեց յուր մտքի աշխարհի հորիզոնի վրա և անհետացավ; Խսկ այնուհետև նրա հոգու աշքերը դարձլաւ մնացին սևեռած այն լուսավոր կետին, որի վրա գրված էր Հայ գյուղացու բարօրության համար աշխատելու յուր հաստատում վճիռը; Եվ նա շարունակ կնայե՛ այդ լուսին՝ ընտրած ճանապարհից շեղվելու համար; Խսկ առաջման կաշխատելու գյուղը, նորից լսել, քննել, հետազոտել... Անշուշտ նա դեռ շատ բան չգիտե, և գուցե հենց այդ չպիտցածներն են, որոնք նորից պիտի ոգևորեն իրեն... Այսպես էր խոսում երիտասարդ Կամսարյանի երկու ժեսերից մինը, մինչդեռ մյուսը՝ կարծես սիրով սպասում էր, որ նոր լսածն ու տեսածը, քննածն ու հետազոտածը հաստատեն դարձյալ այն, ինչ որ կա, ինչ որ մինչ այդ երևան էր եկել...

Այս պատճառով նա հանգիստ սրտով վճարեց կառապանին յուր հասանելիքը և ճանապարհ դրավ նրան:

Շուտով հասավ այսուղի և տանուտերը: Դա միջահասակ, ամրակազմ, խոշոր դիմագծերով, խելացի աշքերով և բարեդեմ մի մարդ էր: Տան պատին հենելով ձեռքն ոմնեցած փոցխը, որով հենց նոր խոտ էր հավաքել դաշտում, մոտեցավ հյուրին, քաղցրաժպիտ ողջունեց և, շնայելով որ նրա ո՞վ և ո՞րտեղից լինելը չփիտեր, այսուամենայնիվ, սկսավ հարցնել նրա առողջությունից, ուղևորության հանգամանքներից և ընդ նմին հայտնել յուր շնորհակալությունը, որ «աղան» պատիվ էր արել՝ յուր տանը հյուր լինելու:

Կամսարյանն յուր կողմից հարկ եղածը պատասխանեց՝ հայտնելով նրան յո՞ւր ո՞վ և ո՞րտեղացի լինելը և ապա բացարեց, որ ճանապարհորդելու նպատակով է, որ գտնվում է այժմ Զիբուխույում:

— Մեր գեղից շատերն են ընցնում՝ էթում երևան, Հեղմիածին, յա էն տեղից գալում հիջնում Թիլիշան ու ուզիշ յաներ (կողմեր), համա ըսկի մեկն էլ չի կայնում (մնում) էս գեղը: Էս մե զոկ պատիվ ա, որ արել ես մեզի... խոսեց տաշնութերը Բայազետցոց բարբառով:

\* Զիբուխույունները գաղթած են Հին Բայազետի կողմերից (Արծագից):

- Ինչո՞ւ չեն մնում, — հետաքրքրվեց երիտասարդը:
- Ընդուր որ մեր կուզտ (մոտ) տենալու զատ չկա:
- Այո՛, ձեր գյուղը շատ խղճուկ բան է, — նկատեց

**Պետքում:**

- Հմմեն (ամեն) գեղերն էլ էսենց ին, — հարեց տանուտերը:

— Սիմալվում եք: Քիչ առաջ անցա Սիմյոնովկայի միջով և նա բոլորովին ուրիշ գյուղ երևաց ինձ: Այնտեղ կային ոփրուն տներ, լայն և ուղիղ փողոց, ծառեր, բանջարանոցներ, իսկ ձեր գյո՞ւղն... այս ի՞նչ է. կարծես շեն չե՞ն, այլ ամերանց:

- Դորթ ա հրամանքդ, Սիմյոնովկում քո ասած հմմեն բան էլ կա, գե ախր էն մալականի գեղ ա, էս խայի:

«Սա էլ նույն է ասում, ինչ որ կառապանը» մտածեց Կամսարյանը մի առանձին գոհովթյամբ և ապա հարցրեց. — Ուրեմն հայի գյուղը չի՞ կարող լավ լինե՞լ:

- Դե իմա՞լ (ի՞նչպես) ըլնի լավ, գեղ ա է՞լի. գեղ դհա (ուրիշ կերպ) իմա՞լ կըլնի:

— Հեր-օրհնված, Սիմյոնովկան էլ գյուղ չէ՞:

— Հրամել եք, գեղ ա:

— Է՞ս, նա ի՞նչու է լավ:

— Ասի է՞լի, ընդուր, որ մալակնի գեղ ա:

— Ուրեմն, որ հայի լիներ, պետք է վատ լիներ:

— Հալբաթ որ (իհարկե):

— Ինչո՞ւ:

— Ընդուր, որ խայն հմմեն բանի մեջ անշնորք ա:

- Ուրեմն, հայոց գյուղերն ամեն տեղ էլ նման են ձերինին:

— Խա, էդենց ա:

- Ամեն տեղ էլ այսպես չո՞ր, ցամա՞ք, ծուռումուն փողոցներո՞վ, հողե տնակներո՞վ, կեղտոտ բակերո՞վ:

— Խա, հրամել եք:

- Եվ չի՞ գտնվի հայ գյուղ, որ ծառազարդ լինի. ուղիղ փողոցներ, սիրում տներ, ալպիներ, ծաղկանոցներ և այլ այս տեսակ բաներ ունենա՞:

— Ի՞նչ ասեմ. կը լի որ պատայի խարիրի (Հարյուրի) մեջ մե խատ, համա էն էլ հրամանքիդ ասածի նման շընի. ժողովութեան բաներ շատ կը լի: Ի՞նչ ասեմ, կպատայի, որ ըլնին էլի նենց գեղեր, որ բակերի մեջ մե քանի խատ ծառ քընի, յա մե պստիկ բախչա, համա տներն ու բուշերն ինենց կը լի: իմալ մերն ա: Ես շատ տեղեր եմ հեռե, շատ խայի գեղեր եմ տեսե, մերնից փսերն (վատերը) էլ շատ կան:

Այս տեղեկությունները կարծես դյաւր էին գալիս Կամսարյանին, որովհետև նա նրանց մեջ տեսնում էր հաստատությունն յուր այն կարծիքի, թե անհնար է գյուղում ապօքել ու գործել, ուստի զարունակեց հարցուիրձը:

— Այսուամինայնիվ, տանուտեր, որ գոյցի կարողանաւ ավելի ճիշտ պատճառն ասել, թե՝ ինչո՞ւ մալականի գյուղը գեղեցիկ և մաքուր է լինում, իսկ հայինը տգեղ ու կեղտու: Անկարելի է, որ դրա պատճառը հայի անշնորհքությունը լինի. մի՛թե բոլոր գյուղերումն էլ հայերն անշնորհք են:

Տանուտերը մի վայրկյան մնաց լուռ և շգիտեր ի՞նչ պատասխանել: Հետո կարծես նոր գյուտ անելով, բացականշեց.

— Սիսպեր, խայի գեղն կեղտու շընի, իմա՞լ ըլնի. խայի գեղցու ցավը, դարդը մե չէ, երկու չէ, որ թորգի (թողնե) ու հիստակութենի ցավը քաշի: Ախար նա իսկի անշնորհք էլ չէ, թեկուզ էդ անունը տվի քեզ հառեց: Նա մալակնից էլ ա շնորքով, իրա մեկել դրկեցից էլ: Խայի գեղցու ցավն էն ա, որ մեջը մարդ չըկա, մեջքին դայաղ (նեցուկ) տվող շըկա. Ինչ որ աթատան, բարատան (Հորից, պապից) տեսե, սովորե, ինենց էլ անում ա, ինենց էլ ապրում ա: Քարճինի ծառ (վայրի տանձի) տեսած կա՞ս, էն որ մեշեն ա հնում: Էն որ թորգեն (նրան որ թողնեն) խարիր տարի կապրի, հմեն վախտ էլ պստիկ-պստիկ շոր ու ցամաք քարճին կը տա, համա թե մե բարի ձեռ նրա ճղերը կտրի ու վրեն պատվաստի մալաշի դալար շվիր (շյուղ) կտենաս մե էրկու տարուց հետո, էդ քարճինի ծառը մարդ մալաշի տանձեր կը երա, խամով, խոտով ու

Կերածդ վախտն էլ բերնիդ ջուրը կերթաւ։ Մեր գեղցին էլ որ  
 կա, մեշի ծառ ա, քոթուկը (բոն) խաստ, քոքերը (արմատ-  
 ները) զայիմ, համա բարը (պտուղը) քարճին ա. մե ուստա  
 ձեռ ա պետք, որ ճղերը կտրի, վրեն պատվաստ անի, կուղես  
 մեղրիկինի, կուղես գյուլ-արի, էն վախտն էլ ընդու բարն էլ  
 էն կըլնի, ինչ որ պատվաստելիս, խամով, խոտով, սիրու-  
 նութենով։ Մալականը որ կա, պատվաստած ծառ ա, ո՞րն  
 ա ընդու պատվաստողն, շիմ գինա, ամա տենում ենք բարը  
 խամով ա։ Հենա Գյաջու յանն էլ նեմեցներ կան, ընդոնք  
 էլ մալականներից են շնորքով, երևում ա ընդոնք էլ են  
 պատվաստ արած, ընդուր որ ընդոնց արած բաներն էլ են  
 զայդով (կարգին), լավ, ընդոնց գեղն էլ ա թամուզ-հիստակ,  
 ժառով լիքը, վարժատունը մեջները, ժամն (եկեղեցի) էլ  
 պայծառ, բոստան ու բաղչեն դեմներն… Մեր գեղը ըդենց  
 բաներ շրկան… ընչի՝, ընդուր որ էն օր, որ օրվանից առտ-  
 ված մե ծառ ա տնկե, անունը խայի շինական դրե, էն օր-  
 վանից դեսը էդ ծառի ճղերին մե ճղադող (հոտոց) շի դիպե,  
 խաղար տարի ումբր ա քաշե (ապրել ա), խաղար տարվա  
 բարը հմմեն վախտ քարճին ա հելե ու քարճին։ Մալականը  
 ինչ վախտ որ ուզում ա գեղ քցի, յա թե չէ իր խամար շին-  
 իկ շինի, մեկ էլ տենում ես հմմեն յանից մարդիկ են բըս-  
 նում, ասում են, բարեկամ, էս էսենց շինա, էն ընենց շինա,  
 յա ծուռ ա դըրստի, էն պստիկ ա շոշացրու (մեծացրու), մե  
 խոսքով, խորհուրդ են տալում, խելքում-խրատում, գլխու  
 քցում; Մալականն էլ բարի խրատն ընդունում ա, շգիտցա-  
 ծը սովորում, ու բանը անում ինենց, որ աստծուն էլ ա դուր  
 քալում, բանդին (մարդկության) էլ։ Համա խայի շինականը  
 շինլիկ չէ՛, թեկուզ ժամ էլ քցի, ըսկի մե վախտ մե մարդի  
 էրես շի տենա, որ մե բարի բան սովորցնի, մե դրուստ ճամ-  
 բաղ նըշանց տա, ծոփ զարարը (վնասը) ու դրստի օգուտը  
 խամացնի. էգու խամար էլ իմալ հինքն կարցե, ինենց էլ  
 արե, ինչ խելքն կտրե, էն էլ շինե, է՛հ, ընդուր գիտցածն  
 էլ հելե էն ա, ինչ որ տենում ես, ընդուր իմա՞լ մեղենք (մե-  
 ղադրենք):

Կամսարյանի գլուխն, կարծես, չուր մաղեցինք Յուր Հարցին նա չէր սպասում այգօրինակ պատասխան։ Դա, իսկապես, դատապարտության մի վճիռ էր, որ տանուտերը կարդաց յուր երեսին։ Ախար չէ որ այն ամենը, ինչ այդ գյուղացին ասաց, Հայանի էին իրեն վաղուց։ Զէ՞ որ հենց իրենց ընկերական ժողովներում հաճախ այն միտքն էր արծարծվել թե Հայ գյուղացին տղիտ, հետամնաց, հետևապես և թշվառ է մնում այն պատճառով, որ բոլոր յուր կյանքում զուրկ է մնում առաջնորդից, սրտացավ խորհրդատուից, բարի օրինակից։ Լինեին գրանք և նա կազմավեր դարերի ընթացքում յուր գրա բռնացող ճակատագրական թշվառությունից։ Արդ, ինքը եկել էր այդ առաջնորդը, այդ խորհրդատուն լինելու ինչո՞ւ էր, ոգեմն, երկար ու բարակ տանուտերին հարցուափորձում։ Զէ՞ որ նրա Համար, որ յուր գրած ուստին այժմյանից արդեն ծանր էր թշվառ իրեն և նա նրանցից կամենում էր խուափել... Մի՛թե ամոթ չէր այդ։

Այս հետադարձ միտքը ձգեց երիտասարդին վարանքի մեջ։ Խղճի մի թաքուն խայթ սկսավ անհանգստացնել նրան, ուստի դադարեց հարցեր առաջարկելուց։

Այդ միշոցին վերադարձավ տան տիրուհին, ձեռքին մի քանի նորաթուխ լոշեր։ Ըստ երևույթին, նա այդ օրը թաժահաց չունենալով, ըստ գյուղական սովորության, փոխ էր առել հարևանից, որպեսզի նորեկ հյուրին օթեկ հացով շկերակրե։ Տանուտերը կնոշը տեսնելուն պես վեր թուավ տեղից, ինչպես մեծ հանցանք գործածին մեկը։

— Ներողություն, աղա՛,—ասաց նա, — ախոր գու Համփից ես գալում, անոթի կը լնես. ես դինչ նստել եմ, քե խետ գյալաջի (զրույց) եմ անում։ Դե, Սալվի, շուտ արա, խացի թագարեք (պատրաստություն) տես, — դարձավ նա դեպի կինը, որ արդեն մտնում էր տոմ։

— Մի՛ նեղանաք, խնդրում եմ, ես քաղցած շեմ, ճանապարհին նախաճաշել եմ, — հանգստացրեց տանուտերին երիտասարդը։ Բայց վերջինս, այսուամենայնիվ, կնոջ ետևից մտավ տոմ, որպեսզի հյուրին պատվասիրելու համար հարկ

եղած պատվերը տա կնոջը, կամ թե նրա հետ խորհուրդ անե:

Այսպիսով Կամսարյանը միայնակ մնալով սկսեց լսած-ների մասին լրջորեն մտածել: Այս առիթով նա նորից հիշեց անցյալը, ուսանողական ժամանակի փայփայած մտքերը, յուր ոգևորությունը, խիզախ որոշումը և այդ ամենին հակադրելով իրականությունը եկավ այն եզրակացության, «որ ինքն սիստվել է, թեթև աշքով նայելով առաջադրյալ խնդրի վրա, կամ սպասելով, որ գործը դյուրությամբ սկսվի և դյուրությամբ շարունակվի»:

— «Այստեղ, հաստատուն կամքի հետ միասին, պետք է ունենալ, նաև մեծ համբերություն, —խոսեց նա ինքն իրեն. — ծառից՝ ծառատակը միշտ մոտ է երկում, բայց երբ թոշում ես այժմ ես դեռ թոշելու որոշումն եմ արել և արդեն տարածությունն անհուն է թվում, ի՞նչ կլինի երե սկսեմ թոշել... արդյո՞ք ուժերս կներեն. թերու չե՞ն թուլանալ»...

Այս մտածության հետ միասին անսպաս տեղից ծնունդ առավ նրա սրտում պատվասիրության զգացումը. — «Է՛ս, ամոթ է, վերջապես փոքրութիւն լինել այսքան և վախենալ կյանքի գալոց զրկանքներից... Այս գյուղացիներն էլ մարդ գիկ են և ահա՛ ապրում են զրկանքներով լի այդ կյանքով և չեն մեռնում: Ինչո՞ւ, ուրեմն, շփորձեմ մի փոքր էլ ապրել նրանց հետ և նրանց նման, գուցեց հենց այդ փորձի մեջ գտնում եմ ես հնարն իմ խոստման տեր մնալու: Ինչո՞ւ հուսահատվել գեռ ոշինչ շգործած, գեռ ուժերս շփորձած»...

Այսպես մտածեց Կամսարյանը տանուտերի խոսքերի թարմ ազդեցության տակ և որոշեց անպատճառ «փորձելք յուր ուժերը»:

Այդ որոշումն անկեղծ էր, անձնասեր «ես»-ի ձայնը լոել էր նրա մեջ այդ բոպեին:

Բայց հենց այդպիսի հանդիսավոր վայրկենին սրանի առաստաղից թափվեց երիտասարդի գլխին շոր հողի մի վիժակ: Նա վեր թռավ տեղից և վազեց դեպի բակը, կարծելով թե առաստաղը փլչում է գլխին: Սակայն այդպիսի բան

շկար: Հավերը կտրան քթութ էին արել, որով և հողի փխրուկ  
մասը շարժվելով իջել էր ներքեւ Կամսարյանը հանեց լայ-  
նեզը գլխարկը և տեսավ, որ նա ամբողջապես ծածկված է  
փոշու հաստ շերտով, իսկ գլխարկի եղբը պահել էր յուր  
վրա հողի մեծ քանակություն:

Մաքրասեր երիտասարդը դժո՞ն եղավ այդ բանից:  
Բայց ի՞նչ արած, դեռ մի բոպե առաջ էր, որ նա որոշել էր  
փորձել ապրել գյուղացիների հետ: Պետք էր ուրեմն համբե-  
րել: Բայց որովհետեւ համբերելուց անկախ, անհրաժեշտ էր  
ժաքրել գլխարկը, նույնական և վերնազգեստը, որի ուսերը ևս  
ծածկված էին փոշիով, ուստի նա վերադառնալով սրահը,  
կանչեց տանուտերին և խնդրեց նրան առաջնորդել իրեն դե-  
պի ներսի տունը, որպեսզի այդտեղ գտնվող յուր պայուսա-  
կից հանե խողանակը՝ հագուստը մաքրելու համար:

— Ես ի՞նչ ա, խո՞ղ ա թափե վրեդ... Է՞յ, Սալմի, էս  
ի՞նչ ա, էլի էդ անիծովկ խավերը կտուր քըճըճում են, հիշկա  
(նայիր) աղի շորերն հմմեն խարաբ են արե:

Սալմին դուրս վագեց դեպի կտուրը՝ հավերին հալածե-  
լու, իսկ երիտասարդը ներս մտավ յուր պայուսակը որո-  
նելու:

Տոնն, ուր նա մտավ տանտիրոջ առաջնորդությամբ, մի  
տարօրինակ շենք էր, որի նմանը նա չէր տեսած ոչ մի տեղ:  
Յուր քառակուսի ձեռվ նա նմանում էր մի սովորական ըն-  
դարձակ սենյակի, իսկ շորս սյուների վրա բարձրացող գըմ-  
բեթարդ առաստաղով՝ փայտաշեն մատուի: Շենքը ոչ մի  
կողմից պատուհան չույներ և լույսն ստանում էր առաստաղի  
վրա բացված երդիկից: Սակայն այդ լույսն էլ այնքան էր  
նվազ, որ երիտասարդը ներս մտնելուց չկարողացավ իս-  
կույն որոշել բնակարանի ձեռն ու մեծությունը: Միայն քիչ  
հետո, երբ աշքերը վարժվեցան, սկսավ ամեն ինչ դիտել  
ուշադրությամբ:

Տան հետեւ պատն ամբողջապես, իսկ աշ ու ձախ կող-  
մերինը կիսով շափ կտրված էին հողից և այն այնչափ տպեղ  
ձեռվ, որ շատ տեղերում երեսում էին սակրի կամ բրի քա-

շած ակոսները: Իսկ առջնի պատը և աջ ու ձախ կողմերինք հասամբ՝ շինված էին կրաշաղախի և գետաքարերի անարդեստ զանգվածով: Ինչպես տան շորս պատերը, նույնակն և առաստաղն ու նրան բռնող փայտի շորս սյուները ծուխից սեացած էին ա'յն աստիճան, որ շատ տեղ փայլում էին լուսի առաջ: Առաստաղի ավելի մութ խորշերը առատորեն բռնված էին սարդի ոստայններով, որ ապացուցանում էր, թե այդ տան մեջ չկար շար ձեռք, որ վրդովեր այդտեղ ապրող միջատների խաղաղությունը:

Տան մեջ եղած կարասիներն էին. մի փայտի ծխաճար ամբար, որի մեջ ալցոր էր պահվում, մի մեծ, կավեծեփ կթոց, որ ցորենի պահարանն էր, մի փայտյա խարխուկ և լայն մահճակալ, որ ծառայում էր իբրև դարակ, թե՛ տան մեջ գտնվող արկղիկների և թե՛ հնամաշ կողինքի ու օթոցների համար: Պատերից մեկի տակ գտնվում էին երկու հողե կուժեր, մի քանի սևացած պտուկներ, մի փոքր և մի մեծ տաշտակ և երկու փայտյա խաներ: Իսկ դրանք հանդեպ գտնվող պատի տակ, որ ըստ երևույթին, պատվակար կողմն էր, շինված էր մի հողե բարձրություն՝ թախտի ձևով, շորս կողմից կավածեփ և ծածկված հնամաշ կապերտով: Տան հատակը հողից էր, տեղ-տեղ փոս և ցեխուու լինելու շափթաց: Հենց այդ հատակի վրա, ուղղակի երդիկի տակ գտնը վում էր կրակարանը, ուր այդ միջոցին վառված աթարի վրա դրված էին մի հողե պտուկ և մի պղնձե կաթսա, երկուան էլ այնպես սև ու մրապատ, որ կարծես ածուխից էին շինված: Ի՞նչ էին եփում այդ սևակողու ամաններում, հայտնի չէր, միայն թե Կամսարյանը նայելով նրանց վրա զգաց մի խոր զզվանք և դրա հետ էլ երկյուղ թե՛ մի գուցե նրանց մեջ պատրաստված կերակրով հյուրասիրեն իրեն:

Որովհետև տան միջի օդը տուգորված էր աթարից առաջացող գարշաճու ծուխի, այլ և խոնավության անախորժ հոտով, ուստի երիտասարդը այդտեղ շրացավ պայտակը, որ պեսզի ստիպված մինի քանի վայրկյան ավելի ծծելու պատականված օդը, այլ առնելով այն՝ տարավ դուրս:

Հանելով պայուսակից սպիտակամազ և արծաթե մեջքով շինած խողանակը, որ բնավ չէր հարմարում շրջապատող անմաքրությանց, նա սրբեց նախ գլխարկը և ապա հանեց վերնազգեստը: Վերջինս մաքրելու ժամանակ գրպանից գետին ընկավ յուր Նուերի հայտնի տետրակը: Կամսարյանը վերցրեց այն այնպիս շտապով, որ կարծես գողացած իր եր և պետք էր իսկույն թագցնել: Որովհետև տետրակի տեսքը վայրկենաբար հիշեցրեց նրան այնպիսի բաներ, որ նա կուզեր այժմ մոռանալ...

Երբ երիտասարդը բոլորովին մաքրվեցավ, եկավ նստեց սրահում դրած թախտի մի ուրիշ կողմը, որ յուր կարծիքով աղատ պիտի լիներ հողի իշխածքից և սկսավ խոսել տանուտերի հետ, այժմ արդեն մեծ սրտով:

— Քիչ առաջ ասում էիք, թե հայ գյուղացին ի՞նչ անի, միջումը մարդ չունի, մեջքումը դայաղ չունի, բան սովորացնող չունի և այն: Ասացեք, խնդրեմ, այսպիսի մի պարզ բանի համար ձեզ ինչ սովորեցնող է հարկավոր: Տեսնո՞ւմ եք, այս առաստաղի ձողերը շարել եք միմյանցից մի-մի թիզ հեռու, հետո վրան ցախ ու ցաք դնելով հող լցրել: Մի՞թե չեթք կարող նախ՝ այս ձողերի փոխարեն լայն տախտակներ շարել, երկրորդ՝ եթե ձողեր էիք շարում, ընտրեիք ուղիղ ձողեր և ոչ թե այս ծուռ ու մուռ ճաղերը, հետո նրանց տաշեիք, միմյանց մոտեցնեիք և ապա թե վրան հող լցնեիք: Այն ժամանակ հավ չէ, անասուն էլ, որ ման գար կտրանը, հողը չէր թափվիլ: Ախար սա այնքան պարզ բան է, որ սրա համար ոչ սովորեցնող է հարկավոր, ոչ խորհրդատու:

— Շատ զորթ ես հրամայում, աղա,—խոսել սկսավ տանուտերը.—զորթ որ էն ձողերի տեղ թե տախտակ հըլներ, շատ լավ կըլներ, համ խող շի թափվի, համ էլ հառիքը (առաստաղը) սիրուն կըլներ: Համա մե բան կա, որ դու շես դինաւ. շինականի խամար մե մանեթը էնդդա աժի, ինչդդա քաղցու խամար խարիք մանեթը: էսդդա տեղը տախտկելու խամար եռաւուն մանեթ խերիք չէր գա, համա ես էս հմմենին չորս մանեթ եմ տվե, էն էլ անշախ եմ ճարե: Չողերն էլ, որ

մոտիկ-մոտիկ հներ, խարիր հատ չէր խերիք գա, համա ևս  
քառսուն խատով բանը յոլա եմ տարեւ: Մեկ էլ թե էնոնք  
դուզեր (ուղիղներ) հնին, մեշաբակին (անտառապետը)  
երեք խետ ավելի փարա կուզեր, համա էժան աւ տվեւ: Ասենք  
իմ՝ մե դազախեցի բարեկամն ասեց թե՝ «գու ոչ շորս մանեթ  
փարա ևս տվե բլեթին, իրավունք ունեիր էդ բլեթով էն դդա  
դուզը ձողեր կտրել, ինչ դդա ծուռն ևս կտրե»: Համա ևս  
գեղցի սամիկ մարդ եմ, իմա՞լ կանամ աբեզչիկի (անտառա-  
պահ) հառեց ձեն ձուն խանել. էն թղթին հիշկում ու ասում ա.  
«էս թուղթ ծուռը փետերի համար ա, շրջիշխնաս (համարձակ-  
վես) դգերը կտրել», ես էլ իմա՞լ ընդու հրաման շանեմ: Բան  
ա, թե շշկլիմ (սիսալվեմ), յա հիշխնամ մի խատ դուզը իիտ  
կտրեմ, մեկ էլ տենաս բոռալով գալում ա վրես ու մե շափա-  
լախ (ապտակ) քիթուբերնիս դարկում... Հարամզադա,  
ասում ա, էդ իմալ հիշխցար թագավորական մեշի մեջ զա-  
կոնի դեմ բան բռնել. հես ա պրատակոլ կանեմ, քեզի նա-  
րախտ (բանտ) կտանեմ: Էդ վախտը անձարանում եմ, ոտ  
ու ձեռն բնկում, ասում. «աղա, ի սեր աստուծո բախշի,  
ինձ բռնավոր մի անի, ճղերս ու օղուշաղս (բնտանիքս)՝  
մեղք ենա: Էստուց հետո, որ տենում եմ, չեմ կանում աղա  
աբեզչիկ սիրտը շահել, իլաճն կտրում ա, զերս էլած մի քա-  
նի աբասին ափն եմ դնում, գլուխս պրծցնում:

Տանուտերի պատմածներից Պետրոսը վրդովվեցավ, մա-  
նավանդ աբեշչիկի գյուղացուն ապտակելու ու օրենքի անու-  
նով նրան հարստահարելը վառեցին երիտասարդի բոլոր  
իրավագիտական զայրույթը: Նա մոռացավ, որ տանուտերը  
ընդդիմախոսում էր իրեն և ոչ թե պաշտպանություն խընդ-  
բում, ուստի վրդովված պատասխանեց.

— Աբեզչիկը իրավունք շունի քեզ ապտակելու կամ քե-  
զանից ապօրինի փող առնելու. այդպիսի անկարգության  
համար նրան ոչ թե պաշտօնից կզրկեն, այլ և բանտ կնքա-  
սեցնեն: Օրենքը իրավունք չէ տալիս նրան նույնիսկ մեղա-  
վոր մարդու զեմ բռնություն գործ դնել, ո՞ւր մնաց թե հան-  
գիստ ու խաղաղ գյուղացու դեմ: Անտառի պահպանության

վերաբերմամբ որևէ մեկի կողմից անկարգություն տեսած ժամանակ, նա կարող է այդ մասին հայտնել վերակացուին կամ անտառապետին, բայց յուր ձեռքով դատաստան անել նա ընալ իրավունք չունի:

— Կըլինի էդ հմմեն դրուտ ես ասում, ես էլ գինամ օրենքի մեջ անարթար բան չի ըլնի, համա մեզնից ո՞ր մեկա ա օրենք խասկնում, յա թե չէ էն դադը մեշեն մեր ձենը ո՞վ ա հիմանում, մեր գանգատն ո՞վ ա լսում: Բան ա, թե հուզաթենք անում (հակառակում), յա ահ տալում թե՝ կերթանք մեշաբեկին գանգատ, էն իր դոշի կպած զատը նշանց ա տալում ու ասում.—«Էս զնակը տենո՞ւմ ես, էս հմմեն մարդու չեն տալում, ինձի որ տվել են ընդուր խամար ա որ իմա՞լ ուղենամ էստով անիմ, թեկուզ սաղ աշխարը քանդեմ, ո՞րը կանա առաջս կանգնելո: Հիմի ա՛ղա, ես որ հառեց ասեցի, որ մեր մեջ մարդ չունենք, մեզքներիս դայաղ տվող չունինք, դու ինձի մեղ իր դնում. համա տենում ես, որ քե նման մի խատ գրի սև ու սպիտակը ճանաշող, դիվան դադատան խասկըցող մեր մեջ նստած հյուներ ու ինձի ասեր, օրենքի մեջ գրած ա, որ դու քո չորս մանեթով կարաս քառսուն խատ դուզ ծառը կտրել, թե՛ արեզչիկը իրավունք չունի քե զարկելու, պրատակոլ շինելու, յա նարախտ դնելու, ես էլ էն վախտ ասլան կդառնայի, մե արեզչիկը չէ; թեկուզ տասն էլ, որ վրես գային հմմենի զուղաբը (պատասխանը) կտայի: Ա՛յ էն վախտ իմ հառիքի վրա դուզը ձողեր կըլնեն, հմմենն էլ մոտիկ-մոտիկ շարած, զայիմացրած, խողն էլ վերկից չը թափվի, ես էլ պատվական զոնախի կուշտ սև էրես չի մնա:

Կամսարյանը լսեց այս ամենը ուշադրությամբ և այլեւ դիտողություն շարավ:

## Ժ

Վերջապես տան տիրուհու ճաշը պատրաստ էր: Նու շտապեց սեղան բանալ: Մույգ կապտագուն մի սփռոց, որ

թավական մաքուր էր, բայց որն յուր գույնի ու հնության պատճառով կեղտոտ երևաց հյուրին, նա փաხց տախտակի, վրա և վրան դարսեց սպիտակ ու փափուկ լոշեր: Ապա փայտյա, բոլորչի խանի մեջ բերավ մի քանի ամաններ, որոնց մեջ կային պանիր, կանաչ սոխ, մածում և եփած ձուքը: Երրորդ վերադարձին նա հանեց սեղանի վրա նոր պատրաստած կերակուրը, որ էր՝ լորիի բորանի և մի եփած համի: Տանուտերն յուր կողմից բերավ դեղնած մի շշում օդի և հողե գրակով գինի:

Կամսարյանն ուտել սկսելու փոխարեն սկսավ դիտել ամանները, որոնցով տանտիկինը ցուցահանել էր ուտելիքը: Նրանցից ո՛չ մինը նման չէր մյուսին: Պանիրը դրված էր պղնձե, կլայեկած ամանում, մածունը՝ հողե գավաթում, ձում՝ փայտանսե կապույտ, հին ձևի մի՛ ամանում, որն ուղիղ չէր մնում սեղանի վրա, որովհետև կոտրված լինելու պատճառով մի կողմից կապված և տակից կոծկված էր: Իսկ այդ կոծկելը (կրի, ձուկ և ծեծած կանեփի շաղախ) այնքան հաստ էր քսված, որ ամանն յուր հարթությունը կորցնելով հակվում էր մի կողմ: Վերջապես բորանին լցված էր հողե քեղանի մեջ, իսկ համը՝ դրված պղնձե ափսեի վրա:

Հազիկ տանուտերը ձեռք առավ օդիի շիշը, որպեսզի հյուրին հրամցնե, ահա՝ սրահի մեջ բուսավ Տեր-Վանին, գյուղի քահանան:

Սա վաթսունն անցած մի մարդ էր, բարձրահասակ, բայց նիհար մարմնով, նեղ ու երկար դեմքով, խոր ընկած աշքերով, դուրս ցցված այտոսկրներով և, սակայն, հարուստ, ալիսառն մորուքով, որ մեղմում էր դեմքի տգեղությունը և ծածկում երկար, դեղնած պարանոցը, որի վտիտ շուշակները զատվում էին փողից ինչպես պինդ ձգված պարաններ:

— Բարի աջողում, — ասաց նա խաղաղ ու մեկին արտասանությամբ և գավաղանը գետնին խիելով, կանգ առավ, կարծես սպասելով թի ի՞նչ ընդունելություն պիտի գտնե:

Տանուտերն իսկույն վեր կացավ տեղից:

— Օրհնյա տեր, Համեցիր,—ասաց նա հարգանքով և  
յուր տեղն առաջարկեց քահանալին:

— Նստիր տեղդ, ես ըստեղ կնստեմ,—ասաց վերջինս  
դազախեցվոց բարբառով և գալաղանք պատին հենելուց  
հետո, ձեռքը պարզեց Կամսարյանին.—բարով ես եկել,  
Հազար բարով: Մոսին ասեց մի լավ զոնաղ եմ բերել տա-  
նուտերի հմար՝ թիֆլիզեցի ա: Ասեմ, գնամ տենեմ ո՞վ ա,  
կըլի որ իմ բարեկամներից ըլի, չուն ես էլ թիֆլիզում լավ  
ծանոթներ ունեմ:

Կամսարյանն յուր ով լինելը հայտնեց քահանալին:

— «Կամսարյա՞ն», էդ ի՞նչ լավ անուն ա. կըլի որ հին  
ազգից բեր, չուն հայոց պատմութենումը բղենց մի անուն  
աշքովս ա ընկել:

— Երեսի Կամսարակա՞ն:

— Հա, էդ ա, Կամսարական: Դու ընդո՞նցից ես:

— Ոչ, ինքս էլ չգիտեմ, թե ովքեր են իմ պատերը:

— Բա՛ էդ ո՞նց կըլի:

— Իդա վերջ կխարցնես, հլա նստե՛ խաց կե, —նկա-  
տեց առնուտերը:

— Նստել պտեմ, բա ո՞նց տեմ անիլ. Հազարանց մեկ  
մեր զեղը ըսենց պատվական հյուր է եկել, ո՞նց կըլի, որ  
մոտք չնստեմ, զրից չանեմ: Այս դե ես հաց եմ կերել, դուք  
ինձ մտիկ շրտար, անուշ արեք: Այս ասելով քահանան յուր  
շալե փարազի փեշերն ամփոփելով ծալապատիկ նստեց  
թախտի վրա:

— Զարար (վնաս) լըկա, մեզ խետ էլ կուտես, —ասաց  
տանուտերը և օդիի բաժակը լցնելով, առաջարկեց քահա-  
նալին:

— Բա՛, արագ է՛լ ես տալի. էդ հո իշտահս (ախորժակ)  
մեկ էլ նորանց բաց կանի. էնչախը ո՞նց կանենք, —ասաց  
քահանան ծիծաղելով:

— Իմա՞լ պիտի անենք, ինչ որ աստված տվե, հմմեն  
Հառեջդ դնենք կուտես:

— Հալրաթ որ ըգենց ա. «եղիշիր դու զորավոր ուտել

զբարութիւնս երկրի», առել ա մարգարեն. կուտենք, բա  
ի՞նչ կանենք,—սրախոսեց քահանան: Ապա առնելով բաժա-  
կը օրհնեց Հյուրին, տանուտերին և բարեմաղթելով, որ  
վերջինի սեղանը լինի միշտ բաց ու առատ, դատարկեց օդին  
մի ումպով:

Տանուտերը նորեն լցրեց բաժակը և առաջարկեց Կամ-  
սարյանին: Բայց սա հրաժարվեց խմելուց, առարկելով թե՝  
ողի չէ գործածում: Սակայն հրաժարվելու պատճառը ոչ թե  
այդ, այլ օղիի կես կարմիր կես գեղին գույնն էր, որ Փետ-  
յոսի կարծիքով առաջացած պիտի լիներ շշի անմաքրու-  
թյունից, կամ օղիի հնությունից: Նույնիսկ եթե օղին նոր ու  
մաքուր լիներ, գարճալ նա չէր կարող բերանը տանել այն  
բաժակը, որով իրենից առաջ մի ուրիշն էր խմել: Հենց այս  
պատճառով էլ նա մի փոքր հետո հրաժարվեց նաև գինուց,  
որովհետև սեղանի վրա միայն մի գավաթ էր դրված: Տա-  
նուտերը, ի հարկե, այդպիսի նրբություններ չգիտեր: «Բա-  
րի գալուստ» մաղթելով Հյուրին և քահանայի օրհնությունն  
առնելով, նա տնկեց լցված օղին և ապա խնդրեց Հյուրին  
գայելել աստուծո տվածը:

Քահանան առաջարկության չէր սպասում: Նա արդեն  
լոշերից մինն առաջ քաշելով, սկսել էր յուր հարձակումը  
նախ պանրի ու սոխի և ապա ձուերի վրա. մինչդեռ Կամսա-  
րյանը դեռ նոր էր մտածում թե՝ ի՞նչ ուտե: Ժամ առաջ տե-  
սած սեակոլոր պտուները (որոնց մեջ կերակուրներ էին  
պատրաստվել) չէին հեռանում նրա աշքից: Այդ պատճառով  
նա շուգեց ձեռք տալ հավին կամ բորանուն. ամենից վստա-  
հելին դարճալ ձուաներն էին, որոնց պատյանը ազատ է  
պահում ներսը անմաքրությունից: Երիտասարդն յուր ծոմը  
բացավ այդ ձուաներով: Բայց որովհետև կերած երկու ձուն  
բայցական չէին յուր քաղցր հագեցնելու, ուտի պետք եղավ  
նոր բնտրություն անել: Այս անգամ վիճակն ընկալ մածնի  
վրա: Սակայն ինչո՞վ ուտեր: Մածնի մոտ, ճիշտ է, գրված  
էր մի փայտե գդալ, որը շատ գործածությունից սևացել.

աքանոսի գույն էր առելը Այդ գդալը նա յուր բերանը էթ տանիլ և եթե տաներ էլ, մյուաները ինչո՞վ ուտեին:

Դեռ այս վարանման մեջ էր նա, երբ քահանան բորանիի մի մասը յուր ամանը փոխադրելոց հետո, մինույն գդալով առավ նաև բավականաշափ մածուն և սկսավ ուտել լոշի կտորներով նախապես նրանց կորացնելով և գդալի ձեւ տալով: Ուտելու այդ եղանակը դյուր եկավ Կամսարյանին և նա նույն ձեռվ էլ սկսավ վայելել մածունը: Երիտասարդի ախորժակն հետզհետե բացվում էր կամ գուցե նրա հետ կատարվում էր այն, ինչ որ Հայկական առածն է բնորոշում ևկակղես կուտեսա: Այժմ նա ցանկանում էր օգտվել նաև Համից, որի գերությունից դեղնած տեսքը ցույց էր տալիս: Որ շատ համով պիտի լինի: Այս պատճառով նա նախ աշխատեց համոզել իրեն, թե սեակոլու պառվել միայն դրսից կարաղ էր կեղտուտ լինել, բայց ոչ, նաև, ներսից. և հետթե՛ եղած կեղտն, անշուշտ ջրի մեջը կմնար և ոչ թե համի ներսը կթափանցեր: Հենց այս մտածության վրա տանուտերը պղնձե ափսեն մոտեցրեց հյուրին, երկի վերջինի Համի վրա հառած հայացքից գուշակելով նրա ցանկությունը:

— Հա՛, սրանից կարող եմ մի փոքր ուտել, բայց այստեղ... գանակ ու պատառաքաղ չկա, — ասաց Պետրոսը ժշատալով ու սեղանի շուրջը նայելով:

Տանուտերը ձեռքը տարավ գրպանը և հանեց եղջյուրի սև կոթով տեղական դարբնի շինած մի գանակ: Բայց քահանան ժամանակ շտվավ նրան: Հավն շտապով յուր առաջը քաշելով՝ նա սոթտեց թերը:

— Աղքեր, էս քաղաքացիք իսի՞ ուտելու թահը գիտում շն: Բա ըսենց դեղին լալի (սաթի) պես համին էրկաթ կղիցնե՞ն, ափսոս չի՞... Հրես աստոծ դանակ էլ ա տվել մեզ, շանգալ էլ: Այս ասելով նա ձեռքերով պատառ-պատառ արավ համը և ափսեն մոտեցրեց հյուրին: Բայց վերջինի համար նորեն ուտելու դժվարություն առաջացավ: Քահանայի ձեռքերի արած ծառայությունը փակեց նրա ախորժակը, ուտի համի ափսեն հեռացրեց իրենից:

Տանուտերն սկսավ թախանձել: Իսկ քահանան զարմացավ, որ երիտասարդը մի փոքր առաջ ցանկություն հայտնեց ուտելու, իսկ այժմ հրաժարվում է: Նրանք չեին գուշակով հրաժարման պատճառը. և եթե մինչև իսկ Պետրոսը բացատրեր, նրանք կղարմանային, որովհետև հավը դանակով ու պատառաքաղով կտրտելն ավելի անհաճո բան կհամարեն, քան թե ձեռքերով անդամատելը:

Վերջապես Կամսարյանը շկարողացավ տանուտերի խնդիրը մերժել, առավ հավի մի կտորը, հանեց նախապես վրայի մորթը, որին կարող էր քահանայի ձեռքը դիպած չըլինել և խտրելով կերավ:

— Ես որ քե նման հաց ուտեի, հմի վաղուց մեռած կլեի, — նկատեց քահանան ժպտալով:

— Ինչո՞ւ, — հարցրեց Պետրոսը:

— Բա ըտե՞նց հաց կուտե՞ն. էդ հու ծտի նման ես ուտում:

— Ուտում եմ այնքան, որքան կարողանում եմ:

— Կարողանալին ո՞ւր ես մտիկ տալի, զոռով պտի ուտես: Ամեն բան վարչիս (սովորություն) ա, թե վարչիս կանես, էն ա շատ կուտես, թե չէ, հալբաթ կերածդ ծտի փայ կըլի:

— Իսկ շատ ուտելն ի՞նչ օգուտ ոմի:

— Ո՞նց թե ինչ օգուտ, բա աստոծ մեզ ընչի՝ հմար աստեղծել:

— Զլդիտեմ, մի՞թե միայն ուտելու համար:

— Բա էլ ընչի...

Պետրոսը ծիծաղեց:

— Իսկ ես ծիծաղը, դե ասա տենեմ էլ ուրիշ ընչի՝ հմար աստեղծել:

— Կարծեմ ապրելու և գործելու համար:

— Հեր օրհնած, բա ապրելու յա գործելու հմար շրպտի՝ ուտես. սոված փորով գործիլ կըլի՝,

— Պետք է ուտել, այս՛, բայց շափակոր: Ավ որ շատ է ուտում, նա չի կարող շատ գործել:

— Յանդիշ ես (սխալվում ես), ով որ շատ առաջը, նա էլ շատ գործ աշխարհ։ Այս, քե օրինակ էշը, ձին, եզր, նրանք որ շատ լուսեն, կարա՞ն բան անել։ Յա չէ քրես ես։ Թթը իրեք անգամ որ լավ, բարաթ շուտեմ, կա՞րամ էսղագա բան շինել։ Էսօր ըռավոտ ե՞փ եմ վեկացել հա՞, ծեզը հլա ծեղած ոչ, մտել եմ ժամն ասել. եղո գնացել եմ հանդը՝ իրեք սել խորսն (խորդ) հվաքել թիրել տուն, եղո տիրակինի կտրած աթարը դարսել, հըեն սար եմ շինել, հմի էլ որ ըստեղ եկած լրինի, մի ուղիղ բան կանի. Համա դե, ասենք, — ըսել լավ դառավ. շուն եկանք, համ քե ծանոթվեցինք, համ էլ տանուտերի սեղանը պատվեցինք։

— Իսկ դուք շատ ուտելուց չե՞ք հիվանդանում, — Ժըպտալով հարցրեց Կամսարյանը, որ ըստ երևութին ցանկանում էր քահանայի զրուցից յուր գործին պիտանի տեղեկություններ քաղել։

— Բա իսի՝ եմ հիվանդանում, քիչ որ ուտեմ, էն չախը հհիվանդանամ...

Այդ միջոցին Սալբին եկավ սեղանը հավաքելու, որով հետև ճաշը վերջացել էր։

Տեր-Հայրը, որ սկզբում մոռացել էր սեղանն օրհնել, այս անգամ արդեն հիշեց յուր պարտքը և խոսքն ընդհատելով «Ոլութիւն սեղանոյս անհատ և աննւազ արասցե»... աղոթքը կցեց և ապա «Հայր մերն» ասելով ետ քաշվեցավ։

Երիտասարդը շնորհակալություն հայտնեց տանուտերին յուր հյուրասիրության համար, իսկ վերջինս համեստությամբ հարեց։

— Ավել պակասը բաշխես, աղա, գեղի տուն ա. Հմմեն վախտ աղիկ (թանկագին) զոնաղի արժան բան լընարվիր։

— Այդպես մի՛ ասեք, խնդրեմ, շատ շնորհակալ եմ, — ընդհատեց Պետրոսը։

Իսկ քահանան, որ չէր սիրում ճաշելուց հետո իսկուն հեռանալ, որպեսզի ստամոքսին ժամանակ տա յուր մարտողական գործողությունն սկսելու, կցեց ընդհատված խոսակ-

յությունը, որի նյութն, յուր կարծիքով պետք է հետաքրքրում լիներ Կամսարյանին:

— Ասքմ ես շատ ուտելուց հիվընդանում չե՞ս... էս ա զաթսուն տարեկան մարդ եմ, սատանի անգաջը խով, հա մի տեղս ցաված չի: Դորթ ա, ջանով չաղ (գեր) չեմ, համա ոսկորս ընենց զայիմ (ամուր) ա, որ ձեռա էրկաթ տաս մի- ջից կծալեմ: Էս դիմ նրանից ա, որ լավ ուտում եմ: Հրես, տանուտերն էլ գիտում ա, թե որ ուզեմ, էրկու դազան (պղինձ) կերակուրը մի նախասըմը (շնչումը) կուտեմ: Անգաջը կանչենք Սոլոմոնն սարկավագին: Մի օր Սևանա վանքումը նստած ենք, էլի ըսենց ուտելի վրա խոսք վեր եկավ: Սոլոմոնն ինձ հարցրեց թե՝ «ա'յ էրեց, քանի՛ իշխան (իշխանաձուկ) կարաս մինհետանց (միանգամից) ուտել»: Ասի, սարկավագ, հինգը կուտեմ: Ասավ՝ կարալ չես: Ասի մարշ (գրազ) գանք. ասավ՝ գանք:

Մարզ եկանք էն պայմանով, թե որ ես հինգ իշխանն ուտեմ, հո ուտեմ, ինձ հալալ, թե չէ, մին արծաթի բռնոթա- ման առնեմ տամ իրան: Իմ բախտից էդ օրն էլ Ելենովկի ղո- րիցը (կողմից) խի՛ բոլ (առատ) իշխան ին ղրկել վանքի հմար: Ամա ի՛նչ իշխան. էն ղաշաղ (մաքսանենք) իշխան- ներից լըմանաս է, որ Թիֆլիս տեսել ես, էն որ մինը ըսկի էրկու գրվանքա գալիս չի. սրանց մինը՝ չորս, յա հինգ գըր- վանքա կըլեր: Հենա սարկավագը հինգ մենծ մենծը զոկից: տպավ աշշուն (խոհարարին), ասավ.—Աղա, էս դիմ կտա- նես մենծ ղազանումը կիսաշես. եղո սինումը (սկուտել) կդարսես կբերես: Ասավ՝ «աշքիս վրան»: Բլբյուլյանց վանա- հայրն էլ, աստոծ կարգի, պատարագի պահի, խի՛ լավ մարդ ա, ասեց, «աղա, աղը տեղն արա՛, անալի շըլի, թե չէ տեր- տերի փորը կցավի»: Ասեց «ըգենց կանեմ, հայր սուրբ»: Էն ա ըսկի մի սահաթ լըքաշեց, տենեմ զոչաղ աշշին հինգ իշ- խանն էփած սինումը դարսած, տաք-տաք, շալքը (գոլորշին) բանցրանալեն բերավ դրավ առաջս, հետն էլ չորս լավ փա- փուկ հացեր: Օրը ըսենց լավ օր էր, մենք էլ հայաթումը (բակում) ուոի ծառերի տակին, կանաչկոտումը նստոտած:

Միաբաններն էլ դիմի հվաքվել են գլխիս որ տենան թե հինգ  
իշխանը ո՞նց պտի ուտեմ: Էն ա հենց որ աշխին սինին դրավ  
առաջը, էրեսիս խըլընանեցի, ու «աստուած իմ, ի քեզ յու-  
սոցա, մի ամաշեցից, և մի ծիծաղեսցին դինե թշնամիք  
իմ»... ասեցի. Հու կցեցի ուտիլը... Մինը կերա, էրկուաը կե-  
րա, իրեքը կերա, շորսնչինումը ուղեցի նափաս (շոմշ) քա-  
շեմ, Թուրդ Գրիգոր վարդապետը ասավ «ա՛յ տղա, բանդ  
օրուրդ ա բնում»: ասի չէ, Հայր սուրբ, յանդիշ էս, Իգնա-  
տիոս վարդապետն էլ, որ հլա էն վախտը սաղ էր, ասավ  
«ա՛յ էրեց, ընենց արա՛ որ զազախեցուց էրեսը սև մթողաս»:  
Ասի արխային կաց, Հայր սուրբ, էրկու էսքան էլ որ ընի,  
կոտեմ, միայն թե կարաք մի քիչ դինի հասցրեք ինձ: Ասավ  
«էս սհամին»: Էն ա լուսահոգին կանչեց փոքրավորին, ասեց.  
«ադա՛, զնա իմ դուզաբումը (պահարան) պստի կուլի (գո-  
րակ) մեջ դինի կա, բերա: Փոքրավորը վաղ տվավ, բերավ:  
Էդ ազբաթիւներ գինին գլխիս քաշեցի թե չէ, մին էլ տենամ,  
ինչ որ կերել չի՝ քշեց տարավ, ընենց որ ասես ըսկի բան  
չեմ կերել: Ասի, Սոլոմոն սարկավագ, էս էրկուան էլ ուտիլու  
եմ, Համա սրանե բան չի լիլ. մի իրեքն էլ խաշիլ տու բեր:  
Տենեմ սարկավագիս ունդ ըսուշը զնաց:

— Էդ հլա կեր, խաշիլը հեշտ ա, ասավ: Էն ա ես նոր  
ժեկելանց կցեցի ուտիլը Տասը մնուա շրքաշեց, քու արելը,  
էրկու իշխանն էլ մաքրազարդեցի, ինչկի գլխների զողերն  
էլ (ուղեղն) թամուզ ծծեցի, կովի մնացած գինին էլ վրան  
քամեցի ու եդ նստա:

— Ապրես, Տեր-Վանի, ապրես, կերածդ քե Հալալ, —  
ասեց վանահայրը: Մնացած վարդապետնին էլ գուվեցին  
ինձ, ամա դե Սոլոմոնի սրտին որ դանակ խփիր, արյուն չեր  
գուրս գալ, մին ընդյուր հմար, որ մարզը տանուկ էր տվել,  
մին էլ ընդյուր, որ ինքը վանքի տնտեսն էր, նըհախ (իզուր)  
տեղը հինգ իշխան էր կորցրել, էդ ո՞նց պտեր մուռանալ:  
Ա՛յ էդ օրվանից դեսն ա, որ դիմի իմ հոնարը ճանաշում հն:

Կամսարյանը, որ քիչ առաջ լսում էր քահանային հե-  
տաքրրությամբ, հուսալով թե նրա զրուցից կարող է քաղել

«պիտանի» տեղեկություններ, այժմ արդեն ձանձրացավ, տեսնելով որ նա այդքան երկար խոսում է միայն շատ ուսելու վրա, կամ գովում է յուր որկրամոլությունը այնպիսի պարծանքով, ինչպես մի ուրիշը կովեր յուր քաջությունը, կամ մեծ գործերը: Այդ հանգամանքը, նույնիսկ, շարժեց երիտասարդի դժբո՞ւթյունը այն պատճառով, որ նրա առաջ բացավ դարձյալ գյուղացու ցավերից մինը և հիշեցրեց նրան թե՝ որքա՞ն անհրաժեշտ էր իրեն՝ հավատարիմ մնալ յուր ուստին: Ուստի նա կտրուկ և մի քիչ էլ կոշտ ձայնով հարցրեց:

— Տեր-Հայր, դուք ուսելուց զատ ուրիշ բանի մասին չե՞ք կարող խոսել:

Քահանան հասկացավ տրված հարցի ոչ-հարգական նշանակությունը և լուրջ կերպարանք առնելով, պատասխանեց.

— Ընչի՞ չեմ կարող, որդի, հենց դրա՞ համար չեմ եկել ըստի: Ելվախտ (քիչ առաջ) ախար իմ տիրացուն ասեց թե էն Թիֆլիսից աղան եկել ա, որ մեր շենքը կենա. թե Թարսաշայի ըսմատրիտելը (վերակացուն) ասել ա, միթու, գու եկել ես ըստի ապրես ու մեր գեղացուց օգնես, բախտավորացնես: Ասի՞ ասծու խեր խաբարը քե, ա Մոսի, Էդ նշի՞ լավ բան ես ասում. մեր գեղն հենց գհե (այդպիսի) մին մարդի ա կարուտ... ամա շի՞ թե սխալվում ես, յա քե հետ զարաֆաթ (կատակ) են արած. ասավ՝ գիտում չեմ. լսածո հմ ասում: Հմի ես էլ եկա, որ իմանամ, թե էդ բանը զո՞րթ ա, թի՞ սուս:

Պետրոսը հանկարծակիի եկավ, նա այդ տեսակ հարցի չեր սպասում, ուստի և շիմացավ ի՞նչ պատասխանել:

Մինչդեռ տանուտերը, իբրև թե հյուրի դիտավորությանը լավ տեղյակ, շտապեց պատասխանել.

— Հալբաթ որ զարաֆաթ են արե. քաղքցի աղա մարդ իմա՞լ կանա գեղ նստիլ. էն կուզա հմմեն յաներ շուռ գալ, գեղեր, քաղաքներ տեսնալ, ընդյուր խամար էլ կայներ է միր գեղ:

— Դրուստն էդ կլի: Ախար ես էլ ասըմ ևմ նա ըստի ո՞նց կարա մնալ,—Հաստատեց քահանան, ապա դառնալով երիտասարդին՝ Հարցրեց.—ասել ա (կնշանակե), դու Հմի՛ ճամփորդութի՞ն ես անում:

Կամսարյանը գլխով Հաստատության նշան արավ:

— Ո՞նց ա, մեր գեղին Հվա՞նում ես:

Երիտասարդը բացասեց, դարձալ նշանով, չկամենաւ լով կարծես խոսել: Իսկ տանուտերը Հարեց.

— Աղան մեր գեղ ըսկի ըրխավնիր, Հմմեն դեղերեն փիսն էս ա, —ասում ա:

— Հա՞՛, բա էս/ խի՞ չես Հվանում, —Հարցրեց քահանան:

— Սրա ի՞նչը Հավանեմ, սա Հո գեղ չէ, ավերանոց է, —խոսեց վերջապես Կամսարյանը:

Այս դիտողությունը քահանայի ինքնասիրությունը գրգըռեց. «ո՞նց թե իմ Հովված գյուղին ավերանոց անունը տա», մտածեց նա երկի և տաքացած ասաց, —տես Հլա ի՞նչ աշ ասում... ա՛, սրանե լավ գեղ կլի՞... Բա էն արարած աշխարի տեր թագավորը մեր Զըբիլուին Հվանել ա, էդ դու ո՞նց չես Հվանում:

— Ո՞ր թագավոր, —Հարցրեց Պետրոսը:

— Հանգուցյալ Նեկոլայ Պավլիշը, քա մանում չե՞ս:

— Ո՞նց է Հավանել, չեմ իմանում:

— Ընենց ա Հվանել, որ եկել ա մի գիշեր ըստեղ կացել:

— Այդ ես չգիտեմ:

— Բա խի՞ չես գիտում, հուսում որ առնըմեր, ըսենց բաներ կարթըմ չե՞ք:

— Այդ մեկը չեմ կարդացել:

— Թե հեն ա, ասա, մենծ բաները թողնում եք, պուճութ բաները կարթըմ լի՞, —նկատեց քահանան, իբր թե կամենաւ լով ստացած վիրավորանքի փոխարենը հատուցանել:

— Դա մեծ բան չէ, մի Հասարակ տեղեկություն է, —նկատեց երիտասարդը:

— Բա որ մենծ բան չի, խի՞ Հըհն Սեանա սուրբ Աստ-

վածածնի եղցու գալթումը գրած կպցրած ա թէ՝ «Յ թվին,  
Հոկտեմբերի 6-ին, չորեքշաբթի օրը մեծապոր կայսր Նիկո-  
լայ Պավլիչը եկել ա մեր Զբուխուումը մին գիշեր կացել»:

— Կարող է պատահել:

— Ո՞նց թէ կարող ա պատահել, քե ասըմ եմ պատահել  
ա, բա հայեվար չեմ ասը՞մ:

— Հավատում եմ, էլի:

— Բա որ հվատում ես, խի՞ մեր դեղին հավան չես կի-  
նում:

Կամսարյանն այս անդամ չկարողացավ ծիծառը զսպել  
և վեր կենալով տեղից, ասաց.

— Դե որ արդպես լավ գեղ ունեք, տարեք ինձ ցուց  
տվեր:

— Լավ, գնանք, — ասաց տեր-Վանին և վեր կացավ տե-  
ղից: Տանուտերը նույնպես ընկերացավ նրանց:

## ԺԱ

Գյուղամիջից անցնելիս նրանք հանդիպեցին հիսունը  
անցած մի կարճահասակ, փոքրագեմ, խուզած մորուքով,  
սուր հայացքով և գոտեպինդ հագնված մարդու, որ չնայե-  
լով տարիքին, հանապարհն ընթանում էր ժրությամբ: Մո-  
տենալով քահանային, նա հանեց մորթի գղակը, «Օրհնյա՛  
տեր» ասաց և ապա նորեն գլուխը ծածկելով, բարեկց տա-  
նուտերին և նրա հյուրին.

— «Աստված օրհնեցի», ո՞ւստա Պետի, էդ ո՞ւր ես  
գնում, — հարցրեց քահանան:

— Ա՛ դեր, ասըմ են Խոչան եկել ա, Հրաման ա բիրել,  
որ էն խեղճ Սայու, տունը վեր գրի, գնըմ եմ տենամ կա՛-  
րամ խնդրեմ, աղաշեմ, բալքի թն (գուցե) մարդ ա, սիրով  
ուհամ (գութ) ընկնի, մի քիշ էլ ա մոհլաթ (միջոց) տա:

— Ա՛ Պետ, ես Խոջին տեհա, գընում էր Սեմենովկա,  
ասեց էգուց եմ եղ գալու, — հայտնեց քահանան:

— Հա՞:

— Հա՞:

— Դե են ա, ասա, գնացել ապրիստավի եղնից էլի՛, շուն պրիստավը էրեկ ընդեղ էր... էդ հու բանը դժարացավ, — գուշակեց գյուղացին:

— Դե խի՛ ա դժվարանում. թե մո՞լաթ տալու ըլի, էկուց էլ կըտա, — հուսագրեց քահանան:

— Զէ, ա դեր, պրիստավը որ եկավ, բանը խարաբ կրլի. ուսւ մարդ ա, լլուզուն փիտում չենք, խոսքը հըսկանում չենք. «պաշու գուռապի» ա ասիլու հու խեղճի էլած չեւածը փեշատի (կնքի), նրա հետ մենք ո՞նց խոսանք:

— Ա՛, հրես խոսզզն ըստի չի՛, ասլանի տոլ կանգնած, ուստի լըւզուն էլ գիղա, փուանդինն էլ, — ասաց քահանան, ցույց տալով Կամսարյանին:

— Հա՞՝, դե ո՞ւր ա, էդ հու ասծու օղորմութինը կըլի:

— Ի՞նչ բան է այդ, — հետաքրքրեցից երիտասարդը:

— Քստեղ մի գեղացի ունենք, Խոջա Միրզին փող ա տալացուք (պարտ). սա ուզում ա բարեխոսի, բալքի թե Խոջան մի քիշ էլ ա մո՞լաթ տա, — բացատրեց քահանան:

— Պարտականը, երկի, դրա ազգակա՞նն է, — հետաքրքրվեց Պետրոսը.

— Զէ, հեռու մարդ ա. ամա դե սրա հմար դի՛փ էլ ազդական են: Ով որ էս գեղըմը նեղության մեջ ըլի, սա պտի վագ տա քյոմակ անի (օգնե): Աստոծ օրհնի, լավ ջան (Հոգի) ա: Ամա մին փիս խասյաթ ունի. ջատ ա ճշմարտախոս. (ասենք զաղախեցիք զիփ ըդենց են. սա էլ Զաղախիցն ա քոշած): Հարիր անդամ ասել եմ՝ ա՛ Պետ, խոսքն ընենց մարդու ճակատեցին ես խփըմ, որ նա 22կլվում ա. ըդենց մանիլ, որդի: Ասում ա չէ, ա՛ դեր, դու զիտում չես, լավն հենց էդ ա:

— Ի հարկե, լավը նա է, որ մարդ ճշմարտախոս լինի և խոսքը ճակատին ասե, — հաստատեց Կամսարյանը:

— Բա՞՝, զո՞ւ էլ ես ըդենց ասըմ. դե էն ա, ասա, երկուսդ մին զինի (հավատի) մարդիկ եք էլի: Դե որ ըդենց ա, ե՛կ, ծանոթվիր էս ուստին: Ա՛ Պետ, զի՞տում ես սա հո՞վ ա, — դարձավ քահանան գյուղացուն:

— Զէ, գիտում չեմ,—պատասխանեց վերջինս:

— Ես Թիֆլիզից ա եկել, Հուսումնական տղա ա, մեր մհալները (գավառները) ման ա գալիս, տենում ա, քննում ա. կըլի որ էդ տեհած, քննածն էլ գիր շինի, յա գաղեթ գցի: Ամա դե մեր գեղին հավան չի կենում: Վախում եմ մեզ վրա փիս բաներ զրի: Հմի էս ա տանում եմ շենք ման ածեմ, բալքի շրտեհածը տենա, հվանի: Դու էլ մեզ հետ ե'կ, զուշաղ մարդ ես. կըլի մի-մի հետ էլ զո՞ւ սրա չուղարը տաս,—ասաց քահանան ծիծաղելով:

— Լավ կըլի, գնանք,—համաձայնեց գյուղացին:

— Տեր հայր, ես գիր շինող, կամ գաղեթ գցող չեմ. ինչո՞ւ այս մարդուն սխալ տեղեկություն ես տալիս,—նկատեց Կամսարյանը ժպտալով:

— Դիփ մեկ ա, էսօր շրշինես, մեկել օրը կըշինես. յա չէ մին տարուց եղը: Հուսումնականներին ես լավ եմ ճանանշում: Գալիս են ըստեղերք ման գալիս, բաներ տենում, լսում, իմանում, եգո գնում: Անց ա կենում մին, էրկու, իրեք, յա չէ հինգ տարի: Մին էլ տենում ես էն բաները, որ ըստեղ տեհել, իմացել են, դիփ մին-մին դուրս են տվել գաղեթում: Մարդ արմանում ա թե՝ ախացեր, բա էդ տնարանդնին էս հինգ տարվա միջումը ըսկի մի բան էլ ա մտահան շարի՞ն: Մի հետ ըստեղ մի թեմական էր եկել, Հոգևոր տերի հրամանովն ուզում էր բեխանց հմար Հուսումնարան բանա, անունը Պոռշյանց էր, զիտում չիմ, ճանաշում ես թե չէ:

— Ճանաշում եմ,—ասաց Պետրոսը:

— Հա, ուզում էր բանա: Ղորթ ա էլլիկը (<sup>Շ</sup>ողովուրդը) փող շուներ, Հուսումնարանի բանը գլուխ չեկավ, ամա գեինքը խի՞ լավ մարդ էր. Հետը քաղցր զրից ինք անում: Զուն նրա մին գիրը Դիլի ձեռքս էր ընկել, կարդացե՛լ ի, դիտում ի, որ լավ գրող ա: Մին օր հարցրի թե պարոն թեմական, էդ հին-հին բաները ո՞րդից ես՝մացել, որ զրել ես: Ասավ՝ բեխությունից: Ասի՛ բա էտ ո՞նց ա, որ քան, էրեսուն տարումը մոռացել չես, դիփ ընենց սարքին զրել ես: Ասաւ՝

ընենց ա, մոռանալ չեմ: Ասի՞ բա խի՞ ես մոռանում եմ: Ասավ՝ ընդուր, որ աստոծ քու գոգրեն ուրիշ թահը ա շինել, իմն ուրիշ: Ասի՞ բա խի՞ իդենց շատ եք գրում. ախր մինը դրմ եք բոլ ա (բավական է), երկուսը զբրմ եք բոլ ա. խի՞ որ ճոնդը կցում եք, ել բաց շեք թողնում: Ասավ՝ բնենց ա, ճար չի լիլ, որ շբգրենք ջաններս մղմող (ցհց) կընկնի:

— Բա է՛, ասել ա Հիւլանդութին ա էլի՞—զարմացավ Թետին:

— Հիւլանդութին ա, բա՞: Չե՞ս տենում, մինը որ մեր շնից գնմա արանը հունձի, ընտեղի զարասուից (Ճաշճաշուր) խումում, գալիս ա՛լստի՞ զերմը բողազիցն ա կենում: Տարբեթինի թունդը վախար տել ա տալի (զառանցում է). ասում ա՛ «Ճրեն սատանեն էկավ, Ճրեն գժոխքը բացվել ա, յա չէ՝ Ճրեշտակնին կոխիլ են տալի սատանոց հետ»: Ասրմ ես. ա բալամ, ընտի սատանա չկա, բստի դժոխք չկա, էղ խի՞ դժե բաներ ես խոսում: Ասում ա՝ «բա քո՞ն եք, տենում չե՞ք են պուզավուր (եղչերավոր) մհծն սատանեն, որ Հարին կոացրած, ալավի (բոցեղեն) ջիդան (նիգակ) ձեռքումը, կոքները (ատամները) որձըցնելեն Ճրես գալիս ա թի մեզ կո՞չ տա»: Հմի ասելս են ա թի՞ էղ Հուսումնականնին էլ, ուզեն չուզեն, պատի պրեն. չուն Հուսումը որ առնըմ են, դժև մին հիվանդութին մտնըմ ա մեջները: Իրանք էլ չն պիտում թի՞ խի են գրում. ամա դե որ շբգրեն, սրտները կծագի, յա ոնց որ թեմականն էր ասում, ջանըները մղմող կընկնի:

Տեր-Վանին, որ չէր մոռանում Կամսարյանի՝ «ուտելու ժամին արած վերջին դիտողությունը, այժմ արգեն աշխատում էր ոչ միայն զատ խնդիրների, գրողների կամ ուսումնականների մասին խոսել, ա՛լ և ընդունելով, որ երիտառդրդ դրանցից մինն է (թեպետ և նա Ճերքեց) կծու ակնարկներ էր անում նրա հասցեին:

Պետրոսը, սակայն, զվարճանում | Էր տեր-Հոր այդ ուշադիր ջանքը տեսնելով:

Երբ նրանք մի քանի ծուռ անցքեր անցնելով հասան մի քարձր տեղ, քահանան կանդ առավ և երեսը դեպի ծովակը դարձնելով, ասաց Կամսարյանին.

— Դե հմի մտիկ տո՛ւ, տե՛ս, սրանե լավ գեղ կը լի՞։ ա՛յ, դեսը մտիկ տո՛ւ, դենը մտիկ տո՛ւ, էս վերեկի կապիտը տե՛ս... այս ասելով նա ցույց էր տալիս շրջակա լեռների, ծովակի և կղզու տեսարյաններն ու դեղեցիկ հորիզոնը, որ պարփակում էր երկնքի պայծառ կապուտակը.

— Դրանք ձեր գյուղի առավելությունները չեն, այլ քննության, — նկատեց Կամսարյանը. — այդպիսի առավելություններ ամեն տեղ կարելի է գտնել: Ի՞նչ ունեք դուք ձեր գյուղում ձեր ձեռքով շինած, այն ցույց տվեք:

— Ի՞նչ պտի ունենանք. ա՛յ էս տներն են, էս էլլանները, էս մարաքները... հո տեսնո՞ւմ ես:

— Տեսնում եմ, բայց դրանք տներ չեն, այլ ախոռներ, մարդ արարածը շպետք է ապրի դրանց մեջ:

— Բա մենք խի՞ ենք ապրում:

— Չենց ես էլ դրա վրա եմ զարմանում, թե ի՞նչպես էք կարողանում ապրել:

— Գի՞տաս ի՞նչ կա, աղա, — մեջ մտավ ուստա Պետին, — ես, դորի ա, հմի գեղը եմ ապրըմ, ամա շատ ման եկած, շատ աշխարհ՝ տեսած մարդ եմ: Ինձ որ ուստա են ասըմ, նրա հմար ա, որ փեշակով (արհեստով) դյուրդյար (հյուսն) եմ, քաղաքներում շատ եմ բանել: Ռեան էլ եմ ըլել, Բաքու էլ, Թիֆլիս էլ, Վերջն ամեն տեղից զգկել՝ եկել եմ էս գեղը մտել իմ շինած կոկալի (Խոճթի) տակը, թե ի՞նչ ա, մի քիչ դինչ ապրեմ էս հալալ ու սայա (արդար և պարզ) մարդկանց հետ:

«Դու որ ըրմանում (զարմանում) ես, թե մենք ո՞նց ենք կարում էս ախոռներումն ապրիլ, ես ըսկի ըրմանում չեմ քու բրմանքի վրեն. չուն քաղքի սիրուն տներումը ծնված, փափուկ ապրած, փափուկ մենծացած տղան ո՞նց կարա դիտա թե էս ախոռներումն էլ ապրիլ ա ըլում: Ամա դե ես, որ տեսնում եմ, թե գյուղացին ո՞նց ա գործ շինը, ո՞նց ա

ըռավոտից ինչկի ըիկուն քար ու քոլին կպշում, Ցողի հետ  
կոփի տալի, արմի տակ քրտնում. ես կարած ասիլ, որ էն  
թահը նեղութին քաշովի հմար էս ախոռնին էլ շատ են: Չուն  
վաստակած շանը, թիլացած ոսկրները դինջացնելու հմար,  
ամարաթ (ապարանք) չի' պետք. բավական ա, որ մի ծած-  
կած քյունջ ըլի ու էդ քնջումը մարդ իրան փրտակի (ծած-  
կի), միան էնքան ըլի, որ թոռ ու թացը չնեղեն, յա չէ քա-  
մին քրտնած մեջքը շապցնի: Ըստեղ ոնց որ տղամարդը,  
ընենց էլ կինարմատը սաղ օրը գործ են շինում, շուն ցա-  
վերնին շատ ա, կարիքնին մենծ, պտի անեն որ ապրեն, ծե-  
րը ծերին հասցընեն, շանողը կմնա սոված, նրան ոչ աստոծ,  
ոչ էլ բանդան հաց կտա: Դրա հմար ա, որ ըստեղի մարդը  
տան սիրունութենի, յա կարդ ու սարդի վրա մտածում չի,  
շուն սոված փորի հմար ամենից առաջ հաց ա հարկավոր,  
տկլոր չանին էլ մի կտոր կտավ: Դե մարդ, որ էդ էրկու բա-  
նը զոռով ըլի ձեռք բերում, էլ ուրիշ բանի վրա ո՞նց կարա-  
մտածիլ:

«Ա՛յ, ուրիշ ա ձեր քաղքի բանը. ընտեղ փողը միր ա  
(չոր միրդ, այսինքն՝ առատ). էնքանը բիրդան (միանգամից)  
ո՞նց են հվաքում, գիտում չեմ, միան էս կա, որ մինը թի  
աշխատում ա, տասը մուֆթա են ուատում, ո՛չ ջափա կա, ոչ  
նեղութին: Մեր տեղը թե որ կնիկը մարդու զադար (շափի)  
շըքրտնի, տանը կեսը կմնա սոված. ամա ընդի կնանիքը  
դիփի պարապ են ման գալի: Զեր էն Սադարի (փոխարքաջի)  
տան ուզի քուշեն շրկա՞՝, ընդեղով շատ եմ անցկացել: Էդ  
քուշեն ըռավոտից ինչ կի բիկուն ման եկողով լիքն ա  
ըլում. մարդ որ մտիկ ա տալի, մնում ա ըրմացած, թի բա  
էս մարդիկը բան ու գործ շունե՞ն, էս խի՞ ըսենց պարապ  
ման են գալի: Յա չէ էդ կնանիքը, էդ աղջկերքը ես հարիր  
ասեմ, ոու հազար ասա, դիփի հագված զարթարված, քարե-  
ղաննին վրա, թուբուն-թուրուն (խումբ-խումբ) կոնափոնուկ  
(թևանցուկ) ծիծաղելով, հոհուալով, բաշ-աշաղա, բաշ-յու-  
խարի (գլխիվայր, գլխիվեր) դնում, գալիո են: Մտածում  
ես, թե բա սրանք տուն շունե՞ն, տեղ շունե՞ն, քյուլփաթ

(զավակներ) չունե՞ն, կար ու կարկատան չունե՞ն, հաց ու լվաց չունե՞ն, էդ խի՛ ամեն բան թողած, ըստեղ բոլթա են քաշում (Ճեմում են):

«Ե՞րի օր էս բաները հարցըի մեր Խաչթառակցի վարժապետին, նա գլուխը ժաժ տվավ հու ասեց.—ունին, բա չունի՞ն, էդ կնանուց մեծ փայը մարդ էլ ունին, բեխսք էլ տուն ու տեղ էլ, ամա դե դիփի վեր են ածում հու գալիր ըստեղ բոլթա քաշում: Աստոծ ասավ, հաստատ պահի թագավորութինը բոլ (շատ) հուսումնարաննի ա շինել, բեխսք քը ըսավոտանց դրկում են ընտեղ, մարդիկն էլ գնըմ ենիրանց քյասիբութինին, էդ վախտը էնա կնանուց ասողը աշըլմիշ ա ըլում (բացվում է) շուտ են անըմ հագվում, դուգվում, զբթարգում, անուշ հոտերը վրան շաղ տալիր տունը ու տեղը թողնում նորարի աբով (հուսով), թե պսաց բեխսերը էլ ունեն, նրանց էլ ծծմերի յա դարավաշի (ազախնի) վրեն վեր գցում ու իրանք գուրս պրծնում, գալիս ըստեղ սեյր անում, մինն՝ իրա գոստի (բարեկամի), մեկելը սիրականի հետ, շատերն էլ հենց մենակ չանեն ցից արած՝ շափում, չափչոփում են քուշեքն ու մեյդաննին: Էնեցներն էլ կան, ասավ, որ հվաքվում են իրանց մի թայդաշի (ընկերուհու) տունը ու օրը ցերեկով նստում, ինչկի ճաշի վախտը զումար խալում: Եփ տղամարդի տուն գալու վաղեն հասնում ա, գալիս, հետը հաց են ուտում ու նրա գուս գալուց եղը, էլ մեկել նորից տուն տեղ թողնում, գնըմ զումարբազիանեն... աստոծ վկա, ասեց վարժապետը, էս՝ թաճրի կնանոց հյորմը (իրավունքը), որ ինձ տան է՛, դիփունանց մի թոկով կկապեմ հու բերեմ Սկանն ածհմ: Ասի, ա բալամ, էլ խի՛ էդ զիբիլները բերում Սկանն ես ածում, ու նրա անմահական ջուրը մուռտառում, հազիր էս լվլած Քուսն ածհապրծնե՞ս:

«Ըսենց էրկանցնելիս միտքն էն ա, որ ասեմ թե քաղաքումը, որ դժկ շատ փող՝ կա, հալբաթ մուֆթա ապրողնի էլ շատ կըլեն: Դե քե այսն ա (հայտնի), որ մուֆտա ապրողի իշտահը համեշա (միշտ) բաց կլի. էսօր որ մին կերա-

Ֆրւր աւ ուտում, էգուց՝ էրկուսը, իրեքը, յա չորսը կուզի. Էսօր որ բուրդ ա հագնում, էգուց աբրիշում, զառ ու պարբար կուզի, էսօր որ մի էտաժանոց տան է կենում, էգուց էրկու յա իրեք էտաժանոց կուզի. ղհենցով (շանը դռս զա աշխատողին), ուտիլն էլ կրոլանա, հագնիլն էլ կծխանա, տունն էլ կսարգի, քաղաքն էլ կզրթարվի: Ամա դե ըստել ոչ հեշտ աշխատիլ կա, ոչ մուֆտա ուտիլ. դրա հմար էլ կարում շեն սարդ ու կարսի եղից ընկնիլ: Այ, հրես էս կտուրն անցնենք, եկ մտիկ տու տե՛ս, մեր կնանիքն ի՞նչ են անում. տե՛ս ձերումք ըսկի սրանց քաշած նեզութենի հարիր փայլից մինը կարա՞նիքաշիլ...»

Այս ասելով, ուստա Փետին ուզեկիցներին առաջնորդից պետի մոտիկ կալր, ուր այդ միջոցին մի մայր, երկու հասկավոր և մի վոքք աղջիկ, ութամյա մի տղայի հետ, զբաղված էին ցորեն կալսելով: Մայրը եղանը (հեծանոց) ձեռքին, պատում էր կալի շուրջը և շարունակ հասկերը հավաքում կալամեց, ուր պատում էին երեք զույգ կամներ: Դրանցից երկուսը լծած զույգ եղներով, վարում էին երկու մեծ աղջիկները, իսկ երրորդը, որին լծած էր մի մատակ, վարում էր փոքրիկը, հեծնորդ եղրոր օգնությամբ:

Սրեւ թեպետ այրում էր վերևից, սակայն կալսողներն աշխատում էին ժրությամբ: Երկիփեղի կամները, որոնց վրա ամուը կանգնած էին աղջիկները, պատում էին կալում զույգը զույգի հետեւ և իրենց կայծաքարե, սրածայր ատամներով անտեսանելի կերպով ցողունը կտրտում, հասկերը տրորում և կալի հարթածածկ մակերեսույթի վրա ցորենը փոռում: Փոքրիկ տղան շարունակ երգելով, կամ ճշալով խրախուսում էր յուր ձին, որ առաջնորդում էր եղներին. մինչդեռ աղջիկները համեստ ու լուակյաց, երբեմն միայն հարվածում էին ամոլներին, երբ սրանք ծանրացնում էին իրենց ընթացքը, կամ ցոռուկներն իջեցնում դեպի փափուկ հարդը, մի քանի ցողուն հափշտակելու հուսով:

— Տեսնո՞ւմ ես,—մատնացույց արակ Փետին աշխատողների վրա, —սրանք Ավանանց ըեխեքն են: Հերը՝ մեծն

առյի հետ Հրեն Հանդումը ուրիշի հունձն ա անում, թե ինչ  
ա, կարա մի քանի շահի տուն բերել, ըստեղ էլ կնիկն ու  
աղջկերքը իրանց կալն են կալսում: Չորսն էլ կինարմատ  
են, էն պստիկն ա տղա. ամա դե դիմի էլ տղամարդի բարե-  
բար գործ են շինըմ: Հենց գիտում ես հեշտ բան ա էս կեծ  
արկի տակին սաղ օր կաղնիլն ու պտիտ պտիտ անի՞լը:  
Զեր խանըմներից (տիկիններից) մինը, թե որ հինգ մնուստ  
էս կամներից մնի վրեն մնա, գլուխը շուռ կտա, տափը  
կպրանի (վայր կընկնի): Հրես զու էլ տղամարդ ես, ամա  
կարում շես տաքին դիմանալ, գոնդիկը բռնել ես, որ արևով  
շննկնես: Ամա էն շահել աղջկերքը, տե՛ս ըսկի այնումընին  
(հոգերնին) ա՞, ուրախ, դվարթ իրանց գործին են: Էս ա,  
երկու սհաթից ետք բանը քութա՞ կանեն (կվերջացնեն),  
Ավանն էլ տղի հետ հանդից կգառնա երկուվ, յա իրեքով,  
եղանը ձեռք կառնեն, դարմանը քամուն կտան, մութը հլա  
շնկած, ցորենը տուն կրիրեն, դարմանը մարաքը կածեն,  
իրանք էլ կգնան ասծու տված մի կտոր հացը կուտեն ու  
կրնեն: Հմի ասա տենեմ, ըռավոտից ինչկի որիկուն բա-  
նած, վաստակած էդ խալխի հմար շատ հարկավո՞ր ա, որ  
ամարաթ չունե՞ն, յա չէ փափուկ կողինը, որ միշումը  
բնե՞ն: Ա՛յ, հենց էս կտրանը, յա չէ տանը տափի վրեն, մի  
խսիր են գցում հու պրանում. դժարն էն ա, որ աշքը հուփի  
կալան (փակեցին) ընենց գինջ քնում են, որ ասես դրախ-  
տումն են: Ամա ձեր տեղը, էն ամարաթների միշումը, շա-  
տերը կարում շեն թե գշերը քնեն. փափուկ կողենքումը տա-  
պակ-տապակ են գալի: Էդ նրա հմար ա, որ գործ շեն շի-  
նում, ջանըներին ջափա (նեղություն) շեն տալի, թե ինչ ա,  
մի բիշ էլ ա հոգնեն, անուշ քնի համ տենան: Հմի զու կա-  
սես, թե ըստոնք էլ էդ ա մինչա (մի հատ) կալ ունեն, ըսօր  
կպրծնեն, էգուց էլի՛ պարապ են: Ամա դե դՅե շի: Ա՛յ, ըս-  
տեղ համեցեք, ուրիշ բան շանց տամ:

Այս ասելով Պետին առաջնորդեց ուղեկիցներին գեազի  
մի ուրիշ կտուր և այդտեղից ցույց տվագ դիմացի տան  
պրահը, ուր մի քանի կանայք նստած բուրդ էին գպում:

— Տեսն՝ ևմ ես, ըստոնց կալաբանը վերջացել ա. ցուրենը խորել են, դարձանը հվաքել. տան իրեք տղամարդկաց մինն էն ա մալի(ապրանքի) հետ, մեկելը ձիանը առածր քրահտարություն ա անում, մինն էլ մեշումը տախտակ արաշում: Կնանիքն էլ, տեսն՝ ևմ ես, պարապ չեն ըսկի. սանդերքը առաջներին՝ հայահայ (շտապ-շտապ) բուրդ են գզում: Հրեն, էն պառավին էլ տեսն՝ ևմ ես, ճիշտակի տակին. լուսինը չծեգած՝ նա ընտեղ նստած ճլվըդտացնում ահարսների գզած բրդից թահր թահր (տեսակ-տեսակ) թել արմանում. բարակը՝ շալի հմար, միջնակը՝ գուլքի, մի քիչ հաստը կարպետի, շվալի, յա խուրզինի. քոլքի (տականը) թելիցն էլ շվան են գործում, յա շարիդ (թոկ) ճլորում: Ասենք էդ բաները՝ մի շեն անում: Էս ա ձմեռը որ գա, ձյունը գուսը կոխի/մեր կնանոց ներսի գործը ըտենց բաներ արլելու: Ա՛յ, տեսնում ես, էս չուխեն (կապա) ու շալվարը սրանց թելը/մերս ա մանել, շալը կնիկս ա գործել: Էնքան պինդ ա, որ հինգ տարի կգիմանա. Էս տոլազներս (սրնապան) քլորս բանն ա. գուլպաներս իմ պստի աղջիկն ա տրել: Ուզում եմ ասել, որ մեր կնանիքը պարապ օր չունին վարուցանից, հունձ ու կալից, շիր ու բլիթից եղը, գալիս են ըսենց բաները: Հաց ու լվացը, կար ու կարկատանն էլ համեշա (միշտ) կա ու կա:

— Ա՛ Պետի, բա խի՝ քու բիբու (մորաքրոց) վեստանը (ոստայն) շանց չես տալի. Հրեն էյվանումը երհանած,— մատնացույց արավ քահանան:

— Դե էն ա, տեսնում ա ըլի՝,—նկատեց Պետին:

— Տեսնում ա, հա՛, ամա դե մին ասա, թե էն ի՞նչ ա է:

— Ի՞նչն է ի՞նչ—հարցրեց Պետրոսը:

— Այ, էն զորբա (զորեղ) սարը,—շարունակեց քահանան, ցույց տալով տներից մեկի սրահում կանգնացրած գորդի ոստայնը.—նրա երգենքը հինգ գազ ա, լենքը՝ իրեք: Էն ա որ գյործեն պրծնեն կարպետի էրդենքը տասը գազ արդառնալու: Էդ սրա բիբու տունն ա. շորս տղա ունի, չորս

Էլ հարս: Էնու գյորա (ըստ այնմ) էլ աստոծ պահած, բոլ  
թոռներ, տղա ու աղջիկ: Նրանց կեսը հունձ ու կալով ա  
ըլած (զբաղված), կեսն էլ հրեն շար են ընկել վեստանի  
տաջին, կարպեառ գործում են: Մին էրկու ամսից եղը  
պատրաստ ա ըլելու, հարիր մանեթն էլ ականջիցը կախ:

Կամսարյանը հետաքրքրվեց գորդի գործով և հարցրեց,  
թե արդյոք չի կարելի մոտ գնալ ու նայել:

— Բա իսի՞ չի կարելի, գնանք, — ասաց ուստա Պետին  
մ առաջ անցավ:

Տան սրահին մոտենալուց, ոստայնի առաջ նստող  
Հարսներն, ու աղջիկները ստի կանգնեցին. Նրանցից առա-  
ջինները երեսները սրովեցին, մինչդեռ վերջինները հե-  
տաքրքիր աշքերով նայում էին եկողներին: Գորդի գործին  
նայելուց առաջ, Կամսարյանի ուշադրությունը գրավեցին  
կանանց տարօրինակ հագուստները, որոնք, իրենց տեսա-  
կում, ներկայացնում էին տգեղության մի ուրույն տիպար:  
Նրանք, իսկապես, որոշ ձև չունեին, այլ կազմում էին զա-  
նազան տարագների աններդաշնակ մի խառնուրդ: Կանանց  
գլուխներն, օրինակ, կապված էին վիրականի նմանությամբ,  
մինչդեռ բերանները ծածկված էին քնթակալով, արցախսեց-  
վոց պիս: Հագուստնին էր կարճ դերիա, որի տակից, մոտ  
երկու թիզ երկարությամբ երևում էր, նուխեցի՝ կանանց  
հատուկ, կարմիր ու լայն վարտիք. դերիայի վրացից կապած  
ունեին գողնոց, իսկ նրա վրացից հագած թաթար կանանց  
բաճկոնակ: Այդպիսով այդ հագուստը, որ մեծ մասամբ հին  
էր և պատառութեան, ստանում էր մի տգեղ ձև, որ ավելի ևս  
տգեղացնում էր կանանց կազմվածքը, որն, առանց այն էլ  
չերի էր գրավչությունից: Նրանց մեջքերնին հաստ էր ու  
տափակի, փորերնին գեպի կուրծքը բարձրացած, գեմքերնին  
տգեղ, բերաննին մեծ, իսկ մորթերնին արևահար: Կանանց  
ձեռվ հագած էին և աղջիկները, միայն այն զանազանու-  
թյամբ, որ սրանց երեսները բաց էին և միայն գլուխները  
ծածկված հասարակ չթե ազլուխով:

Մինչդեռ Կամսարյանը զննում էր կանաց տգեղ արտա-

րինը և Հիշում Արտվյանի «Վերք»-ում կարդացած նկարագիրը հայ գեղջկունու մասին, ուստա Պետին մոտեցավ ուստայնին, բացարաւթյուններ տվալ նրա կազմության, թեւերը հինելու, գորդը գործելու և այն կտրելու, կամ ուստայնի վրայից հանելու մասին: Ապա դառնալով հարսներին սասց:

— Բի իսի՞ եք կազնել, նստեցեք բան արեք. Էս զոնալը ճանպրդ ա, ուզում ա տենալ, ո՞նց եք կարպետ գյործում:

Կանայք իսկույն իրենց տեղերը բռնեցին և գոյնզգույն թելերը նորեն ձեռք առնելով, սկսան արագ արագ գործել յուրաքանչյուրն յուր բաժին հինվածքի վրա:

Այս անգամ արգեն Պետրոսը զիտում էր գեղջկու հիների գործը ճշմարիտ հետաքրքրությամբ, և զարմանում, թե ինչպես նրանք, առանց առաջնարը որեւէ նկար ունենալու, թելերի այդ պարզ հինվածքի վրա հետզհետե հանում էին կանոնավոր գծերով դեղեցիկ նկարներ, կամ թե ինչպես մի քանի դույգ ձեռքերի զատ-զատ գործվածքը վերջն ստեղծում էր մի ամբողջ նկար:

— Այ, սա լավ բան էր, սրան հավանեցի, — ասաց Կամսարյանը, երբ նրանք հեռացան գորդ գործողներից:

— Ա՛, մեր ո՞ր բանը չի լավ է՛, դու հա ի՞նչ ես տեսել, — պարծեցավ տեր հայրը:

Այս խոսքի վրա նրանք անցնում էին մի ուրիշ տան բակով, ուր ընտանիքի մայրը և յուր երեխաները դրաված էին մի տարօրինակ աշխատությամբ:

Բակի մի անկյունում տղաներից երկուսը, մերկ ոտքերով ու սրունքներով կոխսկրտում էին մի ինչ որ սև դանդված, որի վրա երրորդը, հետզհետե ցրում էր դարմանի ավելցուկ: Մի փոքր հեռու, մայրը նույն զանգվածից մի մասն առանձին առած, մեծ ջանքով հունցում էր, իսկ միշահասակ մի աղջիկ, կռները սոթած, այդ հունցվող մասից շինում էր բլիթներ և ուժով դարկում տան արեգընդեմ պատին: Այնպես որ կրաշաղախով ծեփված այդ պատը, հետզհետե սկսուի

բլիթներով ծածկվելով, ստանում էր մի շատ աղտեղի կերպարանք:

- Այդ ի՞նչ են անում, — Հարցրեց Կամսարյանը:
- Ցան են շինելում, — պատասխանեց տանուաերը:
- Ցա՞ն:
- Հա՞:
- Ի՞նչ բան է ցանը:
- Ցան չե՞ս գինալի, էն որ էսօր մեր օջախ կվառեր:
- Ցանը սրանք աթարին են ասում. Ցրեն էն, որ ընդիւմը տված տված (գիզված) ա, — բացատրեց տեր Հայրը, ցույց տալով Կամսարյանին դիմացի բակում դանվող քակորի կույտը:
- Ինչի՞ց են պատրաստում, — հետաքրքրվեց Պետրոսը:
- Չես տեսնում ինչի՞ց ա, — Հարցրեց քահանան:
- Տեսնում եմ միայն սե-կանալ գույնի մի ցեխ. կարծիմ մեջը խառնված է տավարի...

— Ոչ թե խառնված ա, հենց ինքը տեղն ու տեղը տավարի թրիք-ա, — ընդհատեց քահանան և ապա կամենալով մի գիտական ծառայություն անել երիտասարդին, սկսակ բացատրել, թե ինչպիս են պատրաստում աթարը: — Էս որ կա ամենից լավ տեսակն ա, շուն տավարի անխառն թրիք ա: Սրբն էս ա սրբենց թագա-թագա (թարմ) հվարում են, հետը գարման խառնում ու պատի վրեն ըլիթում: Էս որ շուրանա, ընկնց ա էրիլու, ոնց որ խազալը (շոր տեղե): Ամա էն մեկելը, որ ընդի դարսած ա, ըսենց չեն շինում: Եփոր ձմեռը տավարը տանն ա ըլում, կյումումը (գոմումը) բոլ (առատ) թրիքում ա. էն թրիքը հվարում են գյուս թիրում հայաթն (թակ) ածում, նրա հետ էլ շատ վախտ խառնում են ձիան թրիք, յա ոշխարի կտիտ. ամա դեւակն էն ա, որ ըսկի շխառնեն, շուն նրանք լավ չեն էրում: Ետո էդ հայաթի մեջ ածած թրիքը մին զոլից կոխ են տարի մարդ թե անսառն, մի զոլից էլ վրեն ավելացնում: Գարունքին երբ որ տավարը դյուս ա գալի շու, հայաթի թրիքը շատ կոխ տալուց շուրացած ու տափակած ըլում:

էն ա, սկսում են բահով կտրիլ ու մեկել նրեսով արիվումը շարիլ: Եփոր լավ շուրանում ա, սկսում են դարսիլ, դեղ շինիլ: Վերջը էդ դեղի շորս զոլը յանով ծեփում են, որ անձրեց ժթռչքի, յա արեց ցրիվ չգա: Ում աթար էլ, որ գարունքին շուրացած չի ըլում, նա էլ պահում ա, ամառը կտրում: Ըսենցով ամեն մարդ իրա վառելիքի պատրաստութինը տեսնում ա, որ ձմեռը նեղութին չքաշի:

— Եվ բոլոր տարին, ուրեմն դուք այդ գարշահոտ քահորն եք այրում, — Հարցրեց Կամսարյանը զզվանքից երեսը թթվացնելով:

— Էլ խի՞ ա գարշահոտ, դույոր սվոր չես, քե դճե աթվում, ամա մեղ հմար ամոթ չըլի ասիլը, հըլա մի քիլ էլ անուշահոտ ա, — ասաց քահանան ու ծիծաղեց:

Կամսարյանի գեմքին խանաց մի ժպիտ, որ արտահայտում էր խոր արհամարհանք: Տեր-Հայրը, սակայն չըմբռնեց այդ ժպիտի նշանակությունը, մինչդեռ ուստա Պետին չկացողացավ լոել.

— Աղա՛, մեղ վրա տենում եմ, ծիծաղում ես. դե որ դճե ա, մի ասա՛ տենեմ ո՞նց անհնք, մեր հացն ընչով թիւնք, կերակուրն ընչո՞վ էփենք, յա տունը ընչո՞վ տարացնենք:

— Ինչո՞վ է էփում կամ տաքացնում մալականը:

— Փետով:

— Դուք էլ փայտ վառեցեք:

— Բա որ փետ չունե՞նք:

— Ինչո՞ւ նա ունի:

— Մեշան նրանից մոտ ա, մեղանից հեռու. Համ էլ մրանք հարուստ են, մենք աղքատ: Էն փողը որ պտի տանք ժիետի, տալիս ենք մի ուրիշ պակասութենի. օրինակ մի ձի ենք առնում, որ մեղ հմար բան անի, յա կով ենք ձեռք բիրում, որ նրա կաթով բեխանցը պահենք. յա չէ շորի, փաշասի ենք տալի, որ մեր տանեցոց տկլորութինը ծածկենք. պակասութին շատ, ես ո՞ր մինն ասեմ: Էս, տավարի թրիքն էլ, որ ուրիշ գեղերում տան բուաջին կիտում են, շենք հու-

տացնում, մենք վետ ենք շինում, էրում, բսենց զեյթաթ (ինքարողություն) անելին, յա նամուս պհելին խի՛ շես հիմանում:

— Դա ոչ զեյթաթ անիլ է և ոչ նամուս պահիլ, այլ ուղղակի ծուզություն: Օգտվում եք այս բանից, ինչ որ ունիք, ինչ որ պատրաստ կա, թեկուզ այդ պատրաստը լինի՛ կեղտ կամ ապականություն:

— Ուրեմն, քու ասիլով մենք ծյուլ մարդիկ ենք, էլի՛:

— Հա, ծուլ եք, ծուլ որ Անեները հիմա այս սարերը ծառերով ծածկել էիք, անտառը բերել, ձեզ մոտեցրել: Ժամանակը երեխ այս լանջերը ծածկված են եղել ծառերով, ձեր պատերը նրանց անխնա կոտորել են, դուք էլ ահա, եկել մի շիվ շեք տնկում, ճարներդ կտրած, իհարկե, քակոր պիտի այրեք, ուրիշ ի՞նչ անեք:

— Եփ քու ասիլով քակորը, որ փիս բան ա,—մեջ մտավ քահանան,—բա խի՛ աստվածաշնչումը մարդարեն ասում է՝ «ուհա՛, եսու քեզ քակոր արջառո... և նովավ արացես զհաց քո...» Ուրեմն, աստոծ էլ ա հրամայում, որ հացը քակորով թիսենք:

— Եօ, տեր-հայր, դու էլ մի քանի բան ես բերան առել, տեղի անտեղի խարջում ես... խոսք եմ ասում, խոսք լսիր,—նկատեց Կամսարյանը տարանալով:

— Ո՞նց թե մի քանի բան... ուզում ես սազ Դավթի սաղմոսը, յա Առակաց դիբքը, յա Ժողովողին գլխից ինչ կլի տակը անգիր ասե՛մ, մզյար դու տեր Վանուն ընջի՛ տեղ ես գրել:

Կամսարյանն այս անգամ նույնիսկ ուշադրություն չդարձրեց քահանայի խոսքերին և դառնալով Պետուն ասաց.

— Սյո, բարեկա՛մ, այս ժողովուրդը ծուլ ժողովուրդ է. նա որ ծուլ Ակնի, կաշխատի, մարդավարի կապրի. սա կյանք չէ, որ նա վարում է. սա զյուղ չէ, ուր նա ապրում է. նամիր է. մի կստրված ձեռք չի գտնվել, այս ամբողջ շենի մեջ, որ մի տեղ, գոնի մի հատ ծառ տնկե..., սա խայտառպկություն չէ:

Այս ասելով նա գարձավ տանուտերին և ցանկություն հայտնեց տուն վերադառնալու, որովհետև ման գալուց պրդեն հոգնել էր: Քահանան ու Պետին բաժանվեցին նրանցից, իսկ տանուտերն յուր հյուրին առաջնորդեց գեղի տուն:

## ԺԲ

**Ա**ռեւ մայր մտնելու մոտ, ծովակի կողմից, սկսել էր փշել զով քամի, որին գլուղացիք սպասում էին ժամեժամ: Նրա անելիք ծառայությունը մեծ էր:—Ճորենի խուրձերը կալսել, հասկերը արորել էին, այդ քամին պիտի գար, որ դարձանը զատեր: Եվ ահա կալերի վրա, որոնց մեծ մասը գտնվում էին կտուրներին, սկսվել էր մեծ շարժում: Ամեն տեղ ձեռքերը գործում էին ժրությամբ, եղանները բարձրանում ու իջնում էին և իրենց հետ միասին օդի մեջ մրրկում հարդի փոշեխառն վիժակներ: Դրանցից քամին դարձանը խլելով տանում, փռում էր կալի եղերքին, իսկ ցորենը նորեն գետին իջնելով, կազմում էր մաքուր հատիկների կույտեր:

Կալերում սկսված այդ աշխատանքը գյուղի օդը տուգուրել էր դարձանի մղմեղ փոշիով: Երիտասարդ Կամսարյանը մի քանի տեղերից անցավ, գրեթե փախչելով, որպեսզի օդում փոթորկվող այդ փոշիից ազատե թե՛ թոքերը և թե՛ հագուստը: Երբ նա տուն հասավ, մի առանձին հաճությամբ նայեց սրահում դրված ինքնայենին, որ հակառակ սպասածին, բավական մաքուր էր և որի մեջ զուրը եռում էր արդեն: Տան տիկինը սպասում էր ամուսնուն, որ սա կա թե՛ը պատրաստելու, ըստ որում գյուղերում այդ ոչ սովորական գործողությունը կինը յուր ուժից և իրավունքից վեր բան է համարում:

Թեյ խմելու մեծ ցանկությունը հիշեցրեց Կամսարյանին ճաշի պատրաստության բոլոր պատմությունը և զգուշցրեց նրան միջոցներ ձեռք առնել, մաքուր թեյ խմել կարենալու համար:

— Ես լավ թեյ ունիմ, թողեք նրանից դնեմ, — ասաց

Երիտասարդը և առնելով թեյնոցը, որ հենց նոր տանուտերը ստացել էր կնոջից, յուր ձեռքով լվացավ, մաքրեց հին կեղտերից և ապա տուն մտնելով, հանեց պայուսակից յուր թանկանոց թեյը, մի քանի պողունց դրավ թեյնոցի մեջ, եռման ջրով մի անգամ ողողեց և ապա նորեն վրան ջուր լեցնելով, դրավ ինքնայեռի վրա:

— Էղ իմա՞լ օղողիր, շայի խամ կորսըվավ,—նկատեց տանուտերը:

— Զէ, չի կործիլ. շայի վրա մի անգամ պետք է քիչ ջուր լցնել, թափել, որ փոշիկից մաքրվի և ապա նորից լցնել,—բացատրեց Կամսարյանը:

— Մե խետ պրիստավ էկավ մեր գեղ, մեզի դո՞ւադեղավ. ինչոր շայ ուզեցի քեզի պես վլամ (վլամ) էն շըթոռգեց, ասավ խարաբ կեղնի:

— Պրիստավը չի հասկացել,—կարճ կապեց Կամսարյանը:

Թեյը պատրաստելուց հետո, երիտասարդն յուր ձեռքով լվացավ նաև բաժակներն ու պնակները և սեփական սրբիչով սրբեց: Ապա թեյն ածելով, բաժակներից մինը դրավ տանուտերի և մյուսն յուր առաջ: Հետո հանեց նույնպես մաքուր քաշակից շաքար և դրավ մեջտեղ:

Տանուտերն յուր բաժակն առնելով մի ումպ ճաշակեց և բացականչեց.

— Օխայ, էս ինչ անուշ ա. իմա՞լ մեր շայ իսենց խոտ չի տալում: Էրևում ա, մենք շինել շնչի գինա:

— Զէ, ոչ թե շինել չփիտեք, այլ թե ձեր շայը լավ տհսակից չի լինում. լավ տեսակը թանկ է:

— Խա, իդենց ա', —համաձայնվեց տանուտերը:

Բայց ինչպես երևաց, վերջինս շար աշք էր ունեցել. Երիտասարդը դեռ բաժակը բերանը չէր տարել, որ նոր բարձրացած մի քամի, հարեան կալի կողմից, բերավ մանրամազ դարմանի փոշին ու տանուտերի սրահը լցրեց: Պետրոսն իսկույն փակից աշքերը փոշիկից նրանց ազատելու համար: Ապա երբ քամին անցավ, առաջին բանը, որ նա

ւեհսավ, յուր թեյի բաժակն էր, որ ամբողջովին ծածկվել էր դարձանով ու փոշիով:

— Ֆու, ի՞նչ խայտառակություն, — շշնչաց նա ինքն իրեն և բաժակն առնելով, թեյը թափեց գետին:

— Եղ իմա՞լ զեն ածիր. դարման ա, բան չկա, ա՛յ, ձեռքով դուս խանեմ, հմմենը կթամրզի, — ասաց տանուտերը և մատները խրելով յուր բաժակի մեջ սկսավ դարձանի փշուրները հանել և ապա խմել:

Կամսարյանը թթված դեմքով նորեն լվացավ բաժակը, նորեն լցրեց և այս անգամ արդեն զգուշության համար պնակը գրավ բաժակի բերանին, որպեսզի մինչև սառչիր փոշի-բան ըընկնել մեջը:

— Դժվար է, շատ դժվար է այստեղ ապրել, — նկատեց Կամսարյանը գլուխը շարժելով:

— Իա, քե նման ազա մարդու խմար դժվար ա, ամա մեղ խմար խեշտ ա, — Բարեց տանուտերը և խոսակցությունը այս անգամ սրանով վերջացավ:

Մութը կոխելուց տանուտերը կամենում էր ընթրիքի պատրաստություն տեսնել, բայց Պետրոսը ասաց, որ չի սիատի ընթրե, միայն խնդրեց, որ իրեն քնելու տեղ ցուց տա, որովհետեւ շատ հոգնած է-և կամենում է հանգստանալ:

Տանուտերն առաջարկեց քնել ներսի տանը, ասելով որ դրում կարող է մրսել, որովհետեւ գիշերը ծովի կողմից երբեմն փշում է ցուրտ քամի:

Պետրոսն համաձայնվեց և ներս գնաց, որ ահսնե թի ո՞քան է այդ տունը հարմար, գոնե մի գիշեր քնելու համար: Բայց ինչպես ցերեկով, նույնպես և այժմ, այդտեղ բուրում էր խոսավության ու ծուխի անախորժ հոտ:

— Այստեղ չեմ քնիլ, — ասաց նա և գուրս եկավ:

— Էս մի օթախն էլ տես, թե խավնիս, խստեղ քնա, — ասաց տանուտերը և բաց արավ սրահի վրա գտնվող մի ուրիշ դուռ:

Պետրոսը ներս մտավ: Դա սենյակի նման բան էր, միշտ ցածր ցանկով կտրված: Առաջին մասը փոքր ի շատե-

մաքուր էր և պատի տակն ուներ տախտակաշեն մի թախա: Միայն թե այստեղից էլ փշում էր թրիքի շափազանց սուր հոտ:

— Այս հոտը ո՞րտեղից է, — Հարցրեց Պետրոսը քիլը վեր քաշելով:

— Են մեկել յանը տավարի գոմն ա, խոտը նրանից ա, ամա տավար իստեղ չի, են դրսի յանն ա. մինակ ձին ա հապած:

— Դուք, ուրիմն, այստեղ նստում կամ քնո՞ւմ եք:

— Խրամանք ես. ձմեռը շատ փայ էսոր մեջ ենք նստելում յա քնելում. քնդուր որ տավար մեջն ա ըլում, էդ պատճառի էլ տաք ա ըլում.

Պետրոսը գլուխը շարժեց և դուրս գնաց:

— Արտեղ լավ է, այստեղ կքնիմ, — ասաց նա ցույց տալով սրահում դրած թախտը:

— Կամք խրամանքիդ ա, — պատասխանեց տանուտերը և Հրամայից Սալբիին անկողին պատրաստել:

Մինչդեռ երիտասարդին պաշարել էր այն միտքը, թէ ի՞նչ անկողին պիտի բերեն իրեն և թե արդյոք ինքը կարո՞ղ պիտի լինի քնել նրա մեջ, տանտիկինը դուրս հանեց գունավոր կտավի մի կապոց, որի մեջ խնամքով պահված էր մի ձեռք մաքուր անկողին: Նա բացավ կապոցը, անկողինը պատրաստեց և հեռացավ:

Պետրոսը անկողնի մաքրությունը տեսնելով, հանգստացավ: Բայց անհայտ անմաքրությունից ազատ լինելու համար էլ նա կարեոր համարեց հանել պայուսակից երկու մաքուր սավան, որոնցից մինը փոեց ներքնակի վրա, իսկ մյուսը՝ վերմակի տակից: Երբ տանուտերը «քարի գիշեր» մաղթելով հեռացավ, Պետրոսն իսկույն հանվեց ու պակեց: Հոգնածությունն ու զով գիշերը անուշ քուն բերին երիտասարդի աշքերին:

Հետեւալ առավոտ նա աշքերը բացավ արշալույսից առաջ: Եվ որովհետեւ այդ ժամին տանուտերի ամբողջ տունը սուրի վրա էր, ուստի ինքն ևս շտապով հագնվեցավ: Կամ-

նալով լվացվել աղբյուրի սառը ջրով, նա յուր հետ առավ լվացման պարագաները և հարցնելով աղբյուրի տեղն ու ձանապարհը, ուղղվեցավ այն կողմը:

Աւզին, որ տանում էր դեպի ջուրը, անցնում էր մի թմբից, որի առաջ այդ վայրկինին բացվում էր բնության գեղանկար մի պատկեր, որի հանդիսարանը Գեղամա ծովակն էր: Այդտեղից նայելուց երևում էր նրա ընդարձակ դաշտը, որ կարծես շրջակա լեռները ետ մղելով, ձգվում, տարածվում էր դեպի արևելյան հարավ, փայլելով առավոտյան վճիռ երկնքի տակ գորշ-կապույտ գունով: Թեթև մկանունքները հազիվ շարժում էին խաղաղ մակերևույթը, որ հեռվից թվում էր անշարժ ու միապաղադ: Քանի դեռ արեկելքը չէր բոցավառում, երկնքի վրա լողացող ամպերից, նրա հոսանքներում անդրադառնում էին սպիտակ ու մոխրագույն շերտեր: Բայց երբ նա շառագունեց, ծովակն սկսավ փոխել յուր պատկերը: Շրջակա ափերը փալվիլում էին ոսկու պես, մինչդեռ խոր հարավը հետզհետե ներկվում էր քրքումի գունով: Մի փոքր ևս, և ահա արևի սկավառակը փայլեց Մարտ-Դաղի կանաչագուրկ կատարին և յուր առաջին ձառագայթներով սկսավ ոսկեզօծել լճի արևմուտքը բըռնող Զիշեկիի և հարավը փակող Յուշեփելերի լանջերը: Այդ տեղերից հետզհետե նրա շողերն իջնելով՝ վառում էին Սկանի մենավոր կղզին և ապա ծովակի ընդարձակ մակերեւութը, փոխելով նրա դեղածուփի մկանունքները ոսկու կամ արծաթի, և փայլեցնելով նրանց բյուր աղամանդ աշերով:

Երկար դիտելով այդ գրավիչ տեսարանը, Կամսարյանը հանկարծ ետ նայեց դեպի գյուղը, տեսավ նրա գծուծ և տիսուր պատկերը, Հիշեց այն ամենը, ինչ որ մի օրում նա այդտեղ տեսել ու քննել էր և նրա սրտից ակամա գուրս թռավ մի հառաջանք:

— Ա'խ, եթե կարողանայի, եթե հնարավոր լիներ...

Այդ նրա բարի, գաղափարական «ես»-ի ձայնն էր, որ բնության հրաշափառ տեսարանի առաջ դարձյալ իշխեց հնչելու... Բայց անձնասիրության «ես»-ն ևս քնած չէր այդ

ժամանակ. նա էլ յուր կողմից շշնչում էր երիտասարդի հլու ականջին.

— Ի հարկե, չես կարող, ի հարկե, անհնար է... այս ժողովրդի կյանքն ու վիճակը քսաներեք դար առաջ այսպես է նկարագրել Քսենոփոնը, քսան երեք դար հետո էլի այսպես կնկարագրե մի ուրիշ Քսենոփոն... այստեղ դու ոչինչ փոխել չես կարող:

Հստ երևույթին այդ «հս»-ին էր վիճակված տանել հաղթությունը: Որովհետև, երբ երիտասարդն աղբյուրին հասնելով տեսավ նրա վիճակը,—մի հորդառատ ու վճիտ աղբյուր, որ մարդկանց ծարավը հագեցնելու համար սոզում, անցնում էր Այծեմնասարի, ո՞վ գիտե քանի թագուն խորշերից և հասնելով այստեղ, փոխանակ սրբատաշ ավազանում ցայտելու, անարդ ու անպատճիվ գետահետում էր ընդարձակ տիղմի և անասունների արտաթորությանց միշով—նա գլուխը շարժեց և ասաց.

— Ոչ, անկարելի է, մեր ուժերից վեր է... դա միայն ցնորք է և բանդագուշանք. ես իզուր եմ այստեղ ժամանակաձառ լինում:

Այսպիսի որոշման գոլուց հետո, այսուամենայնիվ, աղբյուրի ականակիտ վիժակը հրապուրեց երիտասարդին: Նա տիղմի մեջ ընկած քարերը կոխելով մոտեցավ սառ ջրին, առատորեն լվացվեցավ և երեսը սրբելով, վերադարձավ գյուղը:

Ինքնայերը դարձյալ եռում էր: Առաջին օրվա եղանակով Պետրոսը պատրաստեց թեյը և հրամիրելով տանուտերին, սկսան խմել և դրա հետ միասին էլ վայելել լոշից, պանրից և խաշաճ ձուերից բաղկացած մի նախաճաշ: Դրանից հետո տանուտերը հայտնեց Հյուրին, որ ինքը մի քանի ժամով մինակ պիտի ձգե նրան, որովհետև հանդումն անհրաժեշտ գործ ունի:

— Իսկ ես կամենում եմ գնալ Մեանը տեսնել և հենց այսօր էլ վերադառնալ Դիլիջան,—ասաց երիտասարդը, ինքն

էլ զարմանալով, որ կարողացավ այդպես շուտ յուր որոշումը հայտնել ուրիշին:

— Էս մի օրվա մեջ Սևան էթալ, դառնալ ու էստին մին էլ Դիլիջան հիջնել դժվար ա. ես քե ինենց ևմ խելքաթ (խորհուրդ) տալում, որ վանքեն գառնաս, գիշերն հանցնես մեր կուշտ, եղու են բաշտան (առավոտանց) Սիմոնովկեն տրոյկը (սացլակ) ապսպրինք նստես եթաս:

— Շատ լավ, այդպես կանենք, — համաձայնվեց երիտասարդը, ուրախանալով որ գործն այդպես հեշտ է վերջանում: Հետո ուզեց իմանալ թե ինչո՞վ պետք է գլուղից դնու մինչև Սևան:

— Իստեղից ձի կխեծնես մինչի էն ճոճ թումբը, որ մեր հառեցն է. ինոր մոտ կհիջնաս ծովի զրադ, ինտեղից թյուղենկով ձեն կըտաս. գյամբշին կկյա, կառնի կտանի:

— Զիու հետ միասի՞ն:

— Չէ, ձին կթորգես ծովի զրադ:

Կամսարյանը խնդրեց, որ տանուտերը տնից ելնելուց առաջ, վարձե յուր համար ձի, այլ և մի ընկեր, որ առաջնորդե իրեն մինչև կզզու հանդիպակաց ափը, թեպետ և այդ տարածությունը տասը վերստից ավելի չէր:

Կես ժամից հետո ամեն ինչ պատրաստ էր: Երիտասարդը թամբել տվակ ձին, յուր հետ բերած նոր թամբով, որ շատ գեղեցիկ էր և գրավեց մոտ եղող գյուղացիների Յիացմունքը: Ապա մի ուսով կախեց դաշտային մեծկակ դիտակը, իսկ մյուսովն յուր նոր, գեղեցիկ հրացանը, որ առաջին անգամն էր պատյանից հանում և հետո ձին աշտանակելով՝ առաջ անցավ: Առաջնորդ գյուղացին, որ միննույն ժամանակ ձիու տերն էր, գնալիք ճանապարհը յուցց տալուց հետո, հետեւց «աղին» ոտքով:

## Ճ

**Ե**րկար շակեց ճանապարհորդությունը, թեպետ կամսարյանը կցանկանար, որ նա մի քիչ երկարեր: Այսովհետեւ յուր թամբի և աշխույժ ձիու վրա նա այնքան էր իքին

երջանիկ զգում և փայլուն հրացանը, որ ուսից կախած էր՝  
այնպիսի մի հարգարժան առավելություն էր տալիս իրեն,  
որ նրան թվում էր, թե աչդպիսի տրամադրությամբ ու  
պատրաստությամբ ուղերություն կատարած ժամանակ,  
ինքն հոգվով ու սրտով ավելի է «մեծանում», քան թե էր իս-  
կապես, կամ ընդունակ դառնում կատարելու «մեծ գործեր»,  
որոնց մասին նա ասաց այնքան շատ երազում էր, իսկ  
այժմ զախենում մինչև իսկ մտածել... եթե երիտասարդի  
այդ տրամադրության վրա ավելացնեինք նաև հրաշալի  
եղանակը, որն արելի թեթև ամողերով սքովված լինելու պատ-  
ճառով, զով էր ու զգուրեկան, այլև ճանապարհի ճանդառու-  
թյունը, ըստ որում խճուզին ո՛չ խոչ ուներ ո՛չ խութ, նույն-  
պիս և լճափի անուշ հովերը, որոնք իրենց սուլի հետ բն-  
րում էին նաև դաշտային թռչունների բեկեքեկ երգերի ձաւ-  
ներ և վերջապես լծի սիրուն տեսարանը, նրա ալիքների  
ափնածիր ծփանքը, որոնք հաճախ զալիս, ողոզում էին  
խճուզու եղերքն ու արահետը, այն ժամանակ հասկանալի  
կլինի թե ինչո՞ւ Կամսարյանը ցանկանում էր, որ յուր ճա-  
նապարհը երկարեր: Բայց չնայելով այդ ցանկության, նա  
հասավ «Ճոռ թմբին» ավելի վաղ, քան սպասում էր:

Անցնելով այդ թումբն եղերող ճանապարհը, նա, առաջ-  
նորդի ցուցմամբ, իջավ լճափի և մոտեցավ խճավալի մեջ  
ցցված ժայռերի մի շարի, որ համարվում էր նախամատուց:  
Լճափին կալին նաև ուրիշ ուժատավորներ, որոնք սպասում  
էին կղզուց գալիք նավակին: Որովհետև այդ կետում (ը-  
նայելով, որ նա ավելի մոտ էր կղզուն, ուստի և ավելի էլ  
եկորներ էր գրավում) չկային վարձու նավակներ, ըստ  
որում տեղը ամափի էր և բնակությունից հեռու, եկողը  
պիտք է հրացանով նշան տար, որպեսզի կղզուց նավակ  
բերեին: Բայց որովհետև ուժատավորները հրացան չունեին,  
ուստի սպասում էին, որ կամ կղզուց նշանավոր հասցնի: Վերջին ակնկալու-  
թյունը կատարված էր: Կամսարյանն շտապեց փորձել յուր  
երկփողյա ամերիկականի զորությունը, դնելով նրա մեջ եր-

կու փամփուշտ և արձակելով նախ՝ աշ և ապա՝ ձախ փողերից։ Հրացանի ույժն, արդարև սաստիկ էր և որոտն ահավոր։ Կղզեցիներն, անշուշտ, իմացան, որ այդ ձայնը աղքատ գյուղացու հրացանի ձայն չէ, որովհետեւ երկրորդ հարվածից հետո իսկույն կղզու նավամատուցի վրա բուսան երեք հոգի, որոնք մտնելով այստեղ կապած նավակներից մինը, սկսան առաջանալ դեպի եկվորները։

— Կրտենա՞ս, բարեկամ, —խոսեց ուխտավորներից մինը յուր ընկերոջ հետ, —քյասիբն ընրուխամար ա կորում, որ քյասիր ա: Էս ճոճ մարդ եկած շըհլեր մեզի սաղ օր կթորդին ըստել... Էս խոքեորի արա՞րը ա:

— Ո՞վ է մեղավոր, որ դուք հրացան չունեք, որպեսզի նշան տաք, —մեջ մտավ Կամսարյանը, տեսնելով որ գյուղացին անիրավ տեղն է տրտնջում։

— Խրացան էլ ըլնի, դեղցուն էլի բանի տեղ չեն դնի, —առարկեց ուխտավորը։

— Ինչո՞ւ։

— Ընդուր որ գեղցին բան չունի նրանց տալու։

— Էհ, ամեն տեղ այդպես է, ով չի տալիս, նա չի էլ ստանում։

— Հմմեն տեղն ուրիշ ա, վանքն ուրիշ. Էս խոքեոր տուն ա, բյությունն էլ (բոլորը) խտեղ խավասար ին, ոչ ճոճ պետք ա ըլնի, ոչ պստիկ։

— Բայց տեսնո՞ւմ եմ որ կա։

— Եա, տեսնում եմ. իմա՞լ չեմ տեսնում, ընդուր խամար էլ ասում եմ, էս միիս բան ա, ասծուն տուրեկան չի։

— Բայց ախար առանց տալու էլ չի լինիլ։ Եթե ես շտամ, դու չտաս, մեկելը շտա, վանքն ինչո՞վ կառավարվի։

— Աստված խոքին լուսավորի խայոց թագավորների. Էնքան մալ ու դովլաթ ին թողե վանքի խամար, էնքան մյուլքեր, գեղեր, որ վանքն էլ ուտի, խայի քյասիբն էլ, ընկի չի վերջնա մինչ գալուստն Քրիստոսի։ Համա ի՞նչ անես, որ քյասիբին հեշ հիշկող չկա. ով որ զոռ ունի, էն առնում տանում ա: Դյուն, էրեսում ա, զարիր մարդ ես, վանքի

ավճակ (դրություն) շիս գինա. ամա մենք մոտիկ ենք. հմմեն բանն էլ մեր հատեցն ա: Խստեղ մի սարկավագ կա, քառառւն տարի ա վանքը կոխած ուտում ա. Հեշ մինն էլ ա շասում՝ էղ իմա՞լ ես անում: Ճոճ ուխտավոր, որ գալում ա, պաշտում, պատվում ա, ամա քյասիբին՝ հեշ դսի տունեն ներս էլ շի թորգում...:

Կամսարյանը, որ մի առանձին ջերմեռանդությամբ էր մոտեցել Սևանին և սրտատրոփ սպասում էր տեսնել ու համբուրել պատմական սրբավայրերը, ծանոթ վինելով զյուղացիների բամբասասիրության, հալած յուղի տեղ ընդունեց գեղջուկի բոլոր խոսքերը: Եվ համոզվելով, որ, ուրիմն, հայոց սրբավայրերում իսկ անկարելի է հանդիպել միսիթարական երկույթի, ճշմարտապես տիրեց և այդպես նախապաշարված էլ ոտք դրավ անարվեստ ու հնաձև նավակը, որ արդեն մոտեցել էր ափին:

Երբ բոլոր այդտեղ գտնվողները, բացի ձիապանից, տեղափորվեցան նավակում, երկու հուժկու թիսվարներ սկսան առաջ վարել ծանրաշարժ մակույկը, իսկ երրորդը դեկը բռնեց:

Հեռվից կղզու տեսքը գրավիչ ոշինչ չուներ: Նա տիսուր էր և մոայլ: Արեւ, կարծես, այրել, մրկել էր նրան: Կանաչ ծառերի խումբը, որ երկում էր մասամբ եղերին և մասամբ անշուր շինությունների հետեւմ, այլև բարդիների շարքը, որ պատում էր կղզու հյուսիսային ջրավը, չին մեղմում նրա կոշտացած պատկերը: Կամսարյանին թվում էր, թե խիստ անհյուրընկալ մի տեղ է դա, ուր դարձյալ պիտի կրե ծանր հիասթափություն:

Բայց երբ նավակը մոտեցավ ափին և երիտասարդը ստք կոխեց գետին, տեսավ, որ հեռվից չոր ու ցամաք և հազիվ բլրակի շափ երևացող այդ թումբը կանաչազարդ և բավական ընդարձակ մի գեղավայր է, հինավուրց ուռիներով տնկագործված: Կղզու դիրքը, հարավ արևմտյան կողմից, ներկայացնում էր լայնագիր մի տափարակ, սիրուն կանաչով ծածկված: Այդ տափարակի վրա, լճակից քիչ հեռու, կար-

գով շինված էին ուխտավորների սենյակներ, որտոք իրենց կեսը դեպի հարավ, իսկ կեսը՝ արևմուտ ունեցած դիրքով՝ ներկայացնում էին կղզու ներսը փակող մի ուղիղ անկյուն և ծառացում այդ կողմից պաշտպանող պատվարի տեղ: Այդ շինության մեջ բացված դռնից մտնելուց, Կամսարյանի առաջ բացվեցավ մի ընդարձակ և սիզավետ բակ, որի արևմտյան և հյուսիսային կողմը երկարանալով ձգվում էր հեռու, մինչև լճափը և փակվում բարդիների և ուսիների շարքերով: Իսկ հարավ-արևելյանը կազմում էր վանքի բուն բակը, հովանավորված հաստաբուն և սայմերաշատ ուսիներով: Այս մասի շարունակության վրա գտնվում էին ու Աստվածածնի սագաշեն եկեղեցին և միաբանության բազմաթիվ խցերն ու կացարանները, իսկ դրանց հետեւից անմիջապես բարձրացող և բուն կղզին ներկայացնող բլրի վրա՝ Սևանի ուրիշ մատուռները:

Հենց վանքի բակում միաբանության անդամներից երկու արեղաներ սիրով ընդունեցին թե՛ երիտասարդին և թե՛ մյուս ուխտավորներին և քաղաքավար հարցուփորձից հետո իմանալով, որ առաջինը շուտ պիտի վերադառնա, իսկ վերջինները պիտի գիշերեն, հրամացեցին փակակալին սենյակ հատկացնել գյուղացիներին և նրանց հարկ եղած պետքերը հոգալ, իսկ երիտասարդին իրենց հետ առնելով սկսան պըտաժնել կղզին:

Միաբանների քաղցր վարմունքը գեղջուկ ուխտավորների հետ մտածության առիթ տվին երիտասարդին: — Արդյո՞ք հոգեսր հայրերը լուր՝ իբրև զարգացած հյուրի ներկայությա՞մբ էր, որ այդպես քաղցր ընդունեցին գյուղացիներին, թե՛ նրանք հենց միշտ այդպես էլ ընդունում են նրանց և, սակայն, գյուղացիները սիրում են զուր տեղը բամբասել: Եթե այս վերջին ննթագրությունը Ճիշտ էր, ապա պիտք էր կարծել, որ հայ գյուղացին, ուրիշ շատ թերությունների հետ միասին տնի, նաև, ստոր հակումներ:

Երբ այս մասին հարց տվավ Կամսարյանը արեղաներին, նրանցից մինը պատտասխանեց.

— Խավար ու գիշին նկուղներում, ուր որ արև չէ թափանցում, վխտում են միշտ զեռուներ: Գյուղերում այնպիսի խավար է տիրում և այնպիսի խոր տգիտություն, որ բնակչ չպիտի զարմանաք, եթե տեսներ, որ գյուղացին բաժրասանքից ու զրախոսությունից զատ, վարակված է նաև ուրիշ չար ախտերով: Արև է հարկավոր, որ նրանց սառ հոգին ջերմացնե, նրանց մտքի անօթք լուսավորե, այդ արեք չկա՛, երբեք չէ ծագում. գյուղացին ի՞նչ անե...

Կամսարյանը, որ էդ վարկենին մոռացել էր յուր ուխտը, կամ որին այնպես թվաց, թե հոգեռական եղած տեղը աշխարհականը չպետք է ժողովրդի վրա մտածե, մի անդաւսպ պահանջ զգաց հիշեցնել հոգեղը հայրերին իրենց պարտականությունը:

— Ինձ թվում է,—ասաց նա,—որ հենց դուք ինքներդ կարող էիք դառնալ այդ արեք և ցրել գյուղերում տիրող խավարը: Ինչո՞ւ ուրեմն չեք անում: Մի՞թե, արդարե, ավելի լավ չէ մտնել ժողովրդի մեջ, ծառայել նրա բարոյական ու մտավոր շահերին, քան թե ապարդյուն ճգնվիլ անապառում:

Խոսող արեղան չպատասխանեց, բայց նրա ընկերը, որ ավելի երիտասարդ էր և ավելի աշխատժոտ, կանգ տուավ հին մատուոի կիսավեր ավերակի առաջ, որի մոտով անցնում էին, և ասաց.

— Զգիտեմ դուք ինձ ճանաշո՞ւմ եք թե՝ ոչ, բայց ձեզ, պարոն Կամսարյան, ես լավ եմ ճանաշում: Այն ժամանակ, երբ դուք գիմնազիոնն ավարտելով՝ գնացիք Փետերբուրգ, ես էլ ներսիցան դպրոցն ավարտած՝ սարկավագ էի: Հետո անցա հջմիածին և վարդապետ ձեռնադրվեցա: Իսկ այսօր, ինչպես տեսնում եք, ճգնվում եմ Սևանում: Բայց չնայելով այս ճգնության, որ յուր ապարդյուն խստություններն ունի, այսուամենայնիվ, չեն մարած սրտիս աշխայվն ու եռանգը, ասպարեզ եղած տեղը կալով եմ գործել, իսկ չեղած տեղը՝ գեթ ազատ խոսել: Թույլ տվեք, ուրեմն, որ ձեր

Հարցին պատասխանելուց առաջ, ինքս ձեզ տամ մի հարցուր, միևնույն ժամանակ, կլինի նաև ձեր պատասխանը:

Կամսարյանը լարեց ուշադրությունը:

— Ասացեք ինդրեմ, — շարունակեց աբեղան, — մինչեւ ե՞րբ պետք է դուք նման պահանջներ անեք մեզնից՝ առանձին, թե՛ հրապարակով և հավատաք թե արդար պահանջ եք անում: Որ հոգևորականը աղոթելուց, մկրտելուց և թաղելուց զատ ուրիշ, շատ վսեմ պարտավորություններ էլ ունի, այդ ես չեմ հերքում: Հոգևորականն, այս՝, կարող է լինել հենց այն արևը, ա՛յն պայծառ լուսաթուն, որ փարատում է ժողովրդի մտքի խավարը: Նա յուր բարձր կոչման շնորհիվ մեծ էլ դյուրություն ունի այդ ժողովրդի ամեն խավերը մտնելու, յուր հոտի ամեն մի անդամին մտերմանալու, նրա սրտի, հոգվո և զգացմունքների հետ խոսելու և այդպիսով էլ մեծ արդյունք առաջ բերելու: Բայց ո՞ր հոգևորականը կարող է այդ անել, միթե մե՞նք, արդի հոգևորականներս երբեք: Մենք ինչացո՞ւ ենք, ո՞վ է մեզ տվել այդպիսի կարողություն. ո՞վ է մեզ պատրաստել դրա համար: Մենք հոերկնքից չե՞նք իշել, այլ ելել ենք ձեր միջից. ինչ որ գուք եք, նույնն էլ մենք. փշիցը խաղող չենք քաղիլ, ոչ էլ տատասկից՝ թուզ: Տվե՛ք, որ ստանաք, սերմեցեք՝ որ հնձեք: Մի գուցե կարծում եք թե, հոգեոր կոչման հետ միամին, մենք ստանում ենք նաև խելք, գիտություն, գործելու շնորհ, կամ թե գերբնական մի զորության շնորհիվ, ազատվում ենք մեր մարդկային, սովորական կրքերից, ցանկություններից... Մի՞թե չգիտեք, որ հոգևորականների մեծամասնությունը հոգեոր կոչումն առնում է յուր վրա միայն յուր գոյությունը պահպանել կարենալու համար... Մի՞թե չգիտեք, որ ծուլությունը, հեշտ ապրելու տեսլը, արիության և աշխատասիրության պակասությունն է, որ ծնել է մեր այսօրվա հոգեոր պաշտոնյաների լեգենը և ոչ թե անձնվիրության ու առաքելության վսեմ գաղափարը, որի մասին նրանք նույնիսկ հասկացողություն չունին: Այս՝, գիտեք դիտեք նույնպես, որ հաղվագյուտ բացառություններ են

նրանք, որոնք այդ գաղափարով ոգեսրված, մտել են հոգեսր զինվորության մեջ, հուսալով կարենալ օգտակար լինել ժողովրդին, բայց որոնք իրենց սակավաթիվ լինելու պատճառով՝ խեղդվում, ոչնչանում են հոգեսրականության ամբողջը կազմող մեծամասնության մեջ... Այս այսպես լինելուց հետո, էլ ո՞րտեղ է մնում ձեր իրավունքը՝ պահանջներ անելու հոգեսրականությունից: Պահանջներ անելու իրավունք գիտե՞ք ովքեր ունին.—այն հոգեսրականները, որոնց հարացառություն անվանեցի և որոնք հաճախ կսկիծը սրտում և արտասուբն աշքերին զենքը զնում են վար, որովհետեւ «Մեծավորը» հրամայում է «Սուս կա՛ց. դու գիտում չես: առաջնորդը ես եմ, բակլան խաշած եմ ցանում»: Այո՛, այդ ձնշվածները, գործելու տենչով վառված, բայց միշտ իրավազուրկ զինվորագրյալներն են, որ իրավունք ունին պահանջներ անելու... այն էլ գիտե՞ք ումնից—ձեզնից, մտավոր ու նյութական հարստությամբ օժտված երիտասարդներից. նրանք են, որ պիտի ձեզ ասեն.—պարոններ, դուք ամեն տարի տասնյակներով ավարտում և վերադառնում եք հայրենիք. ձեր մտավոր պատրաստության շնորհիվ դուք լավ ըմբռնում եք ժամանակի պահանջը և ճանաշում ժողովրդի ցավերն ու կարիքը. միևնույն ժամանակ, ձեր բազմաթիվ լինելու շնորհիվ, դուք պատկառելի ույժ եք կազմում և այդ ուժով կարող եք մեծ անիվներ դարձնել. ինչո՞ւ, ուրիմն, չեք գործում, կամ ինչո՞ւ չեք մոտենում մեղ, սակավաթիվ զինվորներիս և մեղ հետ միասին դիմում դեպի այն ցանկալի բարձրությունը, ուր պետք է վառել ժողովրդի խավարը փարատող արել... Հայ արժանավոր հոգեսրականը երբեք չի ունեցել և այժմ էլ չունի ոչ առանձին շահ, ո՛չ չոկ միտումներ: Նա հնումն ապրել ու մեռել է ազգի համար, այսօր էլ նույնը կանե, ուրիմն, մի բաժանեք նրան ձեզանից, արհեստական անջրպետ մի՛ ստեղծեք և «կղերական» անունով մկրտելով՝ զատ շահերի, զատ ծգտումների տեր մի՛ հոշակեք նրան: Այդպես է եղել և է, արդարե, կաթոլիկ հոգեվորականությունը, որի պատմությունը ուսանում եք դուք

Հոգաբությամբ, բայց այդպիս չէ եղել երբեք հայ հոգևորականությունը, որի պատմության, ավանդ, մնացել եք միշտ անծանոթ: Եվ հենց այդ անծանոթությունն էլ եղել է պատճառ, որ հայ հոգևորականության արժանիքը չափել եք դուք միջնադարյան արհամարդիքներն ստեղծող և, այսօր իսկ, ագքերի խաղաղությունը վերիքայր շրջով կաթողիկ կղերի արարքներով: Բայց դա մոլություն է և նշանաբար անհիմական: Ժամանակ է, որ գեթ այժմ ձգեք մոլորությունը և հայ հոգևորականության պատմությունը ուսանիք: Ժամանակ է, որ դուք միանաք մեզ հետ և ձեռք ձեռքի տված մտնենք մոլովրդի մեջ: Դուք ազից, մենք՝ ձախից գործենք անընդհատ, քրտնենք, վաստակենք և այդ վաստակի ազնվական պառուզը—ստեղծած բարիքը մեր աշքով տհանելու և մեր ձեռքով շոշափելու քաղցրությունը վայելենք միասին:

Երիտասարդ արելան, որ ըստ երևույթին, յուր հիշած բացառիկ զինվորներից մինն էր և, անշուշտ, քաղցր հույսով Սևան մտնելով, հանդիպել էր գուցե զառն հիասթափության, փորթկում էր, կարծես, վազուց ի վեր յուր սրտում ամբարտած ցավերը, առանց մտածելու թե՝ արդյո՞ք պատշաճի դիմ չէր, առաջին իսկ ժամում, մեղադրության ճառ կարդալ ուխտավոր այցելուի երեսին:

Սակայն նա լոեց, հենց որ հեռվառմ նշանաբեց ծերուկ վանահորը, որ իրեն հասակակից մի ուրիշ վարդապետի հետ առաջանում էր դեպի այցելուն:

Կամսարյանը գեռ չէր տեսել նրանց, ուստի գլուխը խոնարհած ակնապիշ նայում էր առջեր գտնիված ավերակի բեկորներին և իրեն հանցավոր, սպասում թե ուրիշ էլ ի՞նչ պիտի լսե խոսող արեղացից:

Հանկարծ հնչեց վանահոր թավ ձայնը.

— Հա, էդ ի՞նչ եք էտեղ կանգնել:

— Ուխտավոր է, հայր սուրբ... Պարոն Կամսարյան... Գուցե ձանաշում եք,—շտապեց հայտնել առաջին արեղան և ապա դառնալով Կամսարյանին, կամացուկ շշնչաց, — մեր այստեղի վանահայրն է:

— Աստված օգնական,—ասաց Կամսարյանը և մոտեցավ վանահոր աջն առնելու:

— Աստված պահապան, որդի, բարով ես եկել. բա հե՞ր նո էստեղ կայնել:

— Պարոնին ման ենք ածում, հայր սուրբ,—խոսեց հրիտասարդ աբեղան:

— Ման եք ածում... բա դուք ման ածիլն ի՞նչ եք դիտում,—հեգնեց վանահայրն աբեղաներին և ապա մի առանձին լրջություն տալով դեմքին՝ գնացեք, գնացեք, ճաշի ժամն\* սկսել են, իմ հյուրին ես ման կածեմ,—ասաց և աբեղաները լուր հեռացան դեպի ս. Աստվածածնի եկեղեցին:

Կամսարյանին մի կողմից անախորժ թվաց վանահոր անտակտ դիտողությունը, բայց մյուս կողմից էլ գոհ եղավ նա, որ վերջինի միջամտությունը ազատեց իրեն դժվար կացությունից:

— Խոսւմ ա «ման ենք ածում»,—խոսել սկսավ վանահայրը—սաղ սհաթ ա, էնտեղից մտիկ եմ տալի, տեսնում եմ հալա սուրբ Մինասի (քանդած մատուռի) մոտ... ատնաշեններ, բա դա ման ածի՞լ ա, ախար ուխտավոր ա, եկել ա, որ բան տեսնի, իրա ուխտն անի, ի՞նչ եք յախնան (օձիքը) բռնել, ջոշ եկել (շատախոսում):

Այս ասելով՝ վանահայրը սկսավ առաջանալ Կամսարյանի և մոտը եղող վարդապետի հետ և, միենույն ժամանակ, շարունակել յուր խոսքը.

— Այ, էդ ջահիլները դիմ էսենց են, թե որ թողնես, խամ մարդ ճանդեն, առալուտից մինչ իրիգուն հետը խոսան, բայց թե բան ու գործ անե՞ն, չէ: Մենք էլ ենք ջահել ելել, ամա դրանց պես չենք էլել: Օղորմած հոգի Օհանես վարդապետը, որ իմ ջահել վախտը վանահայր էր, շատ խիստ մարդ էր, հել թողիլ չէր, որ միաբանը, ժամից դուրս գալուց եղը, մի տեղ էլ ա երկա, պտի իրա խուցը մտներ,

\* Սեանում ամեն օր կատարվում է չորս ժամերգություն—զիշերային, ճաշու, երեկոյան և հանգստյան:

սուրբ գիրք կարդար: Մին էլ էն ա ճաշի վախտը կեթար սեղանատուն, իրա ճաշը կուտեր ու մեկ եղ կմտներ իրա օթախը: Ամա դե ես էդենց խիստ չեմ. ազատություն տալիս եմ. ինչ արած, որ էդ տնաքանդները իմ տված ազատությունը չարն են գործ դնում: Տեսնո՞ւմ ես էս հեր-օրհնածը (ցույց էր տալիս հետը եղող վարդապետին), վանքի լուսարարն ա. ասիլ հոգևարական ա. քառասուն ու հինգ տարի ա էս վանքումը. հալա ոտը ըստեղից գուրս չի դրել: Որ հարցնես թե քաղաքն ի՞նչ ա, գիտալ չի թե ի՞նչ ա, շուն ոչ գնացել ա, ոչ տեսել: Ամա էդ ջահիլներին, որ բաց թողնես ամեն օր մազ կտան Ծեսան յա Դիլիջան: Դե էդենցով բա՞ն կըլի: Ես որ իմ պաշտոնին էսենց արի ու զգաստ չեի էլեւ, կարո՞ղ էի էսքան բարեկարգություններ անել էս վանքումը: Տեսնո՞ւմ ես, շատ բան էստեղ իմ շինած ա:

Այս ասելով վանահայրը ցույց էր տալիս հեռվից վանքի շինությունները, եկեղեցին, մատուռները, միաբանության կացարանները և համառոտ բացատրում թե ո՞րը ե՞րբ և ինչի՝ համար է շինված: Այսպես զրուցելով նրանք սկսան բարձրանալ դեպի կղզու բլուրը, նրա լանջի վրա շինված կեռմաններով: Ճանապարհին ջարունակ վանահայրը պատմում էր, թե որքան մեծ գործեր է կատարել Սևանում, թե վանքը որքա՞ն երախտապարտ է իրեն և թե նա յուր այժմյան «պայծառությունը» պարտական է յուր (վանահոր) քսանհինգամյա վանահայրության:

Այս ասելով նա մտնում և ցույց էր տալիս բլրի արևելյան կողմը գտնվող ս. Կարապետի մատուռը և հարավային կողմի ս. Առաքելոց եկեղեցին, որոնք ոչ միայն զուրկ էին «պայծառությունից», այլև մութ, անշուք, իսկ առաջինը մինչեւ իսկ ճաքճքած պատերով, կիսախարխուր գմբեթով՝ վայր իշած գավթով: Իսկ դրանց զարդերը ոչ այլ ինչ էին, եթե ոչ փայտե անզարդ խաչկալ, շթե վարագույր, մի քանի հասարակ մոմակալներ և անարկեստ ու գոեհիկ պատկերներ, որոնք, ո՞վ գիտե, ո՞ր գեղջուկի ձեռքով մոտակա բազարներում գնված և նվիրաբերված էին «հինավուրց Սևա-

նին»—ըստ որում նրանցից մի քանիսն ունեին, մինչև իսկ, ոռուերեն մակագրություններ:

Այս ամենը երիտասարդի վրա ծանր տպավորություն արին, սակայն նա լուր էր, լուրմ էր միայն վանա՞որը և մեքենաբար նայում նրա ցուց տված տեղերին:

Բլրի գագաթին հասնելուց, վանահայրը մատնացուց արավ քառակուսի մի շենքի հազիվ մի կանգուն բարձրությամբ որմերի մնացորդները և հայտնեց, որ դա Սևանի անդրանիկ եկեղեցին, ո. Հարության տաճարն է, որ հիմնել է ո. Գրիգոր Լուսավորիչը:

— Եթե այդպես է, դա մի պատկառելի հնություն է,— նկատեց երիտասարդը:

— Հա՛, հնություն ա,—հաստատեց վանահայրը:

— Հապա ո՞ւր են ավերակի գլխավոր մասերը: Անկարելի է, որ այդպիսի մի ընդդարձակ տաճարից այսքան միայն մնար. մանավանդ որ սա կղզու մեջն է և սրա քարերը չեն կարող շրջակա բնակիչները հափշտակել, տանել:

— Ո՞վ ա գիտում, ո՞ւր ա. հրեն ընդի մառան ա շինվել, փետատուն ա շինվել, ուխտավորի համար օթախներ են շինվել, ուրիշ տեղերից որ քար կրեին, ո՞նց կըլեր. հազիր էստեղ էլել ա. առել բանացրել են:

— Այդ հո բարբարոսություն է,—բացականչեց Կամարյանը սաստիկ վրդովկելով:

— Ինչի՞ ա բարբարոսություն, վանքի համար որ խնայողություն են արել, վա՞տ բան ա:

— Դա ի՞նչ խնայողություն է, հինավորց մի տաճարի ավերակը նորոգելու, կամ ինչպես, որ կա սրբությամբ պահպանելու փոխարեն, դուք առնում, քանդում եք և ասում թե դա բարբարոսություն չէ:

Վանահայրը զարմացած նայում էր երիտասարդին և չէր կարողանում հասկանալ նրա զայրույթի պատճառը:

— Ես հլա ասում եմ, հայ սուրբն էր մնացածն էլ քանդիլ տա, տեղը թամբզի (մաքրի), —խոսեց լուսարարը:

— Ինչո՞ւ, —գրեթե սարսափով հարցրեց երիտասարդը:

— Ինքը գիտում ա, կասի, —պատասխանեց վարդապետը, ձեռնհաս Համարելով իրեն բացատրություն տալու:

— Գիտե՞ս ինչ կա, —խոսել սկսավ վանահայրը, —առաջ էստեղ թամուզ էր, շուն երեացող քարերը տարել, բանացրել էին, մնացած պատերն էլ հողում թաղված՝ չէր երկվում: Էստեղ մի Մելքոն ճգնավոր կար, աստված հոգին լուսավորի, վանքի վրան երախտիք ունի, էս ճանպաներն էլ նա ա շինել, —ցուց տվավ վանահայրը բլուրը հանող կեռմանները, —նա երբ իմանում ա, որ Գրիգոր Լուսավորչի ծեռքով շինած ս. Հարության տաճարն էստեղ ա, սկսում ա իրա ծեռքով հողը քանդել ու կամաց-կամաց տաճարի հիմքերը բանալ: Երկար ամիսներ մեն մենակ աշխատելով էս դիմ, ինչ որ հիմա տեսնում ես, լուս աշխարհ ա ճանում ու էնդուց եղը մեռնում: Մի օր էստեղ մեր վանքը մի ուսումնական էր եկել: Նա էս ավերակը որ տեսավ, ասեց թե՝ պատմությունից էրեում ա, որ սա ոչ թե Գրիգոր Լուսավորչի ծեռքով շինած տաճարն ա, այլ թե հին, Սյունյաց ժամանակի կուտունք: Ա. Հարության տաճարը, ասեց, ակետք ա ուրիշ տեղ էլած ըլի, յա չէ հենց էն տեղումը, որտեղ հիմի ս. Աստվածածինն ա շինված: Ա'յ, էն օրից դեսը մեր սիրար շաք (կասկած) ա ընկել, ասում ենք՝ զորթ չըլի՝ սա կուտունք ա: Էս միաբանն էլ հմի էն ա ասում, թե՝ դրուստ, որ սա կուտունք ա, լավ կըլի, որ մեջտեղից վերցնենք:

— Ի սեր աստծո, հա՛յր սուրբ, այդպիսի բան մի մտածեք, —բացականչեց Կամսարյանը, —դա պատմության ու գիտության դեմ հանցանք գործել է նշանակում: Կուտուն վինի, թեկուզ կրակատուն լինի, այս ավերակը դարձյալ սըրբությամբ պիտի պահպի:

— Դե ո՞վ ա ասում շպահվի, որդի, խոսքն տեղը եկավ խոսեցինք: Ինձ հարցնես, ես կասեմ մնա. շուն դա, որ հմի ավերակ ա, մյուս տաճարներին էլ ի՞նչ վնաս կարա տալ:

Վանահայրը թեպետ առ երես հակվեցավ երիտասարդի կողմը, բայց այդ արավ լոկ դեպի քաղաքացի «աղան» ու-

նեցած ակնածությունից. ապա թե ոչ, նա մինչև վերջն էլ չհասկացավ թե այդ մարդն ինչո՞ւ է պահանջում, որ կոտան ավերակը պահպի:

Այժմ նրանք նորեն պիտի իջնեին վար՝ միաբանական կացարանները նայելու: Բայց այդտեղից բացվում էր այն պիսի մի սիրուն ու գրավիշ տեսարան, որ փոքր ինչ ավելի այնտեղ չկանգնելն ու այդ տեսարանով չհիանալը՝ հանցանք գործել կնշանակեր: Այդ պատճառով Կամսարյանը ցանկություն հայտնեց բլրի գլուխը բարձրանալու, որպեսզի այնտեղից կարողանար կզզու ամբողջ շրջապատը տեսնել, որովհետև բլրի, մինչև գագաթ հասնող լանջը, ծածկում էր յուր աշքից արևելյան լճամասն ու նրան պատող լեռնազոտին: Վանահայրն ու լուսարարը ընկերացան երիտասարդին:

Տաճարի ավերակից մի քանի հարյուր քայլ դեպի արեւվելք բարձրանալով, նրանք կանգ առան բլրի կատարին: Այդտեղից արդեն կզզյակն երևում էր ողջ շրապարփակ և յուր թմբաձև, սապատավոր գիրքով՝ նմանում ծովային առասպելական մի կենդանու, որ մարմնի կեսը ալիքներից վեր հանած՝ ներս է շնչում օդի կարևոր պաշարը՝ նորեն ջրի տակ սուզվելու համար: Ծովակի կապույտ գաշտը, որ պատում էր նրան չորս կողմից, սկսել էր հուզվիլ Սոզի<sup>\*</sup> ընդհատ քամուց: Փոքրիկ մկանունքները, որոնք մինչև այն հազիվ կնճռուտում էին ջրի երեսը, տակավ առ տակավ փոխվում էին ալիքների և իրար հրելով, կամ միմյանց թեակուխելով՝ մերթ ուռչում, բարձրանում էին ու խուլ փշոցով իրար վրա փլչում, մերթ գալիս, մոտենում բլրի ստորոտին և ուժգին շառաչով ժայռերին զարկում: Իսկ ծովակի խորքի-

\* Սևանի վրա խաղացող քամիներից արևելյան կոշվում է այդ անունով՝ Սոզի դավասից փչելուն համար, արևմտյան՝ դաշտի քամի, որովհետեւ գտվելու է Արարատյան դաշտից, հյուսիսայինը՝ քոլի քամի, որ նշանակում է անտառային, ըստ որում այդ կողմերն են Գուգարաց անտառները, իսկ հարավայինը՝ Զինգիլներուն քամի Վայոց Զորի նույնանուն գյուղի անունով:

բում այդ հուզումը հետզհետե երևան էր հանում նորանոր պատկերներ. նա մերթ արևից շողեր կորպելով՝ նրանցով փրփրուն ալիքներն էր ոսկեզօծում, մերթ խոսափուկ ամպերից սովոր առնելով, լճի կապուտակը, սպիտակ կամ գորշ սավաններով էր ծածկում: Մինչդեռ շուրջ պատող թումբերն ու լեռները, իրեւ հանդիսատես հսկաներ, դիտում էին հեռվից ծովակի հուզումը, մերթ ժամանում ուրախ, երբ բացվում էր արևը, մերթ հոնքերնին կիտում, երբ ծածկվում էր նա և այդպիսով, կարծես, հայտնում իրենց գոհությունն ու դժգոհությունը, որից և ողջ հորիզոնը առանում էր մերթ վեհ, մերթ ակնապարար տեսք:

Գեղեցիկ շրջանկարը գրավեց երիտասարդին: Նա շգոհացավ սեփական աշքերով և դիմեց իսկույն դիտակի օգնության:

Նրա առաջ, արևմտյան հարավից, բացվում էր մի լեռնադաշտ, որի վրա ցրված էին մանր ու խոշոր բլուրներ՝ իրենց գլուխ ունենալով նախ՝ կրկնաթումք Ղոշ-դարը, որը տեղ-տեղ տակավին ծածկված էր կանաչով, ապա Գեղաքա հարազատ լեռները՝ եռակատար Յուշ-Թափան և Ազման-կանը, իրենց գորշկապույտ լանջերով. վերջն՝ Սպիտակ լեռը (Աղ-Դաղը), որի կատարին գեռ նշմարվում էին ձյունի նուրբ շերտեր և հեռվից տալիս նրան մի հրապուրիչ գեղեցիություն:

Ուղիղ արևմուտքից երևում էր պատմական Ցամաքաբերդը, որի սակավաթիվ տնակներն ու հյուզերը ցրված էին ջրապատ՝ հրվանդանի վրա: Վերջինի ծայրին բարձրացող բլրին նշմարվում էր ավերակը Կուսանաց վանքի, որ կառուցել էին երբեմն Սյունյաց Պայազատները և որը, ո՞վ գիտե, որքան սրտառուշ անցքերի ու դեպքերի հանդիսատես էր եղած...

Ցամաքաբերդից գեպի հյուսիս բարձրանում էին Բարձրա լեռը և Մաշտոցներ կոչված բլուրները:

Արևմտյան հյուսիսից երևում էր ամբողջապես շարաբաստիկ Զիբուխլուն լուր գետնափոր տներով, հողածածկ

Խորճիթներով, աթարի դեղերով և չոր ու ցամաք տեսքով։ Նրանից դեպի հյուսիս բարձրանում էր կանաչպուրկ Մարտինջան կամ Այծեմնասարը, որ յուր չոր բազովները ձգում, տարածում էր դեպի ծովակի արևելքը պարսպող Շահ-Դաղի լեռնագոտին, հյուրընկալելով յուր ձորակներում Հաղիվ մի քանի շքոտի մացառուտներ։

Նայելով դեպի արևելյան հարավ, թվում էր թե ծովակը շունի այլես պատվար, բայտ որում հեռավոր Գարա-արխացի գոտին, բայտ սովորականին, ծածկված լինելով մշուշով, անտեսանելի էր դարձնում այդ կողմից ցամաքը և կարծել տալիս թե երկնակամարը համբուրվում է այդտեղ Գեղամա թագուհու հետ... և հենց այդ պատճառով, եթե մի կողմից շըրջակա լեռներն, իրենց լայնանիստ լանջերով, պինդ դրկած պահում էին գեղանի թագուհուն, մյուս կողմից էլ նրանց բարձրահայաց կատարները անհանգիստ կասկածով նայում էին դեպի հարավ, ուրինա ազատ փոռում, տարածում էր հեռուն յուր ջրածուփ դաշտը, կարծես սպառնալով այդ կողմից բացով փախչիլ, հեռանալ նախանձոտ պահանորդներից և միանալ երկնքի ջինջ կապուտակին, որի հարազատ մի կտորն էր ինքը...»

Երկար նայում էր Կամսարյանը այս գեղեցիկ տեսարաններին և նրանցով հիանում. երբեմն էլ հարցեր տալիս վանահորը՝ իրեն անծանոթ այս ու այն տեղի, լեռան կամ բնակության մասին և լուսմ նրա բացատրությունները առանց, սակայն, աշքերից դիտակը հեռացնելու։

Նշմարելով լճակի հարավակողմում երկու փոքրիկ կղզակներ, որոնց վրա չկային ոչ շինության հետքեր և ոչ էլ կանաչ, երիտասարդը հարցրեց վանահորը թե ի՞նչ բաներ են նրանք։

— Նրանք այս ծովակի «անառակ որդիներն» են, — պատասխանեց վանահայրը ծիծաղելով։

— Անառակ, ինչո՞ւ այդ անունն եք տալիս նրանց։

— Էնդուր որ չոր, ամայի բաներ են, ոչ ասունի են պետք, ոչ անասունի. դատարկ տեղից գլուխները վեր են

ցցել, որ ասեն թե՝ հա՛, մենք էլ կանք: Էդ թա՞ր մարդիկ է շատ կան աշխարհում: Այ, հենց մեր էս պուճուր (փոքրիկ) Սևանը, որ ման դան, էլի միջումը մի քանի հատ կդանես վրաները մտիկ տաս, կասես վարդապետ են. ամա որ մեջ ները պարես, կասես՝ ըսկի մարդ էլ չեն:

Վանահայրն, ըստ երեսութին, կամենում էր դարձյալ խոսքը բերել երիտասարդ վարդապետների վրա, որովհետեւ այն կարծիքին էր, թե նրանք յուր մասին պետք է, որ աննպաստ բաներ խոսած լինին Կամսարյանի առաջ: Այդ պատճառով աշխատում էր, որ վերջինս հասկանա թե ի՞նչ մարդկանց հետ է գործ ունեցել ինքը, որպեսզի յուր մասին վատ գաղափար շունենա:

Բայց երիտասարդը տրամադրիր չէր նման զրուցներ լսելու, այդ պատճառով խնդրեց, որ այժմ վանահայրը ցուց տա իրեն միաբանության կացարանները:

— Հա, լավ կըլի, գնանք: Ա՛յ, հենց էստեղից էլ երեսում ա. տեսնո՞ւմ ես ինչքան տեղ ա բոնած. Հաղար սաժին կըլի:

— Ո՞րը. ես ոչինչ չեմ տեսնում,—ասաց Պետրոսը, նայելով վանահոր ցուց տված կողմբ:

— Ա՛յ էն մեծ տափարակը, որ ս. Աստվածածնին կպած ա:

Երիտասարդը նորից նայեց և ոչինչ շտեսավ: Բլրի բարձրությունից, արդարեւ, երեսում էր մի ինչ որ ընդարձակ, բարձրկեկ տափարակ, որի վրա տեղ-տեղ երեսում էին փոքրիկ ծխնելույզներ ու ցածր երդիկներ, կիսով շափ ծածկված գեղնած խոտերի մեջ: Վերակց թվում էր, թե այդ տափարակը բակի մի մասն է: Մինչդեռ վանահայրը բացատրեց թե հենց դա է կաղմում կտուրը միաբանական այն կացարանների, որոնց մեծ մասը ս. Աստվածածնի հետ միասին շինածածկ են Սյունյաց Մարիամ Տիկնող ձեռքով 877 թվին:

— 877 թվին, ուրեմն հաղար տարվա հնությո՞ւն ունին դրանք,—զարմացավ երիտասարդը:

— Հազար տարուց ավելի ա, բա՛—հաստատեց վանաշայրը:

— Գնանք, ուրեմն, գնանք: Հետաքրքրական է տեսնել այդ շենքերը, ուր հազար տարի շարունակ ապրել են ձեր նախորդները,—ասաց երիտասարդը և առաջ անցավ:

Բլրի լանջն ակոսող կանոնավոր կեռմաններից դեպք՝ տափարակն իջնելով, նրանք մտան մի դռնով, որ բլրի ստորոտից հեռի էր միայն մի քանի քալով: Այդ դռւոք նրանց մի կարծ միջանցքով մտցրեց մի ուրիշ, ավելի երկար, համեմատաբար լայն, բայց և խիստ մթին միջանցք, որի երկու կողմից, կրկնաշար ուղղությամբ շինված էին միաբանական միահարկ խուցերն ու խցիկները: Դրանց մուտքերը հազիվ նշանարկում էին շնորհիվ մի նվազ լույսի, որ մտնում էր այդտեղ՝ երկար միջանցքի երկու հանդիպակաց դռներից, (որոնցից մինը հանում էր ծովափը, իսկ մյուսը՝ բակի հեռավոր մի կողմը, ուր գտնվում էին ուրիշ երկրորդական շինուաթյուններ, ինչպես օրինակ, փայտատուն, մարագ, ախոռ, դարբնոց և այլն): Այս ընդհանուր միջանցքի երկու կողմից շինված կացարանների թիվը մոտ երեսուն էր: Մի կարգի սենյակներում ապրում էին վանահայրը, վարդապետները և միաբանության ուրիշ անդամները: Այդ կարգում զետեղված էին և վանքի գրատունը և հանգերձատունը: Իսկ հանդիպակաց կարգում գտնվում էին միաբանության ընդարձակ սեղանատունը, խոհանոցը, մառանը, հացատունը և մի քանի ուրիշ սենյակներ, որոնք երբեմն ծառայում էին նաև իբրև իջևան ուխտավորների համար, եթե դրսի սենյակները բռնված էին լինում բոլորը: Ընդհանուր միջանցքի վրա բացվում էին նաև մի քանի ուրիշ, երկրորդական միջանցքներ, որոնցից երկուսը տանում էին դեպի զանազան ամբարանոցներ ու մառաններ, երրորդը՝ դեպի բլուրը, իսկ շորրորդը՝ դեպի բակի կողմը և այլն: Բոլոր այս խուցերը, կացարանները, ամբարներն ու միջանցքները ծածկված էին մի ընդհանուր միապաղաղ կտուրով, որով և բոլորը միասին կաղմում էին մի ծածկված ամբողջություն: Այդ պատճառով

մի կարգի խուցերը միայն ունեին նեղ-նեղ փոքրիկ պատուհաններ, որոնցից ոմանք բացված էին դեպի բլրակի և ոմանք՝ բակի կողմը: Մնացյալ բոլոր սենյակները լույսն սահանում էին երդիկներից: Ինչ վերաբերում է միջանցքներին, նրանք այնքան մութ ու խավար էին, որ Կամսարյանին թվում էր թե ինքը կարող էր մոլորվել նրանց մեջ, եթե միայնակ մտած լիներ այդտեղ: Բոլոր շենքերն, առհասարակ, իրենց մուտքերով ու միջանցքներով, հին լաբյուրին-թոսի նմանություն էին բերում, իսկ դրանց միջի օդն այնքան էր ծանր, խոնավ ու գարշաճոտ, որ երիտասարդը միմի անգամ, նույնիսկ դժվարությամբ էր շնչում:

Վանահոր սենյակը ոչնչով չէր տարբերվում մյուս միաբանների խուցերից, որ ապացուցանում էր, թե հավասարության սկզբունքը հինուց անտի հարգմած է եղել այդտեղ:

Կամսարյանի հարցին թե՝ ինչպե՞ս են կարողանում այս մութ ու գիշին սենյակներում ապրել, վանահայրը պատասխանեց:

— Հմի դեռ հալա շատ լավ ենք ապրում: Երեսուն տարի սրանից առաջ, երբ ես դեռ վանահայր չեմ, էս խուցերը ու թե մահմակալ, սկի տախտակի պոլ էլ շունեին. ամենք էլ նամ գետնի վրան էինք նստում կամ պառկում:

— Եվ այդպես ապրելով չէ՞իք հիվանդանում:

— Փառք աստուծո, հրես տեսնում ես. 49 տարի է ինչ էստեղ եմ, էս լուսարար հայր-սուրբն էլ, ոնց որ ասեցի, 45 տարի է, որ ապրում է մեզ հետ, ուրիշ միաբաններ էլ կան մեղ հասակակից, բոլորն էլ ողջ առողջ: Սովորությունից ա կախված, ոնց որ քեզ կսովորացնես, էնենց էլ կապրես: Քաղաքներում մարդիկ շատ են կոտորվում նրա համար, որ շատ են փափուկ ապրում:

Վանահայրն յուր հյուրին ամեն տեղ շրջեցնելուց հետո, առաջարկեց նրան տեսնել, նաև, գրադարանը, որ նրա անելով, բարեկարգվել էր միայն յուր վանահայրության օրով:

— Հենց էդ պատճառով էլ բանալին համաշա (միշտ) մոտս եմ պահպամ, ով որ գիրք առզում, ինքս եմ գալիս, բանում, գիրքը տալիս ուզողին, ու էլ եդ փակում, բանալին ջերս դնում,—ասում էր վանահայրը:

Երիտասարդը հետաքրքրությամբ մտավ այն խուցը, որին վերջինս «գրագրաբան» անունն էր տվել՝ հուսալով գտնել այդտեղ հին գրչագիրների մի հարուստ դարան։ Բայց նա այստեղ տեսավ հազիվ երկու հարյուրի շափ հին ու նոր հատորներ, որոնց մի մասը ոչ շատ կարևոր գրչագրեր էին, իսկ մյուսը՝ Վենետիկի հինավուրց հրատարակություններ, դարսված փայտաշեն դարակների վրա։

Երբ երիտասարդը հայտնեց յուր զարմանքը՝ հինավուրց անապատի այդ աստիճան աղքատ գրատուն ունենալու մասին, վանահայրը բացատրեց, որ եղածն էլ յուր շնորհիվն է, որ կա, ապա թե ոչ, այս վերջին 25 տարվա ընթացքում, եթե յուր փոխարեն լիներ մի ուրիշ վանահայր, անշուշտ այդ եղածն էլ կմատնվեր կորստյան, ինչպես որ մատնվել են նորանից առաջ եղած գրական գանձերը։ Եվ իբրև ապացուց նա պատմեց թե ինչպես Սիմյոն Կաթողիկոսի օրով, Հովհաննես անունով մի անարժան վանահայր, լսելով որ կաթողիկոսը գալիս է այցելություն Սևանա անապատին և իմանալով, որ գրասեր Հայրը պիտի հետաքրքրվի վանքի գրատան վիճակով և տեսնելով այն անկարգ ու անխնամ (ըստ որում յուր իսկ վանահոր անհոգությունից գրչագրերի մեծ մասը խոնավությունից փոքր կամ ցեցակեր էին դարձել), պիտի զայրանա յուր դեմ—նա բոլոր այդ տեսակ հնամաշ գրքերն ու հիշատակարանները հավաքել է տալիս քառակների մեջ և իրեն խորհրդակից ապիրատների ձեռքով թափել տալիս ծովը, որպեսզի կաթողիկոսը, Սևան մտած ժամանակ, հին ու փլացած ոչինչ շտեսնե գրատանը։

— Ի՞նչ զարհուրելի բարբարոսություն, — բացականչեց Կամսարյանը, սրտի խորից վրդովվելով։

— Բարբարոսություն ասիր պրծա՛ր, անաստվածու-

թյուն ասա, անխպճմտանքություն ասա, — ձայնակցեց վա-  
նահայրը երիտասարդին:

— Երևակայում եմ, թէ ինչպիսի՝ թանկագին գանձեր  
են անհետացել այդ թշվառականի ձեռքով:

— Դրուստ որ թշվառական. էդ տեսակ վանահոր հի-  
շատակը պետք ա անիծի սերունդից սերունդ, — հարհց վա-  
նահայրը:

— Դժբախտաբար անհծը չի վերադարձնիլ մեր կո-  
րուստը:

— Ճշմարիտ ա չի վերադարձնիլ, ամա մնացածներին  
կզգուշացնի, որ էղենց անաստված/թահրով վանքի դույքը  
չփշացնեն:

Դրագարանից ելնելուց, ծերունի վանահայրը հոգնած  
զգալով իրեն, խնդրեց երիտասարդին մնացած տեղերը շրջել  
լուսարարի հետ, մինչև որ ինքը հոգնածությունն առնելով  
կգար յուր հետ միասին ճաշելու:

Լուսարարը մի առանձին հոգածությամբ առաջնորդեց  
Պետրոսին դեպի թանգարանը, որի պահպանությունը  
հանձնված էր իրեն:

Այդ թանգարան կոչվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի հա-  
սարակ խուց, ուր պահպում էին եկեղեցական այնպիսի  
սպասներ, որոնք թե՛ թանկագին և թե՛ քիչ գործածական  
էին. ինչպես օրինակ, արծաթե բուրվառներ, խաչեր, սկիճ-  
ներ, մեռնի տուփեր, թագեր, սաղավարտներ, գավազաններ  
և այլն: Դրանց մեջ ո՛չ միայն թանգարանի վայել «Հնու-  
թյուններ» շկային, այլև շատերը «յարմուկի» ապրանք էին  
պատրաստը գնված Նիժնիում, կամ Մոսկվայում: Այդ ա-  
պացուցանում էին իրերից մի քանիսի շուրջը քանդակված  
ուստերեն աղոթքներն ու մակագրություններն, որոնք հնի-  
դեմ կազմում էին «նոր», խայտաբղետ հակադրություն և  
կարծես ծաղրում Սևանի անապատում «հին հիշատակներ»  
պտրողներին...

Այդ մասին Կամսարյանը մտածեց մի քանի վայրկյան:

«իբրհ ճշմարիտ ուխտավոր» և նրա շրթունքներին խաղաց դառը ժպիտ:

— Ինչո՞ւ այս խուցին թանգարան անուն եք տալիս, — Հարցրեց նա լուսարարին:

— Ի՞նչ կլինի որ, — նկատեց վերջինս:

— Սխար «թանգարան» այն տեղին են ասում, ուր շատ հին ու թանկագին բաներ են պահպում. ձեր ունեցածը միայն եկեղեցական սպասներ են:

— Մենք էլ ունենք շատ հին ու թանկագին բաներ, հիմա պիտի շանց տամ, որ համբուրես. քեզ հենց դրա համար Նմ բիբել ըստեղ, — ասաց վարդապետը մի առանձին վստահությամբ: Ապա մոտենալով թախտի վրա դրված մի սնդուկի, բացավ նրա խուփը և մի աղոթք մրմնջալով՝ սկսավ հետզհետե զուրս հանել այդտեղից մետաքսյա թաշկինակներում փաթաթած ոսկեզօծ ու ակնազարդ խաչեր, նշխարառուիներ, արծաթակազմ ավետարանիկներ և այլ կերտվածներ և շարել նրան մի սկուտեղի վրա, ուր վաղօրոք դրված էր մի պղնձե ափսե՝ արծաթե փողերով ու թղթամներով:

— Սրա մեջ Հովհաննես-Մկրտչի մասունքն ա դրած, — բացարեց վարդապետը, ցույց տալով մի ակնազարդ խաչ որ դրված էր արծաթյա երկինքի պահարանում — սրա մեջ էլ՝ Պետրոս առաքյալի մասունքն ար, — ցույց էր տալիս մի ուրիշ, նույնպես ականակուռ խաչ. — սրա կազմի մեջ էլ սուրբ Գևորգ Զորավարի նշխարն ա դրած, — այդ էլ արծաթապատ մի ավետարան էր. — Էս մասնատուփումն էլ ա. Կարապետի իրեք մանր նշխարներն են դրած: Իսկ էս զիբթիշի փոքրիկ խաչումը կենաց գույտի կտորն ա: Սրա մեջ էլ, — ցույց էր տալիս մի փոքրիկ արծաթե տուփ, — էլի ս. Գեղվորգի մասունքն ա: Դե հմի մեկ-մեկ համբուրիր և ուխտ արած: Թող էս սուրբերը բարեխոս ըլին: Աստված էլ լող ու կատարող:

Կամսարյանը լսեց վարդապետի բացարությունները և միքենայաբար խոնարհելով համբուրեց մասունքնե-

ըս, առանց ներսում զգալու հավատո կամ չերմեռանդության որևէ հուզում: Միայն ափսեի մեջ դրված դրամներից գուշակելով, որ այդ արարողության պիտի հաջորդե, նաև դրամական տուրք, ծոցից հանեց քամկը և մի կարմիր տասնոց դրավ ափսեի մեջ:

Լուսարարը, որ երկի վաղուց էր ինչ չէր տեսել այդպիսի առատ նվեր, օրհնեց երիտասարդին սրտաբուխ խոսքերով և ապա մի զգացված «պահպանիշ» էլ ասելով՝ ճանապարհ դրավ նրան դեպի միջանցքը:

Եվ որովհետև հենց թանգարանի դիմաց, ընդհանուր միջանցքի վրա բացվում էր մի դրւո, որ հանում էր դեպի ս. Աստվածածնի եկեղեցին, ուստի վարդապետը առաջարկեց Պետրոսին անցնել այդ դրով, եթե կամենում էր «տաճարը» տեսնել: Իսկ ինքը յուր «ձառայությունը» կատարած համարելով, դարձավ նորեն դեպի թանգարանը, ցուցահանած մասունքներն ու ստացած նվերը իրենց տեղը ամփոփելու:

Ճամն ավարտած, ժամերգուները դուրս էին դաւիս, երբ երիտասարդը մութ միջանցքից ելնելով, մտավ եկեղեցու փայտաշեն գավիթը, իսկ այնտեղից՝ եկեղեցին, ուր, ի միջի ալլոց, նա հանդիպեց նորեն երիտասարդ աբեղաներին: Վերջիններս դարձյալ մոտեցան նրան, հարց ու փորձ արին տեսածների մասին և ապա սկսան բացառություններ տալ նկատմամբ ս. Աստվածածնի եկեղեցու, որ, շնայելով յուր հազարամյա հնության, տակավին շեն էր և ամրակուռ: Գալով բարեգարդության՝ սա էլ աշքի ընկնող ոչինչ չուներ յուր մեջ—զարդերն ու սպասները աղքատ էին, պատկերները՝ զռեհիկ և անարվեստ: Միակ արժանիք ունեցողը՝ սեղանի առաջ դրված Կոթա սուրբ Նշանն էր, որ հայտնի էր յուր բազմադարյան հնությամբ: Դա պարզ երկաթից շինված մի խաչ էր, կես կանգուն երկարությամբ և թևերին ուներ մի-մի հատ ոչ մեծագին քարեր: Աբեղաները բացատրեցին, որ այդ խաչը, ըստ ավանդության, պահում է յուր մեջ մի կտորոր այն երկաթի տաշտի, որի մեջ

կույս Մարիամն լողացնում է եղել մանուկ Հիսուսին և թե  
դա համարվում է Սևանա անապատի ամենամեծ սրբու-  
թյունը։ Ապա երիտասարդ արեղան Կամսարյանի ուշադրու-  
թյունը հրավիրեց ու. Աստվածածնի մի փոքրիկ պատկերի  
վրա, որը կախված էր սեղանի աջ կողմը և որը, չնայելով  
յուր ծիփը ու հնությունից սևացած լինելուն, երևում էր  
շնորհալի վրձինի արտադրություն։

— Սա այն պատկերն է,—ասաց արեղան,—որի առաջ  
Մխիթար Սեբաստացին, Վենետիկյան միաբանության հիմ-  
նադիրը աղոթում է եղել, երբ կույր աշքերով գտնվում է  
եղել Սևանում և որի առաջ նա յուր հայտնի ուխտն է ա-  
րել... Շատ ժամանակ չէ, ինչ դիպվածով գտել են այս ու.  
Առաքելոց եկեղեցու խորշերից մինում, անխնամ ընկած ու  
փոշոտված...

Երիտասարդը սկսավ ուշադրությամբ դիտել պատկերը։

— Ի՞նչ մտքեր է սա զարթեցնում ձեր մեջ,—հարցրեց  
արեղան, կարծես շտապելով, մի նոր բան ասելու, քանի դեռ  
ոչ ոք չէր խանգարում իրենց։

— Մտածում եմ թե, եթե այսպիսի մի սիրուն գործ,  
որ զարերից ի վեր գտնվելով Սևանում, հոգածու խնամքի  
արժանանալու փոխարեն, ընկած է եղել անհայտ խորշե-  
րում և երևան է եկել միայն դիպվածով, ինչ թանկապին-  
հնություններ, ուրեմն, չեին կազող անհետանալ այստեղ  
հոգատար սրտի և խնամող ձեռքերի պակասությունից։

— Այդ էլ պատշաճ մտածություն է, բայց ես կար-  
ծում էի, թե այս պատկերը մի ուրիշ միտք կծնեցներ ձեր  
մեջ։

— Այսինքն, ի՞նչ։

— Այն թե՝ շուտով կլրանա երկու հարյուր տարին այն  
օրից, ինչ այս պատկերի առաջ աղոթողը Սևանից հեռացավ,  
հիմնեց օտար երկրում միաբանական մի ուխտ։ Զեզ հայտ-  
նի է, թե ի՞նչ ծառայություն արին այդ ուխտի անդամները  
հայ գրականությանը։ Մի կողմը թողնենք նրանց՝ ազգի մեջ  
կաթոլիկություն տարածելու և պատմական գրքերում՝ հայ

Ֆկեղեցուն ու եկեղեցականներին վերաբերյալ փաստերն հեղաշրջելու տիսուր ջանքն ու ձգտումը: Ամեն լույս ունի յուր ստվերը, ամեն մաքրություն՝ յուր բիծը: Բայց անհերքելի է այն, որ Մխիթարյան միաբանությունը գնահատելի գործ կատարեց՝ հնության և անհայտության փոշիներից դուրս հանելով հայ լեզվի թանկապին արտադրությունները, նրա ուսկեղենիկ մատենագրությունը և նրա ընդհանրացնելովը սիրելի դարձրեց մեղ մեր նախնյաց լեզուն ու անցյացը, ընդ նմին սովորեցնելով մեզ, ապրել և ոգեսրվիլ նրանցով... Սա, արդարեւ, մեծ գործ էր, արժանի հարգանքի և երախտագիտության: Այսպիսի մտածության, բնականարար, հաջորդում է մի ուրիշը.—Մի՞թե Սևանը ևս չէր կարող դառնալ մի ս. Ղաղարու կղզի: Մի՞թե Սևանը չէր կարող արտադրել մի նոր Մխիթարյան ուժության ուժության մեջ և առաջանալ ս. Ղաղարի առավելությունները, որովհետև չէր գտնվում Եվրոպայի սրառում, զարգացած ու բարեկիրթ ազգերի մեջ: Բայց մենք էլ Սևանից չեինք պահանջիլ այն, ինչ որ տվավ Վենետիկը, այլ գոնի նրա կեսը, թեկուզ կեսի կեսը: Սևանը մի կողմից էլ այն առավելությունը կունենար, որ տվածը կլիներ անխառն, հարազատ... Ճշմարիտ է, այն ժամանակ երբ ս. Ղաղարու հայրերը իրենց խուցերում խաղաղ նստած, հանգիստ աշխատում էին, ո՛չ հարձակման սպասելով, ո՛չ կողոպավելուց վախենալով, Սևանը գտնվում էր բարբարոս խանների դժոխային լուծի տակ, միշտ ահի ու սարսափի մեջ, սեփականության իրավունքից զուրկ և կեղեքիշերի քմահաճության ենթակա. բայց չէ՝ որ, ահա, յոթանասուն տարի է, ինչ ոռւսաց տիրապետության շնորհիվ այս երկիրը խաղաղել, արհավիրքները վերացել են և այս վանքի միտրանությունը ստացել է հանգիստ ու ապահով վիճակ: Արդ, մի՞թե չէր կարելի այս յոթանասուն տարվա ընթացքում ստեղծել այստեղ մի գործ, որ յուր արժանիքով հավասար լիներ Վենետիկցիների գեթ հիսունամյա գործունեության: Մի՞թե չէր կարելի հիմնել այստեղ ժառանգավորաց մի բարեկարգ դպրոց, որի սաները աշխարհային աղմուկից ու աշ-

պականությունից հեռու, այս առողջարար օդում, այս պայծառ նրկնքի տակ ապրելով և ուսանելով՝ պատրաստվելով հասարակաց ծառայության համար... Միթե չէր կարելի ժողովել այստեղ հմուտ, բանիրուն գիտությամբ ու առաքիւնությամբ հայտնի հոգևորականներ և կազմել նրանցից մի գիտնական կաձառ, որ պարապեր հին գրականությունը մշակելով և նորը գարգացնելով: Դուք հո ձեր աշքով տեսաք մեր այստեղի գրադարանը: Որքա՞ն աղքատ, խղճո՞ւկ... մինչև իսկ ամոթ է գրադարան անունը տալ նրան, մի քանի տասնյակ կիսամաշ ձեռագիրներ, մի երկու հարյուր հնատիպ գրյանք... քաղաքներում տիրացուներ կան, որոնք դրանցից ավելին ունին: Բայց չէ որ Սևանը հնումն հայտնի էր յուր բազմահարուստ մատենադարանով, չէ որ շատ տեղերի գրական գանձերը այստեղ էին ամբարվում, կամ ավանդ դրվում: Այժմ ո՞ւր են նրանք: Բարբարոս թշնամիւների ավերը, այո՛, շատ բան է կորզել Սևանից, նույնիսկ նրա գրագետ միաբանությունը՝ անխիզ կերպով է նրա գրական հարստությունը վատնել: Բայց որքան ավելի գըրեկանք են պատճառել նրանք, որոնք այս յոթանասուն խաղաղ տարիների ընթացքում ձեռքերնին ծալած նստել են այստեղ և բավականացել միայն աղոթելով, կամ հսկումներ կատարելով... Ինչո՞ւ արդյոք Սևանը, որ գտնվում է հայրենի հոգի վրա, նրա սրտի ու հոգու մեջ, ինքը չէ տալիս վենետիկին՝ այս հողին ու ջրին, սրա անցյալին ու ներկաւին վերաբերող ուսումնասիրությունները, սրա սրտին ու հոգուն հարազատ հուշերը և, ընդհակառակը, ինքն է նրանից մուրում: Ինչո՞ւ... բայց այդ Փինչո՞ւները անթիվ են և դրանց բոլորի պատասխանը մեկ. այսինքն այն՝ որ այսքան տարիների ընթացքում, չի գտնվել մեր երկրում մի մարդ, աշխարհական լիներ նա թե' հոգևորական, որ ոգևորվեր Միսիթարի զգացած ոգևորությամբ և վառեր Սևանում լիւսու այն ճրագը, որ առաջին նվագ վառեց կուսավորիչ և որն ապա տգիտությունն ու խավարը հանգցրին... Այո՛, եթե այդ մի հատ մարդը գտնված լիներ այստեղ, անդ դուք

այսօր Սեանը չէիք տեսնիլ այսքան անշուք, անփառունակ՝ չէիք տեսնի նրա կյանքը այս աստիճան անշարժ, ոգին՝ մահամերձ... Իբրև նյութական ապացույց այստեղ ապրողների անշարժության, ահա այն կացարանները, որ դուք տեսեք եք, որոնց մեջ ապրել են նախկին միաբանությունները և որոնց մեջ, ահա, ապրում ենք նաև մենք։ Այդ շինությունների կառուցումից մինչև այսօր՝ անցել են հազար երկար տարիներ։ Եվ սակայն նրանք մինչև այսօր էլ նույն խոնավք բորբոսնած, հողածածկ կտուրով խցերն ու խցիկներն են, որոնք ամենից առողջ մարմիններն իսկ մաշելով, մաշել ոծյուրել են նաև նրանց հոգին և անընդունակ դարձել մէ ճշմարիտ ու էական բարիք ստեղծելու... Անշուշտ դուք անցաք այդ կացարանները իրար հետ միացնող բավղածե անցքերից։ տեսա՞ք թե՝ ինչպիսի խավար է տիրում նրանց մեջ... Հարկավոր չէր ոչ մեծ խելք, ոչ էլ ճարտարապետական տաղանդ, որ մարդ իմանար, թե այդ միշանցքների վրայի կտուրը ծակելով և մի քանի տեղ, եթե ոչ ապակե պատուհաններ, այլ գեթ հասարակ երդիկներ դնելով, կարելի էր բոլոր անցքերը միանգամից լուսավորել։ Սակայն հազար տարի այս խավարում խարխափող միաբանությունների մեջ, չի գտնվել մի գլուխ, որ այդ հասարակ ճանապարհով աստուծո տված լույսն այդ անցքերը մտցնե և նրանց անթափանցելի խավարը փարատե։ Ճիշտ այդ ձևով էլ խավար են մնացել այդ խուցերում ապրող մարդկանց ոգիները. արդյունքը եղել է այն, ինչ որ տեսնում եք այսօր...

Երիտասարդ արեղան երնի դեռ երկար կճառախոսեր, եթե իմբին շմուտենար վանքի տնտեսը և վանահոր կողմից շհրավիրեր հյուրին ճաշի։

Այդ հրավերը զգաստացրեց թե՝ լուսողին և թե՝ լսողներին. ուստի ամենքը միասին ելնելով եկեղեցու գավթից, առաջացան դեպի բակի սիզավետ կողմը, ուր հովանավոր ուռիների տակ, բացված էր ընդհանուր սեղան, որը և բոլորեցին նրանք, իրենց գլուխ ունենալով վանահորը։

Վերջինս սեղանն օրհնելով առաջարկեց հյուրին վայե-

Էլ կանական «անպաճույժ» ճաշը, որի ակրատը բաղկացած էր պանրից, եփած ձուերից և աղած կողակից, իսկ խորա-սիկը, որ հետո բերին, թանապուրից, նոր խաշած իշխան-ներից և ձավարով ու յուղով պատրաստած «քաշովի»-ից։ Սեղանի վրա պակաս էր միայն միսը, կամ նրանից պատ-րաստած կերակուրը։ Վանահայրը բացատրեց, որ վանա-կան խստակեցության օրենքը արգելում է իրենց զոհի մսից գատ, ուրիշ միս ուտել, կամ գործածել այն կերակուրի մեջ։

Մի քիչ հետո, սակայն, Կամսարյանը նկատեց, որ վա-նահայրը, երկի, համեստություն էր անում «անպաճույժ»-անվանելով առաջարկված ճաշը, ապա թե ու վերջինս ո՛չ միայն հեռի էր անպաճույժ լինելուց, այլ և չէր կրում խըս-տակեցության կնիք։

— Ես «անպաճույժ» անվանեցի ձեր տեսակետից, իսկ մեզ համար սա մինչև անգամ փարթամ ճաշ ա,—բացատրեց վանահայրը ծիծաղելով։ Ապա կամենալով մի գաղափար տալ հյուրին իրենց խոսակցության մասին, ծանոթացրեց Նրան Սևանա անապատում ընդունված պահեցողական կար-գերին, որից երեաց, որ նրանք տարվա մեծագույն մասը անցնում են պահքով։ Որովհետև բացի հասարակ ու շարա-թական պասերը, նրանք պահում էին նաև երեք «մեծ պա-սեր»։ Դրանցից առաջինը սովորական մեծ պասն էր, որ բուն բարեկենդանից սկսվելով, վերջանում էր զատկին, երկրոր-դը՝ Հոգեգալուստից մինչև Վարդավառը, որ տևում էր ութ-շաբաթ, երրորդը՝ Վարագա խաչի տոնից՝ մինչև հիսնակի պասը, որ դարձյալ ուներ ութ շաբաթ։ — Էդ բոլոր կարճ ու էրկան պասերին, — շարունակեց վանահայրը, — մեր միաբա-նության կերածն լինում ա ձեթ, լորի, սիսեռ, ոսպ ու կա-նաչի։ Միայն ուտիքին ա որ յուղ, կաթ ու ձու կարող ենք ուտել, կամ բրինձ ու ձավար։ Սովից հանած ձկներից էլ ի հարկե, անուշ ենք անում, որքան պատահում ա։

— Ձեր օրհնած, էլ ուրիշ ի՞նչ ես ուզում, — կամացուկ շշնչաց երիտասարդ արեղան, որ նստած էր Կամսարյանի կողքին։

Վերջինս ծիծաղեց:

— Բնշի՝ ես ծիծաղում, — հարցրեց վանահայրը ժըպտալով:

— Ոչինչ, մտածում եմ թե ինչ կանեի են, եթե ձեզ միաբանը լինեի:

— Ի՞նչ պըտի անեիր. կապրեիր էնենց, ոնց որ մենք ենք ապրում: Ըստոնք էլ քեզ պես տղերք են ըեւ, ոռ վարդապետ չեն. ծնվել: Այ, տեսնո՞ւմ ես, — ցույց էր տալիս վանահայրը արեղաներին. — ամեն բան սովորել են, կարգի ու կանոնի վարժվել. Հմի սիրով ապրում ու ըսկի դժգոհում շեն:

Ճաշը վերջանալուց՝ համսարյանն շտապեց յուր շնորհակալությունը հայանելու վանահորը և բոլոր միաբանությանը՝ իրեն ցույց տված սիրալիր ընդունելության համար և ապա պատրաստվեց հեռանալ կոզուց: Բայց որովհետեւ հենց այդ միջոցին հիշեց, որ բացի «Փանդարանին» աված նվիրը, անհրաժեշտ է նաև միաբանության օգտին նվիրաբերել. մի բան, ուստի խնդրեց վանահորը բերել տալ նվիրատվության մատյանը, որպեսզի յուր տուրքն արձանագրեալութել:

Վանահայրը սկզբում շնասկացավ նրա ասածը: Ապա երբ երիտասարդը յուր խնդրեց կրկնեց, նա մվատալով նկատեց:

— Եօ, որդի, մեր վանքումն ի՞նչ աշխատանք... մենք նահապեատական մարդիկ ենք, ուխտավորը պալիս ապ, իրու սկսուն պնում, եղո վանահոր ազն անկում, մի աջահամբույր տալիս, գնում: Նրանից եղը էլ ո՞վ առ գարցնում թե ի՞նչ տվավ, ի՞նչ չտվավ, յա չէ մեղանից ո՞վ պատք հաշիվ ուզիւ: Եղոր աջահամբուրի համար, էր գիր, ու կիրակոս պահենք, ծե՛րն ուր կերթա:

— Բայց ես կարծում եմ, որ եթե այդպիսի մի կարգ թահմանեիք, այսինքն պմեն տուրք մատյանի միեց արձանագրվեր, վատ չեր լինիլ: Դա, մինչեւ անդամ, օգուստ կըերեր վանքին: Նախ որ այդ մատյանը կարելի կլիներ առաջարկել:

ամեն այցելուի, երկրորդ, որ վերջինս հաստատ գետենաւ լով թե յուր տվածը արձանագրվում է մի տեղ, և այն էլ ի տես ուրիշ այցելուների, կնվիրաբերեր ավելի առատորեն:

— Եդ հու էս շահիների խոսքն ա. էրկում ա դու էլ ըսդոնցից ես լսել,—նկատեց վանահայրը, կարծես վիրավորվելով:

— Դա ինչ մի նոր բան է, որ ես սրանցից լսեմ. բոլոր աշխարհում ընդունված, ամեն տեղ գործադրվող մի սովորական բան է:

— Զէ, որդի, ես մատյան բան չեմ գիտում: Միշտ ասել եմ, էս օր էլ կասեմ. վանքի մատյանը նրա վանահայրն ա. ով նրան հավատում ա, նրա վրեն վատահ ա, թող տա, ինչ ուզում ա. ով շի հավատում տերը նրա հետ. էդենց մարդու սուրբն էլ ըսկի վանքին պետք շի:

Կամսարյանին այլևս առարկելիք չէր մնում, նա շտապեց յուր սխալը ուղղել նրանով, որ զերմությամբ համբուրեց վանահոր աջը և մի տասնոց դրավ նրա ձախում:

Վանահայրն, ի հարկե, հաշտվեց յուր սրտում երիտասարդի հետ և քաղցր խոսքերով օրհնելով նրան, մաղթեց նաև բարի հանապարհ:

Պետրոսը նորից յուր շնորհակալությունը հայտնեց միաբանության բոլոր անդամներին և բարեկամաբար նրանց ձեռքը սեղմելով, մնաք բարե ասաց և հեռացավ: Աբեղաներից մի քանիսը, նույնպես և լուսարարը, ուղեկցեցին նրան մինչև լճափը:

Այստեղ նրանք հանդիպեցին վանքի ելեմտից կառավարիչ սարկավագին, որ հենց նոր էր վերադարձել Յամաքարերից, ուր գտնվում էր վանքի «Դրահ տունը», այն է նրա տնտեսության արտաքին բաժանմունքը և ուր սա հաճախ երթենելում էր զործով:

Լուսարարը երիտասարդին ծանոթացնելով նորեկի հետ, ցավ հայտնեց, որ վերջինս վաղ չէր վերադարձել, ապա թե ոչ, ասաց—նա ընենց պատիվ կտար քեզ, որ քո օրում Սեւանը ըսկի չէիր մոռանաւ:

— Ծնորհակալ եմ, դուք էլ լավ պատվեցիք, Սևանը դարձյալ շպիտի մոռանամ,—Հարեց երիտասարդը:

— Զէ, մեր բանն ուրիշ ա, սարկավագինն ուրիշ. սա բանի դայդան լավ ա գիտում,—կրկնեց լուսարարը ծիծաղելով:

Սարկավագի աստիճանում Կամսարյանը տեսել էր միշտ մի երիտասարդ, հաճախ աշխարհականի շորերով, բայց նորեկը վաթսունն անց մարդ էր, բարձրկեկ հասակով, առողջակաղմ, միայն մի քիչ դալկաղեմ: Ուներ շեկ, ալեխառն մորուք և ծովի խորահայաց ալֆեր: Հազուստը ոչնչով չէր զանազաննուում վարդապետների հագուստից, որովհետև բաղկանում էր նույն մուլդ կապույտ կտավե կապալից, շալե գոտուց, կոշտ բրդե փարաջալից և խայտաբղետ գուլբաներից ու քոշերից: Միայն թե վելարի փոխարեն գլխին ծածկած էր գառան մորթու տափակ գդակ, որ գարիբալդի կոչվածի ձեն ուներ և որի մեջ այնպիս խոր էր մացրել գուշը, որ ծածկել էր ճակատը՝ մինչև թավամազ հոնքերը:

Ժպիտը, որ նա խաղացրեց շրթունքներին, հյուրին ողջունելու ժամանակ, բռնազրոսիկ էր և չէր հարմարում գեմքին, որ կարծես ստեղծված էր միշտ խիստ ու մտախոն երեւալու համար: Առաջին տպալորությունը, որ նա արավ երիտասարդի վրա, այն էր թե՝ նա բանի տեղ չէ գնում միաբանության անդամներին: Որովհետև մոտենալուց, նա ոչ միայն չնայեց վերջինների վրա, այլև մինչև իսկ չտեսնելուն տփակ, իբրև այնպիսի մարդկանց, որոնց հետ շուներ որեւէ առնչություն, կամ որոնց գոյությունը չէր հետաքրքրում իրեն, լոկ այն պատճառով, որ գիտեր թե նրանցից ոչ մեկը չէ կարող յուր հայտնի վիճակի վրա ունենալ լավ կամ վատ ազգեցություն:

Սովորական բաղաքավարությամբ երիտասարդի «քեֆը» հարցնելուց հետո, նա ցանկացավ իմանալ թե ինչո՞ւ վերջինս չէ մնում իրանց մոտ մի քիչ ավելի:

— Ուրախությամբ կմնայի, բայց իմ ձիապանն, ահա, նստած լճամփին սպասում է ինձ,—առարկեց երիտասարդը:

— Վնաս չունի, նրանք սովոր են սպասել, — նկատեց արդկավագը այնպիսի մի եղանակով, որ կարծես այդ «նրանքը» իսկի մարդիկ չեին:

— Բայց միևնույն է, ևս արդեն ձեր վանքում ամեն ինչ տեսա, ամեն բանի ծանոթացա, ավելի մնալն այլես միտք չունի:

— Հա՞, դե որ էդպես ա, լավ ա: Ասենք շատ տեսնելու էլ բան չունենք, մե դարտակ վանք ա, մին էլ մի քանի սեազգություններ. եկողն ուրիշ ի՞նչ պտի տեսնալ, — նկատեց Սարկավագը ժամանով, ապա նայեց աբեղաներին այնպիսի մի հայացքով, որով կարծես կամենում էր ասել՝ «Հինի թե սիալվիք ուրիշ կարծիք հայտնել»:

Նրա գիտողությունը, սակայն ոչ ոք առավ ուշադրության, իսկ Պետրոսը շտապեց նավակը, որ սպասում էր իրեն:

Շովակն անհանգիստ էր, թեպետ ո՛չ անսաստ հուզված: Ալիքները դեռ ևս խաղում էին իրար հետ և կարծես զգուշանում միջյանց ընդհարվելուց, որպեսզի ծովակի ժպտուն դեմքը շնորովեն:

Կամսարյանի հարցին թե՝ արդյոք զրի անհանգստությունը վտանգ չէ՝ սպասնում, սարկավագը պատասխանեց.

— Էդ տեսակ անհանգստությունից հեշ վտանգ չկա: Ուրիշ ա, որ քիչ հետո քամին սաստկանա, բայց մինչև էն վիստը դու կլինես Զիբուխուում:

Մինչդեռ ուղեկցող աբեղաներից մինը, որ մեր ծանոթ քողօքաբեկուն էր, երիտասարդին ավելի միամտացնելու համար, պատրաստականությունն հայտնեց ուղեկցել նրան մինչև դիմացի ափը:

Կամսարյանը սիրով ընդունեց այդ առաջարկությունը և նրանք միասին մտան նավակը, որ իսկույն էլ առաջացավ դեպի խորը:

Սակայն այստեղ ալիքները թվում էին հետզհետե ավելի անհանգիստ և, հետեապես, ավելի ահարկու: Թեպետ թիավարների հուժկու բազուկների շնորհիվ հնատարագ նավակը

սուբում՝ էր արագ, այսուամենայնիվ ծիանքը նրան այնպես էր տատանում, որ թվում էր թե ահա, ուր որ է մի հորձանք կխուժե նավակի խորը և լցնելով այն՝ ուղեորների հետ միասին կիջեցնե հատակը:

Երիտասարդ արեղան տեսնելով, որ Կամսարյանը երկյուղ է կրում, սկսավ նախ նրան հանգստացնել, ասելով որ ծովակի ավելի հուզված ժամանակն իսկ ամենքը նրա վրա երթևեկում են աներկյուղ, ըստ որում մինչեւ այսօր դեռ ոչ ոք այդտեղ վտանգի չէ հանդիպել: Իսկ հապա նրա ուշադրությունը ուրիշ բանի վրա դարձնելու համար, սկսավ նորեն խոսել վանքի ցավերից.

— Գիտե՞ք, բարեկա՞մ, ևս շատ ուրախացա, երբ դուք վանահորից նվիրատվության մատյան պահանջեցիք: Թեպետ ցավալի էր, որ նա կարծեց թե դուք մեր խոսքն եք կրկնում և ոչ թե ձեր սեփական ցանկությունը հայտնում, այսուամենայնիվ, լավ եղավ, որ այդ բանն արիք, որովհետև դրանով մեր դատին ույժ տվիք: Երանի թե ամեն այցելու այդպիսի մի պահանջ անե նրանից: Այն ժամանակ նա կիմանա, որ համեստության պակասությունը կամ ըմբոսառությունը չէ պատճառ, որ մենք ևս հաճախ նման պահանջներ ենք անում, այլ մեր գիտակից պարտաճանաշությունը, որին իրավունք չունինք գալաճանելու լոելով այնտեղ, ուր պիտք է խոսել: Դուք նվիրատվության մատյանն եք ասում՝ մի հարցրեք թե ուրիշ որինք մատյան ունի՞ մեր վանքը: Տեսա՞ք դուք այդ սարկավագին, որ նոր վերապարձավ: Ուշադրության արժանի անձնավորություն է դա: Ով որ կամենում է մեր մի կարգ գործերի անհաջողության գաղտնիքը լուծել, նա պետք է ուսումնասիրե այդ տեսակ անձանց, որոնք չնայելով իրենց ոչնչության, այսուամենայնիվ մեծ դեր են խաղում մեր բախտը տնօրինելու կարևոր գործում: Սևանում, օրինակ, այդ մարդը վայելում է մեծ իրավունքներ: Չեմ սիսալիիւ, եթե ասեմ թե դա է մինչև անգամ մեր ամենի գլխավորը և ոչ թե վանահայրը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ մի խեղճ ու տգետ մարդը Վերջինն, իսկապես, մեզ չէ սիրում

նըսա համար, որ իրենց հաճախ անում ենք այնպիսի պատ-  
հանջներ; որոնց խորհուրդը նա չէ հասկանում: Մյուս կող-  
մից էլ նրան լարում են մեզ գեմ յուր մտերիմները և մա-  
հավանդ սարկավագը, որին նա հավատում է միաժամբար,  
կամ, գուցե, հարկից սահմանակած: Ո՞վ է, սակայն սարկավա-  
գը, որ այսքան ուշի ունի.—մի տգետ ու գոեհիկ մարդ, որ  
անհիշատակ ժամանակներից գտնվելով այս անպատճեմ,  
յուր ժրության և ճարպկության շնորհիվ արժանացել է  
«աներեսույթ կարգադրիչների» ուշադրության և նրանց շան-  
քերով էլ «վերսից» կարգվել վանահոր օգնական: Նրա պաշ-  
տոնն է, իբրև վանքի գործակատար Հոկել նրա կալվածնե-  
րին, ժողովել եկամուտը, և երեխնապես գնալ մոտիկ քա-  
ղաքները, թե՛ այդ տեղերի կալվածոց արդյունքը գանձելու  
և թե միաբանության համար հագուստ կամ այլ պիտույք  
հայթայթելու: Բայց նա յուր պաշտոնը կատարում է ոչ թե  
իբրև գործակատար, այլ իբրև վանքի տեր ու իշխեցող: Եկա-  
մուտ ձեռք բերելու դժվարին մասը նա, իհարկե, հանձնում  
է վարդապետներին, սրանք են, օրինակ, հավաքում մհա-  
քանության հասանելիք «պատղի բաժին»—ոչխարը, պանիքը,  
ձեթը, ցորենը և այլն: Այս առիթով խեղճերը սարերն են  
բարձրանում, ձորերն են իջնում, դաշտերն ու զյուղերն են  
շափում և սակայն այդ ամենը վանքը մտնելուց հետո, եկ-  
թարկվում է սարկավագի միահեծան իշխանության: Ինչ վե-  
րաբերվում է գրամական գործերին, դրանք արդեն նրան ձեռ-  
քումն են: Ի՞նչ մուտք ունի վանքը և ի՞նչ ելք այդ մենք  
չկիտենք, բայց գիտե սարկավագը և եթե հարկ լինի որևէ  
հաշիվ տալ մեկին, այդ կտրվի այնպես, ինչպես որ սար-  
կավագը կուզե, և ոչ թե այնպես, ինչպես, որ իրոք կա: Այս-  
օր կղզին մտնելուց զուք խոսեցիք գյուղացիների տրատուցի  
մասին, որը, սակայն, ընկերս համարեց գրախոսությունն,  
բայց նա սխալվում էր: Գյուղացից տրտունջն էլ ունի յուր  
հիմքը: Մեր գործերն առհասարակ այնպես են ընթանում,  
որ հեռվից նայողը պիտի կարծե թե, այս անտեր հայոց պ-

կան մի-մի սարկավագներ, որոնք հենված իրենց պաշտպան «ուշեթերին», գործում են, ինչ կամենում են և ոչ ոք նրանց շէ իշխում խանգարել: Եվ հենց այդպես էլ է, եթե երեմն մարդիկ համբերությունից ելնելով սկսում են տրտնջալ, կամ ուր հարկն է բողոքել, այդ ամենի արդյունքը լինում է այն, որ սարկավագը կատարում է մի փոքրիկ ճանապարհորդություն, համբուրում է «աներեւյթ» կարգադրիչների ձեռքը և վերադառնում դարձյալ յուր պաշտոնով ու իրավունքներով: Այնուհետև ջուրը դարձյալ հոսում է յուր հին ճամփով և մարդիկ հոգնած հաշտում են այդ զրության հետ: Այս է իսկապես պատճառը, որ վանահայրն ամեն բանում համակերպվում է սարկավագին: Նրա մեջ այլևս մեռել է տրտնջող ու բողոքով հոգին և մնացել է միայն մի փոքրիկ փառասիրություն, որ գոհ է, գեթ նրանով, որ ինքն աշխարհի առաջ համարվում է «վանահայր»: Իսկ թե այնուհետև ի՞նչ է կատարվում շուրջը, այդ ամենի համար նա կարող է աշք գոցել, որպեսզի «աներեւյթ» պաշտպանները չգրգռվին: Այս կերպով են վարվում մեր գործերը շատ տեղ և «խոհեմ» մարդիկ շեն վրդովվում այդ դրությամբ, որովհետև հավատացած են թե ոչինչ այլևս չէ կարելի փոխել: Բայց մի՞թե այլուրի է: Մի՞թե այդ ձեռվ պիտի մտածենք նաև մենք, որ մտել ենք հոգեւոր զինվորության մեջ գաղափարով ոգուրչած... ի՞նչպես թե մի տգետ ու գոհեիկ գեղջուկ միտհեծան տեր լինի այս հինավուրց անապատին... ի՞նչպես թե այդ պաշտոնը նա գնե այնպիսիներից, որոնց մի փութ ազած կողակի նվերը ավելի է զբաղեցնում, քան թե Սևանի շուրջն ապրող ժաղովրդի ցավերն ու կարիքները... Եվ երբ այս մասսին մտածում ես, երբ երևակայում ես թե ի՞նչ կարող էր լինել պատմական Սևանը, ինչեր կարող էին լինել հոշտավոր Տաթևը, Սանահինն ու Հաղպատը, Գանձասարն ու Ամարասը և ուրիշ շատերը, որոնք, սակայն, այսօր ոչ այլ ինչ են, եթե ոչ ավերանոցներ, զայրույթից քիչ է մնում՝ որ թեհագարվիս... Ահա, այսպիսի դեպքերումն է պարո՞ն

Դամսաբքան, որ մենք հիշում ենք ձեզ, զարգացած ու կարող էրիտասարդներիդ և կարուում ձեր օգնության...

Վերջին բացականչությունը նեղը պիտի լծեր Կամսարյանին, եթե նրա բախտից նավակը չհասներ ափին: Բայց նա ոչ միայն հասել, այլև կողն արդեն դեմ էր արել ժայռին: Պետք է ուրեմն ելնել: Այս դեպքում, իհարկե, պատշաճից դեմ չէր, որ երիտասարդը, իրեն ուղղված սրտառուչ դիմումին հարմար և վայել պատասխան շտալով, շատացավ միայն աբեղայի եռանդը մի քանի խոսքով գովելով: Հետո բարեկամաբար նրա ձեռքը սեղմելով, շնորհակալություն հայտնեց սիրալիք ուղեկցության համար և հատկապես խնդրեց, որ հայր-սուրբը հաճի վստահորեն դիմել իրեն, եթե հարկինի հանձնել իրեն որևէ պատվեր կատարելու:

— Պատվերներ տալ ձեղ՝ շեմ համարձակվիլ, բայց գուցե խնդրեմ, որ երբեմն ինձ համար նոր գրքեր դրկեր, դռանով գուրք ինձ շնորհապարտ կկացուցանեք, — ասաց աբեղան:

— Ամենայն սիրով և ուրախությամբ, — հարեց երիտասարդը և մակուկավարներին առատորեն վարձատրելով, դուրս ելավ ափը:

Մի քանի բովակից հետո նավակը հեռանում էր առնելով յուր հետ բողոքարկու աբեղային, իսկ Կամսարյանն յուր ձին խրախուսելով, դիմում էր դեպի Զիբուխուլու:

## ԺԴ

Պետք բավական օր կար, որ Պետքուը հասավ գյուղ: Տանուանը շեր տանը չէր. նրան դիմավորեց տանտիրութին, որի հետ խոսել նա չէր կարող: Ինչպես անցցնել ուրեմն օրվա մնացորդը, կամ ո՞ւր գնալ, մտածեց երիտասարդը և իսկույն էլ մտաբերեց տիրացու Մոսուն: «Այցելեմ նրա գպրոցը, այս կարող է ուրախացնել տիրացուին», խոսեց նա ինքն իրեն և դուրս գնաց:

Առաջին պատահող անցորդը ցույց տվավ նրան տիրացուի տեղը, դեպի ուր և ուղղեց յուր քայլերը:

Տնակն, ուր ապրում էր Մոսին, գտնվում էր գլուխի  
ծայրում և բաղկացած էր մի հատ երդիկավոր միապուռն  
օդայից և ցածուն, բայց լայնագիր սրահից, որի առաջ  
գտնվում էր նաև փոքրիկ բակ, կիսով շափ պարսպած գե-  
տաքարերի անշաղախ պատով։ Հովանավոր սրահում, այլ և  
քակի այն մասում, որի վրա հարեանի աթարի դեզը տա-  
րածել էր լայն ստվեր, անկարգ ու խառն ի խուռն նստոտած  
էին մոտ երկու տասնյակ տղաներ, ոմանք կտավի փոքրիկ  
մինդարների, կամ հին կապերտի կտորների, ոմանք պատե-  
րի տակ ընկած սալաքարերի, իսկ ուրիշներն՝ ուղղակի հո-  
ղի վրա։ Նրանք ձեռքերնին մի-մի գիռք առած կարդում էին,  
երբեմն կամացուկ, երբեմն մոմուլով, իսկ հաճախ բարձրա-  
ձայն, առանց մեկը մյուսին նայելու, որից և բակի ու սրա-  
հի մեջ բարձրացել էր աղմուկ ու ժխոր։

Տիրացուն, որ Կամսարյանին հանդիպած ժամանակ  
երեւում էր կորաքամակ, այստեղ, աշակերտների առաջ Զե-  
մում էր ձգված ու բարձրագլուխ։ Մինչեւ անդամ մորթե  
դդակը, որ նա ճանապարհին քաշել էր գլխին մինչև ականջ-  
ները, այժմ ոչ միայն բարձր էր՝ ճակատը երեալու շափ, այլ  
և բեշ (ծուռ) դրված, որով նրա դեմքը ստանում էր համար-  
ձակ ու ինքնավտահ արտահայտություն։ Նա ձեռքին ուներ  
հասարակ փայտից շինած մի երկար քանոն, որ նմանում  
էր որմնադրի գազի և որը շարունակ աջ ու ձախ ճոճելով,  
մոտենում էր մերթ այս, մերթ այն աշակերտին և փոխանակ  
խոսքով դիտողություն անելու, նրա ծայրով բոթում էր կամ  
մեկի կրծքին՝ կամննալով ուղիղ նստեցնել նրան, կամ մյու-  
սի գլխին՝ որպեսզի սա շատ չկորացնե այն, իսկ հաճախ  
զարկում սրա ու նրա գրքին, որպեսզի ծնկների վրա դնելու  
փոխարեն ձեռքերնին առնեն նրանց։

Հեռվում՝ ձայնը մի աշակերտի, որ կարդում էր  
կանգնած, հաղթում էր ընդհանուր ժխորին։ Այդ նշանակում  
էր թե նա դաս է ասում։

— Ի՞նչ է պահառը, որ դու... կարդում էր աշակերտը  
մայրենի լեզվից։

— Պաճարը չի, ա լակոտ. պատճառն ասա, — ուղղում  
էր տիրացուն:

— Պատճառը, որ դու աղպես...

— Ա, հայվան, աղպեսը ո՞րն ա. մի շանց տու տե-  
նիմ, — ասում էր տիրացուն և քանոնը ճոճելով խոյանում  
գեղի, աշակերտը:

— Վերջինս, մեկ ճոճող քանոնին, մեկ գրքին նայելով  
շփոթված պտրտում էր աղպեսը:

— Ո՞ւր ա, դե շանց տու տենեմ. շանց տու, շուտ, —  
կրկնում էր տիրացուն անհանգստությամբ:

Աշակերտը վերջապես գտավ աղպեսը և ցույց տվավ:

— Աղա, էշի ծեք, բա էդ աղպես ա, էս «յ»-ին տե-  
նո՞ւմ չես. աշբդ քո՞ո ա, հմի թիսեմ զրուստ քուացնե՞մ, —  
ասում էր վարժապետը և ապա ուղղում, — ասի՞ այդպես:

— Այդպես:

— Զո՞ո... դե հմի միտդ պահի:

— Այդպես ուրախ ծիծաղում ես... շարունակեց աշա-  
կերտը:

Կամսարյանը, որ մի քանի վայրկյան՝ ցանկապատի  
հետեւ կանգնած տեսնում ու լսում էր այս ամենը, վերջա-  
պես մտավ բակը:

Տիրացուն հենց որ նշանակեց նրան, ձեռքը բնավդաբար  
դեպի գլուխը տարավ, և գրակի դիրքը ուղղելով, շտապչ  
շտապչ մոտեցավ երիտասարդին:

— Բարով ես եկել, աղա, հազար բարով, էս ո՞լ խաւ-  
չիկ ա մեզ միտդ ես գցել, — ասաց նա ժպտալով և սկ ու  
կոշտ ձեռքը կամսարյանին ուղղելով:

— Եկել եմ քո ուսումնարանը տեսնելու, — պատասխա-  
նեց վերջինս և թեթևակի ու կես անուշագիր սեղմեց Մոսկ-  
վորը:

— Ծնորհակալ եմ... Աստոծ էլ քե մհալ գցի (ուշագիր  
լինի), ոնց որ դու մեզ մհալ ես գցում... ամա դե կրախշես,  
քու տեսնելու լայազ հուսումնարան շունեմ:

— Հոգ չի, ինչ ունես այն կտեսնենք:

— Լավ կըլի, — համաձայնվեց տիրացուն և դառնալով

աշակերտներին՝ կես բարձր ու կհս խեղված ձայնով, հրամայեց, — ադա վե կացեք, աղին գլուխ տվեք:

Աշակերտները մեկը մյուսի հետևեց վեր կացան տեղերից ու շվարած ու երկշուր հայացքով սկսան դիտել ապինուր:

Նրանց արտաքինը չափազանց տխուր ազդեցություն էր անում: Մոտ երկու տասնյակ աշակերտների մեջ հազիվ մի երկուսը հագնված էին օրինավոր, այսինքն ունեին շմաշված շոր և կաշվե ոտնամաններ: Մյուսները գրեթե ցնցոտիներէ մեջ էին, ոմանք մինչև իսկ կիսամերկ և բոկոտն, կային և այնպիսիները, որոնք արխալուսի (բաճկոն) տակ շատիկ շունեին, կամ եթե ունեին, այնքան էր կեղառու, որ կտավի ինչ գույն լինելը չէր որոշվում:

— Ադա ձեզ ասըմ չե՞մ գլուխ տվեք, — կրկնեց տիրացուն յուր հրամանը:

Աշակերտներից մի քանիսը գլուխ իշեցրին. ավելի փոքրերը գեռ նայում էին. ապա ընկերներին հետևելով, նրանք էլ գլուխ տվին, առանց իմանալու թե ինչո՞ւ են այդպես անում:

Մի փոքրիկ դալկարեմ տղա, որ դեռ քարի վրա նստած յուր մեծ-մեծ սիրուն աշքերը հառել էր «աղին» և չէր մտածում ոտքի ելնել, գրգռեց տիրացուի զայրութը:

— Ա լակոտ, իսի՞ չես վե կենում, — խուզ ձայնով ձշացնա և յուր բարկացայտ աշքերը սկսեց երեխայի վրա:

Վերջինս վեր թռավ, իբրև օձահար և երկշուր հայացք սկսալ պատեցնել մերթ «աղի», մերթ վարժապետի վրա:

Հին պատառոտուն հագուստը, որ շատ տեղ, նույնիսկ չէր ծածկում տղայի նիհար մերկությունը, անմեղ ու տխուր հայացքը, որ մի առանձին գրավլություն էր ստացել զգացած երկյուղի ազդեցության շնորհիվ, այնպես հուզեցին կամսարյանի սիրտը, որ նա չկարողանալով յուր դժգոհությունը գրպել, ծանր դիտողություն արավ վարժապետին, որ նա կոպտաբար է վարվում երեխաների հետ:

— Որ դհե շանես, սրանք մարդ չեն դառնալ: Դու գիտում չես թե ինչ թահը թայփա (ցեղ) են: Ափսո՞ս չեն մե-

բոնք (զագախեցիք), ընդոնցում խելք կա, շնորհք կա, ըստոնք ջէիզ (բոլորովին) հայվան են,—առարկեց տիրացուն:

— Դեմ լավ, բավական է, աշակերտներին չեն հայնոյիլ,—կամացուկ նկատեց Կամսարյանը և ապա մոտենալով տղաներին, սկսավ նրանց խոսեցնել, հարցուփորձել, մեկին կամ մյուսին կարդացնել, կամ նրանց գրքերին ու տեսրակներին նայել:

Տղաներից ոչ մեկը, նույնիսկ մեծերից, որոնք ձեռքերին ավետարան ունեին, կանոնավոր կարդալ չեր իմանում: Գրելու մեջ, մանավանդ, ետ էին մնացած բոլորը: Մի երեխայի տետրակի վրա նա տեսավ վարժապետի գրած մի քանի տող օրինակը, որ անկանոն ձևով գրված լինելուց զատ, մի էր նաև տառասխալներով:

«Եթե սա է վարժապետը, ի՞նչ կլինի աշակերտ», մատեց Կամսարյանը և գլուխը շարժեց:

— Տեսում եմ, որ հավանում չես իմ հուսումարանին,—Ժպտալով և միւնույն ժամանակ, քաշվելով նկատեց տիրացուն, երբ Կամսարյանը յուր հարց ու փորձը ավարտելով, կամենում էր հեռանալ:

— Ի՞նչ ասեմ, Մոսի, լավ կլիներ, որ դու այս ուսումնարանը փակեիր,—ասաց երիտասարդը:

— Ծնչի՞ հմար,—զարմացավ տիրացուն:

— Նրա համար, որ դու ոչինչ չես սովորեցնում այս երեխաներին:

— Յանի ո՞նց չեմ սովորեցնում: Բա դու քու աշքով տեհա՞ր ոչ՝ ոնց են կարում, յա անզիր ասո՞ւմ:

— Տեսա, բայց թե՛ կարդացածները և թե անզիր ասածները, բոլորն էլ սխալ էին ու անկանոն:

— Դե որ դրանից լավ կարում չենք սովորեցնե՞նք...

— Այն ժամանակ ավելի լավ է, որ իսկի շսովորեցնես: Այս դիտողությունը տիրացուի ինքնասիրությանը դիպավ, ուստի նա համարձակություն առավ խոսելու:

— Դիտա՞ս ինչ կա, աղա, օրինակի հմար ասենք: մի ժամդ կա, որ քաղցած ա, ընենց քաղցած, որ ուզում ա թի-

լանա, ի՞նչ արած, ցորեն հաց շկա, որ տանք իրամ ուստի:  
ես, ասքը եմ՝ բատի մի կտոր ճաթ (կորկահաց) կա, բերեք  
տանք իրան. դու ասքը ես՝ չէ, ճաթը դժար կմարսի: Հեր  
օրհնած, մարդը սոված թիւանում ա, ցորեն հայր որ շկա,  
ճաթի էլ ա տանք, որ ուստի շմեռնի, է... Ճմի մեր էս բե-  
խերքն են: Լավ, օսալ, մի բան առվորցնում ենք: Ասում շնչ  
քերականութին յա ճարտասանութին եմ սովորեցնում, ըգոնք  
սկի էս էլ շեմ կարգացի: Ամա դի մի քիշ զրածանալ ենք  
անում, որ թղթի սեն ու սպիտակը ջոկեն, յա ճարկավոր  
վախտը՝ մի բարովագիր, յա սանակ (մուրհակ) գրեն, յա չէ,  
սուղը (գատարան). կանչած վախտը՝ իրանց անումն ու փա-  
ձիւան կարան ձեռք քաշիլ:

— Ախար եթե դու այս ուսումնաբանը շունինան,  
գյուղացիք կտեսնեն, որ իցնց երեսաները մնում են ան-  
ուսում, կհավաքվեն, կմտածեն և իրենց համար մի կանոնա-  
վոր ուսումնաբան կհիմնեն:

Տիբացուն ծիծաղեց:

— Ինչո՞ւ ես ծիծաղում, — հարցրեց Կամսարյանը:

— Բա ո՞նց չծիծաղեմ, խաչն իմն ա, զորութինը ես եմ  
քիւտում: Մեր ժողովուրդը ընե՞նց ժողովուրդ ա, որ իրանից  
մի բան ունի: Ճրես պմեն մի բեխին ամսեկան իրեք շահի,  
յա մին աբասի փող դեն տալ, սկի էն էլ տալիս շեն, պա-  
հում, զցում. են կալավախտին, թե ի՞նչ ա, փողի տեղ ցո-  
րեն, յա գարի տան: Էն էլ թե տարին առատ ա ըլում, տա-  
յիս են, թե, չէ, ասում են գյալաջախ (գալ տարի) կտանք:  
Ինչնց մալով էլ կա փողի տեղ ձու, ճուտ, յա հավ ա բե-  
րում, շատ լախտ էլ բերում չի: Այ, տենում ես էն պու-  
ջուր տղան, որ ճմի քարիցը վե չի կենում, նա եթիմ (որը)  
ա, մի ըլքեերի (ալրի) մեր ունի: Ասավ բեխիս կարգացու,  
ամսեկան մի ջուխտ գուլպար կտամ: Ես էլ էս ա օխտին ամիս  
ա, կարգացնում եմ: Ամա դի մի ամովա հմար մի ջուխտ  
բերել ա ու քնյուցը եղը էլ բերում չի: Ասում եմ. — ա նան  
Քթալցրիկ), բա խի պանտրդ տալիս շեն. ասում ա, — վար-  
ժապետ, զլուրբան ըլեմ քե, բուրդ շունիմ թե մանեմ մի քիշ

մոհքաթ տուր, ես ա գնալ դեմ Նորագուզ, իմ քվոր տոմնը. բնաեղից բուրդ կրերեմ, թել կմանեմ ու գուլբեքդ կգործեմ, կրտամ: Ես էլ տեսում եմ, որ խեղճ կնիկ ա, ըսկի հաց շունի թե ըեխին կուշտ փորով ուտացնի, բուրդ ո՞րդիան դի դանիլ որ թել մանի: Ըսենցով սիրտս ցավում ա. ասում եմ նանի ջան, փիքր մի անիլ (մի մտածիլ), ես քու ըեխին մուֆտա (ձրի) կկարդացնեմ: Էն ա, նա էլ ուրախանում ու օրհնում ա ինձ: Մրանով բանը քութա՞ ա ըլում (վերջանում է):

«Հմի քե եմ հարցնում. ամիսը իրեք շահի, յա մին արասի տալով, կալափայ, ձու, ձուտ, յա փողի տեղ՝ օրհնութին հվաքելով ժողովուրդը կարա՞ հուսումնաբան բանա՞լ... Այ, ուրիշ բան էր էն, որ գալիս վախտը ճամպին ասում իր ինձ թե, եթե մի մարդ իրա ծախքովը ուզի հուսումնաբան բանալ, գեղացիք հո չե՞ն հկառակիլ: Ես էլ ասեցի՞ բա խի՞ են հկառակում. մարդ իրա աշքը քո՞ռ կուզի: Հմի թե որ ըդենց մի բարի մարդ գտնվի, էն շախը հա՞ կհավատամ, որ մի բան կըի. թե չէ ժողովրդին, որ թողնես, ինքն իրանից բան չի շինիլ:

Կամսարյանը զարմացավ, տեսնելով որ այնքան գոեհիկ երևացող այդ տիրացուն կարողանում է յուր (Կամսարյանի) առարկությունները հիմնավոր կերպով շրել. ուստի հանցանքի մեջ բռնված մարդու նման շիմացավ ի՞նչ պատասխանել: Մի քանի վայրկյան լուռ մտածելուց հետո, աշխաց:

— Դու էլ իրավունք ունիս:

— Հարկ է որ ունիմ. ինչ կի բանը շիմանամ, ես սկի կիսում՝ — սրտավորվեց տիրացուն:

Երիտասարդն ուրիշ առարկություն շարավ և մնաս բարե ասելով, հեռացավ:

Ճանապարհին, սակայն, նա մտածում էր: Գաղափարական «ես-ը դարձյալ շշնչաց նրա ականջին: Նա հիշեցնույժ էր տիրացուի խոսքերը, բացատրությունները, նրա կարեկից վարմունքը՝ աղքատ այրիի հետ: «Այս շքավոր ու կիսակիրթ

տիրացուն, յուր ողորմելի պատրաստությամբ, ավելի շատ է գործում և ավելի շատ օգնում խեղճ ժողովրդին, քան թե մենք, զարգացածներս, մեր բարձր գիտությամբ, մեր ունեցած հարստությամբ», — ասում էր այդ «հս»-ը և երիտասարդը լսելով նրան, թե՛ համոզվում և թե՛ զայրանում էր:

— Ցած ու ստոր արարածներ ենք և ուրիշ ոչինչ, — բացականչեց նա հանկարծ և քայլերն արագացրեց:

Հանապարհի կիսում նա հանդիպեց ուստա Պետուն, որ շտապ շտապ գալիս էր իրեն գտնելու:

— Աղա՛. ախր ես քի եմ ման գալի (պտրտում): Էսօր էրկու հետ (անգամ) գնացել եմ տանուտերի տունը՝ Սալբուն հարցրել. ասել ա՛ Հլա Սևանից եկել չի: Քի մատաղը աղա, թե կարաս, ջափա (նեղություն) քաշի, ե՛կ էն մարդին մի բանով օգնի, խեղճ ա, տունը քանդվում ա:

— Ի՞նչ մարդ, շեմ հասկանում, — հարցրեց Կամսարյանը, սկզբում շիմանալով թե ո՞րի մասին է խոսքը:

— Մեր էն խեղճ Սային... բա էրեկ շասի՞ թե՝ Խոջան հրաման ա բիրել, որ նրա էլած շելածը ծախի՞: Այ, հմի՛ պրիստավը վե կալած էկել ա, խեղճի դուռը կտրել: Փանի մարդիկ մեջ ընկան, խնդրեցին, աղաշեցին թե մի քիշ էլ ամոհլաթ տա, ասավ՝ տալ շեմ. փողս բիրեք տվեք, պրիստավին վեր ունեմ գնամ. թե չէ ինչ ունի շունի, պտի վեր՝ գրեմ, ինչ կլի կնկանը շորերն էլ... Դե, մենք փող ո՞րդիան գտնենք էս սհաթին. գեղականի ջանումը հա՞լ ա մնացել որ հվաքի տա՞:

— Գնանք, գնանք, ուրախությամբ կօգնեմ, եթե հնարինի, — ասաց Կամսարյանը, գոհ լինելով, որ քիշ առաջ հուզված յուր խիղճը պիտի հանգստացնե մի բարի գոռծով:

— Հնար կըլի, խի՞ չի ըլիլ: Հենց որ դու ոստիար պրիստավին հասկացնես, թե ախար էս մարդը Խոջին պարուալ լել քսան մանեթ, էդ խի՞ քսանը հարիր էրսուն ա դառել, էն ա նա էլ Սայուն զռոիլ չի:

— Աւրեմն Սայու պարտքը 20 մանեթ է եղել և հիմա  
նա 130 է ուզո՞ւմ, — Հարցրեց երիտասարդը:

— Բա՛:

— Քանի տարի է:

— Չորս:

— Ճշմարի՞տ:

— Սաղ գեղին ա հայտնի:

— Գնանք, գնանք, դա հետաքրքրական է, — ասաց երի-  
տասարդը և շտապեց:

Գյուղերում արտաքո կարգի մի դեպք պատահած ժա-  
մանակ, ուրախության առիթով լինի այդ, թե՝ տիսրության,  
գյուղացիք սովոր են խոնմիլ այն տան բակը, ուր դեպքն է  
պատահել և հետաքրքրվիլ նրանով՝ իբրև սեփական գործով։  
Սայու բակն էլ այդ վայրկենին լիքն էր ժողովրդով։

Պրիստավը, որ մոտ քառասնամյա, բարձրահասակ շի-  
կաներ և բարեղեմ մարդ էր, կանգնած խոսում էր մի քանի-  
սի հետ, իսկ Խոջա Միրզան, որ պարտատեր լինելուց զատ  
թարգմանչի դեր էլ էր կատարում, ձեռքերին ու ոտքերին  
անելով բացատրում էր պրիստավի խոսքերը։

Խոջան արտաքինով, անշուշտ և ներքինով, պրիստավի  
հակապատկերն էր։ Դա մի գիրուկ, կարճահասակ մարդ էր,  
արևահար դեմքով, մանր ու շարժուն աշքերով, որոնց կո-  
պերը՝ արտևանոնքներից զուրկ լինելուց զատ, խիստ կար-  
միր էին և նրա հայցքին տալիս էին ոչ միայն խորամանի,  
այլ և լայիր արտահայտություն։ Կարճ, քիչ շարդված քիթը,  
որ անշուշտ յուր անցյալ պատմությունն ուներ և սուր  
կզակի վրա, տեղ-տեղ միայն բուսած, նոսր ու գորշ մորու-  
քը, լրացնում էին նրա դեմքի տգեղությունը, որ յուր մեջ  
ուներ նաև մի ժանտ գիծ, որից ռամիկը կամա-ակամա պի-  
տի վախենար։

Պրիստավը խոսում էր այնպիսի մարդկանց հետ, որոնք  
եկել էին Սայու համար նրա օգնությունը հայցելու, գրանց  
թվումն էր և տանուտերը։

Մինչդեռ պարտապան Սային, որ աղքատ հագնված, նի-

հար, և ինչպես ասում են, մազն երեսին շորացած մի ծերուկ էր, մորթե գդակը կուն տակն առած և մեջքը սրաճի սյունին հենած խեղճ ու կրակ նայում էր մեկ պաշտոնյացին, մեկ խոսող մարդկանց, առանց մի բառ արտասանել կարողանալու և ապա հայացքը ձգում յուր վերջին հույս ու ապավեն ծիռն ու մի հատ կովին, որ գոմից դուրս հանած, պատրաստվում էին առաջինը վեր գրել, իբրև արժեքավոր իրեր:

Սայու կինը ցնցոտիների, մեջ փաթաթված, ձեռքերը խաշած, կանգնած էր կովի մոտ, իսկ նորա կողքին գտնվում էին յուր մեռած որդու երկու մանկահասակ, նիհար, կիսամերկ և բոկոտն որբուկները, մի տղա և մի աղջիկ, որոնք վախեցած աշքերով և մանկական հուսահատությամբ նայում էին մերթ խոսող պաշտոնյացին, մերթ պարտատեր եռջին, որ յուր ժանտ գեմքով, սրածայր գդակով և մահուդից կարած երկար կապայով նրանց աշքին, այդ բոպեին, թվում էր իրքեւ մինն այն դեմքից, որոնց մասին իրենք լսել էին չեքիաթներ՝ պապից կամ տատից:

Մտնելով Սայու բակը, Կամսարյանն ուղղակի դիմեց պրիստավին և Հայտնելով նրան յուր անունն ու ազգանունը, խնդրեց ծանոթանալ:

Վերջինս սիրով ընգունեց այդ ծանոթությունը և ուրախություն հայտնեց, որ Զիբուխլուի նման մի հետ ընկած անկյունում պատահում է պարոնի նման մի երիտասարդի, ուստի խոսակիցներից հեռանալով, սկսավ զրուցել վերջինի հետ:

Պետրոսը առանց ուշացնելու, հայտնեց պաշտոնյացին յուր նպատակը, որ էր օգնել գյուղացուն, դժար կացությունից ելնելու:

— Դուք, երկի, կամենում եք նրա պարտքն առնել ձեզ, — հարցրեց պաշտոնյան, լավ շրմբոնելով Կամսարյանի խոսածը:

— Աչքես իմացա, որ պարտատիրոջ պահանջն ա-

նարդար է, այդ պատճառով կամենում եմ, որ մասնավոր կերպով քննության առնենք այդ խնդիրը:

— Այդպիսի քննության ես, դժբախտաբար, շեմ կարող մասնակցել և դա գործնական հետեանք էլ չի ունենալ: Որովհետեւ պարտատերը ներկայացրել է ինձ գատարանից առաջ օրինավոր հրամանագիր (կատարողական թերթ) և հայտնելով, որ պարտապանը հոժարությամբ չէ վճարում յուր պարտքը, պահանջում է վեր գրել նրա ստացվածքը և աճուրդով վաճառել. ես շեմ կարող օրենքի հրամանը չկատարել:

— Ես ինքս իրավաբան եմ, և այդ ամենը գիտեմ: Օրենքի հակառակ ոչինչ շեմ առաջարկիլ: Այս մեկն եմ միայն խնդրում, որ ժամանակ տաք ինձ այս մարդու հետ խոսելու: Մրա պահանջը հիմնված է հայտնի խարդախության վրա, որի համար քրեական պատժական օրենքը սպառում է հանցագորին իրավունքների զրկանք և բանտարկություն:

— Ի՞նչ խարդախություն կարող է լինել, նա գատարանին ներկայացրել է 131 ոռորդու օրինավոր մուրհակ և այդքան գումարի էլ հրամանագիր առել:

— Բայց գյուղացին պարտ չէ նրան այդքան:

— Գուցե, այսուամենալինիվ, ես իրավունք չունեմ այդ իմանալու:

— Բայց ես խոսում եմ ձեզ հետ, ոչ իբրև պաշտոնական անձի, այլ իբրև ճշմարտության նախանձախնդիր բարեկամի հետ:

— Համեցեք, ես ձեզ լսում եմ:

— Գյուղացին այս մարդուց չորս տարի առաջ ստացել է միայն 20 ոռոքի: Այդ քսան ոռոքին այսօր դարձել է 131: Այս հանելուկը չէ՝ հետաքրքրում ձեզ:

— Չափազանց 20 ոռոքին ինչպես կարող է չորս տարվա ընթացքում դառնալ 131:

— Այ, հենց ես էլ այդ եմ ուզում հարցնել պարտատերից:

— Հարցրեք, իմացեք, դա հետաքրքրական է:

Խոզան, որ մի փոքր հեռու կանգնած դիտում էր խո-  
սակիցներին և վատ բան գուշակում վարժ ոռւաերեն խոսող  
երիտասարդի ներկայությունից, իբրև իրավատեր շտապեց  
միջամտել, ձայնը բարձրացնելով դիմեց պաշտոնյային և  
յուր աղջատած ոռւաերենով ասաց.

— Դասպատին պրիստավ, դեն կոնչիլսա, իդի, պիշի,  
զա՛:

Ուզում էր ասել, պարոն պրիստավ, օրը մթնում է,  
արի՛, վեր գրի վերջացրու:

Պաշտոնյան շպատասխանեց և նրա փոխարեն Կամ-  
սարյանն առաջանալով հարցրեց:

— Ի՞նչ է քո պահանջը այս մարդուց:

— Իմ պահանջն ինչ որ ա, էն ա գրած ա սպոլնիլիս-  
տումը, — պատասխանեց Խոզան փորձառու դատախաղի հա-  
վակնությամբ:

— Այստեղ գրված՝ որ սա պարտ է քեզ 131 բուբլի-  
թայց միթե ճիշտ է այդ:

— Բա որ ճիշտ շլինի կպե՞ն, քո ասիլով դատարանը  
սո՞ւտ ա խոսում, — նկատեց Խոզան, շարախնդիր մարդու  
նենգամտությամբ:

— Դատարանը սուտ չի խոսիլ, բայց դու ա՛յն տաշ,  
այս մարդուն 131 ոռւբլի՛ ես տվել:

— Բա չե՞մ տվել:

— Խոզա՞ քե դուրբան, իմա՞լ դյուզը չես ասելի, տյուն  
ինձի մինակ քսան մանեթ ես տվե, — միջամտեց Սային հու-  
սահատ ձայնով:

— Բա շահ շըկա՞ , մյուդաթ շըկա՞ , — բարկացավ Խո-  
զան:

— Հա, իդենց ասա՛, մյուտաթ հալբաթ որ կա... համա-  
ձայնվեց Սային՝ ձայնը ցածրացնելով:

— Քանի՞ տարի է, որ քսան մանեթ ես տվել սրան, —  
հարցրեց Կամսարյանը:

— Ի՞նչ գիտամ, շա՞տ...

— Էլի՛, մի ասա՛:

- Զորս տարի ա, աղա, —պատասխանեց Սային:  
— Այնպէ՞ս է, շորս տարի՝ է, —հարցրեց Պետրոսը և ու-  
շին, բայց նա չպատասխանեց:  
— Զորս տարի ա, շորս, —հաստատեցին գյուղացիներն  
ամեն կողմից:

— Քանիսո՞վ ես շահ հաշվել, որ 20 մանեթը շորս տա-  
րումը դարձել է 131 մանեթ:

— Եթիմ բանն ա, քե ի՞նչ, յա դու ո՞վ ես, որ իմ գոր-  
ծումը խառնվում ես, —նկատեց Խոջան կոշտ կերպով, կա-  
մենալով, այդպիսով վիրավորել և հեռացնել անսպաս մի-  
շամտողին: Ապա դառնալով պրիստավին, ասաց. —զա՞սպա-  
զին պրիստավ, պաժալուստա, իդի կոնչի, մինե վաժնի դելը  
ենա, դոլգի նե մագու իզդես սիդեթ: Կամենում էր ասել՝  
պարոն պրիստավ, խնդրում եմ, եկ, վերջացրու, կարեոր  
ոդործ ունիմ, չեմ կարող այստեղ երկար մնալ:

#### Պրիստավը մոտեցավ:

— Գիտե՞ք ինչ կա, Վասիլ Իվանիչ, —դարձավ Պետրոսը-  
վերջինիս. —այս մարդը շորս տարի առաջ 20 ոռոգի է տվել  
յուր պարտապանին և այժմ նրանից պահանջում է 131  
ոռոգի: Ես հետաքրքրվում եմ իմանալ թե՝ քանիսո՞վ է տո-  
դոս հաշվել, բայց նա չի ուզում պատասխանել:

— Сколько процентов считали? — харցրեց պրիստա-  
վը ծիծաղելով:

— Կակոյ տերե դելը. իսպոլնի լիստ շտո՞ գավարիտ,  
տակ նադր դելայտ, —պատասխանեց. Խոջան, կամենալով  
ասել՝ «Թեզ ի՞նչ, հրամանագիրն ի՞նչ ասում է, դու այն  
պետք է անես»:

— Հիմա դո՞ւք պատասխանեցեք, —ասաց պրիստավը  
և ամսարյանին և ժապտալով հեռացավ:

— Այդպես կանե, մի՛ վախենար. միայն թե ասա՛, քա-  
նիսո՞վ ես տոկոս հաշվել, —հարցրեց երիտասարդը:

— Ախպեր քե ի՞նչ. ես հո քեզանից չեմ փող ուզում:

— Ինձ ի՞նչ. այս ասեմ քեզ: Ես փաստաբան մարդ եմ:  
Փաստաբանը գիտե՞ս ինչ է. —ատվակատ: Այն գատավորը,

որ քեզ իսպոլնիտելնի լիստ է տվել, ինձանից ավել չէ օրենք իմանում: Իսկ իմ իմացած օրենքների մեջ գրված է թե՝ ով որ իրա պարտապանից հարյուրին 12 տոկոսից ավելով շահ առնե, նրան պետք է պատժել՝ զրկելով ամեն իրավունքներից և բանտ նստացնելով: Այս հիմի դու այսքան մարդկանց մեջ այս խեղճ Սայուցը 20 մանեթի համար 111 ռուբլի շահ ես առնում: Ես կարող եմ Սայուց գործը հանձն առնել, այս մարդկանցն էլ վկա գրել ու քեզ քաշ տալ դատարան, իսկ այնտեղից ուղղակի դրկել էշի դրախտը. հասկանո՞ւմ ես:

Այս խոսքերն ասվեցան այնպիսի մի խիստ եղանակով, որ Խոջան երկյուղից քաջությունը կորցրեց:

— Աղքեր, ախար դու լավ մարդ ես էրեսում, ի՞նչ ունիս դարմաղալում: Ինձանից դու հո առնելիք, տալիք չունիս. Էս մարդը փող ա պարտ, ի՞մ փողն ուզում եմ, դու խի՝ ես մեջ ընկնում:

— Զէ, պիտի ասես, քանի՝ տոկոս ես հաշվել:

— Մանեթին մի շահի, — ասաց Խոջան, տեսնելով որ «ատվակատից» պրծնում ըրկա:

— Ռուբլուն 5 կոպեկ, — գարմացավ Կամսարյանը:

— Հա:

— Ինենց ա, մանեթին մի շահի ենք խոսե, — հաստատեց Սային:

— Տեսնո՞ւմ ես, Հենց գիտաս, սուս եմ ասո՞ւմ, — նկատեց Խոջան:

— Սպասիր, սպասիր: Դու ռուբլուն 5 կոպեկ ես տում, չէ՞ , դե ես 10 կոպեկ կհաշվեմ. տեսնենք ո՞րքան է մեջ նում:

Այս ասելով Կամսարյանը հանեց հուշատերը, որն այժմ յուր աշքին ատելի չէր երեսում և նրա մի ազատ երեսի վրա սկսավ մատիտով հաշվել:

— 20 ռուբլին հարյուրին 10-ով՝ մի տարումը կտա 2 ռուբլի: Այս 22 ռուբլին երկրորդ տարումը կրերի 2 ռ. 20 կոպեկ, ուրեմն բոլորը 24 ռ. 20 կոպեկ: Սա էլ երբորդ տարումը տոկոս կրերի 2 ռ. 42 կոպ. միասին կանե՝ 26 ռ. 62.

կոպ.: Այս 26 ո. 62 կոպեկն էլ չորրորդ տարում կտտ 2 ո.  
66 կոպեկ: Ուրեմն չորս տարուց հետո քո տված 20 ոռոգին  
կդառնա 28 ո. 28 կոպեկ, որից 8 ոռոգի: 28 կոպեկը յուր  
արդար շահն է: Եթե մինչև անգամ հարյուրին 12 տոկոս հաշ-  
վենք, բոլոր գումարը կլինի 31 ոռոգի և մի քանի կոպեկ:  
Հապա մնացած հարյուրը ո՞րտեղից ես գուրս բերել:

Պարտապան Սային, որ սկզբում մեծ հավատ ուներ  
երիտասարդի հմտության վրա և հույս էր տածում թե նա  
մի բանով կթեթևացնե յուր ծանր դրությունը, տեսնելով  
այժմ որ նա տոկոսը շափազանց շատ պակսեցրեց, եկավ  
այն եզրակացության թե այդ տղան ուրեմն բան չէ հասկա-  
նում, ուստի սկսավ վճառմիլ: Նույն կարծիքին էին և ուս-  
տա Պետին ու տանուտերը:

Հենց այդ պատճառով էլ հոչան կարծես ոգի առավ:

— Էդ դու ո՞նց ես հաշվում, որ իմ առնելիքը ջուր ես  
կտրացնում... Հաշիվ անելը, որ մանում չես, խի՞ ես բանի  
մեջ խառնվում... նկատեց նա մեծ սրտով:

— Ինչպե՞ս չեմ իմանում: Դու չե՞ս ասում թե մանեթին  
5 կոպեկ:

— Հա՞:

— Դե ես 10, 12 եմ հաշվում և այդպես է դուրս դալիս:  
Ուրիշ կերպ լինել չէ կարող:

— Ո՞նց չի կարող. դե հմի ես հաշվեմ դու մտիկ արա:

Այս ասելով Խոջան հանեց ծոցից մի փոքրիկ, խաղա-  
լիքի պես համարիշ և հաստ ու սև մատերով նրա հատիկ-  
ները դես ու դեն անելով, սկսավ հաշվել.

— Մի մանեթին, որ 5 կոպեկ ըլի ամսումը, մի տարու-  
մը կըլի 12 հետ 5 կոպեկ, չուն տարին 12 ամիս ա: Էս քե  
60 կոպեկ: Հմի դուն ես իմ աղեն, մանեթը որ մի տարումը  
60 կոպեկ բերի, 10 մանեթը կբերի 6 մանեթ, 20 մանեթն էլ  
կբերի 12 մանեթ: Է, հմի իմ 20 մանեթը, մի տարուց եզր  
դառավ 32 մանեթ...

— Ապասիր, սպասիր, ուրեմն դու ոռոգլուն 5 կոպեկ

Հաշվում ես միայն մի՝ ամսումը, — Հարցրեց Կամսարյանը  
գաղթանալով:

— Բա մի՛ տարումը: Խի՛, փող եմ գտել, թէ՛ գլխիս ձի  
ա քացի տվել... Հրեն ուրիշները մի ամսումը մանեթին 10,  
յա 12 կոպեկ են առնում. ես 5 եմ հաշվել. սրանե էվել  
խղճմտանքով բան կըլի՛:

Կամսարյանն ապշած նայում էր Խոջայի կարմիր կա-  
պիճներում պլազացող աշքերին և մի քանի վայրկյան ոչինչ  
չէր խոսում: Ապա դառնալով պրիստամին, ժպտալով ասաց.

— Վասիլ Իվանի՛, գիտե՞ք այս մարդը քանիսով է  
հաշվել տոկոսը:

— Քանիսո՞վ, — հետաքրքրվեց պաշտոնյան:

— Հապա գուշակեցեք:

— Քսանո՞վ, քսան հինգո՞վ...

— Ի՞նչ քսան, ի՞նչ երեսուն, ո՞չ ավելի և ո՞չ պակաս՝  
Հարյուրին վաթսուն:

— Անկարելի է:

— Հավատացեք:

— Օ՛, օ՛... բացականչեց պրիստավը:

— Էշտո, պետ կապեկ մնոգո՞ (ի՞նչ, հինգ կոպեկ  
շա՞տ է), — շփոթված հարցրեց Խոջան:

— Պյուտր Կիրիլի՛, սա հինգ կոպեկ է ասում, — դարձավ  
պրիստավը երիտասարդին:

— Այո՛, 5 կոպեկ. բայց ոռւբլուն 5 կոպեկ մի ամ-  
սումը: Ուրեմն մի տարում 12 անգամ 5 կոպեկ, որ կա-  
նե 60:

— Այդպե՞ս է, — հարցրեց պաշտոնյան Խոջային:

— Դա, դա, վերնը (այո՛, այո՛, ճիշտ է), — հաստատեց  
Խոջան:

— Օ, этот уж череэчур! — բացականչեց Վասիլ Իվա-  
նիկը:

— Դուք, պարոն պրիստավ, խնդրեմ իբրև դատարանի  
պաշտոնյա, վկա լինիք, որ այս մարդը, ձեր և ժողովրդի

Ներկայությամբ ասաց և հաստատեց, որ ինքը հարյուրին ստանում է վաթսուն տոկոս:

— Ուրախությամբ, ուրախությամբ,—համաձայնեց պաշտոնյան:

— Եղ ի՞նչ ա է՝, խի՞ չեք թողնում, որ էղ մարդը իրա բործը վերջացնի, — հարցրեց Խոջան, գուշակելով, որ մի ինչ որ վատ բան է պատրաստվում իրա համար:

— Ի՞նչ է, այ խսկուն կասեմ: Բայց թող մի ես էլ քո ասած ձեռվ հաշվեմ ու տեսնեմ թե արդյո՞ք մանեթին հինդ կոպեկ է գալի՛ թե՛ ավել...

— Դրուստ ա, աղբեր, դրուստ. ես խաբող մարդ չեմ. էս սաղ մհալը գիտա թե Խոջա Միրզան ի՞նչ մարդ ա:

— Հա, ո'վ ինչ է ասում. բայց թող մի հաշվենք... Այս ասելով Կամսարյանն սկսավ հաշվել: 20 ոռութին 60 կոպեկ մի տարումը կրերի 12 ոռութի: Ճիշտ է: 12 և 20 կլինի 32: Այդ 32 ոռութին մյուս տարումը կրերի 19 ո. 20 կոպեկ: Ուրեմն երկու տարումը քո փողը կդառնա 51 ո. 20 կոպ. Ճիշտ է: Այդ 51 ո. 20 կոպեկն էլ երրորդ տարումը կրերի շահ 30 ո. 72 կ. երկուսը միասին՝ կլինին 81 ո. 72 կ.: Բարի: Այդ 81 ո. 72 կոպեկը շորրորդ տարում կտան տոկոս 49 ո. 15 կոպեկ: Ուրեմն բոլորը միասին 131 ո. 7 կոպեկ: Ես ճիշտ է, Խոջա, — ասաց Կամսարյանը հեգնելով:

— Բա որ ասում եմ, — պարծեցավ Խոջան յուր ճշտությամբ և մեջքն ուղղելով հանգիստ շունչ առավ:

Սայու և յուր պաշտպանների վրա կարծես ջուր մաղթեց:

— Բայց գիտե՞ս ի՞նչ կա, — նորեն խոսեց Կամսարյանը:

— Ի՞նչ:

— Ահա պրիստավի և բոլոր ժողովրդի ներկայությամբ Հաստատվեց, որ դու պարապում ես անխիղճ վաշխառությամբ, այսինքն ժողովրդից առնում ես այնպիսի մեծ տոկոս, որն օրենքը արգիլելով արգելում է: 100-ին 60 կոպեկ շահ առնելը այնպիսի հանցանք է, որ օրենքը դրա համար իպատժե քեզ՝ զրկելով որոշ իրավունքներից և բանտարկելով

մեկից մինչև երկու տարի: Հիմի դռւ կարող ես, եթե ուզում  
ես, վեր գրել տալ այս մարդու կովն ու ձին, բայց ես թուց  
շեմ տալ, որ դու նրանց ծախս: Ահա՛, հենց այսօր ես  
խնդիր կդրեմ Սայու կողմից և իմ ձեռքով կհասցնեմ պրո-  
կուրորին: Գործը կերթա դատարան: Ես այնտեղ կպաշտպա-  
նեմ Սայու իրավունքը, իսկ պրոկուրորը կմեղադրե քեզ:  
Սային յուր կովն ու ձին հետ կստանա, իսկ դու կնստեա  
բանտում: Այնուհետև հազարներ էլ որ ծախսես, չես կարող  
աղատվել: Այդպե՞ս է, թե ոչ, վասիլ իվանիչ, — դարձավ  
պաշտոնյացին:

Վերջինս, որ ոչնչ չեր հասկացել Պետրոսի հայերեն խո-  
սածներից, հարցրեց.

— Ի՞նչն է այդպես:

Կամսարյանը կրկնեց յուր խոսածները ոռուերեն:

— Այո՛, այդպես է, օրենքը ծանր պատիժ է տալիս  
վաշխառուներին, իսկ ձերը նույնպես վաշխառություն է, —  
հաստատեց պաշտոնյան:

Խոզպյի գույնը երկյուղից թուավ: Նա ձայնը ցածրացնե-  
րով ասաց.

— Ազգեր, ընչի՝ եք ուզում ինձ վնաս տալ: Ախար ես  
լավություն եմ արել, վատություն հո չե՞մ արել: Մարդը  
սոված ա էլել, փող եմ տվել, սերմացու ա տոել, ցանել ա,  
հնձել ա, չորս տարի ապրել ա...

— Սերմացուի փող ես տվել, որ հիմա զաս կովն ու  
ձին հափշտակե՞ս, — ընդհատեց Պետրոսը զայրացած: — ա-  
խար քո տվածից ու նրա տոկոսից ավել արժե հենց միայն  
այս կովը, հապա ձի՞ն ուր ես տանում:

— Դե ո՞ւր ա, որ տանում եմ, ասում եք, ես էլ թողիւ  
շեմ որ վեր գրի: բերեք իմ փողը տվեք, անց կենամ գնամ:

— Զէ, դու փող չես ստանալ: Քոնն այս կովն ու ձին  
են, վեր գրել տո՞ւր տար, եթե կարող ես: Մենք էլ հետո մեր  
գիտցածը կանենք:

— Չեմ ուզում, աղքեր, երեսուն մանեթը բաշխում եմ:  
իմ հաբյուր մանեթը տվեք, վեր կենամ, գնամ:

— Քեզ հասանելիքը 28 ոռւբլի է, եթե ուզում ես, ստացիր և գործը վերջացրու, եթե ոչ պատրաստվիր, որ տարի ու կես բերդումը նստես:

— Ազրեր, խի՞ եք տունս քանդում, բա ես մեղք չե՞մ... ախար ես էլ մարդ եմ, տուն ունեմ, տեղ ունեմ, օղլուշաղ ու էրեխեր ունեմ... Աստոծ վեր շունիլ, որ իմ հալալ աշխատած փողը ձեռքից խլում եք... աղաշավոր ձայնով խոսում էր Խոջան և պատրաստվում կարծես լաց լինելու:

— Ի՞նչ է պատահել,—հարցրեց պրիստավը, տեսնելով, որ Խոջան խոսում է լալաձայն:

— Ուինչ, վաշխառուն այժմ դերասանություն է անում,—բացատրեց Կամսարյանը:

— Հա, հիմա ի՞նչ ես ասում, վե՞ր գրեմ թե ոչ, ուշանում ենք,—գիմնեց պրիստավը՝ Խոջային:

— Ո՛չ, ո՛չ, ես հաշտությամբ եմ ուզում վերջացնել, ուզում եմ լավություն անել,—շտապով հայտարարեց Խոջան, համոզված լինելով որ բացված խարդախությունը կարող է ցավ բերել յուր գլխին:

Մի թաքուն ուրախություն, որից գեռ անրաժան էր երկուզի զգացմունքը, պաշարեց Սայուն: Մինչդեռ ուստաժներին ու տանուտերը Խոջայի նվազած ձայնից արդեն գուշակելով, որ նրա բանը փրթուկ է, սկսան շտապեցնել վախճանը, ամեն կողմից համոզելով, որ Խոջան յուր ասած լավությունն անե, վերջացնել:

Բայց Կամսարյանը թուվ շտպավ, որ վերջինս մինչև իսկ ուշավություն անելու» պատրիակով գործն ավարտելու միսիթարությունն ունենա:

— Այդպես մի՛ խոսեք և մի՛ սխալեցնեք ձեզ լսողներին,—սաստեց նա Պետուն և մյուսներին:—Այս մարդը լավություն չէ անում: Եթե մենք համաձայնվենք, որ սա 28 ոտորին ստանալով գործը խաղաղությամբ վերջացնե, այն ցամանակ մենք ենք լավություն անում սրան և ոչ թե ինքը մեզ: Այդ պետք է սա իմանա, շնորհակալ լինի և խոստանա, որ այսուհետև ձեռք պիտի վերցնե յուր այս անպիտան ու

վնասակար արհեստից: Հակառակ դեպքում, ես հենց այս երեկո կգրեմ իմ բողոքը և կուղարկեմ պրոկուրորին:

Մի քանի թեր և դեմ խոսքերից հետո, վերջապես Խոչան Համաձայնվեց ստանալ 28 ուրբին, որից տասն ուներ Սային, ութը Պետին պարտք տվավ, իսկ մնացորդ տասը նվիրեց Կամսարյանը:

Երբ Խոչան ու պրիստավը հեռացան, իսկ տանուտերը գնաց ճանապարհ դնելու նրանց, Սայու կինը վազեց, ընկավ Պետրոսի ոտքերը և ուրախության արտասունքն աշքերին, սկսավ Համբուրել նրա ծնկները և օրհնել նրան սրտաշարժ խոսքերով:

Հազիվ երիտասարդը բարձրացրեց կնոջը, մոտեցավ ծերուկ Սային, որ ուրախությունից Համբացած չէր կարողանում խոսել, բայց դողդոջուն ձեռքերը բարձրացնելով աշխատում էր երիտասարդի գլուխը բռնել և Համբուրել:

Կովի մոտ կանգնած փոքրիկ աղջիկը, մեծերի աղմուկին շմասնակցելով, գրկել էր Հեզիկ կենդանու գլուխը և շարունակ նրա աշքերն ու դունչը Համբուրելով, ասում էր ուրախ, ուրախ.

— Հիշկա, մարալ ջան, էլ քե շեն տանելում. տյուն կացիր մեր կուշտ, քո հորթն էլ քո կուշտ... օխա՛յ ինչ լավ է...

Իսկ եղբայրը, որ մինչ այն, ձիու կապը ձեռքին, կանգնած էր այդտեղ, այժմ ուրախությունից մյուս մարդկանց չտեսնելով, ճշում էր անընդհատ.

— Ճոճ պապ, ճոճ պապ, ձին իմա՞լ անեմ, իստեղ պախե՞մ, թե՞ թորգեմ էթա խոտին...

Կամսարյանին մյուս կողմից շրջապատել էին գյուղացիները և շնորհակալության տարափ էր, որ այս ու այն կողմից տեղում էին նրա գլխին: Երիտասարդը շտապեց հեռանալ, փախչելով, Համարյա՛, անվերջ շնորհակալիքներից:

Սակայն կատարված իրողության լուրը տարածվել էր պյուղում կայծակի արագությամբ. ուստի որ կողմից էր անցնում էր երիտասարդը, կանայք ու տղամարդիկ, կտուր-

ների վրայից թե ցանկերի հետևից, օրհնում ու գովում էին  
նրան:

Արդեն մութ էր, երբ Պետրոսը տանուտերին պատահե-  
լով, նրա հետ միասին վերադարձավ տուն: Վերջինս ամենից  
շատ էր ուրախ, որովհետև յուր տան հյուրն էր, որ գյուղա-  
ցիներից մինին այդպիսի մեծ բարիք էր արել այսօր: Ան-  
կարելի էր, որ այդ դեպքը շոյեր նրա պատվասիրությունը՝  
Այդ էր պատճառը, որ նա այսօր մի առանձին հոգածու-  
թյամբ էր թախանձում, որ երիտասարդը հրաման տա Սալ-  
բիին՝ ընթրիք պատրաստելու: Բայց Պետրոսը մերժեց ի բա-  
վականանալով միայն երկու բաժակ թեյով, խնդրեց, որ յուր  
համար անկողին պատրաստեն, ըստ որում հոգնած էր և  
ցանկանում էր վաղ քնել:

Եվ, սակայն, մինչև որ անկողինը կպատրաստեին, նա-  
բարձրացավ տան կտուրը, մի քանի վայրկյան ինքն յուր  
հետ այնտեղ առանձին մնալու և օրվա ընթացքում պատա-  
հածների մասին խորհելու համար: — Արդեն պարտապան-  
դյուղուղուն ծանր պատուհասից ազատելն ու նրան հետեւող  
անվերջ օրհնություններն ու շնորհակալությունները լսելը  
այնքան էր հոգել ու ցնցել նրա հոգին, որ նա չէր կարող  
հանգիստ քնել, եթե այդ ամենի առիթով հետզհետե յուր  
գլխում ծագող հարցերին պատշաճ լուծում ու պատասխան-  
շտոներ:

Ինչպես ամբողջ օրը, նույնպես և այժմ ամպերը շարու-  
նակ բաց խփուկ էին անում երկնքի երեսին, որից լուսինը  
մերթ պայծառ բացվում, լուսավորում էր աղքատիկ գյուղն  
ու նրա խղճուկ տները և ծովակն ու կղզին՝ շրջապատող  
դաշտերով, թմբերով ու լեռներով. մերթ լողում, սուզում էր  
ամպերի ետեր և հրապուրիչ տեսարանները խավարով ծած-  
կում: Սակայն հորիզոնի արևելյան հյուսիսը ծածկված էր  
թանձր, կապարի պես սև և միապաղաղ թուխսպերով, որոնք  
թվում էր թե պիտի վրդովեին գիշերվա խաղաղությունը:

Բայց Կամսարյանը չէր հետաքրքրվում այժմ բնության

Երկութիւներով: Որքա՞ն շատ բան էր տնօսել նա այսօր, որքան նորություններ իմացել. դրանց մասին էր մտածում:

Նա դեռ երեկ այն կարծիքին էր, թե ոչինչ չէ կարելի անել գյուղում, թե ամեն բան այնպիս ստուած ու քարացած է այստեղ, որ յուր նման մարդկանց ձեռքերը, որքան էլ նրանք զինված լինին զորեղ դործիքներով, չեն կարող ոչ հին սառուցը հալել, ոչ էլ քարացած կոշտերը մաղել: Բայց այսօր, ահա՛, նա կատարեց մի գործ, որն յուրմով լուծեց մահու և կյանքի խնդիր: Նա վերահաս կործանումից աղատեց մի տուն, վերջնական անկումից փրկեց մի ընտանիք և դրա համար շատ քիչ, կամ գրեթե ոչինչ աշխատություն զործ դրավ...

Եվ սակայն որքա՞ն շատ կային այդպիսի թողված ու լքված տներ և ընտանիքներ. որքա՞ն շատ բան կարելի էր անել դրանց համար: Եվ նա երեակայեց, թե ի՞նչ կիններ այսօր խեղճ Սայու դրությունը, եթե ինքը, բախտի բերմամբ, չհանդիպեր այստեղ, չզսպեր Խոջայի ավարառության տենչը, չպաշտպաներ անզոր, անօդնական գյուղացուն... Ապա նա հիշեց տիբրացուի դպրոցը, երեխաներ կրթելու և ուսուցանելու վայրենի եղանակը և միենույն ժամանակ, Մոսու իրավացի դիտողությունը թե՛ «երբ ցորեն հաց չկա, պետք էր քաղցածին տալ գոնե ճաթ, որպեսզի նա սովոր չմնանի»: Վերջը նա մտքով փոխադրվեց Սևան, հիշեց նրա անշարժ ու քարացած դրությունը, աքեղայի բոլոքը, նրա երկար զրուցները, հայտնած ցանկությունները և անապատը վերակազմելու ու պայծառացնելու նկատմամբ նրա առաջարկած միջոցները:

Այս ամենը հիշելուց և դրանց վերաբերմամբ երկար մտածելուց հետո, երիտասարդը եկավ այն եղբակացության թե անհրաժեշտ է աշխատել՝ հնարավոր դարձնել գյուղում ապրելն ու գործելը...

Այդ վայրկենին նորեն լուսինը բացվեցավ և պայծառ լուսով երկիրը ողողելով, երևան հանեց գեղեցիկ ծովակն ու շրջակա լեռները և դրանց հետ միասին... Զիբուխուլուի շոր,

գծուծ պատկերը, յուր գետնին կպած տներով, յուր աթարի  
գեղերով...

Երիտասարդը նայեց յուր շուրջը, զգաց գարձյալ մի  
անհաճո անհանգստություն և շկամենալով այլև դրա մա-  
սին մտածել, իջավ ներքեւ:

Մի քառորդ ժամից նա Մորփեսոի գրկումն էր:

## ԺԵ

Աես գիշեն էր: Խոր ու քաղցր քնի մեջ Պետրոսն ի հար-  
կե չէր տեսել թե ի՞նչպիս հորիզոնը փակող սև ամպերը  
բարդ-բարդ վերանալով լուսինը ծածկեցին և ապա հետզհե-  
տե թանձր մառախուլը երկրի երեսը պատեց: Քիչ հետո  
սկսավ շաղել թեթև անձրեր, որն ապա գնալով սաստկացավ  
ու հորդացավ և մեծ ազմուկով սկսավ բաց գետինն ու տան  
կտուրը ծեծել: Հովը, որ երեկոյան մեզմ էր ու քնաբեր,  
այժմ զորացել, փոխվել էր քամու և ուժգին շառաշելով փո-  
թորկում էր անձրեր և հաճախ նրա հոսանքն ուղղում դեպի  
սրան, ուր թախտի վրա, քաղցր քնի մեջ հանգչուած էր այդ  
վայրկենին քաղաքացի հյուրը:

Երկա՞ր անձրեր ծեծում էր գուրսը, երկա՞ր օդի մեջ  
շառաշում քամին, և սակայն Պետրոսը քնած էր հանգիստ և  
չէր զորում, նույնիսկ ցրտությունը ցողի, որ քամին հաճախ  
շաղում էր յուր գեմքին: Բայց, ահա, հանկարծ ճայթեց մի  
որոտ, Մարալինջի և Ահմանկան բարձունքը զողդողացին և  
անձրեի շառաշը, կարծես, կըկնապատկվեց: Երիտասարդը  
վեր թռավ և սարսափով տեսավ ոչ միայն օդի մեջ մրրկուց  
հեղեղը, այլ և այն, որ յուր անկողնի երեսը թրչված է բո-  
լորովին: Բացի այդ, նրա վրա տեղ-տեղ կտորից ծորում է  
անձրեացուր:

Անակնկալ պատահարից շփոթված՝ Պետրոսը վեր կա-  
ցավ տեղից և կամենում էր տան գուռը ծեծել ներս մտնելու  
համար: Բայց մտածելով, թե այդտեղ տանուտերը քնած է,  
կնոց և երեխայոց հետ, անհարմար տեսավ զարթեցնել

նրանց: Բայց ի՞նչ անել. չէ՝ որ անհնար էր գիշերն անցցնել անձրևի տակ: Խսկույն նա մտաբերեց փոքրիկ սենյակը, որ կից էր ախոռին և առանց երկար մտածելու, բացավ դուռը և անկողինը հավաքելով մտավ ներս:

Ախոռի սուր, անախորժ հոտը, տուզորված ավելի ևս անախորժ ջերմությամբ դիմավ նրա քթին.-բայց այժմ արդեն ժամանակը չէր թերություններ քննելու: Պետրոսին հարկավոր էր մի ծածկարան անձրևից պատսպարվելու համար և նա, ահա, գտել էր այն: Շտապ-շտապ փոելով անկողինը այդտեղ գտնվող թախտի վրա, նա դուռը փակեց ու պարկեց, կարծելով թե պիտի քնե: Բայց շանցավ քառորդ ժամ և ախոռից փչող հոտը սկսավ անհանգստացնել նրան: Նա բացավ սենյակի դուռը և նորեն պառկեց: Այժմ որովհետեւ դրսից եկող թարմ օդը շոյում էր նրա դեմքը, ուրեմն, կարող էր քնել: Երիտասարդը փակեց աշքերը և աշխատեց մտածությունները հեռացնել իրանից, լավ իմանալով, որ քնել կարողանալու համար, ամենից առաջ ուղեղը պետք է քնացնել: Բայց այդ էլ չօգնեց: Որովհետև չէր անցել դեռ կետ ժամ, որ նրան սկսան անհանգստացնել լվաները, որոնք հողե հատակ ոնեցող և, մանավանդ, փակ պահվող այդպիսի տեղերում վխտում են ամառը: Երիտասարդն սկսավ շուռ ու մուռ գալ, աջ կողմի վրա պառկել, ձախի վրա փոխել, երբեմն էլ անկողնից ելնելով՝ շապիկը հանել ու թափ տալ-բայց իզուր: Արյան ծարավի այդ լվաները, որոնք տավարը գոմից հեռացնելուց հետո զրկված էին բավարար կերակրից՝ վաղուց, շատ վաղուց սպասում էին այսպիսի մի համեկորսի, այն էլ ի՞նչ որս... քաղաքացի, մաքրակենցաղ... կվաներն, իրարկե, չգիտեին, որ Կամսարյանը համալսարանական է և իրավաբան: այդ պատճառով ծծում էին նրա արյունը անգթաբար, առանց դատավորից կամ դատաստանից վախենալու:

Այսպես անցան մի երկու ժամեր, բայց ի՞նչ ժամեր... պետք էր Կամսարյանի տեղը լինել՝ հասկանալ կարենալու համար թե, որպիսի՝ տանջանքի ու նահատակության ժամեր

էին դրանք, ծվ էթե դուք, ով համալսարանական ընկերներ, որոնք ոգևորվող Կամսարյանի խոստումը լսելուց, նրան ծափահարել և ձեր ձեռքերի վրա օդն էիք բարձրացրել, գտնվում լինեիք այդ վայրկենին նույն հոտած ախոռին կից սենյակում և տեսնեիք նրա անլուր տանջանքը, անպատճառ կասեիք.—Թո՞ղ, հղրայր, ի՞նչ ես տանջում քեզ... վեր կաց, հավաքիր իրերդ, գնա այնտեղ, ուր մարդիկ ապրում են իսկական մարդու և ոչ անասունի նման:

Բայց թե ի՞նչ էր խոսում ու մտածում այդ միջոցին ինքը Կամսարյանը, այդ մասին լավ է լոել, որպեսզի եթե երբեկցի նման ոգևորությամբ վառվին ուրիշ երիտասարդներ, նրանց անծանոթ մնա առաջին ոգևորվողի հուսահատ տրտունջը:

Անտանելի ժամերի հետ միասին, վերջապես անցավ և անձրկը, դադարեց քամին և աղոթարանն սկսավ հետզհետե պարզվիլ ու բացվիլ:

Կամսարյանը որոշեց դուրս գալ յուր տանջարանից: Բայց որովհետև սրահի առաստաղից դեռ կաթկթում էր ջուրը և, հետեապես, նրա տակ պառկել անհնարին էր, ուստի կիսով շափ հագնվելով, նա դուրս եկավ սրահը և այդուեղ դրված թախտը մի կերպ քաշելով տարավ բակը, ուր օդը թարմ և մաքուր էր: Ապա անկողինն էլ ներսից հավաքեռով, մի լավ թափ տվավ, որպեսզի անամոթ լվերին հալածե և նորեն փոելով թախտի վրա, մեջը մտավ ու պառկեց: Դրսի թարմ օդն ու կրած նեղություններից զգացած հոգնությունը շուտով քուն բերին երիտասարդի աշքերին:

Խաղաղության հրեշտակը շատ անգամ անգործությունից, թե՝ որոշ նպատակով, յուր խնամքին հանձնված մահկանացուների հետ կատակներ է անում: Նա ծանր ու զարհուրելի երազներ է տալիս նրանց, որոնք արթնության ժամանակ շրջապատված են լինում կյանքի դյուրություններով և ընդհակառակը հեշտալի ու քաղցր երազներով գգմում է նրանց, որոնք արթնության միջոցին գտնվում են ծանր ու անհամբուլը միջակում:

Մեր Կամսարյանին էլ նա անուշ քուն տալուց հետո, տարավ հանկարծ թորժոմ:

Օ՞չ, ի՞նչ երջանիկ հակագրություն: Առավոտ է: Փոտաշն վիլլայի պատուհանները ողողված են արեխ պայծառ շողերով. բայց բաց կանաչ մետաքսյա վարագույրը չէ: Թողնում, որ նրանք թափանցեն ննջարանը, ուր այդ վայրիկնին Պետրոս Կամսարյանը՝ անկողնի մեջ նստած, առավլոտյան թեյն է վայելում: Նա այդպես սիրում էր անել, երբ օրը կյառակի էր և յուր գործը ոչ այլ ինչ, եթե ոչ հազնվել և ժամը 12-ի մոտ ելնել այցելության: Կանաչ վարագույրի ստեղծած փափուկ ու քնքույշ լույսը դգվում է ննջարանի հարուստ զարդարանքը այնպիսի գույներով, որ կարծեն թե նրանց վրա նայում ես երփներանդ ծիածանի միջից: Ամեն տեղ պերճություն, թափիշ ու կերպաս. ամեն տեղ ընտիր ճաշակի նրբություն... Իսկ երիտասարդի անկողինը, դա կոմֆորտի վերջին խոսքն է: Մահճակալն ամբողջապես ձուլված է բրոնզից և զարդարված ոսկեթանդակ փղոսկրով: Նրա հատակն ուղղորդել են փափուկ, փետրալից օթոցներ, որոնք ծածկված են ծյունի պես սպիտակ սավանով, իսկ գեղեցիկ վանդակազարդ սնարը՝ կիսով շափ փակում են աղվափերուվ լի բարձեր՝ ծածկված նուրբ կտավով և զարդարված ծակոտեն ժանյակներով (կրուժեա): Թեթև բեճեղից կարած և շքեղ մետաքսով երեսած վերմակը, որ այժմ կիսածալ ընկած է մի կողմ, լրացնում է կազմվածքը հարուստ անկողնի, որի մեջ նստած է երիտասարդը՝ ճենապակյա ոսկեզօծ գալաթը ձեռին: Մահճի առաջ դրված փոքրիկ նգույրի վրա գտնվում են սեր, կարագ, ընտիր շաքարահացեր, երիտասարդը վայելում է, և միևնույն ժամանակ, խոսում յուր մոր հետ այն մասին թե ինչպես ինքը հիմարություն էր արել «կոտների» երկիրը գնալով և այնտեղ անլուր տանջանքների ենթարկվելով: Լիդիա Պավլովնան կարելցում էր որդուն և, միևնույն ժամանակ, աշխատում, որ յուր քնքույշ հոգատարությամբ մոռացնել տա նրան կրած նեղությունները:

Բայց տեսարանը փոխվում է: Բնության ու արհեստի

Հքեզություններով զարդարած «Հանքային» պարկում, կարկաշահոս Բորժոմկայի ափին, ծառերով հովանավոր մարմանների վրա խմբված է ամառանոցաբնակ տիկնանց, երիտասարդների ու երիտասարդուհիների մի փայլուն բազմություն, որի մի մասը կրոկետ է խաղում, մյուսը զվարձախոսում է, իսկ, իրեն Կամսարյանին շրջապատողները, ճառում են բարձրի, գեղեցիկ և վսեմի մասին... Հանկարծ մի սիրուն, արծաթահնչյուն ձայն առաջարկում է բազմությանը՝ թողնել խաղերն ու զրուցը և կատարել մի դրուանք, անցնելով Բորժոմկայի յոթ կամուրջները։ Ամենքն համաձայնվում են, որովհետև առաջարկողը գեղանի Աղելինան է, փայլուն բազմության այդ վայրկենի թագուհին... Եվ Խըմբակն իսկույն բաժանվում է զույգ-զույգ, եռյակ կամ քառյակ մասերի, որպեսզի ալեաներով ու նեղ կամուրջներով անցնելու ժամանակ իրար շխանգարեն։

Կամուարյանն, ի հարկե, յուր թեն է առել շքնաղ Աղելինային, որ այդ վայրկենին քնքույշ էր ավելի, քան դարնան վարդը, գրավիչ ու քաղցրաբույր, քան ծաղկոցի շուշանը և սիրախոս ու գեղաձայն, քան այգածին սոխակը։

Եմբակի մասերը դիմում էին առաջ խոսելով, ճշալով, կամ ուրախ կարկաշելով, երբեմն փրար միանալով, իսկ հաճախ անջատ քայլելով։ Չորրո՞րդ թե հինգերորդ կամուրջն էին անցնում, երիտասարդը չէր հիշում և ահա խիտ ծառերի մի սիրուն պուրակ շրջապատեց նրանց։ Մի վայրկյան նրանք տեսան իրենց միայնակ և կանգ առին հովանավոր ծածկարանի մեջ։

Գեղանի կուսի լուսավառ հայացքը սեեռվեց երիտասարդի սիրահույզ աշերին և վարդագույն շուրթերը՝ ժապտի աննման ծիածանի միջից, շշնչացին կիսաձայն։

— Ինչո՞ւ այդքան ուղացար... Եթե գիտենայիր թե որքա՞ն անձկովյամբ էի սպասում քեզ... որպիսի՝ կարոտով իմ օրերն անցնում...

Եվ շուշան բազմուկները պատեցին իսկույն պարանոցը երիտասարդի, որ գրկեց նրան քնքաբար և սեղմեց կրծքին

մեղմով... Հրատապ շուրթերը հանդիպեցան իրար և արքայությունը մի վայրկյան իջավ երկրի վրա...

Հանկարծ մի ահավոր գոռոց շրջապատը թնդացրեց: Երիտասարդը վեր թռալ: Առաջին բանը, որ աչքին զարկավ, աթարի դեզն էր, որի շուրջն անձրեց գոյացրել էր տիղմի ընդարձակ ճահիճ... Սա ուրեմն դարձալ շարաբաստիկ Զիւռուխլուն էր: Բայց ինչ գոռոց էր այն, որ զարթեցրեց երիտասարդին յուր անուշ քնից ու երազի արքայությունը փոխեց իրական դժոխքի: Դա խանդակաթ բառաշն էր տանուաերի այն կովի, որին Սալբին կթելուց հետո, բաց էր թողել յուր հորթին մոտենալու համար. իսկ անմիտ անասունը շնամբերելով այնքան, որ հասնե հորթուկին, շտապել էր ճամփի կիսից յուր զվարթ ճայնով ավետել նրան յուր գայուստը, առանց մտածելու, թե այդտեղ քնած է Կամոարյանը, որ անուշ երազ է տեսնում:

— Փո, ուր առօր բացականչեց երիտասարդը, այս անգամ արգեն ուսւերեն և բարձրանալով տեղից, սկսավ շուտ-շուտ հագնվիլ: Երբեք գյուղն ու գյուղացին այնքան զգվելի շեին երևացել Պետրոսի աշքում, որքան այս վայրկենին: Այդ պատճառով հենց որ տանուտերը երեվաց, նա դիմեց նրան դժգոհությամբ.

— Ի սեր աստուծո, տանուտեր, մարդ զրկիր Սեմյոնովկա, որ շուտ տրոյկա բերեն (սալլակ), ես մինչև երկու ժամը պիտի ճանապարհվեմ անպատճառ:

— Տրոյկը ուր որ ա, էս ա կխասնի, ես իրիկվան եմ ապրսապրե... ասաց տանուտերը և սկսավ հարցուփորձել թե ինչպե՞ս է պատահել, որ նա քնելու թախտը դուրս է բերել բակը, կամ թե անձրեսի ժամանակ ո՞րտեղ է պատսպարվել:

Պետրոսը պատմեց յուր գլխին եկածը՝ դժգոհությամբ լի խոսքերով, որոնք ծանր ազդեցություն արին տանուտերի վրա: Սա անկեղծ ցավ հայտնեց, որ չէ իմացել անձրեսի գալը, առաջ թե ոչ կարող էր հենց ներսի տանը քնելու տեղ պատրաստել երիտասարդի համար: Շատ բարկացավ նաև Սալբին

շլրա, որ բաց էր թողել «անիծուկ կովը», իսկ սա յուր բառաշով խանգարել էր «աղի» անուշիկ բունը:

Հենց այս զրուցի և բացատրությանց ժամանակ իսկեւ ապավում փոստային սայլակի զանգի դողանջը:

— Հրեն տրոյկը գալում ա,—ավետեց տանուտերը:

— Այդպէ՞ս շուտ,—զարմացավ Կամսարյանը և ուրախանալով, որ վերջապես ազատվում է նեղություններից, չուր սրտում հաշտվեցավ բոլոր անցածի հետ, մոռանալով թե՛ անձրեց, թե՛ լվաները և թե՛ կովի բառաշը:

Ծուռով հասավ սայլակը՝ եռալույժ ձիաներով:

— Տոնակա՞ն, դո՞ւ ես էկե, —հարցրեց տանուտերը, ժանոթ կառապանին:

— Ես եմ եկել, բա՛ ըսկի կթողա՞մ, որ իմ աղին ուրիշ մարդ տանի՞,—ասաց կառապանը վստահությամբ, չնայելով որ տանելիք աղին առաջին անգամն էր տեսնում յուր կյանքում:

— Ինչպէ՞ս է, որ այդպես վաղ ես եկել, —հարցրեց նրիտասարդը:

— Բա ըսկի կեդանա՞մ: Խոզա Միրզեն 6 շահի բախչեց. ասավ՝ Տոնական, քե տենեմ, ուազուը ծեզը ծեզին զբալվում:

— Խոզան ի՞նչ ունի այս գործում, —զարմացավ Պետրոսը:

— Խենց ա. իրիգվան Խոզի խետն եմ ապսպե, —բացատրեց տանուտերը:

— Եվ նա քեզ վեց շահի բախչե՞ց, —հետաքրքրվեցավ նրիտասարդը:

— Բախչեց, բա՛: Ասավ, Տոնական, ընենց արա, որ չսօր ճաշի վախտը աղին հասցնես Թիլի: Մեռմ ա լավ բարեկամդ ա, քե համար հոգում ա:

Նրիտասարդը շպատասխանեց: Նա մտածում էր այն մասին թե ինչպէ՞ս ժլատ ու գծուծ վաշխառում սիրով դրկվել է յուր 30 կոպեկից, միայն այն պատճառով, որ իրեն (Կամսարյանին) իբրև վնասակար մարդու, մի փոքր ավելի:

վաղ հեռացնե գյուղից: Այս մտածմունքը, սակայն, փոփոխություն շառաջացրեց երիտասարդի որոշման մեջ: Նա սիրով սկսավ յուր իրեղենները կապկաել, որի ժամանակ մի փոքր տարակուսեց միայն բերած գրքերի մասին, չիմանալով թե՝ ինչ անե նրանց, որովհետև տեսնում էր թե անօպուտ է այս այդ ծանրոցքը տանել թիֆլիս և այս, գուցե այն պատճառով, որ չէր ուզում այնտեղ, յուր աշքի առաջ ունենալ այնպիսի իրեր, որոնք հիշեցնեին նրան յուր ռառաքելության» պատմությունը:

Շուտով մի գեղեցիկ միտք փարատեց նաև այդ մտածութը: Նա հիշեց, որ բողոքարկու արեղան գրքեր էր ինդրել իրենից: «Արի՞ այս կասոցը որկեմ նրան և սա կինի մի գեղեցիկ նվեր» մտածեց երիտասարդը և գրքերի կապոցն առանձնացնելով, ինդրեց տանուտերին, Հավատարիմ գնացողի ձեռքով հասցնել այն արեղային: Թե ինչ օգուտ պիտի քաղեր վերջինս Մարք-ի «Պոլնայ կոր օջախ» և Օսվալդ-ի «Լյագովայ собака» գրքերից Սևանի տկչոր կրգում, գրա համար Պետրոսը ավելորդ համարեց մտածել:

Մի ժամկից արդեն ամեն ինչ պատրաստ էր: Երիտասարդը կամիցավ վարձատրել մի բանով հյուրասեր տանուտերին, բայց վերջինս բացե իբաց մերժեց ընդունել որևէ վարձատրություն, ասելով թե՝ յուր պարտքն էր պատվել աստուծու հյուրին, եթե նույնիսկ ամիսներով նա ապրեր յուր տանը: Միայն շատ երկար թախանձելուց հետո, Պետրոսը կարողացավ մի թղթադրամ խրել հյուրընկալի ձեռքը, իբրև հագուստի նվեր Սալբիի և երեխայոց համար:

Արեւ մի չվան բարձրացել էր Մարալինջից, երբ Կամասարյանն յուր սրտագին շնորհակալությունը հայտնելով տանուտերին և նրա կնոջը, ողջունեց նրանց վերջին անգամ և բարձրացավ սայլակը: Տոնականը մի զորավոր բացականշությամբ խրախուսեց ձիերին և նրանք աշխուժով սլացանդեպի խճուղին:

Այստեղից Սեմյոնովկա և այնտեղից՝ Դիլիջան՝ ուղևորությունն անցավ հաջող և առանց պատահարների: Գիշեր-

վա հորդ անձրեկց հետո եղանակը հրաշալի էր, օդը թեթև ու կազդուրիւ, իսկ բուսականությունը՝ զվարթ և փայլուն Կամսարյանին թիւում էր թե Սեմյոնովկայից մինչև Դիլիջան տանող ճանապարհը, անշուշտ, յուր կյանքի վրա, պիտի ավելացնե մի ավելորդ տարի։ Վասնդի այդ հովաշունչ ժամերին Մայմեծի թալշապատ լանջերի վրա, նրա թավուտների և անտառների մեջ խաղում էին այնպիսի հովեր ու սղութներ, տոգորված կանչը և ծաղկանց բուրմունքով, որ ամեն անգամ շունչ քաշելիս, նրան թվում էր թե շունչի հետ միասին մտնում է յուր թոքերը ու թե օդի ալիք, այլ կենաւատու պալասան...

Գեռ կես օր չեր, որ Կամսարյանը հասավ Դիլիջան։ Մինչև այստեղ նա շարունակ աշխատել էր շմտածել այն ամենի մասին, ինչ որ կարող էր յուր տրամադրությունը խանդարել։ Նա շանացել էր, մանավանդ որ գաղափարական «եսը» շարթնանա և հիմար բաներ ըբշնջա յուր ականջին, — «Այսպիս պիտի լիներ... ուրիշ կերպ չեր լինի... որովհետեւ հնար չկա...» այս դարձվածներով էր օրորել նա այդ «ես»-ին և նրա իրդեք քնացրել։ Բայց Դիլիջանում նա հիշեց հանկարծ Թարսաշալյի կայարանի վերակացուին, հայոց նախկին «գյուղական ուսուցչին» և արդի «որբուտանիների վարժապետին»։

«Ի՞նչ պատասխան պիտի տամ նրան, եթե հարցնե թե ինչո՞ւ վերակարծա... մտածեց Կամսարյանը և տեսավ, որ հարցը բավական լուրջ է։

Սպելի լավ է թողնել փոստի սալլակը և գնալ մասնավոր կառուպվ... մտածեց նա և այդպիս էլ արավ։ Փոստի կայարանում ճանապարհորդներին դյուրություն տալու համար հարմարեցված էր ճաշարանի նման մի բան։ Այդտեղ երիտասարդը կուշտ նախաճաշ արավ և ապա մասնավոր մի կառք վարձելով, շարունակեց յուր ուղին։

Այժմ նա դարձյալ ոշինչի մասին չէր մտածում և զբաղված էր գիտելով ճանապարհի նոր հանդիպող տեղերը, կամ լիոների ու ձորերի այն տեսարանները, որ կարծում էր թե

գալիս ժամանակը չէր նկատած։ Միայն թե Աղստեհի կամուրշին մոտեցած ժամանակ նա մի վայրկյան մտածեց այն ժամանն, թե երբ կարքը կմոտենա Թարսաշային ինքը Կհրամայե կառապանին, այնպես արագ անցնել կայարանի առջեց, որ «զորքուանիների վարժապետը» մինչև իսկ չի որոշիլ թե՝ ո՞վ է նստած կառքում։ Եվ այս մտածմունքի մեջ նա ձեռքը տարավ ծոցը, որպեսզի պորտփարը հանե. սակայն նրա փոխարեն դուրս ելավ դարձյալ շարմբասատ ուժե-երի տետրը, որն այս անգամ, արդեն, ատելի լինելու շափ անհաճո երեաց նրան։ Առանց երկար մտածելու երիտասարդը շպրտեց այն կամուրշի վրայից դեպի շառաշղող գետը։

Ասկեզօծ տետրակը փայլեց մի վայրկյան արեփ առաջ և անհետացավ Աղստեհի տիրակարկալ ալիքներում...

## Ժ

**Փ**իֆլիս հասնելով կամսարյանը զարմացավ, երբ ծառան հայտնեց թե Կիրիլ Կարպիչը մի օր առաջ գնացել էր Բորժոմ, իրեւ սկզբունքի տեր վաճառական, նա յուր օրերը չէր զոհում զվարճության։ Ի՞նչն էր ուրեմն պատճառը, որ նա այս անգամ բացառություն էր արել. — «Մի գուցե մերոնց մեկը հիվանդացել է» մտածեց Պետրոսը անհանգստությամբ։ Բայց երբ ծառան հայտնեց թե՝ «աղան գնացել է սրա համար, որ էկուց, աղջիկ պարունի ծնունդին էնտեղ լինի» երիտասարդը թե՝ ուրախացավ և թե շփոթվեց։

— Իրա՛վ, վաղը մայրիկի ծնունդն է... Ի՞նչպես էի մոռացել... Բայց էլի լավ եմ հասել. . մտածեց նա ինքն իրեն և շտապելով դեպի յուր սենյակը, հանեց գզրոցից ու պահարանից յուր նոր շորերը, արդ ու զարդի պատկանելիքը և ա՛յն ամենը, ինչ որ կարող էր պետք գալ ամառանոցում թե՝ զբոսանքի և թե հանդեսների ժամանակ։ Եվ այս ամենը զգուշությամբ ու կարգով ճամպրուկում տեղափոխվուց հետո շտապեց առաջնակարգ վարսավիրայի մոտ յուր զիսի արտաքինը կանոնավորելու, այն է՝ խուզվելու և ածիւվելուն

Երեկոյան վեց ժամից մի քանի ըռպէ անց Բաթում ճանապարհվող գնացքը առավ յուր հետ նաև Կամսարյանին, յուր ճամպրուկով ու կապոցներով և մի քանի ժամից հասցեց նրան Միխալլով։ Այստեղից մինչև Բորժոմ պետք էր ճանապարհը շարունակել կառքով, վասնզի այդ ժամանակ գեռ չէր շինված երկաթուղու Բորժոմ տանող գիծը։

Պայծառ լուսնիկա գիշեր էր։ Հարթ ու ողորկ խճուղին, որի նմանը չկար Կովկասի ոչ մի կողմը, ախորժելի դարձուց նաև այս ուղեսորությունը։

Կես գիշերից անցած, երիտասարդը հասավ անտառապատ ձորի մեջ փակված Բորժոմը և փոխանակ ուղղակի իրենց վիլլան գնալու, դիմեց հյուրանոց, այն պատճառով, որ նախ՝ գիշեր ժամանակ տուն մտնելով անհանգիստ շանե յուրացիններին և երկրորդ, որ հետեւյալ առավոտ մաքուր հագնված ու վայելուշ կերպով գնա մայրիկին շնորհավորեցու և նրան այդպիսով մի հաճելի անակնկալ (սյուրպիկ) անելու։ Այս նպատակով նա խնդրեց նաև հյուրանոցի տիրոջը՝ կանխավ պատրաստել տալ մատակարարին՝ տմբենաընտիր ծաղիկներից մի թանկագին փունջ «սիրելի մայրիկին» տանելու համար։

Հետեւյալ օրը վաղ՝ կիդիա Պավլովնան զբաղված էր գաղթիք հյուրերի համար սուրճ ու շոկոլադ պատրաստելով, կամ սեղանատանը՝ շաքարահացերի և այլ ուտելիքների սեղանն ու սպասը կարգավորելով։ Նա թեպետ ուրախ էր, որ յուր ժննդյան հիսում երկուերորդ տարեդարձը կատարում է հարուստ ու բախտավոր, շրջապատված դեռ ևս սիրելի ամուսնով, առողջ զավակներով, բայց մի մեծ պակաս ուներ յուր ուրախության մեջ. դա սիրելի Պետյայի բացակայությունն էր, որը հնար չկար ոչնչով փոխարինելու... 0՝, ինչպես կատարյալ կ'լիներ նրա ուրախությունը, եթե՛ այսօր Պետյան գտնվում լիներ այն փայլում հյուրերի հետ, որոնք շնորհավորության գալուց հետո, պիտի հրավիրվեին ճաշի վարանցովի պարկում...»

Դեռ այս մտածմունքների հետ էր կիդիա Պավլովնան,

երբ երեխաները մի շշուկ բարձրացրին վիլայի ծաղկանոցում, որ գտնվում էր գետափյա փողոցի վրա: Նա դուրս թռավ իսկույն վարագույրներով զարդարուն փոքրիկ պատշաճը և այդտեղից իմացավ անակնկալ նորությունը:

— Իմ սիրելի Պետյան, իմ աննման որդին չի մոռացել յուր մոր ծննդյան օրը. նա գործը թողել, շտապել, եկել է մայրիկին շնորհավորելու... մտածեց իսկույն լիդիա Պավլովնան և ուրախության արցունքը նրա աշքերը թրչեցին:

Պետրոսը դիմեց գեղի մայրը ուրախության ու գոհության ժամանակ երեսին և գրկելով ու համբուրելով նրան, շնորհավորեց ծննդյան տարեդարձը: Լիդիա Պավլովնան որդու բերած փունջը գտավ հրաշալի և գուշակեց, որ ոչ պապա շնորհավորողներից կարող է նմանը նվիրարերել իրեն:

Պետրոսի գալով Կամսարյանների վիլան նոր փայլ ու շուր ստացավ: Մեծ գոհունակությամբ լսեց այդ լուրը նաև Կիրիլ Կարպիչը, որ գահին մի կողմը նստած նարդ էր խաղում յուր հին բարեկամ Մարկ Խվանովիչ Մարկովովի հետ: Վերջինս, որ ծաղրում էր էտիկետի օրենքները, վաշ առավոտից էր եկել տիկնոջը շնորհավորելու և տեսնելով նրան դեռ ևս պենյուարի մեջ, ասել էր, որ այդ շորը նրան ավելի է սազում, որովհետեւ նրա մեջ տիկինը ավելի է «թմբիլիկ, կլորիկ»:

— Կուգեր, բաս չէ՞ր գա... կոռների մոտ հո չէր մնա, — նկատեց նա Լիդա Պավլովնային, որ եկել էր ամուսնուն որդու դալուստն ավետելու:

— Եվ տես թե՝ ի՞նչ օր է եկել է՛, հենց իմ ծննդյան օրը...

— Բանիդ կաց... ծնունդ էլ որ չէր եկել, էլի կուգեր... շեշտ ու չհար, Կիրիլ Կարպիչ, քարդ գիր... շարունակեց խաղը Մարկ Խվանիչը, որ ուրախ բնության տեր ու կատակաւսեր մեկն էր:

Մի երկու ժամից արդեն բարեկամներն ու բարեկամունքները գալիս էին շնորհավորելու: Կանայք ու տղամարդիկը

Երիորդներ ու Երիտասարդներ, ոմանք զատ-զատ, ոմանք  
խմբովին, հետզհետե լցնում էին վիլլայի դահլիճն ու նրան  
կից վերանդան, որ զարդարված էր շքեղ վարագույրներով:  
Հաճելի աղմուկով ներս ու դուրս էին անում, մանավանդ,  
Երիտասարդուհիները, որոնց զրուցի մեծ մասն, տաճառա-  
րակ, բաղկացած էր լինում ձայնարկություններից ու բա-  
ցականջություններից:

Լիդիա Պավլովնան յուր գլուխը կկորցներ, եթե Երիտա-  
սարդ որդին, որ քաջ կենցաղագետ էր, կարգով կանոնով  
տմենքին լընդուներ, հարկ եղած տեղը սիրով շժպտար, կամ  
ուր որ պետք էր, հաճոյախոսություն շաներ:

Ճիշտ հարմար ժամին, այսինքն ընդունելության տաք  
միջոցին, վիլլայի առաջ կանգ առավ Մարկոսյանների կառ-  
քը, որից տիկինն իջավ նազելով և, անպատճառ, սպառավո-  
րի օգնությամբ, մինդեռ Աղելինան ներքեւ թռավ թեթև թը-  
շունի պես:

Տեսնելով Պետրոսին դահլիճի դռան առաջ, ուր նա եկել  
էր իրենց դիմավորելու, օրիորդը բացականչեց.

— Դուք այստեղ... այս հրաշք է,—և նրա ձայնի ար-  
ժաթյա հնչյունը ալիքներ տալով անցավ դահլիճի մի ծալրից  
մյուսը:

— Հրաշքեմեն քիչ պակաս է... էն էլ էսօր կու թամա-  
մինք... նկատեց հայրը բարձրաձայն ծիծաղելով:

— Աստուծով,—հարեց Կիրիլ Կարպիչը, բայց այնպես  
ցած, որ միայն ինքը և խաղընկերը լսեցին:

— Ուրեմն դուք այստեղ եք,—նորեն կրկնեց օրիորդը,  
և եղմելով Երիտասարդի ձեռքը:

— Ինչպես տեսնում եք,—պատասխանեց վերջինս, Ժըպ-  
տով հայացքը Աղելինի սիրուն աշքերին ուղղելով:

— Չէի կարող հավատալ, ոչ ոք շէր սպասում...

— Ես սպասում էի... Ինչպե՞ս կարող է մարդ յուր մոր  
ծննդյան օրը մոռանալ,—նկատեց տիկին Մարկոսյանը, իբր  
թէ աղջկա սխալն ուղղելով:

— Աբա մի ասա, թե աստուծդ կու սիրիս, քու մերը

Երբ է ծնվել, — Հարցրեց Մարկ Իվանիշը կնոջը այնպիսէ մի եղանակով, որ ամբողջ դահլիճը ծիծաղից թուլացավ:

— Երանի իմանամ քեզ ո՞վ է խոսեցնում, — նկատեց տիկինը նույնպէս ծիծաղով և դեպի Լիոնի Պավլովնան առաջանալով:

— Այստեղ համեցեք, այստեղ, — ինդրեց վերջինս, ցույց տալով թավջա փափուկ բազմոցը:

— Հա, ես այդտեղ կնստեմ. սիրում եմ, երբ իմ տեղը լայն է լինում ու արձակ:

— Մետեխցիք էլ դրուստ էղենց ին ասում, ամա որ խեղճերուն ոչով չի լսում, — Հարց Մարկ Իվանիշը:

— Տո, շեշտ դիր, շեշտ, ի՞նչ ես մարդկանց խանգարում, — նկատեց Կիրիլ Կարպիշը յուր խաղընկերին:

— Ես էլ իմ շեշտ. եքը՝ շունիմ:

— Զհար ու գու... խաղը շարունակվում էր:

— Ասում եք որ ոչ ոք չէ՞ր սպասում ինձ, — խորհրդավոր ժպիտով հարցրեց Պետրոսը Ագելինային:

— Ոչ, այդ չէի ուզում ասել... Բայց... ի՞նչպես է հայերեն... Ուզում էի ասել, թե ոչ ոք հույս շուներ, թե կարուի կլինեիք թողնել ձեր գործը և գալ, հասկանո՞ւմ եք, — ուղղեց օրիորդն յուր սիսալը, որից, սակայն, նրա այտերը թեթև շառագունեցան:

— Հասկանում եմ, ոչ ոք հույս շուներ: Բայց ես ահա եկա:

— Ինչպես լավ է, որ եկաք. եթե գիտենաք, թե որքա՞ն պետք ունինք ձեզ:

— Երե կարող եմ մի բանով ծառայել օրիորդին...

— Ոչ, հասարակությանը:

— Հարկավ, ձեր հրամանով:

— Այդպես ընդունեցեք, եթե կամենում եք, — ասաց օրիորդը քնքշաբար ժպտալով:

— Այդպես եմ ընդունում, հաճեցեք հրամայել:

— Այսօր ճաշին մենք ձեզ հետ ենք, Վարանցովի պար-

կում... Այսպէ՞ս է, իի՛դիա Պավլովնա,—դարձավ օրիորդու սիկնոջը:

— Այո, սիրելիս, բոլոր հյուրերին հայտնված է:

— Իսկ երեկոյան մենք կունենանք նվագահանդես:

— Թարեգործական նպատակո՞վ:

— Այո, և հարուստ ծրագրով:

— Եվ մենք ուրեմն պատիվ կունենանք ձեր հրաշալի ձայնն ու դաշնամուրի նվագը լսելու:

— Այսինքն պատիվ կանեք մեզ լսելու:

— Եվ ի՞նչ կտորներ կերպեք կամ կնվագեք:

— Այդ կիմանաք աֆիշայից, բայց բանն այդ չէ:

— Հապա՞:

— Նվագահանդեսից հետո, մենք կունենանք պարագանդես:

— Կոտիլինով՝ ճշաց դահլիճի մյուս կողմից Ադելինայի ընկերութիներից մինը:

— Այդ էլ լավ է:

— Լավ է այն պատճառով, որ դուք այստեղ եք:

— Այդ ի՞նչ է նշանակում, —ժպտաց երիտասարդը:

— Երևակայեցեք, որ մինչև այժմ մենք դեռ չգիտեինք թե ո՞վ պիտի լինի մեր dirigeur -ը, որովհետև չենք ընտրած: Այստեղի երիտասարդների մեջ, ճշմարիտը խոստովանած, շնորհով մեկը չկա:

— Ինձ կու զոկեիք էլի՛, —կատակեց դարձյալ Մարկ Իվանիչը, որ այժմ տարած քարերն էր համարում:

Դահլիճում նորեն ծիծաղ բարձրացավ.

— Չեք կարող երևակայել թե ո՞րքան ուրախ եմ: Դուք, իշարկե կկառավարեք մեր պարերը: Այժմ արդեն պարագանդեսը կլինի իսկական պարահանդես:

— Իսկ եթե ես խնդրեի, որ ինձ ազատեք այդ պաշտոնից:

— Եվ ոչ մի խոսք այդ մասին, —հարեց օրիորդը վճռաբար:

— Այո՛, այո՛, ոչ մի խոսք. դուք հրաշալի dirigeur

Եթ, գուք Մի պիտի մերժեք, — խոսեցին այս ու այն կողմից  
Աղելինայի ընկերուհիները:

— Բան է, թե վուր Պիոտր Կիրիլիլով իրիկվան ատկապ  
արակ, ես հազիր եմ, ձիգ էնենց լաղաթով պար ածիմ, որ  
ասիք — մաշալլա Մարկ Իվանիչ... զվարճախոսեց Աղելինայի  
հայրը և ծիծաղը նորից ընդհանրացավ:

Տերեկվա երրորդ ժամին Կամսարյանների հյուրերը  
Հետզհետե հավաքվում էին Վարպետովի պարկը, որ գանվում  
էր Բորժոմի գեղեցկությունը կազմող անտառապատ բար-  
ձունքներից մեկի վրա: Դեղուզեց ծառերի հաճելի հովանու-  
տակ բացված էր ընդարձակ սեղան՝ զարդարված կանաչով,  
ծաղկափնջերով և հարուստ ակրատի բազմատեսակությամբ:

Ճաշը նշանակված էր սովորականից վաղ, որպեսզի  
երեկույթ կազմող օրիորդները թե՛ հացկերույթին մատնակ-  
ցեին և թե՛ ժամանակ ունենային հանդիսի համար պատ-  
րաստվելու:

Ընտիր խորտիկները և ընտրելազույն գինին, միացած  
ընտիր երաժշտության հետ, որի արձագանքը թնդում էր ան-  
տառի հեռավոր ծմակներում, զուտով ստեղծեցին Վարան-  
ցովի պարկում էպիկուրյան հայացքների երկրպագու մի  
մամբու, հարած երկու զատ, բայց միմյանց հետ սերտ կապ  
ունեցող տեսությանց: Տարիքավորները համակերպակով մեր  
ծանոթ Տեր-Վանու կարծիքին, ընդունում էին, որ այս ան-  
ցավոր աշխարհում, կա միայն մի բան, որի համար արժե  
ապրել. այն է՝ չափութել: Մինչդեռ երիտասարդները այդ  
մի ակ բանը գտնում էին լավ սիրելու մեջ:

Այս պատճառով էլ, եթե առաջինները իրենց տվել էին  
համեղ խորտիկներն ու անուշ գինին ուշադիր ջանքով և գի-  
տակցաբար վայելելու դժվարին աշխատության, վերջին-  
ներն, ընդհակառակը, զբաղված էին քնքույշ ժպիտների,  
կրակու հայացքների և խորհրդավոր ակնարկների փոխա-  
նակությամբ: Սիրո և մտերմության այդ հրապուրիշ տու-  
րեառում՝ գերազանցում էին բոլորին Պետրոսն ու Աղելի-  
նան, որոնք պատահար նստած էին իրար մոտ... Ճաշը

ժիրջանալու վրա նրանք ասել, վերջացրել էին այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր երկու սիրող սրտերին՝ իրենց զգացածը միմյանց հասկացնելու համար—թեպես և այդ անելիս՝ նրանք չեն արտասանել և ոչ մի պարզ խոսք:

Հասավ երեկոն: Հանքային պարկի ոռտոնդան լուսափորփած էր շքեղորեն: Գույնզգույն լապտերները, որոնք կախված էին պատշգամի սլունաշարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող կանաչաճյուս ժապավեններից, մոգական խորհրդավորություն էին տալիս կյանքով ու լուսով ողողփած այն կետին, որ ամփոփված էր անտառապատ բարձրավանդակներով պարսպված ձորակի մեջ: Կարգադրիշներն ամեն կերպ աշխատել էին գրավիչ ու հետաքրքրական գարնենելու պարկի այդ մասը, ուր ոռտոնդան էր և ուր նվազահանդեսն ու պարերը պիտի տեղի ունենային, որպեսզի ժողովուրդը ցանկալի շափով մասնակցեր հանդեսներին և բարեկարծական եկամուտը մեծացներ: Այդ պատճառով հանդիսի ընդարձակ գաճիճը, դեռ ութից առաջ, լցված էր երկուուր բազմությամբ: Իսկ նվագահանդեսն սկսելուց, ոչ միայն շկար պարապ աթոռ, այլ և դռների ու պատուհանների առաջ խոնդած էր մեծ բազմություն, որ փող էր վճարել, գել մասիկ կանդնելու իրավունք ունենալու համար:

Գեղեցիկ վարագույրներով ու արևադարձային ծաղիկներով զարդարված բեմի վրա, առաջին անգամ երևաց Ագելինան յուր ընկերություն հետո: Նա հագած էր մետաքսյանուրբ, ձյունափայլ շոր, հոլանի թևերով ու կրծքով, որ զարդարված էր մարգարտածաղկի և շուշանների հյուսերով: Կիսաքաց կրծքին, ուր հանգում էր սպիտակ վարդի մի ոստ, այլ և հարուստ մազերում, որոնք սանրված էին աև տօderne, աստղերի պես փայլում էին հարուստ ադամանդներ: Անմեղության խորհուրդն ամփոփող սպիտակ հագուստներում և մանավանդ լամպի այլակերպող լուսի առաջ, գեղանի Աղելինան գարձել էր, գրեթե, երկնային:

Երբ ընդունելության ծափերը դադարեցին, օրիորդն ու ընկերունին, որ նույնպես գրավիչ էր իլուզիայի շնորհիլ:

սկսան դաշնամուրի ձայնակցությամբ երգել մի սրտաշարժ  
ծոս, որ հարուցեց գահճի մեջ ծափահարությունների և  
ետք երի որոտընդոստ աղմուկ, որից ստիպված՝ նրանք երգը  
կրկնեցին:

Հետեւալ համարը պատկանում էր մի երիտասարդի, որ  
չութակի վրա նվագեց յուր բաժինը և, ինչպես սիրող, ար-  
ժանացավ դարձյալ ծափահարությունների:

Երրորդ համարը Մոցարտի VI սոնատն էր, որ Աղե-  
լինան և մի ուրիշ օրիորդ նվագեցին դաշնամուրի վրա:

Չորրորդին դուրս եկավ Աղելինան միայնակ և նվագեց  
նույն հեղինակի Roudoalla Turca-ն, որ յուր արեելան  
ճաշակի նուրբ ու քնրույշ մելամաղձոտությամբ սրտաշարժ  
ազդեցություն ունեցավ հանգիստականների վրա:

Որոտալից ծափահարությունների աղմուկով փակվեցալ  
նվագահանդեսի առաջին բաժինը:

Երկրորդին և երրորդին մասնակցեցին նոր մարդիկ—մի  
վիոլոնչելիստ, մի սրնագար, մի տու երգիչ, ապա երդշու-  
հիներ, որոնց մի երօ-ին միացավ գարձյալ Աղելինան-  
թացի այդ նա երկրորդ ու երրորդ մասերում հանձն առավ-  
լուրզ մասնակցություն՝ մեջ ընդ մեջ նվագելով դաշնամուրի  
վրա թիթչովենի Quasi una fantasia սոնատը, Շուտմանի  
Warum-ը, նրա կարնավալի խոստովանանքը և Շուտենի  
Nocturnus-ը, որով համարյա՛, ներկայացավ նվագահան-  
դիսի գիտավոր տիրապետութին, ոչ միայն յուր գեղեցկու-  
թյամբ ու շնորհաշուր շարժվածքով, այլև և այն արժանիքով  
որ ցուց տվավ նա երաժշտական մասում ունեցած յուր  
հմտությամբ:

Կամսարյանը, որ բոլոր ժամանակ հոգիացած գիտում  
էր գեղանի օրիորդին ու լսում նրա շնորհալի երգը իսամ-  
դաշնամուրի, նվագները և ընդ նմին ականջում ֆոլտվուե-  
դովասանություններին, հետզհետե սկսում էր գարմանալ  
յուր հիմարության վրա, որ մինչև իսկ մի վայրկյան թույլ  
էր տվել իրեն մտածել թե կարելի էր երբեմից ձեռքից թողնել  
այդ գանձը... եվ այդ իսկ պատճառով, որպեսզի նրոգված

Նտերմությունը ոչնչով մթուլանա, նա յուրաքանչյուր խաչ դամիջոցին վազում էր բեմի հետեւ և հիացած բացականչություններով Աղելինային դրվագում:

— Զեր երգը, օրիորդի դյութիչ էր և հրաշալի... ձեր սունատն աննման էր... ձեր Rondo-ն ինձ լացացրեց... ասում էր նա: Իսկ դա՞վիճը վերագառնալուց սկսում էր օրիորդին համեմատել իրեն հետ և գտնում, որ նա, արդարե, արժանի է յուր կենակիցը լինելու Հենց այս պատճառով էլ տեսնելով, որ Աղելինան տիրում է հանդիսի վրա, ցանկացավ, որ ինքն ևս աշքի ընկնե մի բանով, ուստի սրոշեց ընդունել դիրիժյորի պաշտոնը, որ գեռ առավոտը կամենում էր մերժել:

Եվ որովհետև գիտեր թի ամեն մարդու բան չէ պարերը կառավարել այնպես, որ ընդհանուր գոյության և կենդանության հետ միասին դա՞վիճում տիրե նաև կատարյալ կարգ ու ներդաշնակություն, ուստի առաջուց հպարտանում էր, որ ինքը պիտի կարենա լիովի ցույց տալ այդ բանում յուր հազվագյուտ շնորհքը: Այս պատճառով նա շտապեց օգտվել վերջին խաղամիջոցից և հենց նստած տեղը կազմել tour-երի ընդհանուր ծրագիրը, որ շատ էլ հեշտ բան չէր:

Նվագահանդեսը վերջացավ մի քարտետով, որին մասնակցեցին՝ ջութակահարը, վիոլոնշելիստը, սրնգահարը և trio երգող երեք օրիորդները, որոնցից մինն էր Աղելինան:

Ծափահարությունները երկար գղրդեցնում էին դա՞վիճը և երեկի զարմացնում մոտակա անտառներում թառած թրոշուններին, որոնք եթե խորհելու գեշ սովորություն ունենային, անշուշտ շատ աննպաստ բանիր կմտածեին մարդ աշխարհի մասին:

Շուտով ծառաները դա՞վիճի միջից դուրս հանեցին ավելորդ աթոռները, որպեսզի պարերի համար հրապարակ բացվի: Աղելինան և յուր ընկերուհիները, որոնք չէին կասակածում թի լավ dirigent ունին, եկան մի անգամ էլ ստուգ գելու թե՝ արդյո՛ք երիտասարդը հո չէ պնդում մերժման վրա: Եվ գո՞յ եղան տեսնելով, որ վերջինս արդեն յուր գերի մեջ է և հրամաններ է տալիս ոչ միայն ծառաներին՝ դա՞-

շիճը կարգավորելու, այլ և երաժիշտներին, պարերգի եղանակները դասավորելու այնպես, ինչպես ինքը ծրագրել էր արդին:

— Տեսնո՞ւմ եք, օրիորդներ, ա'յն, ինչ որ նախօրոք ինքներդ պիտի կազմեիք, այն էլ պարոնն է շտափել կազմելու, — նկատեց նորատի մի տիկին, աշքի անցնելով՝ tour-երի ցանկը, որ գծել էր Կամսարյանը յուր այցեատմսի վրա:

— Մի՞թե չգիտեինք թի՞ ինչո՞ւ ենք պարոնին Ժ օրից ընմարդում, — վրա բերավ Աղելինան քաղցր ժպտալով:

— Ինձ թվում է, թե ով հանձն է առնում մի պաշտոն, նա ինքն էլ պիտի հոգա նրա անթերի կատարման համար, — պաշտպանեց օրիորդին Կամսարյանը, կարող մարդու համակնությամբ:

— Այո՞ւ, բայց աշխատանքի բաժանումը հեշտացնում է գործը, — ավելացրեց տիկինը:

— Օ՞, և մի՞թե սա գործ է. այսպիսի գործերում ես ինձ գորում եմ...

— Ինչպես ձուկը ջրում, այնպիս չէ՞ — ընդհատեց Աղելինան, ծիծաղելով:

— Այո՞ւ, միայն այն զանազանությամբ, որ ձուկը լողում է անխոս, մինչդեռ մեր դիրիժյորը պիտի լուս այսօր շարունակ բարբառելով, — կատակեց մի ուրիշը:

— Բայց դուք այստեղ ժամավաճառ եք լինում. առեք այս ցանկը և երկու թերթերի վրա օրինակելով՝ փակցրեք դաճիճի պատերին, որպեսզի պարողները ծանոթանան tour-երի կարգին, — խոսեց նորատի տիկինը, որ, ըստ երեխութին, զտապում էր վայրկյան առաջ սուրալ գաճիճի փայլուն հատակի վրա:

— Անհանգիստ մի՞ լինիք, դրա մասին էլ ես կհռդամ, — ասաց Կամսարյանը և ներողություն իննդրելով՝ հեռացավ իմբակից:

Քիչ ժամանակից հետո բոլոր պարող տիկիններն ու օրիորդները իրենց ձեռքում ունեին դիրիժյորի այցեատմսը՝ tour-երի ցանկով:

Գարանանդեսն սկսվեց Valse générale-ով, որի ժամանակ հայտնալիք էր գառնադաշտը, որ նվազահանդիսին նախկին թագուհին այժմ պիտի դառնա դիրիժյորի եռանդը վառող անբաժան ուղին; Եվ գրանք երկուսն, արդարև, այդ վայրկյանին արժանի էին իրար՝ իրենց գեղեցիկ արտաքինով, համաշափ հասակով, շնորհալի շարժմումներով, երիտասարդական գլարթությամբ և, նամանավանդ, աշխուժի ու եռանդի բացարձակ գեղութով, որ վարակում էր նույնիսկ տարիքավորներին, մտցնելով նրանց մեջ կենդանության նոր գրգիռ:

Որովհետեւ այդ ժամանակ դեռ ֆրանսիական քաղրիլը իրեն հնություն չէր հանված ընդհանուր պարերի ցանկից, ուստի նա հետեւ Վալզ գնացած էր, իսկապես, սկսվեց Կամսարյանի տիրապետական փայլը:

Սսպիտներն ու տիկիններն իրար ընտրելուց հետո, ընտրել էին նաև իրենց աթոռները և կապել նրանց թաշկինակներով, որպեսզի շուրջ խոնվող հասարակությունը շրաշի նրանց գես ու դեն:

— Avancez... passez... retournez à vos places... Որոտաց դիրիժյոր Կամսարյանի ձայնը, ինչպես զորապետի մի խրոխտ հրաման և դահլիճի աղասի հրապարակը վայրկենապես ծածկվեցավ պարողների բազմությամբ; Սպիտակ կերպասը, փրփուր բատիստը, ծաղկն ու ադամանդը խառնվելով իրար, ստեղծեցին այդտեղ գարնան թիթեռների իալտարգետ մի պար, որի մեջ տղամարդիկ, իրենց սև զգեստներով հիշեցնում էին բգեղների ու մեղուների խառնուրդը:

— Les dames, avancez... reculez... avancez et balanceez vos cavaliers vis-à-vis... Հնչում էր Պետրոսի ձայնը հետպհատեանալով:

— Ինչպես եք հավանում մեր զորապետին... Հարցրեց Աղելիան յուր vis-à-vis առապետին՝ balance-ի ժամանակ:

— Հրաշալի է, — պատասխանեց վերջինս և ժպտալով անցավ:

— Avancez et balancez vos cavaliers premiers...

- Զեզ համար ասում են, որ հրաշալի dirigeur էք, — Ադելինան Պետրոսի հետ պատելիս:
- Բայց չե՞ն ասում, որ տիրուհուն արժանի երկրպագու չե՞մ, — նկատեց Կամսարյանը ինքնագոհ ժպիտով:
- Չափազանց համեստ եք:
- Ասացեք՝ ճշմարտախոս... Messieurs, avancez, recuez... avancez et balancez vos dames vis-à-vis:
- Ասացեք Ադելինային, որ շատ շքրքրվի, — ապա պրեց կատակով Կամսարյանի հետ պատռող vis à-vis օրիորդը:
- Զեր ընկերուհին պաշտելի է, մի՛ զրպարտեք նրան... նկատեց դիրիժորը և շարունակեց... avancez et balancez vos dames premières:
- Ի՞նչ էք ասում ձեզ իդան, — Հարցրեց Ադելինան Պետրոսին, եթե նա figure-ն ավարտելուց հետո նստեց յուր կողքին:
- Զեմ կարող ասել:
- Խնդրում եմ:
- Հարցրեք, Հարցրեք, — Հորդորեց օրիորդը դիմացի շարքից:
- Քեզ, այժմ ասացեք. ի՞նչ էք ասում նա, — ստիպեց Ադելինան զվարթ հետաքրքրությամբ:
- Ասում էք՝ իբր թե զուք շատ քրքրվում եք:
- Ադելինան նայեց յուր ընկերուհուն և ժպտալով ասաց.
- Ինքներդ դատեցեք, մի՛թե իրավունք չունի՞մ... Համար, համեմատեցեք... Եվ այս ասելով՝ նա մատնացուց արագ ընկերուհուն՝ նրա ասպետը, որ ճաղատ գլխով, ու գեցկադեմ մի գործ էք:
- Մի՛ վիճեք, ելնենք: Messieurs, avancez. Chaine, les dames à la main... զոշեց դիրիժորը և պարը շարունակեց:
- Այս ձևով իրար հաջորդում էին figure-ները մինչև վեցերորդը. բոլոր այդ ժամանակ Կամսարյանը հանգիստ սիրախոսում էր Ադելինայի հետ: Բայց galop-ի ժամանակ

մա արդեն դարձավ մարմնացյալ եռանդ, որովհետև հրամանները պետք է տար զգուշությամբ, որպեսզի grand sond-ի վախճանը լիներ թե՛ սահուն և թե՛ հաղթական:

Բարեբախտաբար այս յուրջ խնդիրն էլ լուծվեցավ հաջողությամբ: Եթի corbeille-ից հետո վերջին անգամ հնչեց գիրիժյորի ձայնը՝ Remerciez vos dames! ամենքն արդեն գիտեին, որ կարդադրիլ պարոնի շնորհիվ սիսալ քայլ շէին արած: Այդ պատճառով շնորհակալությունները երկուստեք էլ արտապին էին:

Քաղրիլից հետո սկսվեցան ազատ պարերը, որոնց ժամանակ Աղելինան, հակառակ, նույնիսկ եօն-տօն-ի պահանջին, հաճախ անբաժան էր շնորհալի դիրիժյորից: Գուցե և այս այն գիտակցությամբ, թե հյուրերից շատերն, արգեն ժանոթ են յուր զգացմունքներին, հետեւապես խստապահանջ շէին լինիլ գեթ այս անգամ: Եվ իրավ նրանց երկուսի համաշափ ու ներգաշնակ շարժումներից արդեն դիտող աշքը կարող էր որոշել շափն այն համակրության, որ երիտասարդ սրտերը տածում էին դեպ իրար: Եթե պարից բան հասկացող հանդիսականը ծաղրում էր այնպիսիներին, որոնք պարելու փոխարեն քաշկրտվում էին կամ իրենց կոր մեջքով և գաեհիկ բա-երով տանջանք պատճառում իրենց dame-երին, ընդհակառակն, հոգեկան մեծ հաճույք էր զգում նայելով կամսարյանի և Աղելինայի վրա, որոնք իրենց թիթե ու շնորհալի քայլերով և հանգիստ ու ճոճուն պտույտներով գրեթե միշտ իրենցից կազմում էին մի անձն, որ յուր շարժումներով միաժամանակ փայլեցնում էր որքան շնորհք, նույնշափ և արվեստ:

Պարերը, սակայն, շարունակվում էին երկար, վասնզի երիտասարդները շէին հոգնում, իսկ տիկիններն ու օրիորդները պատրաստ էին, նույնիսկ, առաջիկա ցերեկը փոխել գիշերի, միայն թե կարենային անվերջ պտտել ու սուրալ երաժշտության հաճելի աղմուկով արբած...

Բայց հասակավոր հայրերն ու մայրերը ոկտում էին չոպնել, շատերն էլ ստամոքսի տրտունջն էին լսում: Այդ

պատճառով սկսան հիշեցնել «Չաչիլներին» թե՝ ժամանակ է արդեն իրենց եռանդը շափավորելու։ Այդ հուշարարների թվին պատկանում էին, նաև, Կամսարյան ու Մարկոսյան ամուսինները, որոնց խորհրդին, սակայն, հետևեց իսկույն ինքը գիրիժյորը, սկսելով Տուլլոն-ը իրբե վերջապար։

Բայց որպեսզի տիկինների ու օրիորդների հաճույքը ևս կարողանար գրավել, նա Տուլլոն-ը փոխանակ քադրիլի ու մազուրկայի պարզ խառնուրդով վերջացնելու, աշխատեց բարդել վայլսի ու պոլկայի երկարատև նոռ-երով։ Եվ թե պետ նա խստությամբ հետևում էր արշավին և հարմոնիան ոչնչով շնանգարելու համար աշխատում, որ զույգերը ձեռքից շտան իրենց հերթը, այսուամենայնիվ, վերջում երևեցավ, որ բոլոր ասպետներից ավելի շքանշան ինքն է ստացել։

Երբ promenade-ն ու քառակողմուն դիմիժյորը գոշեց՝ — Voyagez à quatre coins à la isvostchik<sup>1</sup>, նա ձեռքին ուներ մետաքսյա սանձերը երեք գեղեցկուհիների, որոնցից միջինը չքնաղ Աղելինան էր և՝ որոնք՝ իրենց շերմությունից շիկնած վարդագույն դեմքերով հիշեցնում էին Ապոլոնի Հրաշունչ նժույգները՝ Արշալուսի բացած դրուերով ենելիս...

— Trois en avant! գոշում էր երիտասարդը և յուր նժույգներով պտտում ու սուրում դաշլիճի շուրջը։ Նրան հետևում էին ուրիշները, բայց հակառակ կազմվածքով։ — շատ տիկիններ ու օրիորդներ լծել էին երիտասարդներին և վարում էին նրանց ինչպես Դիանաներ՝ իրենց էրեներին։

— Այ, դրուտն էս ա, չուն հմիկվա վախտը՝ աղջկերքն են տղերանցը լծում։ Ամա էն ինչի՝ քու տղեն իմ աղջկանն ա լծել, սաբարն ի՞նչ ա, — հարցըրեց ծիծաղելով հայր Մարկոսյանը՝ իրենից անբաժան կիրիլ Կարպիշին։

— Մարկ իվանիլ, էդենց էլ ա լինում։ խան մեկն ու լծում, խան մեկելը, դու ասա ճամփեն դրուտ գնանցվերննկնեն, թե չէ լծելուց ի՞նչ վնաս... այլաբանական հարցին այլաբանորեն պատասխանեց հայր Կամսարյանը։

Երբ Պետրոսն ու Աղելինան թե թմբ տված մոտեցան ծնողներին, Մարկ Իվանիչը կատակով նկատեց.

— Արա մի ասա, Պյոտր Կիրիլիչ, կ ոռն ե թի երկրումը, որ մնացել էիր, քիզ ո՞վ կուտար էս զադա մեղալներ ու խաշիր... Տես է՛, իստակ պոլկովնիկ իս դառի:

Աղելինան ու շրջապատողները ուրախ ուրախ ծիծաղեցին, մինչդեռ Պետրոսը կեղծեց թե ծիծաղում է, որովհետեւ Մարկոսյանի արած դիտողությունը մի տեսակ ցուրտ փշեց յուր շերմացած սրտին:

Այսուամենայնիվ, պարկի ծառազարդ մի անկյունում ընթրիքի համար բացված սեղանը, որի վրա դրված արծաթ ու քրուտալ սպասները փայլում էին առատ լուսի առաջ, իսկ տեսակ-տեսակ ակրատն ու գինին գրգռում նույնիսկ կուշտ մարդու ախորժակը, ցրեցին նաև երիտասարդ Կամսարյանի տիքրության հովերը և հավատացրին նրան թե աշվելի լավ է վայել ել քան թե մտած ել...

Այդ բանին, մանավանդ, լավապես օգնեց Մարկ Իվանիշը, որ սեղանը բոլորով փարբիկ հասարակության խնդրանոր գարծավ կառավարիչ: Առաջարկած կենացները նա համեմում էր զվարթ կատակնեղով և երբեմն, մինչև ի՞սկ, հաջող սրախոսություններով, այնպես որ ընթրողներն ալիսի ծիծաղում, քան ուտում էին: Զարմանալի էլ չեր, որ այսպիսի ընդունակ կառավարչի շնորհիվ, դեռ երկրորդ կերակուրը շբերած՝ շիշերի գինին կիսից ցած լիներ, իսկ երրորդն սիսելուց՝ արգեն վերջացած: Այս կշռաշափը թեպետ մեծ բան չէր «լավ խմողի» համար, բայց Բորժոմի պարկում ընթրողին՝ պատշաճ չէր դրանից ավելին վայելել, ուստի պետք է ընդունել, որ այդքանով էլ մեր Հյուրերն արդեն դվարթացած էին:

Քաղցրեղենը բերելու ժամանակ ընթրողների տրամադրությունը այնքան էր քնքշացել, որ կարծես թե ահա՛, մադրությունը այնքան էր պոլուս պիտի ձուլվին մի սրտի և մի հոգու ուր որ է այդ բոլորը պիտի ձուլվին մի սրտի և մի հոգու մեջ: Այսպիսի հաջող տրամադրությունից օգտվելով, կրիա Պավլովնան, որ բոլոր ժամանակ զվարճանում էր Պետրոսի

Ա Աղելինայի միմյանց հետ փոխանակող քաղցր ժպիտներն ու հայացքները դիտելով, կամ նրանց գողարիկ սիրախոսությունը լսելով, իբրև թե արդեն համբերությունից ելած, ժպտալով բացականչեց.

— Դե վերջ տվեք, էլի...

— Դրուստ ա ասում, վերջ տվեք... հարեց իսկույն Մարկ Իվանիչը և քահ-քահ ծիծաղեց:

Եվ որովհետև բոլորի համար պարզ էր թե ինչի՞ մասին է խոսքը, ուստի Կիրիլ Կարպիչը, որ ամեն բանի մեջ սիրում էր հանդիսավորություն, բարձրանալով տեղից բռնեց որդու ձեռքը և տալով Մարկ Իվանիչին, տաց.

— Ահա՛ քու փեսան:

Տիկին Մարկոսյանը հետեւելով նրան, առավ աղջկա ձեռքը և տալով Կիրիլ Կարպիչին, հարեց.

— Էս էլ քու հարսր...

Թե՛ Պետրոսի և թե Աղելինայի դեմքին խաղացին լուս երանական ժպիտներ: Դրանով նրանք իրենց համաձայնությունն էին տալիս ծնողների արածին:

— Ծնորհավոր, շնորհավոր,—գոչեցին այս ու այն կողմից:

— (Մատանին տուր, ինամի, մատանին, —բացականչեց Մարկ Իվանիչը, իբրև գործնական հայր):

Լիդիա Պավլովնան ընտրեց յուր մատի մատանիներից ամենաընտթիքն ու թանկագինը և հագցնելով Աղելինայի մատին, համբուրեց նրան և ասաց.

— Սա թող լինի մեր դադատկան (առհավատշան):

— Ես էլ հմի իմ փեսին,—ասաց տիկին Մարկոսյանը և շիփ շափ համբուրվեցավ Պետրոսի հետ:

— Ծնորհավոր, շնորհավոր,—կրկնեցին ձայները:

— Ծամպայն, շուտ, էս գինիքը դուս տարեք, — հրամայեց Կիրիլ Կարպիչը և ծառաները մի ակնթարթում անհետացրին սեղանի վրայից նորոգված շիշերի մնացորդը (որ մի քիչ հետո իրենց պիտի հարկավորվեր) և նրանց փոխարեն շարեցին Roederer-ի շամպայնը:

Ծնորհավորանքներն ու բարեմաղթություններն ընդհան-  
րացան։ Նույնիսկ հարեւան սեղաններից բարեկամ մարդիկ  
մոտեցան և շնորհավորեցին հանպատրաստից տեղի ունեցած  
նշանադրությունը։

Եվ սակայն այս ամենը կատարվեց այնքան տարօրինակ  
կերպով, որ ոչ մտածեց հարցնել տղի կամ աղջկա համա-  
ձայնությունը։ Եվ երբ այս մասին մի հոսետես իր դիտողու-  
թյունն արավ, Մարկ Իվանիչը հրամայեց, որ Պետրոսն ու  
Աղելինան պատասխանին նրան իսկույն։

Երիտասարդն ու օրիորդը հասկացան տրված հրամանի  
նշանակությունը և քաղցրաժպիտ մոտենալով իրար՝ ջերմա-  
գին համրուրվեցան։

Ուրախության բացականշությունները սկսվեցան նոր  
ռւժով և շամպայնը նորոգեց յուր շրջանառությունը։

— — —

Մինչև այստեղ որ հասանք, էլ հույս ունիմ իմ ընթեր-  
ցողները շեն պահանջիլ, որ ես իմ պատմությունը շարունա-  
կեմ։ Որովհետև լավ գիտեմ թե այսպիսի մի նշանադրության  
ի՞նչ է հնտեռմ։ — Հարկավ պատկադրություն, շքեղ հարսա-  
նիք և մեզը լուսնի ճանապարհորդություն... իսկ այնուհե-  
տեւ գալիս է ամուսնական խաղաղ ու քաղցր կենակցություն...  
նը, մինչև ցնոր կարգադրություն...»

— — —

— Իսկ Զիբուխո՞ւն... Սկա՞նը...

— Նրանք գարձյալ մնացին իրենց տեղն անշարժ, ան-  
փոփոխ, ինչպես հարազատ մասունք անփոփոխելի համի-  
ւանականության...»





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե

3

57

Յայի ապումկը

Ասուրյանը

Պատ. խմբագիր Հ. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տեղ. խմբագիր հ. ԳԱՐԴԱՆՅԱՆ

ՎՃ 01921 Պատվեր № 507. Տիբաժ 5000:  
Հեղին. 13 մամուլ տպ. 16 մամուլ.  
Հանձնված է արտադր. 12/XI 1947 թ.  
Սարքագրվ. է տպ. 28/XII 1947 թ.

---

ՀՍՍՌ ՄՇ Սովհատին կից  
Պոլիգր. և Հրատ. Կազչ.  
№ 3 տպարան, Ալա-  
վերդուան, № 65,  
Երևան, 47 թ.





39)

12433

ԳԱԱ.Հիմնարար Գիտ. Գրադ.



220028730

